

# Урок 17. Տառայնութեան դաս

## Грамматика

Залог глагола; каузативный оборот "неопределенная форма глагола + տալ".

Словообразовательный прием повтора.

Суффикс -անի.

Послелог փոխարեն.

Употребление определенного артикля (обобщение).

## Тексты

Ղարաբաղի գվարձախոս Պըլը Պուղին

Պըլը Պուղին մեկը Շահնազարին աղբյուրն է տանում, ծարավ են բերում

Հիմարների ու գծերի ցուցակը

Չարենցի կատակներից

## Залог глагола. Каузативный оборот "неопределенная форма глагола + տալ"

### Բայի սեռը






### Պատճառական դարձվածք





Исходя из отношений субъекта и объекта, иными словами, рассматривая направление действия от субъекта к объекту, в языках различают переходные и непереходные глаголы.

**Переходные глаголы** могут иметь прямое дополнение (дополнение в винительном падеже), а **непереходные** – не могут.

**Непереходные глаголы** (անանցողական բայեր) в армянском языке представлены:

нейтральными глаголами (չեզոք բայեր) типа: ①①, ①②, ②①, ②②	страдательными по форме глаголами со следующими значениями (կրավորական բայեր) ①③			
	нейтральным	страдательным	возвратным	взаимным
ծիծաղել, քնել, մնալ, մտնել, մոտենալ	Լույսը բացվեց: Նա թաքնվում է:	Պատի վրա ներկերով գրված է "Գարնանային փողոց":	Նա լվացվեց ու սանրվեց:	Նրանք համբուրվեցին:
				

**Переходные глаголы (անցողական բայեր) представлены:**

<p>собственно переходными глаголами (ներգործական բայեր)                  ①①, ①②, ②①, ②②</p>	<p>причинными глаголами (պարժառական բայեր)                  ③</p>
<p>կտրել, կարդալ, տեսնել, հասկանալ</p>	<p>մոտեցնել, հեռացնել</p>
	

Для того чтобы употребить переходный глагол в нейтральном значении (без указания прямого объекта), иногда достаточно образовать от переходного глагола страдательный глагол; а для того, чтобы показать, что действие, совершенное субъектом, перешло на объект, бывает достаточно образовать от непереходного глагола причинный глагол. Для многих переходных глаголов можно указать непереходные глаголы соответствующего значения; как правило, собственно переходным глаголам соответствуют страдательные глаголы, а причинным глаголам – нейтральные.

Так,

<p>переходный глагол (ներգործական) минус переходность = страдательный глагол (կրավորական)</p>	<p>переходный или непереходный глагол (չեզոք) плюс переходность = причинный глагол (պատճառական)</p>
<p>լսել – լսվել                  գրել – գրվել                  ներկել – ներկվել                  շրջել – շրջվել</p>	<p>խնել – խնեցնել                  մոտենալ – մոտեցնել                  մտնել – մտցնել                  քնել – քնեցնել</p>

**NB:** Только глаголы спряжения **-ել** образуют страдательную форму простым прибавлением суффикса **-վ-** перед окончанием.

Глаголы спряжения **-ալ** при необходимости образуют страдательную форму от причинной формы чередованием **-ացն-, -եցն-, -ցն-** → **-ացվ-, -եցվ-, -ցվ-**.  
**խաղալ – խաղացվել**  
 "играть" – "быть сыгранным"  
**կարդալ – կարդացվել**  
 "читать" – "читаться"  
**զգալ – զգացվել**  
 "чувствовать" – "чувствоваться"

**NB:** Обратите внимание на пару **քնել – քնեցնել** (спать – усыплять). Если в парах **մոտեցնել – մոտենալ**, **մտցնել – մտնել** субъект совершает в первом случае переходное действие, во втором – нейтральное (**Արմենը մոտեցնում է աթոռը**; **Աթոռը մոտենում է Ոչ**, **հնարավոր չէ: Արմենը մոտենում է:**) то глаголом **քնեցնել** субъект побуждает другого ко сну, а не спит сам. Напр., **Մայրիկը կաթ է խմեցնում Արմենին** և **քնեցնում է**, **այսինքն Արմենը կաթը խմում է և քնում է: խմեցնել, քնեցնել** – это собственно причинные глаголы.

От многих глаголов можно образовать причинные глаголы, которые показывают побуждение к действию, где субъект является как бы "причиной" совершения другим данного действия. Так можно построить глаголы լսեցնել "дать послушать", խաղացնել "занимать, заставить играть", կարդացնել "заставить прочитать" и т.д.

Можно, при желании, построить страдательную форму от причинных глаголов (чередую -ացն-, -եցն-, -ցն- → -ացվ-, եցվ-, -ցվ-), но такие глаголы крайне неупотребительны, потому что образованы искусственно: նկոչվել и т.д.



Страдательный глагол		Переходный глагол		Причинный глагол
խմվել	←	խմել	→	խմեցնել
հիշվել	←	հիշել	→	հիշեցնել
		սովորել	→	սովորեցնել
→ կարդացվել		կարդալ	→	կարդացնել →
→ զգացվել		զգալ	→	զգացնել →
→ հասկացվել		հասկանալ	→	հասկացնել →

Однако отметим, что по причинам благозвучия не от каждого глагола можно образовать причинные глаголы с суффиксом -ացն-, -եցն-, -ցն-. Этот прием скорее подходит для непереходных глаголов.



Непереходный или нейтральный глагол		Причинный глагол
NB: страд. лишь по форме!		
սխալվել	→	սխալեցնել
ծիծաղել	→	ծիծաղեցնել
տխրել	→	տխրեցնել
զայրանալ	→	զայրացնել
բարկանալ	→	բարկացնել

Для собственно переходных глаголов прибегают к аналитическому обороту "неопределенная форма глагола + տալ". Ср.



նամակ գրել – նամակ գրել տալ  
"написать письмо – побудить, заставить кого-то написать письмо"



շոր կարել – շոր կարել տալ  
"сшить одежду – дать кому-то, заказать сшить одежду"

## Վարժություններ




1. Ա) Հետևյալ բայերից կազմեք ձևով պատճառական, իմաստով ներգործական բայեր.


Из следующих глаголов образуйте причинные по форме переходные глаголы:

	непереходный (нейтральный) глагол		переходный (причинный) глагол
ալելանալ	прибавляться (в количестве, объеме)	ալելացնել 	прибавить
բարձրանալ	подняться		поднять
եռալ	кипеть		кипятить
զարգանալ	развиваться		развивать
զարմանալ	удивляться		удивлять
իջնել	опуститься		опустить
լայնանալ	расшириться		расширить
նեղանալ	сузиться, обидеться		сузить, обидеть
կարճանալ	укоротиться		укоротить
շատանալ	умножиться		приумножить
մեծանալ	расти		увеличить
լրանալ	исполниться		заполнить
հեռանալ	отойти		удалить
մոտենալ	подойти		приблизить
զգուշանալ	остерегаться		предупредить



Բ) Հետևյալ բայերից կազմեք բուն պատճառական բայեր.


Из следующих глаголов образуйте собственно причинные глаголы:

	нейтральный глагол		причинный глагол
քնել	спать	քնեցնել 	усыплять
ծիծաղել	смеяться		смешить
խմել	пить		напоить
վազել	бегать		заставить бегать
կարդալ	читать		заставить читать
հոգնել	устать		утомить

2. Ա) 

В некоторых случаях направленность действия передается другим глаголом или особой причинной формой:

непереходный глагол	переходный глагол
անցնել – проходить	անց կացնել – проводить
ընկնել – падать	զցել – ронять
 գլխի ընկնել Հարևանների աղմուկից <b>գլուխս գնաց:</b>	գլխի զցել <b>Հարևանները գլուխս տարան:</b>
 ճանապարհ ընկնել – отправиться в путь	ճանապարհ զցել (դնել) – проводить
տեսնել – видеть	ցույց տալ – показывать
դառնալ – стать	դարձնել – превращать
վեր կենալ – встать	վեր կացնել – поднимать

 Բ) Ընտրե՛ք ճիշտ բայը.

Выберите правильный глагол:

1. Այդ դեպքից հետո նա իմ աչքից ...:	ընկավ / զցց
2. Ի՞նչ շնորհքով աղչիկ է քույրդ, այս ինչպե՞ս հին շավարը այսքան գեղեցիկ կիսաշրջագցեստ ...:	դարձավ / դարձրեց
3. Կիրակի մայրս ինձ թույլ է տալիս մի քիչ երկար քնել, շուտ չի ...:	վեր կենում / վեր կացնում
4. Ես նրան աչքով արեցի, որ գլխի ..., որ լուռ մնա, բայց նա ինձ չհասկացավ:	ընկնեմ / զցցեմ
5. Այս ամառ գնացել էիք Դրիմ, ինչպե՞ս ... ժամանակը:	անցավ / անց կացրեց
6. Առաջ երբ մեծը սենյակ էր մտնում, երիտասարդները ... աթոռից:	վեր էին կենում / վեր էին կացնում
7. Շաբաթ օրը մեր մի քանի բարեկամների հետ գնացել էինք քաղաքից դուրս՝ խորոված անելու, հոյակապ ժամանակ ... :	անցանք / անց կացրինք

 3. Ա) Հետևյալ անցողական բայերը դարձրե՛ք անանցողական.

Образуйте непереходные глаголы от следующих переходных глаголов:

ներգործական → կրավորական (переходный) (страдательный)	պատճառական → չեզոք (причинный) (нейтральный)
առաջարկել → առաջարկվել զգալ → զգացվել	ավելացնել → ավելանալ

Առաջարկել, ավելացնել, արդուկել, բացել, բացահայտել, բացատրել, բարկացնել, բարձրացնել, բերել, գտնել, գրավել, գրել, դադարեցնել, դատարկել, եփել, գայրացնել, զգալ, զգուշացնել, ընդունել, ընտրել, թռցնել, իջեցնել, լվանալ, խաղալ, խառնել, խմել, խմեցնել, խորովել, ծածկել, ծամել, ծիծաղեցնել, կալանավորել, կանգնեցնել, կարդալ, կատարել, կոտրել, կտրել, կրկնել, հագցնել,

համոզել, հայտնաբերել, հասկանալ, հասկացնել, հավատացնել, հավաքել, հարգել, հեռացնել, հիշել, հիշեցնել, հուզել, ղեկավարել, ճանաչել, մաքրել, մեծացնել, մերժել, մոռանալ, մոտեցնել, մորթել, մտցնել, նստեցնել, շատացնել, շարունակել, շարտել, որոշել, պառկեցնել, պատրաստել, պահել, սանրել, սխալեցնել, սկսել, սովորեցնել, սպանել, սպասել, ստանալ, ստուգել, վաճառել, վախեցնել, վերջացնել, տապակել, տխրեցնել, ցավեցնել ուղարկել, ուրախացնել, փախցնել, փակել, փաթաթել, փորել, փոքրացնել:

**NB:** սխալեցնել – սխալվել



բ) 

անել – արվել
դնել – դրվել
տալ – տրվել
տանել – տարվել



**Գ) Ընտրեք ճիշտ բայը.**

**Выберите правильный глагол:**

1. Ծառայի պատասխանը տիրոջը ... :	զայրացավ / զայրացրեց
2. Քույրս լոբին հինգ ժամ է ... և դեռ ասում է, որ հինգ ժամում լոբին հագիվ է ... :	եփում / եփվում եփում / եփվում
3. Օպերայի թատրոնը ... է Ազատության հրապարակում:	գտնում / գտնվում
4. Դասերից հետո դպրոցը ... :	դատարկեց / դատարկվեց
5. Փողոցն անցնելիս հարկավոր է ... մեքենայից:	զգուշանալ / զգուշացնել
6. Մխտորը քիչ ես գցել, սխտորի համը բոլորովին չի ... :	զգում / զգացվում
7. Այդ տարի Տիգրանը չուզեց քննություններ հանձնել ու համալսարան ... :	ընդունել / ընդունվել
8. Իմ լավ բարեկամը ... մեր ընկերության նախագահ:	ընտրեց / ընտրվեց
9. Ես ամաչեց ու ... աչքերը:	իջավ / իջեցրեց
10. Փոքրիկս, ինչու՞ ես լաց լինում, դարձյա՞ր մեծ տղաները քեզ չեն ...:	խաղում / խաղացնում
11. Խորովածը չէր ... :	ծամում / ծամվում
12. Թամադան ... և բոլորը լռեցին:	կանգնեց / կանգնեցրեց
13. "Խորհուրդ" բառի հ-ն չի ... :	կարդում / կարդացվում
14. Վերջապես նրա երազանքը ... :	կատարեց / կատարվեց
15. Աղջիկը մի անգույշ շարժումով բաժակը ... և ... :	ընկավ / գցեց կտրեց / կտրտվեց
16. Բժիշկն ասաց, որ զգույշ լինեմ, որպեսզի հիվանդությունս այլևս ... :	չկրկնի / չկրկնվի

17. Արդեն շատ ուշ էր, բայց ես չկարողացա նրան ..., որ այդ գիշեր մեր տանը մնա:	համոզել / համոզվել
18. Ի՞նչ է գրված այստեղ, լավ չի ... :	հասկանում / հասկացվում
19. Ուսուցիչը շատ աշխատեց, բայց այդպես էլ չկարողացավ աշակերտներից մեկին օրվա դասը ... :	հասկանալ / հասկացնել
20. Մեր հայերենի ուսուցիչը շաբաթը մեկ անգամ ... է մեր տետրերը, որպեսզի ... :	հավաքում / հավաքվում ստուգի / ստուգվի
21. Դու քո կոշիկներն ամեն օ՞ր ես ... :	մաքրում / մաքրվում
22. Վատ օրերը շուտ են ..., ասենք, լավ օրերն էլ երկար չեն ...:	մոռանում / մոռացվում հիշում / հիշվում
23. Կարո՞ղ ես այս պայուսակն ու այս ճամպուկը պահարանի տակ ...:	մտնել / մտցնել
24. Այս գիրքը էլ մի ..., ... գրադարան:	պահիր / պահվիր, վերադարձրու / վերադարձիր
25. Քույրիկ, ... ինձ ջութակ նվագել:	սովորիր / սովորեցրու
26. Ներիր ինձ, որ այսքան քեզ ...:	սպասեցի / սպասեցրեցի
27. Այս բնակարանը չի ...:	վաճառում / վաճառվում
28. Հավն արդեն ..., սեղան նստեք:	տապակեց / տապակվեց
29. Պապը շատ ..., որ թոռնիկը բժշկական ինստիտուտ ... :	ուրախացավ / ուրախացրեց ընդունեց / ընդունվեց
30. Մայրիկ, այս վերնաշապիկը ինձ վրա մեծ է, եթե մի քիչ ... կհագնեմ:	փոքրանաս / փոքրացնես
31. Հայերենում շեշտը ... է վերջին վանկի վրա:	դնում / դրվում



4. Գտեք հնարավոր կապակցությունները.  
Найдите возможные сочетания:



Ա) Ի՞նչը կամ ո՞վ կարող է

ավելանալ, բարկանալ, գտնվել, դատարկվել, եռալ, զգացվել, զգուշանալ, ընդունվել, ընտրվել, իջնել, լայնանալ, կանգնել, կատարվել, կոտորվել, կտրվել, կրկնվել, համոզվել, հայտնաբերվել, հասկացվել, հավաքվել, հեռանալ, հիշել, հիշվել, մաքրվել, մեծանալ, մերժվել, մոռացվել, շատանալ, շարունակվել, որոշվել, պատրաստվել, պահվել, սանրվել, սխալվել, ստացվել, ստուգել, վաճառվել, տապակվել, տխրել, փախչել, փոքրանալ

բաժակը, սուրճը, հոտը, տղաները, թամադան, գլխարկը, թելը, դեպքը, ճաշը, կաթը, հանցանքը, դասը, հեռախոսի համարը, ջուրը, վերնաշապիկը, առաջարկությունը, պատմությունը, քույրերը, ծուկը, աղը, տետրերը

Բ) Ի՞նչ կամ ու՞մ կարելի է

արդուկել, գտնել, գրավել, բարձրացնել, զգուշացնել, ընդունել, ընտրել, իջեցնել, լվանալ, ծիծաղեցնել, կանգնեցնել, կատարել, կոտրել, կտրել, կրկնել, հազցնել, համոզել, հայտնաբերել, հասկանալ, հավատացնել, հավաքել, հարգել, հեռացնել, հիշել, հիշեցնել, հուզել, ճանաչել, մաքրել, մեծացնել, մերժել, մոռանալ, մոտեցնել, մորթել, մտցնել, շարունակել, որոշել, պատրաստել, պահել, սանրել, սովորեցնել, սպանել, սպասել, ստանալ, ստուգել, վաճառել, վախեցնել, տապակել, ուղարկել, ուրախացնել, փախցնել, փաթաթել, փոքրացնել

փողոցը, եղբորը, շավարը, գյուղը, հյուրին, գրքերը, Քոչարի, ափսեմ, դոլմա, երգը, երեխաներին, ձեռնոցները, այծը, միջանցքը, թերթը, հարցը, բազկաթոռը, բնակարանը, ձմերուկը, բարեկամությունը, նախաճաշը, մարդկանց, սպանաղը, գողությունը, նկարը, ձեռքը, մեքենան




5. Ավարտե՛ք բայերը.  
Допишите глаголы:



- Ալլո, Զակո՛ք, դու՞ ես, բարձր խոս... , չի լս... :
- Անահիտ, ցուրտ է, մի՛ բաց... պատուհանը:
- Եթե արագ գնանք, շուտ կմոտ... Գարնանային փողոցին, իսկ եթե դանդաղ գնանք՝ քիչ կիեռ... Գարնանային փողոցից:
- Ինչպե՞ս է գր... վարդ բառը, դ-ո՞վ, թե՞ թ-ով:
- Արի՛ շախմատ խաղ... :
- Այն տունը վաճառ... է:
- Ժամը քանիսի՞ն է խանութը փակ... :
- Տղան, դու ո՞ր դպրոցում ես սովոր... : Ո՞վ է քեզ սովոր... մեքենա վարել:
- Վահրամ, արագ ներքև իջ... , ներքևում ինչ-որ մեկը քեզ է սպաս... :
- Հիվանդը քնած է, երբ որ նա արթն... , հարկավոր է նրան նստ... և գոնե մի բաժակ թեյ խմ... :
- Առավոտից գորզն են լվ... , բայց կարծես թե չի մաքր... :
- Ես չեմ կարողանում քեզ հասկ... : Ես չեմ կարողանում քեզ հասկ... , որ ուշանալը տգեղ սովորություն է:
- Ե՞րբ է վերջ... ձեր մաթեմատիկայի դասը: – Իսկ ե՞րբ է սկս... անգլերենի դասը:
- Ես այլևս չեմ ուզում շարունակ... , ինձ ոչ ոք չի լս... :

6. Ա)



Շոր կարել: → Դու ի՞նքո՞ղ ես կարել այս շորը, թե՞ կարել ես տվել:

Շոր կարել: Դռները ներկել: Ոչխար մորթել: Հյուրասենյակի պատերը նկարներով ծածկել: Լավաշ թխել: Մազերդ կտրել: Վերարկուն մաքրել: Գլխարկը մեծացնել: Թիկնոցը փոքրացնել:



– Այս դու՞ ես նկարել այս այծը:  
– Այո, ...:  
– Ոչ, ...:

→ – Այո, ես ինքս եմ նկարել:  
– Ոչ ես ինքս չեմ նկարել, նկարել եմ տվել:

Այս դու՞ ես նկարել այս այծը: – Այո, ...: – Ոչ, ...:  
Այս հոյակապ տորթը մայրի՞կդ է թխել: – Այո, ...: – Ոչ, ...:  
Այսօրվա դուժման դու՞ ես փաթաթել: – Այո, ...: – Ոչ, ...:  
Այս խմորեղենը քու՞ յրդ է պատրաստել: – Այո, ...: – Ոչ, ...:  
Ձուկը եղբա՞րդ է տապակել: – Այո, ...: – Ոչ, ...:  
Այս մուշտակը ամուսի՞նդ է բերել Ֆրանսիայից: – Այո, ...: – Ոչ, ...:



**Ղարաբաղի զվարճախոս Պըլը Պուղին**

Պըլը Պուղին մեկիք Շահնազարի զվարճախոսն էր: Նա խելոք, սրամիտ ու համարձակ մարդ էր: Նա ուրախացնում էր իշխանին ու նրա հյուրերին: Ղարաբաղի ժողովուրդը սիրում էր հանդուզն Պըլը Պուղուն և շատ սիրելով "պել", այսինքն գիժ անունն էր տվել: Մեկիք Շահնազարն էլ էր սիրում Պըլը Պուղուն: Նա գնահատում էր սրամիտ խոսքը և միաժամանակ ուզում էր ցույց տալ, որ ինքը պակաս սրամիտ չէ, քան Պըլը Պուղին:


**Քառեր**

- զվարճախոս** – балагур, весельчак, шутник
- խելոք** – умный
- համարձակ** – смелый (ծ=ց)
- ժողովուրդ** – народ (դ=թ)
- հանդուզն** – дерзкий
- գիժ** – сумасшедший
- գնահատել** – ценить
- միաժամանակ** – одновременно, в то же время
- պակաս սրամիտ քան** – менее остроумный, чем



# Մեկնաբանություններ, առաջադրանքներ, վարժություններ

## Комментарии, задания и упражнения

7.Ա) 



**խոսք** – 1. слова (песни), 2. слово (взять, дать и т.д.)  
3. речь (о чем-то)

**բառ** – слово (словарное), բառարան – словарь

**ճառ** – речь (тамады, официального лица)

խոստում – обещание

խոստանալ, խոսք տալ – обещать

խոսքի տակից դուրս գալ – отпарировать

խոսքի տակից դուրս չգալ, խոսքի տակ մնալ – не смочь ответить, отпарировать

խոսքի տակ թողնել – сказать такое, чтобы собеседник не смог отпарировать

խոսքը կտուրը զգել – отклониться от предмета речи, переведа речь на другую тему (կտուր – крыша)

խոսքը մեր մեջ – между нами говоря

խոսք քաշել – вытянуть из кого-то слово




"Երեբունի" երգի **խոսքը** Պ. Սևակն է գրել: Ջոննին առանց **մթերքի մասին խոսք բաց անելու** կարողացավ հաց ու պանիր վերցնել պարոն Կոզակից: "**խոսքը տրվում է մեր ընկերության փոխնախագահին**", ասաց նախագահը ու նստեց իր տեղը: Նա **ինձ խոսք է փվել** այլևս քրոջ չանհանգստացնել, բայց ես նրա **խոսքումին** առանձնապես **չեմ հավատում**: Այս դասում գրեթե **սոր բառեր** չկան, բոլոր **բառերն** էլ հասկանալի են: Հեռուստացույցով հաղորդում են (передают) մեր նախագահի երեկվա **ճառը** Միացյալ Ազգերի Կազմակերպությունում (Организация Объединенных Наций): Փոքր եղբայրդ ինչ **լեզվանի է, խոսքի փակ չի մտում**, ում ուզես **լեզվով կհաղթի, խոսքի փակ կթողնի**: "**խոսքը կտուրը մի գցիր**, ասա, թե ով է մորթել ոչխարը": Կինդ ուզում էր **ինձնից խոսք քաշել**, իմանալ, թե երեկ որտեղ ես եղել, բայց ես ոչինչ չասացի: **խոսքը մեր մեջ**, կարող էիր գոնե զանգ տալ:



Բ) Կետերի փոխարեն գրեք բառ, խոսք или ճառ.

Вместо точек поставьте բառ, խոսք или ճառ:

Ես քեզ ... չեմ տալիս, որ կգամ քեզ հետ մեր ընկերոջը շնորհավորելու, բայց կաշխատեմ զանգել նրան: Եթե անժանոթ ... հանդիպի, հարցրու ուսուցչուհուն, մի՛ ամաչիր: Նա ինձնից ... առավ, որ իրեն նամակ կգրեն, բայց վախենում եմ, չկարողանամ: Թամադայի ... հետո երիտասարդները սկսեցին պարել: Ինչի մասին էլ ... լինի, նա միշտ մի հետաքրքիր բան ունի ասելու: Ընկերուհիդ շատ խորամանկ աղջիկ է, նրանից ... քաշել չի լինում, եթե չի ուզում մի բան ասել, ... կտուրն է զցում: ... մեր մեջ, ես նրան լավ չեմ հասկանում:

8.Ա) 



խելք – ум  
 խելացի – умный (лит.)  
 խելոք – умный, послушный (разг.)  
 անխելք – глупый  
 խելագար – сумасшедший (գիժ)  
 խելագարություն – сумасшествие (գժություն)  
 խելագարվել – с ума сойти (գժվել)  
 խելահեղ – безумный  
 խելահեղություն – безумие  
 խելքը (ուշքը) գնալ մի բանից, մեկից, մի բանի, մեկի համար – с ума сходиться  
 խելքը տալ մի բանի – чрезмерно увлекаться чем-то  
 խելքը կորցնել, խելքը հացի հետ ուտել – сглотить  
 խելքի գալ – опомниться, поумнеть  
 խելքի բերել մեկին – наставлять кого-л., заставить опомниться  
 խելքը գլխին – в здравом уме  
 խելքը գլուխը հավաքել – собраться с мыслями и поступить умно



Մեր հարևանի երեխան շատ **խելացի (խելոք) փղա է**, դեռ տասնմեկ տարեկան է, բայց արդեն յոթերորդ դասարանում է: –Մայրիկ, ասա՛ Վահրամիկին, **թող խելոք մնա**, ինձ չխանգարի դաս սովորել: Հայկական շատ հեքիաթներ այսպես են սկսվում. "Լինում են երկու եղբայր, **մեկը խելոք, մյուսը՝ անխելք:**" Պապն իր փոքրիկ թոռնիկին այնպես է սիրում, որ **խելքը գնում է նրա համար:** Եղբայրս **խելքը փվել է կինոյին**, ուրիշ բանով չի հետաքրքրվում: **Խելքդ կորցրել ես**, ինչ է, ինչու՞ ես այս մարդուն փող վստահում: **Խելքը գլխին մարդը** այդպիսի գործ չի սկսի: Այս անձրևին **խելագարություն է** տնից դուրս գալը: Ընկերներին հետ երեք օրով գնացել էի Վենետիկ, **խելահեղ օրեր** անց կացրիմ:



Գ) Կետերի փոխարեն գրեք աջ սյունակի բառերից կամ արտահայտություններից մեկը.


Вместо точек поставьте нужное слово или выражение из правого столбца:

1. Թե ... ունես, առողջությունդ գնահատիր:	անխելք
2. Դու ... աղջիկ ես, մի վախենա ... ու համարձակ գնա քննության:	խելք
3. Մի՞թե այդ ... հանդգնեց գալ ձեր տուն ու կռվել եղբորդ հետ:	խելացի
4. Քննիչը Պավլեին կանչեց իր մոտ, բայց Պավլեն ... ցուցմունք չսվեց:	խելքը գլխին
5. Այսօր երեկոյան հեռուստացույցով Բոմարշեի "... օր կամ Ֆիզարոյի ամուսնությունը" ներկայացումն (представление) են տալիս:	խելքդ գլուխդ հավաքիր
6. Նարեդինի հարևանը կարծեց, թե Նարեդինը ... է ու մտքում ծիծաղեց նրա վրա:	խելագարը
	խելահեղ

Գ) Հետևյալ նախադասություններում օգտագործեք "գլուխ" կամ "խելք" բառով արտահայտություն.

В следующие предложения вставьте выражения со словом **գլուխ** или **խելք**:

1. Քրոջս ... գնում է ժամանակակից երաժշտության համար:	գլուխը / խելքը
2. Հեռուստացույցի ձայնը իջեցրու՛, ի՞նչ կլինի, ... գնաց:	գլուխս / խելքս
3. Ընկերս արդեն քառասուն տարեկան է, բայց ... չի գալիս, չի լրջանում:	գլուխ / խելքի
4. Մեր տների փոխանակությունը... չի գալիս:	գլուխ / խելքի
5. Հենց որ ձեր գործերը ... բերեք, մեզ իմաց տվեք, խնդրեմ:	գլուխ / խելքի
6. Ոչ ծնողները, ոչ ուսուցիչները չեն կարողանում այս երեխային... բերել. չի ուզում սովորել, ուզում է այժմվանից վաճառող դառնալ:	գլուխ / խելքի
7. Դերասանը ներկայացումից հետո դուրս է գալիս ու ... է տալիս:	գլուխ / խելքն
8. Նա... տվել է խմելուն, ոչնչով չի հետաքրքրվում:	գլուխ / խելքը

9. Ա) 

<p>հանդուգն          հանդգնել – дерзать          հանդգնություն – дерзость</p>
<p>համարձակ (ծ=ց)          համարձակվել – осмелиться (ծ=ց)          համարձակություն – смелость (ծ=ց)          անհամարձակ – робкий (ծ=ց)</p>
<p>ժողովուրդ (դ=թ)          ժողովրդական – народный (դ=թ)</p>
<p>գնահատել          գնահատական – оценка          անգնահատելի – неоценимый</p>



Մարդիկ **համարձակությունը** բարձր են գնահատում, բայց **համարձակ լինել** չի նշանակում **հանդուգն լինել**: Աշակերտի սրամիտ խոսքը դասարանին ծիծաղեցրեց, բայց ուսուցչուհին ասաց, որ դա **հանդգնություն է**: Եթե նորից **համարձակվես** քրոջս անհանգստացնել, այն ժամանակ կտեսնես իմ ուժը: Նա հրաշալի ձայն ունի, կարող է լավ երգիչ դառնալ, բայց շատ **անհամարձակ է**: Կան հայկական **ժողովրդական երգեր**, որ մեզ են հասել իններորդ-տասներորդ դարերից: Ի՞նչ **գնահատական ես ստացել** մաթեմատիկայից: Կոմիտասի ծառայությունը հայ **ժողովրդին անգնահատելի է**:

Կ) Կետերի փոխարեն գրեք աչ սյունակի բառերից մեկը.

Вместо точек поставьте одно из слов правого столбца:

1. Անծանոթի ... բուրդին զարմացրեց:	չհամարձակվես
2. ... այլևս քրոջս անհանգստացնել:	անհամարձակ
3. Փոքրիկ Սողոմոնը նայեց իր շուրջը և ... ձայնով սկսեց երգել:	հանդգնությունը
4. Կերջապես գիտնականը իր համար մի ... օգնական գտավ:	ժողովուրդը գնահատականը
5. Նշանավոր մարդկանց իսկական ... միայն ... կարող է տալ:	ժողովրդական
6. Հայկական ... հեքիաթների լեզուն մի քիչ տարբեր է մեր լեզվից:	անգնահատելի



### Պըլը Պուղին մեկիք Շահնազարին աղբյուրն է փանում, ծարավ ետ բերում

Ցանկանալով իր սրամտությամբ փայլել, մեկիք Շահնազարը մի անգամ փորձում է Պըլը Պուղուն խոսքի տակ թողնել:

Պա տեղի է ունենում հրապարակում, ուր ներկա են լինում շատ մեկիքներ և ազնվականներ: Եվ Պըլը Պուղին խոսքի տակ չի մնում.

– Մեկիքն ուզում է ինձ հաղթել, բայց չի իմանում, որ իրեն կարող եմ տանել աղբյուրը և ծարավ ետ բերել:

– Չե՛ն կարող, – ասում է մեկիք Շահնազարը:

– Կարող եմ, – ասում է Պըլը Պուղին:

– Չե՛ն կարող:

– Կարող եմ:

– Արի գնանք, – քաշում է մեկիք Շահնազարը Պըլը Պուղու թևից, – թե չկարողանաս, լավ իմացիր, որ գլուխդ կտրել եմ տալու:

– Գնանք, – ասում է Պըլը Պուղին և ճանապարհ ընկնում:

Երբ մեկիք Շահնազարն ու Պըլը Պուղին հասնում են աղբյուրին, Պըլը Պուղին ասում է.

– Կա՞ց\*, մեկիք, հապա ո՞վ կլինի մեր վկան, որ դու աղբյուրից ջուր ես խմել. դու կասես խմել եմ, ես էլ կասեմ՝ չէ՛, չես խմել: Ի՞նչ դուրս եկավ սրանից: Լավն էն է, որ գնանք մի վկա կանչենք:

– Լավ, – համաձայնում է մեկիք Շահնազարը:

– Հը՛, աղբյուրի ջուրը սա՞ռն էր, – հարցնում են մարդիկ, երբ Պըլը Պուղին և մեկիք Շահնազարը վերադառնում են հավաքվածների մոտ:

– Պուղին չթողեց, ասում է՝ վկա չկա, գնանք վկա կանչենք:

– Վա՛յ, քո տունը շինվի, մեկիք, բա մարդ էդքան միամիտ կլինի՞, – ասում են հավաքվածներն ու ծիծաղում:

\*կաց – погоди

### Բառեր

**աղբյուր** – родник (ղբ=խս)

**սրամտություն** – остроумие

**փայլել** – блестеть, блистать

**փորձել** – пытаться (ծ=ց)

**ազնվական** – дворянин

**հաղթել** – победить (ղ=խ)

**կտրել** – срубить

**վկա** – свидетель

**համաձայնել** – согласиться


**հավաքվածներ** – собравшиеся


**միամիտ** – наивный человек,

простака

10.Ա)

Ուղղ.-հայց հ.	սա	դա	սրանք	դրանք
Սեռ.-տր. հ.	սրա(ն)	դրա(ն)	սրանց	դրանց
Բաց. հ.	սրանից	դրանից	սրանցից	դրանցից
Գործ. հ.	սրանով	դրանով	սրանցով	դրանցով
Սերգ. հ.	սրանում	դրանում	սրանցում	դրանցում


Բ) 



(Սա – սեռ.) ... իմաստն ի՞նչ է:

→ Սրա իմաստն ի՞նչ է:

(Սա – սեռ. հ.) ... իմաստն ի՞նչ է: (դա – բաց. հ.) Ի՞նչ հասկացար ...: (Ղա – գործ. հ.) ... չես կարող շիշը բացել: (Սրանք – բաց. հ.) ... ո՞րն են ուզում: (Սա – բաց. հ.) ... երկու հազար տարի առաջ Հայաստանի տեղում եղել է Ուրարտու պետությունը (государство): (դրանք – գործ. հ.) Այդ կոշիկները մի հագնիր, ... չես կարողանա սար բարձրանալ: (Սա – սեռ. հ.) ... զինն ի՞նչ է: (Ղա – բաց. հ.) ... հետո երկար ժամանակ հարևանը այլևս չէր դիմում Պըլը Պուղուն:

11.Ա) 



- փորձել
- փորձ – опыт, попытка, эксперимент, репетиция (δ=g)
- փորձագետ – эксперт
- փորձագիտություն – экспертиза
- փորձադաշտ – экспериментальное поле
- չափափորձ – примерка
- փորձված – испытанный, бывалый
- անփորձ – неопытный
- փորձառու – опытный
- փորձանք – беда, злослучение
- փորձարկել – провести испытание
- փորձարկում – испытание




Ժողովրդական խոսքն ասում է՝ **փորձը փորձանք չէ**: Ժողովրդական մի իմաստուն ասացվածք (поговорка) էլ կա՝ **փորձված թանը անփորձ մածունից լավ է**: Տառիկս իր զավակներին հրաժեշտ տալիս երբեք լաց չէր լինում, ասում էր՝ **որ փորձանք չպատահի**, միայն օրհնում էր: Երգչախումբն արդեն հավաքվել է, բայց **փորձը** դեռ չի սկսվում, որովհետև խմբավարն ուշանում է: **Անփորձ** բժիշկներին մի դիմիր, **փորձադաշտ** մի դարձիր նրանց համար, ես քեզ խորհուրդ եմ տալիս իմ բժշկին դիմել, մաշատ **փորձառու** մասնագետ է: **Փորձագիտությունը** ցույց տվեց, որ գողություն չի եղել, դատական **փորձագետների** կարծիքով կալանավորին պետք է ազատել: Մի գլխարկ կամ կոշիկ ընտրելիս մարդիկ երկար **չափափորձ** են անում, իսկ ամուսնանալիս՝ ընդհակառակը, հասուն մարդիկ են, բայց ամուսնանում են կարծես փակ աչքերով: Այս շաբաթ մեր գործարանում մեր նոր էլեկտրական թոնիրն են **փորձարկում**, իսկ **փորձարկումից** հետո կսկսեն էլեկտրական թոնիրների վաճառքը:

Գ) Կետերի փոխարեն գրեք այ սյունակի բառերից մեկը.

Вместо точек поставьте одно из слов правого столбца:

- |   |  |
|---|--|
| <p>1. Մեր անգլերենի ուսուցչուհին մի ..., երիտասարդ օրիորդ է, իսկ մաթեմատիկայի ուսուցիչը ... մասնագետ է:</p> <p>2. Մի քանի օր է, որ ամուսինս շատ ուշ է տուն գալիս, ասում է՝ ինչ-որ մեքենա են ...:</p> <p>3. Տիգրանը ... անձայն անցնել ննջարանով իր սենյակը, որ ծնողներին չարթնացնի, բայց ծնողները քնած չէին, նրան էին սպասում:</p> <p>4. Հայրդ շատ ... մարդ է, լավ կլինի, որ դու նրա խորհուրդները լսես:</p> <p>5. Երբ մի քիչ ուշանում եմ, մայրս անհանգստանում է, չգիտեմ ինչու է կարծում, որ ինձ ... կպատահի:</p> <p>6. Մի վերարկու եմ կարել տալիս, արդեն երեք ... եմ արել:</p> <p>7. Առաջին տարին է, որ փոքր եղբայրս դպրոցում քիմիա է անցնում, ամեն օր լոգասենյակում մի նոր քիմիական ... է անում, ուզում է դատական ... դառնալ, այնպես որ մեր լոգասենյակը դարձել է իսկական ...:</p> | <p>փորձ<br/>փորձել</p> <p>փորձագետ</p> <p>փորձադաշտ</p> <p>չափափորձ</p> <p>փորձված</p> <p>անփորձ</p> <p>փորձառու</p> <p>փորձանք</p> <p>փորձարկել</p> |
|---|--|

12.Ա) 



ազնվական  
ազնվականություն – дворянство  
ազնիվ – честный, благородный (в том числе о металле)  
ազնիվ խոսք – честное слово  
անազնիվ – нечестный  
ազնվություն – честность  
անազնվություն – нечестность  
ազնվորեն – честно  
ազնվորեն ասած – честно говоря

փայլել  
փայլ – блеск  
փայլուն – блестящий, блистательный  
փայլեցնել – довести до блеска

հաղթել  
հաղթանակ – победа  
հաղթանակ տանել – одержать победу  
հաղթող – победитель  
հաղթված – побежденный  
անհաղթ – непобедимый

վկա  
վկայել – свидетельствовать

համաձայնել  
համաձայն – согласный, согласно  
համաձայնություն – согласие  
համաձայնեցնել – согласовать



Նա անազնիվ երիտասարդ է, երբեք իր խոստումը չի կատարում: Ոսկին ազնիվ մետաղ է: Մարդիկ բարձր են գնահատում ոչ միայն համարձակությունը, այլև ազնվությունը: Ազնվորեն ասած՝ ես քեզ հետ համաձայն չեմ: Ժամանակակիցները (современники) վկայում են, որ Վահրամ Փափազյանը փայլուն էր կատարում Օթելլոյի դերը: Կինդ այնպես է փայլեցնում ձեր հատակը, որ մարդ վախենում է ձեր տուն գալ ու հատակին ոտք դնել: Տիգրան Պետրոսյանը փայլուն հաղթանակ տարավ: Այս խաղում հաղթողներ ու հաղթվածներ չկան, խաղն ավարտվեց ոչ ոքի: Դավիթ Անհաղթը հինգերորդ դարի հայ փիլիսոփա է: – Մայրիկ, քննություններից հետո գնանք Ղրիմ, համաձայն ես: – Ես համաձայն եմ, բայց չեմ կարծում, թե հայրիկն էլ իր համաձայնությունը փա: Այս ամառ նա շատ զբաղված է, ինչ-որ փորձարկումներ են անում, իսկ նրա տնօրենի հետ որևէ բան համաձայնեցնել անհնար է:



Կետերի փոխարեն գրեք աջ սյունակի բառերից մեկը.

Вместо точек поставьте одно из слов правого столбца:

- |  |                   |
|--|-------------------|
| 1. 1918թ. հայ ժողովուրդը Սարդարապատում ... տարավ:                                      | ազնվականությունը  |
| 2. Երրորդ տաքսու վարորդը վերջապես ... Արմենին ու Անահիտին Գարնանային փողոց տանել:      | անազնվություն     |
| 3. Ջոն մտածում էր, որ իր կողմից ... կլինի գալ ու գրավել միսիս Դիլփլիի տեղը:            | ազնվորեն          |
| 4. Ուսանողուհու սև մագերը ... էին արևի տակ և նրանց ... զարմացնում էր տղաներին:         | փայլ<br>փայլել    |
| 5. Մեր դասարանում մի տղա կար, ինքն իրեն ... էր կարծում ու միշտ բոլորի հետ կռվում էր:   | փայլուն հաղթանակ  |
| 6. – Տղաներ, ֆուտբոլը վերջացավ, ո՞վ ...:   | փայլեցնել         |
| 7. – Ոչ ոք, այսօրվա խաղում ... ու ... չկա:   | հաղթել            |
| 8. Տղաներին կալանքից ազատելու համար հարկավոր էր Ռևազի ցուցմունքը քննիչի հետ ...:       | հաղթող<br>հաղթված |
| 9. ... ասած՝ դժվար բան է թուրքիայում հայ լինել:  | անհաղթ            |
| 10. Դարաբաղի ... նույնպես սիրում էր մեկից Շահնագարի գվարձախոսին:                       | համաձայնել        |
| 11. Աղջիկը ... կաթսաներն ու թավաները, բայց խորթ մայրը (мачеха) դարձյալ դժգոհ էր մնում: | համաձայնեցնել     |





13. Հետևյալ հարցերը դասավորեք պատմվածքի տրամաբանությանը և ընթացքին համապատասխան կարգով և պատասխանեք նրանց.



Расположите следующие вопросы в том порядке, который соответствует логике и ходу рассказа, и ответьте на них:

1. Ի՞նչ է պատասխանում մելիք Շահնազարը:
2. Աղբյուրի մոտ ի՞նչ է ասում Պըլը Պուղին մելիքին:
3. Որտե՞ղ և ու՞մ ներկայությամբ է մելիք Շահնազարը փորձում Պըլը Պուղուն խոսքի տակ թողնել:
4. Ու՞ր են գնում մելիք Շահնազարն ու Պըլը Պուղին միասին:
5. Ի՞նչ կարող է անել Պըլը Պուղին ցույց տալու համար, որ մելիքն իրեն չի կարող հաղթել:
6. Ինչու՞ է մելիք Շահնազարը ուզում Պըլը Պուղուն խոսքի տակ թողնել:
7. Ինչու՞ են մելիքներն ու ազնվականները ծիծաղում մելիք Շահնազարի վրա:
8. Ի՞նչ են հարցնում մարդիկ, երբ մելիքն ու Պըլը Պուղին աղբյուրի մոտից վերադառնում են:



### Հիմարների և գժերի ցուցակը

Երբ մելիք Շահնազարը տեսնում է, որ չի կարողանում Պըլը Պուղուն հաղթել, մտածում է.

– Հիմարների և գժերի ցուցակը գրել կտամ Պըլը Պուղուն, հո իր անունը թողած՝ ուրիշի անունը չի՞ գրի: Պուղին ի՞նչ է իմանում, թե ինչի համար են ցուցակը գրել տալիս:

– Հը, խանում, – դիմում է մելիք Շահնազարը իր տիկնոջը, – ի՞նչ ես ասում, լավ չե՞մ մտածել, կանչեմ Պուղուն, թող իր ձեռքով իր անունը գրի հիմարների ցուցակում: Այն ժամանակ նրա սանձը իմ ձեռքում կլինի, էլ մեծ-մեծ չի կարող խոսել: Շոցիցս ցուցակի ծայրը ցույց կտամ և կասեմ՝ «Պուղի, ցուցակը»: Իսկույն ձայնը կկտրի:

Հենց այդ ժամանակ ներս է մտնում Պուղին:

– Մելիքն ապրած կենա՞, ինձ կանչե՞լ ես:

– Այո, կանչել եմ, ինձ հարկավոր է մեր երկրի բոլոր հիմարների ու գժերի ցուցակը: Կարո՞ղ ես կազմել:

– Ինչու՞ չէ, մելիքն ապրած կենա, առավոտյան ցուցակը պատրաստ կներկայացնեմ:

Հետևյալ օրը Պըլը Պուղին ներկայացնում է հիմարների ցուցակը: Մելիք Շահնազարը նայում է, տեսնում, որ Պըլը Պուղին հիմար մարդկանց ցուցակի մեջ առաջին անունը գրել է՝ մելիք Շահնազար:

– Պուղի՛, դու ես ի՞նչ ես արել:

– Ի՞նչ է, մելիքն ապրած կենա:

– Իմ անունը ինչու՞ ես գրել, քո անունը գրելու փոխարեն: Ի՞նչ է, ես հիմա՞ր եմ, ես գի՞ժ եմ: Եթե չկարողացար հաստատել, գլուխդ կտրել կտամ:

– Մելիքն ապրած կենա, թե բարկանաս, չեմ կարող բացատրել, իսկ եթե հանգիստ մնաս, այն ժամանակ կբացատրեմ:

– Ասա՛, շուտ արա, դու քանի՞ գլխանի ես<sup>3</sup>, որ իմ անունը գրել ես հիմարների ու գծերի ցուցակում:

– Մեկիքն ապրած կենա, ես ասեմ, դու լսիր: Լավ է, որ խանումն էլ այստեղ է: Հիշու՞մ ես, որ սրանից երկու տարի առաջ Պարսկաստանից մի առևտրական էր եկել: Դու նրան տեսե՞լ էիր մի ուրիշ տեղ, դու նրան ճանաչու՞մ էիր:

– Հետո ի՞նչ, որ չէի ճանաչում, չէի տեսել:

– Հետո այն որ խելոք մարդը մի անծանոթ մարդու հազար թուման փող չի տա, թե դու ինձ համար Պարսկաստանից թանկարժեք քարեղեն կբերես: Ապա, ասա, խանում ջան, խելոք մարդը էդքան ոսկին կտա ճանապարհով գնացող<sup>4</sup> օտարականի, թե ինձ համար ադամանդ կբերե՞ս: Սա խելքը գլխին մարդու գո՞րծ է:

– Իսկ եթե բերե՞ց, – ասում է մեկիք Շահնազարը բարկացած, – այն ժամանակ ի՞նչ կասես:

– Այն ժամանակ, մեկիքն ապրած կենա, ես քո անունը կջնջեմ, նրա անունը կգրեմ:

<sup>1</sup> իր անունը թողած – оставив свое имя

<sup>2</sup> Մեկիքն ապրած կենա – да будет жив Мелик!

<sup>3</sup> դու քանի՞ գլխանի ես – как ты смеешь?

<sup>4</sup> գնացող – идущий

## Բառեր

**հիմար** – дурак

**ցուցակ** – список

**սանձ** – вожжи

**նրա սանձը իմ ձեռքում**

**կլինի** – он будет в моих руках

**ծոցից** – из-за пазухи

**ծայր** – кончик

**իսկույն** – сразу же

**կազմել** – составить

**ներկայացնել** – представить

**փոխարեն** – вместо

(послелог)

**հաստատել** – подтвердить

**առևտրական** – торговец

**բացատրել** – объяснить

**թանկարժեք քարեղեն** –


драгоценные камни

**օտարական** – чужестранец

**ադամանդ** – бриллиант

**ջնջել** – стереть




14.Ա) 

В армянском языке часто используется прием повтора для образования наречий от существительных или прилагательных:




տեղ-տեղ շնորհավոր լինի  
 կամաց-կամաց – потихоньку  
 մեծ-մեծ խոսել – бахвалиться  
 սուրճը տաք-տաք խմել – пить кофе горячим  
 հիվանդ-հիվանդ աշխատանքի գալ – прийти на работу совсем больным  
 ուշ-ուշ այցելել – редко посещать  
 շուտ-շուտ զանգել – часто звонить  
 չոր-չոր պատասխանել – сухо отвечать  
 արագ-արագ մի բան ուտել – быстро (спешно) перекусить

 Բ). Կետերի փոխարեն օգտագործեք կրկնությանը կազմված համապատասխան մակբայ.

Вместо точек поставьте подходящее наречие, образованное при помощи повтора:

1. Թեյը տաք է, ես չեմ սիրում թեյը ... խմել: 2. Նա բոլորովին հիվանդ է, և այդպես ... եկել է հյուր: 3. Նա չոր մարդ է, հարցերին միշտ ... է պատասխանում: 4. Ես նրանից լուր չունեմ, ... է գալիս, զանգում: 5. Մենք մեր ուսուցչուհուն չենք մոռանում, ... այցելում ենք: 6. Ընկերդ ասում է, թե ինքը կարող է ծովը լողալով անցնել, բայց ես նրան չեմ հավատում, երևում է, որ սիրում է ... խոսել: 7. – Ո՞նց եք, ի՞նչ կա: –..., նորություն չկա:


15.Ա) 

Суффикс **-անի** образует прилагательное со значением "имеющий, обладающий":

Դու քանի՞ գլխանի ես – (досл.) ты о скольких головах?




անվանի – именитый  
 լեզվանի – языкастый, с хорошо подвешенным языком  
 մեծքրանի  
 երկուդռնանի  
 երեքգլխանի  
 միաչքանի и т.д.

 Բ) Կետերի փոխարեն գրեք համապատասխան ածական.


Вместо точек поставьте соответствующее прилагательное:

1. – Նրա ամուսինը քեզ դուր եկա՞վ: – Այո, բարեսիրտ մարդ է, բայց ի՞նչ մեծ քիթ ունի: – Ճիշտ է, ... է: 2. – Տատիկ, իսկ դները քանի՞ գլուխ են ունենում: – Մեկ, երեք, յոթ: Տարբեր հեքիաթներում տարբեր դներ են լինում: – Ուրեմն, լինում են ..., ..., ... դներ: 3. – Փոքր բույրդ ի՞նչ սուր լեզու ունի: – Հա, մի քիչ ... է: 4. – Լավ չեմ հիշում, ձեր զգեստապահարանը երկու՞ դուռ ունի, թե՞ երեք: – Երեք, մեր պահարանը ... է: 5. Կիկլոպը ... կենդանի է: 6. Նրա ամուսինը շատ հայտնի ու ... գիտնական է:

16.Ա) 


род. п.+փոխարեն=вместо кого, чего; вместо того, чтобы


Բ. 



Սենյակը հավաքելու փոխարեն հեռախոսո՞ւմ են խոսում:

սենյակը հավաքել → գիրք կարդալ, դասդ սովորել, քնել


Գ) 



(մի սովորական զգեստ հագնել) Ինչու՞ ես փայլուն զգեստդ հագել ...:

→ Ինչու՞ ես փայլուն զգեստդ հագել մի սովորական զգեստ հագնելու փոխարեն:

(մի սովորական զգեստ հագնել) Ինչու՞ ես փայլուն զգեստդ հագել ...: (աղբյուրից ջուր բերել) Մենք ջուր չունենք, իսկ նա նստած հեռուստացույց է նայում ...: (փոքր կաթսան վերադարձնել) Հարևանը կաթսան վերցրեց ու մտքում ծիծաղեց Նասրեդինի վրա ...: (քարը վերցնել) Մարդիկ բաղնիսի դռանը ընկնում էին ու շարունակում իրենց ճանապարհը ...:

17.Ա) 



թանկարժեք = թանկ + արժեք  
թանկ – дорогой, недешевый (≠ էժան, էժանագին)  
թանկագին – дорогой (прям. и перен.)  
թանկանալ – подорожать (≠ էժանանալ)  
թանկություն – дороговизна (≠ էժանություն)  
թանկացում – подорожание (≠ էժանացում)  
արժեք – стоимость (զին – цена)  
արժեքավոր – ценный  
անարժեք – ничего не стоящий  
անզին – бесценный



Ի՞նչ **արժե՞** խաղողը: Նրա խոստումները ոչինչ **չարժեն**:  
– Այս **ինչ թանկություն** է, հիշու՞մ եք՝ **թանկացումից առաջ** ձուն արժեր մի քանի կոպեկ:  
– Հիմա ամեն ինչ **թանկացել է, էժան բան** չի մնացել:  
– Քո մատանու քարը **թանկարժեք է**, մասնագետը ինչպե՞ս **գնահատեց** այն:  
– Ես կարծում էի, թե ադամանդ է և շատ **արժեքավոր** մատանի է, իսկ նա ասաց, որ **անարժեք** քար է: Բայց այս մատանին ինձ համար **անզին է, զին չունի**, որովհետև մորս մատանին է:


<sup>1</sup>Глагол арժենալ спрягается, как գիտենալ՝ արժե/արժի, արժեն, արժեր, արժեին.

Դ) Կետերի փոխարեն գրեք աջ սյունակի բառերից մեկը.


Вместо точек поставьте одно из слов правого столбца:


1. Ի՞նչ ... այս գղալներն ու պատառաբաղները:
2. Ի՞նչ ... այս ձմերուկը:
3. Եթե դուք ծիշտ եք ասում և այս մատանու քարը ադամանդ է, ապա մատանին շատ ... է, իսկ եթե անարժեք քար է, ապա շատ ... է:
3. Մինաս Ավետիսյանի շատ ... նկարներ չեն պահպանվել (не сохранились):
4. Ես սովորաբար իմ նամակներն այսպես եմ սկսում ... բարեկամ:

արժեքավոր
արժե
արժեն
թանկ
էժան
թանկագին

18.Ա) 




կազմել կազմ – состав, переплет կազմություն – сложение, образование կազմվածք – сложение, комплектация կազմվել – слагаться, образовываться կազմակերպել – организовать կազմակերպվել – организоваться կազմակերպված – организованный կազմակերպություն – организация
ներկայացնել ներկայացում – представление (театральное) ներկա ≠ բացակա (присутствующий ≠ отсутствующий) ներկայություն ≠ բացակայություն (присутствие ≠ отсутствие)
բացատրել բացատրություն – объяснение բացատրելի ≠ անբացատրելի (объяснимый ≠ необъяснимый)
առևտրական առևտուր – торговля, առևտուր անել – торговать
օտարական օտար – чужой, иностранный (язык) օտարություն – чужбина
<p> Ի՞նչ գեղեցիկ է այս գրքի կազմը: Երևում է, որ այս կինը երիտասարդ ժամանակ լավ կազմվածք է ունեցել: Մեր դասարանը շատ կազմակերպված էր: "Առևտուր" բառը կազմված է ան և տուր բառերից: Մեր դպրոցի օտար լեզվի ուսուցիչը հաճախ օտար լեզվով ներկայացումներ էր կազմակերպում: Հայերենի վերջին դասին բոլորն եկել էին, բոլորը ներկա էին, ոչ ոք բացակա չէր: Մարդիկ օտարության մեջ հայտենիքն ավելի են սիրում: Այսօր դպրոցում բայի կազմությունն անցանք, դասարանի կեսը ուսուցչի բացատրությունից բան չհասկացավ:</p>

 Բ) Կետերի փոխարեն գրեք աջ սյունակի բառերից մեկը.

Вместо точек поставьте одно из слов правого столбца:

- |   |   |
|---|---|
| <ol style="list-style-type: none"> <li>1. Գրականության ուսուցիչը դպրոցում թատերական խմբակ ...:</li> <li>2. Ընկերուհին ու ես նույնպես խաղում էինք մեր թատերական խմբակի ...:</li> <li>3. Վերջին ներկայացումից հետո մի ... տխրություն զգացի և մեր խմբակի ամբողջ ... գնացինք զրոսանքի:</li> <li>4. Դպրոցում ի՞նչ ... լեզու եք անցել, անգլերե՞ն, թե՞ գերմաներեն:</li> <li>5. Մաթեմատիկայի իմ ուսուցիչը՝ Հուսիկ Մելիք-Աղամյանը, դժվար ... բաները այնպես էր բացատրում, որ իր աշակերտները մեկ անգամից էին հասկանում:</li> <li>6. Թե խելք ունես, բարեկամիդ հետ ... չես անի:</li> </ol> | <p>առևտուր</p> <p>բացատրելի</p> <p>անբացատրելի</p> <p>օտար</p> <p>կազմով</p> <p>կազմակերպեց</p> <p>ներկայացմանը</p> |
|---|---|

Употребляются с определенным артиклем	Употребляются без артикля
<ul style="list-style-type: none"> <li>• <b>слово, дополненное сущ-ным в род. п.</b></li> <li>• <b>իմ, քո, նրա, իր, մեր, ձեր, նրանց, իրենց</b></li> <li>• <b>այս, այդ, այն, նույն</b></li> <li>• <b>ո՞ր</b></li> <li>• <b>մյուս, հաջորդ, նախորդ</b></li> </ul>	<ul style="list-style-type: none"> <li>• <b>ի՞նչ</b></li> <li>• <b>ուրիշ</b></li> <li>• <b>ինչ-որ</b></li> <li>• <b>ինչպիսի՞, այսպիսի, այդպիսի, այնպիսի</b></li> </ul>
<p><b>բոլոր</b> + сущ. во мн. ч.  <b>ամբողջ</b> + сущ. в ед. ч.</p>	<p><b>մի</b> + сущ. в ед. ч.  <b>յուրաքանչյուր</b> + сущ. в ед. ч.  <b>ամեն (մի)</b> + сущ. в ед. ч.  <b>որևէ</b> + сущ. в ед. ч.</p>

 Կետերի փոխարեն օգտագործեք "ցուցակ" բառը.

Մեկիք Շահնազարը հրամայեց պատրաստել գծերի ու հիմարների ...: "Ես նրան մի ... գրել կտամ, որ էլ չհամարձակվի ինձ ձեռ առնել", մտածեց մեկիքը: ... արդեն պատրաստ է: "Սա ի՞նչ է, սա թղթի կտոր է, սա ... չի", բարկացավ մեկիքը: "Ռու քանի՞ գլխանի ես, որ ասում ես, թե սա գծերի ու հիմարների ... է": "Մեկիքն ապրած կենա, սա իմ ... է, իմ ... այս հիմարներից է կազմված, եթե ուզում ես, դու էլ քո ... կազմիր", իր մտքում ասաց Պուղին: "Այսպիսի ... ես դեռ չէի տեսել, այս ... վերցրու և մի ուրիշ ... ներկայացրու: Ես քո կազմած բոլոր ... կստուգեմ, եթե որևէ ... ինձ դուր չգա, գլուխդ կտրել կտամ: Եվ տե՛ս, ամեն ... ինձ մի՛ ցույց տուր, նախ ինքդ ամբողջ ... կարդա՛, ստուգի՛ր: "Ո՞ր ... նրան ցույց տամ, որը ցույց չտամ": "Բերեցի՞ր ..., տուր տեսնեմ, այդ ի՞նչ ... է, սա խելոքների՞ ... է, թե՞ նույն ... է, որ ես արդեն տեսել եմ":



20. Գետևյալ նախադասություններում երրորդ դեմքի եզակի թվի դերանվան փոխարեն օգտագործեք համապատասխան գոյական՝ "Հիմարների և գծերի ցուցակը" տեքստի հերոսներից.



В следующих предложениях замените везде местоимение третьего лица единственного числа соответствующим существительным – одним из персонажей текста "Հիմարների և գծերի ցուցակը":

1. Նա տեսնում է, որ չի կարողանում նրան հաղթել:
2. Նա մտածում է, որ նրան գծերի ու հիմարների ցուցակը գրել տա:
3. Նա ի՞նչ է իմանում, թե ինչի համար է այդ ցուցակը:
4. Նա անպայման իր անունը կգրի այդ ցուցակում:
5. Այն ժամանակ նա այլևս չի կարող մեծ-մեծ խոսել, և նրա սանձը նրա ձեռքում կլինի:
6. Այդ ժամանակ նա ներս է մտնում:
7. Նա խոստանում է առավոտյան ցուցակը պատրաստ ներկայացնել:
8. Առավոտյան նա ցուցակը բերում է:

9. Լա նայում է ու տեսնում, որ նա ցուցակում առաջինը իր անունն է գրել:

10. Լա բարկանում է, բայց նա բացատրում է, թե ինչու է այդպես արել:

11. Սրանից երկու տարի առաջ նա եկել էր այստեղ:

12. Լա նրան առաջ չէր ճանաչում, ոչ մի տեղ չէր տեսել, բայց նրան փող տվեց ու խնդրեց իր համար թանկարժեք քարեղեն բերել:

13. Եթե նա իսկապես քարեղենը բերի, նա նրա անունը ցուցակից կջնջի ու նրա անունը կգրի նրա անվան փոխարեն:



21. Պատմե՛ք տեքստը հիմնվելով բանալի բայերի վրա.



Перескажите рассказ, опираясь на ключевые глаголы:

Տեսնել, չկարողանալ հաղթել, գրել տալ, չիմանալ, մտածել, սանձը ձեռքում լինել, մեծ-մեծ չխոսել, ծայրը ցույց տալ, ձայնը կտրել:

Ներս մտնել, կանչել, կազմել, ներկայացնել, գրել, հիմար լինել, հաստատել, կտրել տալ, բարկանալ, չկարողանալ բացատրել, հանգիստ մնալ, բացատրել:

Հիշել, գալ, տեսնել, ճանաչել, փող տալ, բերել, ջնջել, գրել:



## Չարենցի<sup>1</sup> կարակներից

Շիրվանզադեն<sup>1</sup> ու Արեւյանը<sup>2</sup> տարիներով խռով էին և իրար հետ չէին խոսում: Շիրվանզադեն ասում էր.

– Իմ պիեսներով դերասան դարձավ Արեւյանը:

Իսկ Արեւյանը.

– Իմ խաղի շնորհիվ դրամատուրգ հռչակվեց Շիրվանզադեն:

Չարենցը երկուսին էլ սիրում էր և որոշում է հաշտեցնել: Նրանց հրավիրում է ընթրիքի, բայց մեկը մյուսից անտեղյակ: Ներկա էին նաև Ակսել Բակունցը<sup>1</sup> և Գուրգեն Մահարին<sup>2</sup>:

Երկու հրավիրյալները գալիս նստում են: Նախ երկուսն էլ իրար հանդեպ դիրք են բռնում, ըստ Մահարու. “փքվեցին, չեն խոսում”:

Բայց Չարենցի անկեղծ բաժակաճառից հետո երկու պատկառելի հայերը ոտքի են կանգնում և հուզված ողջագուրվում են: Շիրվանզադեն լցնում է Արեւյանի բաժակը, իսկ Արեւյանը խորովածի կտոր է դնում Շիրվանզադեի ափսեի մեջ:

Այս տեսնելով՝ Չարենցը դառնում է Բակունցին և Մահարուն ու ասում է.

– Նորից կռվեցնե՞մ նրանց:

– Պետք չէ, – ժպտալով ասում է Բակունցը: Բայց չարաճճի Չարենցը դառնալով Շիրվանզադեին, կատակով ասում է.

– Իսկապես ասած, Շիրվան, Հովհաննեսը որ չլիներ, քո պիեսները ո՞վ պիտի խաղար<sup>3</sup>:

**“Նավասարդ” ամսագրից**

<sup>1</sup> Եղիշե Չարենց, Շիրվանզադե, Ակսել Բակունց, Գուրգեն Մահարի – известные армянские писатели и поэты XX в.

<sup>2</sup> Հովհաննես Արեւյան – известный армянский актер XX в.

<sup>3</sup> Հովհաննեսը որ չլիներ, քո պիեսները ո՞վ պիտի խաղար – если бы не Оганес, кто бы играл твои пьесы?

**Բառեր**

**խռով լինել** – быть в ссоре

**շնորհիվ** – благодаря  
(последлог)

**հռչակվել** – прославиться

**հաշտեցնել** – мирить

**անտեղյակ** – без ведома

**հրավիրյալ** – приглашенный

**հանդեպ** – по отношению к

**դիրք բռնել** – принять позу

**փքվել** – дуться

**անկեղծ** – искренний

**պարկառու** – уважаемый

**ողջագուրվել** – обниматься,

приветствовать друг друга

(ղջ=խջ)

**չարածճի** – проказник

22. Ա) ☞

տարիներով խռով էին – годами были в ссоре

Դ) Կետերի փոխարեն գրեք աջ սյունակի բառերից մեկը.

Вместо точек поставьте одно из слов правого столбца:

1. Նա ... խոսում է, հոգնեցնում:	ամիսներով
2. Վազգենն ու ես ... իրար չենք տեսնում, բայց իրար չենք մոռանում, երբ հանդիպում ենք, հին ծանոթների նման ենք:	ժամերով
3. Կարիներն ... դասի չի գալիս, ասում են, թե աշխատում է ինչ-որ տեղ:	չարաթներով
4. Եղբայրս ... նամակ չի գրում, տեղեկություն չի տալիս իր մասին, մայրս անհանգիստ է:	օրերով

23. Ա) ☞

խռով (լինել) ≠ հաշտ (ապրել)  
 խռովել, կռվել ≠ հաշտվել  
 կռվեցնել ≠ հաշտեցնել  
 խռովկան – обидчивый  
 հաշտություն (կնքել) – (заключить) мир

Դ) Լրացրե՛ք բացերը (վերցրե՛ք "խռովել, կռվել" դաշտի բառերից).

Заполните пропуски (возьмите слова из лексического поля **խռովել, կռվել**):

Քույրս չարածճի էր, բայց ... չէր: Իսկ եթե ... էր, շուտ հաշտվում էր, երկար չէր կարող ... լինել: Հիմա մեծացել է ու երբ իր ընկեր-ընկերուհիները ... են, նա կարողանում է նրանց հաշտեցնել:

Դ) Լրացրե՛ք բացերը (վերցրե՛ք "հաշտ, հաշտվել" դաշտի բառերից).

Заполните пропуски (возьмите слова из лексического поля **հաշտ, հաշտվել**):

Սևրի ... կնքվեց 1918թ: Մեր հարկի հարևանները ... են ապրում, երբեք չեն կռվում և կարիք չի լինում նրանց ...:





24. Պատմեք, թե ինչ են ասում և անում տեքստի հերոսները.



Скажите, что говорят и делают персонажи текста:

Շիրվանգաղեն ասում է.  
 Հովհաննես Աբելյանը ասում է.  
 Չարենցն ասում է.  
 Ակսել Բակունցն ասում է.  
 Գուրգեն Մահարին ասում է.  
 Շիրվանգաղեն ...  
 Աբելյանը ...  
 Չարենցը ...  
 Բակունցը ...  
 Մահարին ...



*Zeynep Karapetyan*



25. Պատմեք նույն տեքստը՝ հիմնվելով բանալի բայերի վրա.



Расскажите тот же текст по ключевым глаголам:

Խոռով լինել, չխոսել, ասել, դառնալ, պատասխանել, հռչակվել:  
 Սիրել, որոշել հաշտեցնել, հրավիրել, ներկա լինել:  
 Գալ նստել, դիրք բռնել, "փքվել, չխոսել":  
 Ուտքի կանգնել, ողջագուրվել, լցնել, դնել. տեսնել, ասել,  
 կռվեցնել:  
 Ժպտալ, ասել, չլինել, խաղալ:

# Урок 18. Տառնութեան դաս

## Грамматика

Степени сравнения прилагательных и наречий.

Мн. ч. существительных на -ր и словообразовательный суффикс -ր.

Послелогои շնորհիվ, չափ.

Союзы իրև, թեև (թեպետ) ... սակայն (բայց), մինչ (մինչդեռ).

Притяжательный артикль как показатель лица.

Суффиксы -արան, -ելի (-ալի), -ալոր, -յան.

## Тексты

Ուսուցի՞չ, թե՞ սան "Մուսա լեռան քառասուն օրը" վեպից (Ֆրանց Վերֆել)

Հայը, հայերը (Վարդես Պետրոսյան)

Աշխարհի ամենաօրինակելի տղան (Ազատ Շահինյան)

## Стихи

Հեյ, ազահ մարդ, հեյ, անգոհ մարդ (Հովհ. Թումանյան)

Այսբան փոքրիկ մի մորից (Հովհ. Շիրազ)

## Степени сравнения прилагательных и наречий

### Ածականների և մակբայների համեմատության աստիճանները



Сравнительная степень прилагательных и наречий в армянском языке образуется при помощи наречия **ավելի** (более), которое ставится перед качественными прилагательными и некоторыми наречиями образа действия, меры и степени. Эти наречия, подобно прилагательным, могут иметь степени сравнения.

բարի "добрый" – ավելի բարի "добрее (более добрый)"

ուժեղ "сильный" – ավելի ուժեղ "сильнее (более сильный)"

գեղեցիկ "красивый" – ավելի գեղեցիկ "красивее (более красивый)"

շատ "много" – ավելի շատ "больше"

քիչ "мало" – ավելի քիչ "меньше"

արագ "быстро" – ավելի արագ "быстрее"

Превосходная степень образуется при помощи приставки **ամենա-** "самый".

բարի – ամենաբարի


ուժեղ – ամենաուժեղ

գեղեցիկ – ամենագեղեցիկ


քիչ – ամենաքիչը

արագ – ամենաարագը

Сравнительная степень служит для сравнения двух предметов или качеств по данному признаку. Возможны два случая:



сравнительная степень прилагательных и наречий	
Существительное, с которым сравнивается другое существительное, ставится в отложительном падеже. При этом наречие <b>ավելի</b> можно и опустить.	Перед существительным, с которым сравнивается другое существительное, ставится союз <b>քան</b> "чем".
Կարինեն Մարինեից (ավելի) բարի է: Սուրենը Ռուբենից (ավելի) ուժեղ է: Անին Աստղիկից (ավելի) գեղեցիկ է:	Կարինեն ավելի բարի է, քան Մարինեն: Սուրենը ավելի ուժեղ է, քան Ռուբենը: Անին ավելի գեղեցիկ է, քան Աստղիկը:
Արսենը Արմենից (ավելի) քիչ է կարողում: Այս աղջիկը այն տղաներից (ավելի) արագ է վազում:	Արսենը ավելի քիչ է կարողում, քան Արմենը: Այս աղջիկը ավելի արագ է վազում, քան այն տղաները:
превосходная степень прилагательных и наречий	
Կարինեն ամենաբարի աղջիկն է: = Կարինեն <b>ամենաբարին</b> է: Սուրենը ամենաուժեղ տղան է: = Սուրենը <b>ամենաուժեղն</b> է: Անին ամենագեղեցիկ աղջիկն է: = Անին <b>ամենագեղեցիկն</b> է: Արսենը <b>ամենաքիչն</b> է կարողում: Այս աղջիկը <b>ամենաարագն</b> է վազում:	

 В формах превосходной степени обратите внимание на определенный артикль обобщающего (родового) слова – տղան, աղջիկը. Родовое слово можно опустить, тогда **артикль переходит на прилагательное в превосходной степени.**

**Превосходная степень наречий** также употребляется с **определённым артиклем** (т.к. нет другого компонента, которому можно было бы передать артикль).

Превосходная степень некоторых прилагательных образуется также при помощи суффикса -ազուն. Ср.


ամենալավ "самый хороший" – լավազուն " (наи)лучший"  
 ամենավատ "самый плохой" – վատազուն " (наи)худший"  
 ամենամեծ "самый большой" – մեծազուն "величайший"  
 ամենախոշոր "самый крупный" – խոշորազուն "крупнейший"  
 ամենաուժեղ "самый сильный" – ուժեղազուն "сильнейший"  
 ամենաբարձր "самый высокий" – բարձրազուն "высший"  
 նվազազուն "малейший"  
 գերազուն "верховный"

Как и в русском языке, регулярная форма образования превосходной степени ամենա- (самый) употребляется скорее в прямом значении, а форма -ազուն (наи...ший) в переносном значении. Ср.

ամենամեծ դասատենյակը, ու: մեծազուն նկարիչը  
 ամենախոշոր ուլունքը, ու: խոշորազուն գիտնականը  
 ամենաուժեղ ձին, ու: ուժեղազուն շախմատիստը  
 ամենաբարձր ծառը, ու: բարձրազուն կրթությունը  
 նվազազուն սխալը, Գերազուն խորհուրդը

## Վարժություններ

1. 



– Ձեր փոքր եղբայրը ուշադի՞ր է: (մեծ եղբայր)

→ – Այո, նա *իմ մեծ եղբորից* (ավելի) ուշադիր է:  
– Այո, նա ավելի ուշադիր է, *քան իմ մեծ եղբայրը*:

- Ձեր փոքր եղբայրը ուշադի՞ր է: (մեծ եղբայր)
- Ձեր ճաշասենյակը մե՞ծ է: (ննջարան)
- Երկրորդ հարցը հե՞շտ էր: (առաջին)
- Սրբուհին բարեկի՞րթ է: (քույրը)
- Նրա վերջին վեպը հետաքրքի՞ր է: (մյուս բոլոր վեպերը)
- Այս զգեստը գեղեցի՞կ է: (քո վարդագույն զգեստը)
- Ձեր հաշվապահը ժլա՞տ է: (տնօրեն)
- Նա այսօր ու՞շ վերադարձավ: (երեկ)
- Նրանք հաճա՞խ են գնում թատրոն: (ես)
- Հարևանուհուդ մուշտակը լա՞վն է: (իմը)
- Նասրեդինը խորամա՞նկ է: (հարևան)
- Մելիք Շահնագարը հիմա՞ր է: (առևտրական)
- Պըլը Պուղին խելոք է ու փորձվա՞ծ: (մելիք Շահնագար)

2. 




Մետրոն հարմար է:  
Մեքենան ...:

→ Մեքենան *ավելի հարմար է, քան* մետրոն:  
Մեքենան *մետրոյից (ավելի) հարմար է*:

1. Մետրոն հարմար է: Մեքենան ...:
2. Գնացքը արագ է գնում: Օդանավը ... (թռչել)
3. Հայերենը դժվար լեզու է: Չինարենը ...:
4. Այսօրվա թերթը հետաքրքիր է: Երեկվա թերթը ...:
5. Աշնանը Սոսկվայում ցուրտ է: Չմռանը ...:

3. 



Սա փոքր սենյակ է:

→ Սա մեր բնակարանի *ամենափոքր* սենյակն է:

Սա փոքր սենյակ է: Սա լայն փողոց է: Սա գեղեցիկ նկար է: Դա լավ վկայական է: Սրանք հին դրամներ են: Սա կարճ դաս է:

4. 



Ես շուտ եմ գարթնում:  
Եղբայրս ինձնից շուտ է գարթնում:  
Բայց ծնողներս ...:

→ Բայց ծնողներս *ամենաշուտն* եմ գարթնում:

Ես շուտ եմ գարթնում: Եղբայրս ինձնից շուտ է գարթնում: Բայց ծնողներս ...: Բաբկենը արագ է վազում: Եղբայրս Բաբկենից արագ է վազում: Բայց ես ...: Ես ուշ եմ պառկում քնելու: Քույրս ինձնից ուշ է պառկում: Բայց ծնողներս ...: Կարինեն վատ է նկարում: Նարինեն Կարինեից վատ է նկարում: Բայց Մարինեն ...: Հովիկը լավ է պարում: Հարութը Հովիկից լավ է պարում: Բայց սասունցիները ...:



## Ուսուցի՛չ թե՛ սան



ՄԱՍԻՍԻ ԳՐԱԳՐԱԿԱՆ ԳՐԱԳՐԱՆՈՒՄՆԵՐԻ ՄԱՍԻՍԻ

Երբ Գաբրիելը ներս մտավ, լսեց ուսուցչի գրնգուն ֆրանսերենը.


– Օ՛, տիկին, մենք որքա՛ն երախտապարտ ենք ձեզ, որ Դուք քաղաքակրթության ճառագայթ եք բերել այս անապատը:

Քիչ անց ուսուցիչ Շատախյանը դարձյալ խոսեց.

– Եվ արդյոք տարօրինակ չէ՞, որ մենք այսքան ընտիր շրջապատ ենք մտել, որ մենք՝ հայ խեղճ գյուղացիներս, տիկնոջ բարության շնորհիվ վայելում ենք նրա մտերմությունը:

Դեղագործ Գրիգորն իր սան Շատախյանին մի անգամ էլ դաս տվեց.

– Մենք՝ հայերս, ունենք ճակատագրական մի թերություն: Մոռանում ենք, որ եղել ենք աշխարհի ամենահին և ամենաքաղաքակիրթ ժողովուրդներից մեկը: Տիկինը, մեր Գաբրիել



15-16րդ դարի Ավետարան

Բագրատյանի ամուսինը, անշուշտ, գիտե, որ մեր հնագույն ազգը Դոմոնից առաջ քրիստոնեությունն ընդունել է իբրև պետական կրոն: Մենք փառահեղ պետություն ենք ունեցել, մայրաքաղաք Անի, որն իր



Մովսես Խորենացի, 5-րդ դարի հայ պարմիչ

հազար եկեղեցիներով համարվել է աշխարհի հրաշալիքներից մեկը: Հայ ազգի արքաներն են կառավարել Բյուզանդիան: Այն ժամանակ, երբ Ֆրանսիան դեռևս ծայրահեղ բարբարոսության գրկում էր, մենք դասական գրականություն ունեինք: Ես ինքս էլ մնուշներ ունեմ այնպիսի գորավոր հեղինակների գործերից, ինչպիսիք են Ղազար Փարպեցին և Մովսես Խորենացին: Բայց այսօր էլ հարկ չկա ամաչելու: Նույնիսկ այստեղ, այս խուլ գյուղում, որտեղ անգամ կարգին փողոց չկա, ժամանակի ընթացքում ստեղծվել է պատկառելի մի գրադարան... ուրեմն, տիկինը թույլ կտա, որ իր առաջ չամաչենք...

*Ըստ Ֆրանց Վերֆելի "Մուսա լեռան քառասուն օրը"*

### Բառեր


- գրնգուն – звучный
- երախտապարտ – признательный
- քաղաքակրթություն – цивилизация
- ճառագայթ – луч
- անապատ – пустыня

- տարօրինակ – странный, странно
- ընտիր – избранный
- շրջապատ – круг, окружение
- խեղճ – жалкий, бедный (ղ=խ)
- վայելել մի բան – наслаждаться

մտերմություն – привязанность, приязнь  
 դեղագործ – аптекарь  
 սան – воспитанник  
 ճակատագրական – роковой  
 թերություն – недостаток  
 աշխարհ – мир (հ не произн.)  
 քաղաքակիրթ – цивилизованный  
 ամուսին – супруг, -а  
 անշուշտ – несомненно  
 ազգ – нация  
 քրիստոնեություն – христианство  
 իբրև – как, в качестве (предлог) (բ=փ)  
 պետական – государственный  
 կրոն – религия  
 փառահեղ – славный  
 պետություն – государство  
 եկեղեցի – церковь  
 համարվել – считаться

հրաշալիք – чудо, диво  
 կառավարել – править, царствовать  
 Բյուզանդիա – Византия  
 դեռևս – лит. դեռ  
 ծայրահեղ – крайний, в высшей степени  
 բարբարոսություն – варварство  
 գրկում – в лоне  
 դասական – классический  
 նմուշ – образец  
 զորավոր – мощный, зд. великий  
 հեղինակ – автор  
 գործ – зд. произведение  
 խուլ – глухой  
 անգամ – даже (գ=բ)  
 կարգին – нормальный, приличный (գ=բ)  
 ժամանակի ընթացքում – со временем  
 ստեղծվել – создаться

**Մեկնաբանություններ, առաջադրանքներ, վարժություններ**  
**Комментарии, задания и упражнения.**

5.Ա) 



Показатель множественного числа в древнеармянском языке **-ք** (ինչպիսիք) сохранился как вариант образования множественного числа для многосложных слов, оканчивающихся на -ի, напр., существительные с суффиксом -ցի (-ացի, -եցի).  
 գյուղացիք (род. п. գյուղացոց)  
 քաղաքացիք (род. п. քաղաքացոց)  
 վրացիք (род. п. վրացոց)



Суффикс **-ք** очень распространен в современном армянском языке (значение показателя множественного числа уже не ощущается).



աչք	միտք "мысль"	կարծիք "мнение"
ծեռք	մեղք "вина"	արժանիք "достоинство"
ուտք	մուտք "вход"	հաճույք "удовольствие"
գիրք	ելք "выход"	գործիք "инструмент"
գնացք	վերք "рана"	աղոթք "молитва"
ընտանիք	դեմք "лицо"	շնորհք "дар, дарование"
խելք	շարք "ряд"	տարիք "возраст"
խոսք	տեսք "вид"	հրաշք "чудо" (оцен.)
դեպք	բարիք "добро"	հրաշալիք "чудо, редкостное явление"
կյանք	չարիք "зло"	
օրենք	փառք "слава"	

Գ) Կետերի փոխարեն գրեք աջ սյունակի բառերից մեկը.

Вместо точек поставьте одно из слов правого столбца:

1. Աստված ամեն մեկին մի ... է տվել, որ իր գլուխը պահի:	աղոթք
2. – Սուրճ կխմե՞ք: – ...:	արժանիք
3. Տղայի հայերեն ... հուզեց հորը:	գործիք
4. Կնոջ ... չեն հարցնի:	դեպք
5. Ոչխարների ... հետո Պավլեն հաշիվները փակեց գլուխի հետ, գնաց քաղաք:	խելք
6. Ես Արցախում մի խաչքար եմ տեսել, որ աշխարհի յոթ ... էլ գեղեցիկ է:	խոսք
7. Հայր միայն թերութուն ունի, ... չունի՞, ինչ է:	հաճույքով
8. Տեր Սարգիսը մոտեցավ կաթողիկոսին, ծեռքը դրեց նրա գլխին ու ... մրմնջաց:	հրաշալիքներից
9. Լավ ... գործի կեսն է:	միտք (մտքում)
10. Մեր սարերի ... ոչխար մողթելը հանցանք չէ:	շնորհք
11. Հարևանը կաթսան վերցրեց ու ... ծիծաղեց Նասրեդինի վրա:	տարիք
12. Բա դու ... չունե՞ս, որ թույլ ես տալիս երեստային կրակի հետ խաղալ:	տեսք
13. Ավտորուսի առջևի դռան վրա գրված է ..., ետևի դռան վրա՝ ...:	փառք
14. ... Աստծո, ամեն ինչ լավ վերջացավ:	օրենքով
15. Մեր հիվանդն արդեն առողջանում է, այսօր շատ լավ ... ունի:	ելք, մուտք




Հե՛յ ազահ մարդ, հե՛յ անգոհ մարդ, միտքդ երկար, կյանքդ կարճ, Քանի՛ քանիսն անցան քեզ պես, քեզնից առաջ, քո առաջ. Ի՛նչ են տարել նրանք կյանքից, թե ի՛նչ տանես դու քեզ հետ, խաղաղ անցիր, ուրախ անցիր երկու օրվան էս ճամփեդ:

**Հովհաննես Թումանյան**

**ազահ** – жадный

**խաղաղ** – мирный, мирно



քաղաքակիրթ = քաղաք+ա+կիրթ



Գտե՛ք հայերեն բառի թարգմանությունը.  
Найдите перевод армянских слов:



✓ քաղաքացի	политический	✓ կրթված	образование
մայրաքաղաք	вежливый	կրթություն	благовоспитанный
քաղաքային	мещанин	անկիրթ	неблаговоспитанный
քաղաքական	✓ гражданин	բարեկիրթ	необразованный
քաղքենի	столица	անբարեկիրթ	✓ образованный
քաղաքավարի	городской		



դեղագործ = դեղ (лекарство) + ա+ գործ (дело)



Գտե՛ք հայերեն բառի թարգմանությունը.  
Найдите перевод армянских слов:



✓ դեղատուն	произведение, творение	✓ գործիչ	завод
դեղատոմս	творческий	գործիք	✓ деятель
ստեղծագործություն	рецепт	գործարան	деловой
ստեղծագործ	✓ аптека	գործնական	инструмент



ճակատագիր = ճակատ + ա+ գիր



Գտե՛ք հայերեն բառի թարգմանությունը.  
Найдите перевод армянских слов:



✓ ձեռագիր	телеграмма
հեռագիր	паспорт
սևագիր	ежемесячный журнал
անձնագիր	✓ рукопись
ծրագիր	черновик
ամսագիր	газета
ուղեգիր	программа
լրագիր	путевка



7. Ա) Տեքստի ո՞ր բառակապակցություններում են օգտագործված **"ճառագայթ, ֆրանսերեն, գյուղացի, բարություն, ժողովուրդ"** գոյականները: Ուրիշ ինչպե՞ս կարելի է օգտագործել նույն գոյականները: Բերե՛ք օրինակներ:



В каких словосочетаниях употреблены существительные **ճառագայթ, ֆրանսերեն, գյուղացի, բարություն, ժողովուրդ**? Приведите также свои примеры.



**քաղաքակրթության ճառագայթ, արևի ճառագայթ**

Բ) Տեքստի ո՞ր գոյականներին են վերաբերում հետևյալ ածականները. **ընտիր, ճակատագրական, խեղճ, հնագույն, պեղական, փառահեղ, զորավոր, ծայրահեղ, խուլ, կարգին, դասական, պատկառելի**: Այս ածականներով ուրիշ ի՞նչ գոյականներ կարելի է բնութագրել: Բերե՛ք օրինակներ:

Какие существительные характеризуют прилагательные **ընտիր, ճակատագրական, խեղճ, հնագույն, պեղական, փառահեղ, զորավոր, ծայրահեղ, խուլ, կարգին, դասական, պատկառելի**? Приведите также свои примеры.



**ընտիր շրջապատ, ընտիր գրքեր**

Գ) Տեքստի ո՞ր բառակապակցություններում են օգտագործված **"բերել, վայելել, կառավարել, ստեղծվել, ամաչել"** բայերը: Ուրիշ ինչպե՞ս կարելի է օգտագործել այս բայերը: Բերե՛ք օրինակներ:

В каких сочетаниях употреблены глаголы **բերել, վայելել, կառավարել, ստեղծվել, ամաչել**? Приведите также свои примеры.



**քաղաքակրթության ճառագայթ բերել, խոհանոցից սուրճը բերել**





8. Գտեք հնարավոր կապակցությունները.  
Найдите возможные сочетания:



երախտապարտ	թրոություն
զրնգուն	ժողովուրդ
տարօրինակ	ազգ
ընտիր	հեղինակ
խուլ	գործ
ճակատագրական	ձայն
պետական	դեպք
փառահեղ	սան
ծայրահեղ	շրջապատ
կարգին	կրոն
պատկառելի	աղջիկ
չարածճի	

9.Ա)



պետություն, պետական
պետ – начальник
պետականություն – государственность
հանրապետություն – республика
հանրապետական – республиканский
կառավարել
կառավարություն – правительство
կառավարական – правительственный

Գ) Կետերի փոխարեն գրեք աջ սյունակի բառերից մեկը.  
Вместо точек поставьте одно из слов правого столбца:

1. Երկար դարեր, մինչև 1918թ. Հայաստանը ... չի ունեցել:	պետություն
2. Ուրարտուն ուժեղ ... է եղել:	պետական
3. 1991թ. Հայաստանը դարձավ ինքնուրույն ...:	պետականություն
4. Հայկական հանրապետության առաջին (1918թ.) ... դաշնակցական էր:	հանրապետություն
5. Հայաստանի ... դրոշը (флаг) եռագույն է:	կառավարություն



10. Ա) Ի՞նչ կարելի է բնութագրել **ճակատագրական, քրիստոնեական, կրոնական, ժողովրդական, եկեղեցական, պետական, կառավարական, ազգային** ածականներով: Բերե՛ք օրինակներ:  
Что можно охарактеризовать приведенными прилагательными? Приведите примеры.



**ճակատագրական սխալ, քրիստոնեական տոն, և այլն**

Գ) Գտեք հնարավոր կապակցությունը.  
Найдите возможное сочетание:

Եկեղեցակա՞ն, կրոնակա՞ն, թե՞ քրիստոնեական զգացմունք (чувство):  
Պետակա՞ն, թե՞ կառավարական օրհներգ (гимн):  
Ազգայի՞ն, թե՞ ժողովրդական հպարտություն:

11. Շեղագիր բառերի փոխարեն օգտագործեք նույն կամ մոտ իմաստով բառեր:

Замените выделенные курсивом слова синонимами или словами близкого значения:

Ես շատ *շնորհակալ* եմ Ձեզ Ձեր բարության համար: Այդ օրը *գարմանայի* մի բան պատահեց: Դեղագործ Գրիգորը մի կարևոր դաս տվեց իր *աշակերտին*: Դուք, *իհարկե*, գիտեք, որ Մատենադարանում պահվում են ոչ միայն հին հայկական, այլև հին հունական, արաբական ձեռագրեր: Ո՞վ է այս *վեպի* հեղինակը: Յողոնօւլուքում *նույնիսկ* կարգին փողոց չկար:

12. Ա) տիկնոջ բարության շնորհիվ = благодаря доброте ...

Բ) Ձախ և աջ սյունակներում գտեք յուրաքանչյուր նախադասության երկու կեսը.

Найдите две половинки каждого предложения из левого и правого столбца.

Իր աշխատանքի շնորհիվ	Շիրվանզադեն դրամատուրգ հռչակվեց:
Ձեր շնորհիվ ...	Ուսուցիչը քննադատեց իր աշակերտին:
Գրքերի շնորհիվ ...	Մաթեմատիկոսը հարգեց իր ուսուցչին:
Իր տաղանդի շնորհիվ ...	Մա մի դժվար գործ գլուխ բերեց:
Արդյո՞ք միայն Աբելյանի խաղի շնորհիվ ...	Մա հասկացավ իր սխալը:

13. Ա) քրիստոնեությունը իբրև պետական կրոն – христианство как государственная религия

Բ) Ձախ և աջ սյունակներում գտեք յուրաքանչյուր նախադասության երկու կեսը.

Найдите две половинки каждого предложения из левого и правого столбца.

1918 թվից մինչև 1920 թիվը Հայաստանը հայտնի էր ...	իբրև Հայաստանի մայրաքաղաք
Պարույր Սևակը լուրջ գիտնական էր, թեև մեծ մասամբ նրան ճանաչում են ...	իբրև անկախ պետություն:
Դվինը, ..., ծաղկել է 4-ից 9-րդ դարերում:	իբրև հայ հարուստ վաճառականի:
Գիտե՞ք, թե ում է Հ. Պարոնյանը անվանում "մեծապատիվ մուրացկաններ". հեղինակներին, դերասաններին, լրագրողներին, որոնք դիմում են Աբխազիոն աղային ...	իբրև բանաստեղծի (поэт):

14. Ստուգեք Ձեզ.

Проверьте себя:

	ճիշտ է	սխալ է
1. Ա. Ղազար Փարպեցին եղել է քսաներորդ դարի սկզբի պատմիչ, նկարագրել է (описал) հայ ժողովրդի և հայ կոմունիստների ազատագրական պայքարը (освободительная борьба).		
Բ. Ղազար Փարպեցին եղել է տասնիններորդ դարի պատմիչ, նկարագրել է հայ ժողովրդի և դաշնակների ազատագրական պայքարը:		
Գ. Ղազար Փարպեցին եղել է հինգերորդ դարի պատմիչ, նկարագրել է հայ ժողովրդի ու Վարդան Մամիկոնյանի ազատագրական պայքարը:		
2. Ա. Մեր պատմահայր Մովսես Խորենացին պատմել է հայոց պատմությունը հին ժամանակներից մինչև 440 թվականը:		
Բ. Մեր պատմահայր Մովսես Խորենացին պատմել է հայոց պատմությունը հին ժամանակներից մինչև 1600 թվականը:		
Գ. Մեր պատմահայր Մովսես Խորենացին պատմել է հայոց պատմությունը հին ժամանակներից մինչև 1920 թվականը:		
3. Ա. Հայերը քրիստոնեությունն ընդունել են իբրև պետական կրոն 988 – 989 թթ. Ռուսաստանի հետ:		
Բ. Հայերը քրիստոնեությունն ընդունել են իբրև պետական կրոն 321թ. վրացիների հետ:		
Գ. Հայերը քրիստոնեությունն ընդունել են իբրև պետական կրոն 301թ.:		



**Հայը – հայերը**

“Տարօրինակ բան է, – դժգոհեց մի ֆրանսահայ, – երբ ֆրանսիացին է հանցանք թույլ տալիս, ասում են, ենթադրենք, Պոլ Լավալյեն այսինչ բանն արեց: Իսկ երբ ասենք, ես՝ Սիրակ Անթոսյանս եմ ինչ-որ բան անում, հայը հանցանք թույլ տվեց: Հայը: Կարծես թե ես անուն-ազգանուն չունեմ”:

Հարցին հարցով են պատասխանում. “Իսկ երբ Սիրակ Անթոսյանը մի լա՞վ բան է անում: Ի՞նչ են ասում, չե՞ն ասում, այ կեցցեն հայերը, տեսեք ի՞նչ ժողովուրդ են՝ աշխատասեր, տաղանդավոր... Եվ ընդամենը՝ Սիրակ Անթոսյանը մի լավ բան է արել”:

Ես մտածում եմ՝ փոքր ազգերի զավակները, երևի, անուն-ազգանուն չունեն. նրանց անուն-ազգանունը իրենց ժողովուրդն է:

Դա և պատիվ է, և պատիժ:


Եթե վայելում ենք պատիվը, պատրաստ լինենք նաև պատիժը կրելուն:

***Ըստ Վարդգես Պեղրոսյանի “Հայկական էսքիզների”***



**Բառեր**




- դժգոհել – выразить недовольство
- ֆրանսահայ – французский армянин
- թույլ փալ – зд. допустить
- ենթադրել – предположить
- այսինչ – такой-то
- ազգանուն – фамилия

- տաղանդավոր – талантливый
- ընդամենը – всего (դ=թ)
- զավակ – сын
- երևի – наверное, по-видимому
- պատիվ – честь
- պատիժ – наказание
- կրել – нести

15. Ա) 

притяжательный артикль показывает не только принадлежность, но является вообще показателем лица. Ср. մենք հայ խեղճ գյուղացիներս. ես Սիրակ Անթոյանս.

 Բ) 

  և 

Ես դեղագործ եմ, ես ասում եմ, որ ծխելուց օգուտ չկա:

→

Ես դեղագործն, ասում եմ, որ ծխելուց օգուտ չկա:


Ես դեղագործ եմ, ես ասում եմ, որ ծխելուց օգուտ չկա:

Ես այս գործի հեղինակն եմ, ես գոհ չեմ:

Ես Ռուսաստանի բաղաբացի եմ, ես պատրաստ եմ Ռուսաստանի համար կռվել:

Մենք հայ ենք, մենք շատ թերություններ, բայց և շատ արժանիքներ ունենք:

Ես հայ ժողովրդի զավակն եմ, ես ուզում եմ հայերեն իմանալ:

 16. Կետերի փոխարեն գրեք աջ սյունակի բառերից մեկը.

Вместо точек поставьте одно из слов правого столбца:

1. Արքատ լինելը ... չէ, դժբախտություն է:	չղջապատ
2. Արևի ... ընկան աղջկա խարտյաշ մագերին, և տղան հիացավ նրա ոսկե մագերով:	թերություն
3. Ի՞նչ ... ստացավ այրի կինը, որը կաթին ջուր էր խառնում:	անապատ
4. Մենք-էկզյուպերին փոքրիկ արքայազնին հանդիպեց Սահարա ...:	ճառագայթները
5. Նա ինձ հայկական կոնյակ հյուրասիրեց. անունը հինգ տառից էր, "Դվին" չէր, "Ախթամար" չէր, հինգ տառից էր, հիշեցի ...:	պատիժ
6. Իմ շուրջը շատ ծանոթ նկարիչներ կան, բայց իմ ընկերական ... ոչ մի երգիչ չկա:	ընտիր
7. Գրիգոր Խանջյանի գործը (գրեկենը) ցույց է տալիս հայ ժողովրդի ... անցյալը:	պատիվ
8. Ինձ համար մեծ ... է, որ Դուք ընդունեցիք իմ հրավերը:	փառահեղ



Նայում մորս, մայում ինձ՝  
 Միտք ես անում. բանաստեղծ,  
 Այսքան փոքրիկ մի մորից  
 Ո՞նց ես ծնվել այսքան մեծ: ...  
 ... Մի՞թե դու էլ մայրս չես,  
 Դու էլ, իմ հայ ժողովուրդ.  
 Դու էլ թեև մի բուռ ես,  
 Բայց Նարեկի՝ մայրն ես սուրբ.  
 Ինքդ մի բուռ, բայց սիրտդ  
 Զո հինավուրց հողի չափ՝  
 Վանա ծովից՝ մինչ Սևան  
 Բաբախում է ափեափ:  
 Ինքդ հազիվ մի Սևան,  
 Բազուկդ՝ կարծ մի Չանգու<sup>3</sup>,  
 Մինչ հանճարդ՝ մի օվկիան,  
 Ազգ իմ, հազար մեծ ես դու...  
 Զո Մաշտոցով եռամեծ՝  
 Երեք ազգի գրերով<sup>4</sup>,  
 Նարեկներով եղար մեծ,  
 Ավա՛դ, ոչ թե թրերով...

**Հովհաննես Շիրազ**

**"Հուշարձան մայրիկիս" ժողովածուից**

<sup>1</sup> Նարեկ – имеется в виду великий средневековый поэт Григор Нарекаци.

<sup>2</sup> Վանա ծով или Վանա լիճ – озеро Ван в Турецкой Армении.

<sup>3</sup> Չանգու, иначе Հրազդան – река, вытекающая из озера Севан и впадающая в Аракс.


<sup>4</sup> Երեք ազգի գրերով – имеются в виду созданные М. Маштоцем армянские, грузинские, агванские письмены.

**Բառեր**

- միտք անել** – разг. մտածել
- թեև** – хотя (союз)
- բուռ** – горсть, մի ~ – немногочисленный
- սուրբ** – святой (բ=փ)
- հինավուրց** – старинный
- ծով** – море
- բաբախել** – биться (о сердце)
- ափեափ** – от одного берега к другому
- հազիվ** – едва
- բազուկ** – часть руки от кисти до плеча
- մինչ** – 1. сокр. от մինչև – до (предлог); 2. сокр. от մինչդեռ – в то время как (союз)
- հանճար** – гений




**օվկիան կամ օվկիանոս** – океан  
**եռամեծ** – трижды великий  
**թուր** – меч


17. Ա)  երևի "по-видимому" = գուցե "может быть"  
անշուշտ "несомненно" = իհարկե "конечно"


Բ) Հետևյալ նախադասություններին ավելացրեք "երևի" և "անշուշտ" միջանկյալ բառերը և տեսե՞ք, թե ինչպես է փոխվում ասվածի իմաստը.


Прибавьте к следующим предложениям вводные слова երևի и անշուշտ и посмотрите, как изменится смысл сказанного:

Գարրիելն ու Ժյուլյեթը ... սիրում են իրար: Նա ... հասկանում է հայերեն: Մենք երկար սպասեցինք Վարդուհուն, բայց նա չեկավ. Վարդուհին ... հիվանդ է: Գիտաշխատողները ... լուրջ մարդիկ են:

18. Ա)  ըո հինավուրց հողի չափ – размером с твою древнюю землю

 – խոհանոցը մե՞ծ էր: – Զէ, **ձեր խոհանոցի չափ էր:** Մայրիկ, **մի թաշկինակի չափ կտոր** տուր ինձ, տիկնիկիս համար շոր կարեն: Տղաները ամաչում են նայել ուսանողուհու ոտքերին և սիրահարվում են **լաց լինելու չափ:** Եթե դու էլ **Կարենի չափ կարդաս**, դու էլ պատմությունից հինգ կստանաս:

Բ) 





– Ի՞նչ չափսի կտոր "отрез"  
ես ուզում: (–Այս սեղանը)

→ Այս **սեղանի չափ** կտոր եմ ուզում:


- Ի՞նչ չափսի կտոր ես ուզում: (սրբիչ, բարձ)
- Ինչպիսի՞ն է նրա աշխատասենյակը: (մեր մանկական սենյակը, մեր ճաշասենյակը, մեր ննջարանը)
- Մի՞թե դու նրան սիրում ես: (արև, աշխարհ, երկինք)

Գ) 


– Ո՞ր **չափսի** կոշիկ եք հագնում:  
– Զգեստ եմ կարել տալիս. այսօր գնալու եմ **չափափորձի:**  
 չափել – мерить  
մեկին ոտքից գլուխ չափել – мерить с ног до головы  
չափչփել – 1. перемерить, 2. обдумать  
փողոցները չափչփել – бесцельно шататься по улицам  
չափավոր ≠ անչափ (в меру ≠ без меры)

 Կետերի փոխարեն գրեք այս սյունակի բառերից մեկը.

1. – Ոչ, նա շատ չի խմում, կարելի է ասել՝ ... է խմում:	չափս
2. – Դու նրա խոսքին չես հավատում, բայց ես կարծում եմ, որ նա քեզ ... սիրում է:	փողոցները չափչփել
3. – Դու քննություններին պատրաստվելու փոխարեն ամբողջ օրը ...:	ոտքից գլուխ չափել
4. – Այս զգեստը թեև քո ..., բայց կարծես քեզ չի սագում:	չափափորձ
5. – Ես դեռ ... ժամանակ հասկացա, որ շատ սիրում փեշ է լինելու:	չափավոր
6. Մարդուն ... ամբարտավանություն է:	անչափ


19.Ա) 

գետ, գետափ, Հրազդանի (Ձանգվի) ափ  
լիճ, լճափ, Սևանի ափ  
ծով, ծովափ, Սև ծովի ափ  
օվկիանոս, օվկիանոսի ափ



 Կետերի փոխարեն օգտագործեք համապատասխան գոյական՝ ճիշտ հոլովածևով, ուշադրություն դարձրեք որոշիչ հոդին:




Вместо точек поставьте соответствующее существительное в нужной падежной форме, обратите внимание на артикль:

Հայաստանի ամենամեծ ... Սևանն է: Կարմիր ... ջուրը քաղաքակնին աղի է: Կասպից ծովը, իսկապես ասած, ... է: ... մյուս ափին երևում են Անիի ավերակները: Երկրագնդի վրա (на земном шаре) կա չորս ... Մեծ կամ Խաղաղ, Ատլանտիկ, Հնդկական և Հյուսիսային:

20.Ա) 

թեև (թեպետ, թեպետև)..., բայց (սակայն)... – Хотя..., но...  
..., (մինչ) մինչդեռ ... – ..., в то время, как ...

 Բ) 

  և 

Գիտնականն ընտրեց այս քաղաքավարի երիտասարդին: Մյուսները լավ վկայականներ ունեին:

→

**Թեև (թեպետ, չնայած)** մյուսները լավ վկայականներ ունեին, **բայց** գիտնականն ընտրեց այս քաղաքավարի երիտասարդին: Գիտնականն ընտրեց այս քաղաքավարի երիտասարդին, **մինչդեռ (թեև, թեպետ, չնայած)** մյուսները լավ վկայականներ ունեին:

1. Նա ուշացավ աշխատանքից: Նա շուտ դուրս եկավ տնից:

2. Ծառան ասաց, թե բաղնիսում մարդ չկա: Բաղնիսում տեղ չկար:

3. Տիգրանի ծնողները գնացին դասախոս Սոկացյանի մոտ: Տիգրանը չէր ուզում, որ Սոկացյանն իմանա, թե ինքը ու՛մ տղան է:

4. Ջոնն ուրիշ աշխատանքի տեղ չուներ: Ջոնն որոշեց միսիս Հիլփիլիի տեղը չգրավել:

5. Միստր Ուայլին ասաց, որ Ջոնն ամբարտավանի մեկն է: Ջոնն միանգամայն բարեկիրթ երիտասարդ էր:

6. Գյուղում գիտեին, որ քննիչը քաղցած է: Քննիչին չպահեցին հացի, որպեսզի անհարմար չզգա:

7. Պըլը Պուղին մեկիք Շահնազարի անունով էր սկսել հիմարների ու գժերի ցուցակը: Մեկիք Շահնազարը չկարողացավ Պըլը Պուղուն պատժել:

8. Մեկիք Շահնազարն ուզում էր Պըլը Պուղուն խոսքակռվում հաղթել: Պըլը Պուղին կարող էր մեկիք Շահնազարին տանել աղբյուրն ու ծարավ ետ բերել:



## Աշխարհի ամենաօրինակելի տղան



Յ.Յակոբյան, 1957

Ես նախանձում եմ բոլոր օրինակելի տղաներին: Նրանք կանոնավոր են, ուշադիր, քաղաքավարի: Իսկ ես ... Ամեն ինչ անում եմ, որ զոնե մի անգամ էլ ես դառնամ այդպիսին, բայց չի ստացվում:

Ես գիտեմ, օրինակելի տղաներ ու աղջիկներ շատ կան: Բայց կա մեկը, որ իմ կարծիքով ամենաօրինակելին է ամբողջ աշխարհում:

Ես և նա սովորում ենք միևնույն դպրոցի միևնույն դասարանում: Ապրում ենք միևնույն շենքի միևնույն մուտքի միևնույն հարկում: Ընդամենը մուտքի մի լուսամուտ է բաժանում մեր պատշգամբներն իրարից:

– Ինչքան դուրս եմ գալիս պատշգամբ, – ասում է մայրս, – գիրքը ձեռքին եմ տեսնում, իսկ դու ...

Գիրքը ձեռքին պատշգամբ դուրս գալն այնքան էլ դժվար բան չի, բայց կարդալ ...

Ես նստում եմ առաջին շարքի ամենավերջին նստարանին՝ պատուհանի մոտ: Իմ կողքին նստում է Ամենաօրինակելի տղան: Մորս ասելով՝ բախտս բերել է, որ նա նստում է իմ կողքին: Այդպիսով գուցե ես մի քիչ կարգ ու կանոն սովորեմ նրանից:

Եվ այսպես, մենք երկուսով նստում ենք միևնույն շարքի միևնույն նստարանին:

...– Բավական է հորանջես, – զգուշացրեց ինձ Ամենաօրինակելի տղան:

Այդ պահին՝

– Ապա մի ասա տեսնեմ, ո՞վ է Տորիչելլին:

– Իտալացի նշանավոր գիտնական:

– Այդպե՛ս... Իսկ ի՞նչ է հայտնագործել:

– Դատարկություն, – վստահ պատասխանեցի ես:

Դասարանը քրքջաց:

"Մի՞թե սխալվել եմ, – մտածեցի ես: – Եթե այդպես է, բա էլ ինչու՞ էր իմ սիրելի մեծ եղբայրը մատով թրիկացնում ճակատիս և ասում "է՛յ, դու, տորիչելլան դատարկություն..." Եվ հետո, ես ի՞նչ մեղավոր եմ, որ այդ Տորիչելլի կոչվող գիտնականը<sup>1</sup>, կարևոր բաները թողած ինչ-որ դատարկություն է հայտնագործել":

(շարունակելի)



Յ.Յակոբյան, 1958


<sup>1</sup> այդ Տորիչելլի կոչվող գիտնականը – этот ученый, называемый Торичелли



## Բառեր

օրինակելի – примерный  
 նախանձել – завидовать  
 կանոնավոր – правильный, исправный  
 սրացվել – получить  
 միևնույն – один и тот же  
 մուտք – вход, 3д. подъезд  
 շարք – ряд  
 նստարան – 3д. школьная парта  
 բախտ – судьба, везение  
 կարգ ու կանոն – порядок (q=p)

զգուշացնել – предупредить  
 պահ – момент  
 նշանավոր – знаменитый  
 հայտնագործել – открыть (сделать открытие)  
 դափարկություն – пустота  
 վստահ – уверенно  
 քրքջալ – хохотать  
 մատ – палец  
 թրխկացնել – стучать  
 մեղավոր – виноватый

21.Ա) 

Суффикс **-արան** образует существительные со значением места:



Մատենադարան	պահարան
գրադարան	առողջարան
համալսարան	դատարան
ծաշարան	դասարան
սրճարան	կայարան "вокзал"
ննջարան	գործարան "завод"
սառնարան	նստարան "сиденье"




Имена существительные со значением места образуются также при помощи суффикса **-անոց**:



խոհանոց	հյուրանոց "гостиница"
հիվանդանոց	ամառանոց "дача"
վարսավիրանոց	գորանոց "казарма"
"парикмахерская"	որբանոց "сиротский приют"
արհեստանոց "мастерская"	դարբնոց "кузница"

**Դ** Բ) Լրացրե՛ք նախադասությունները.

- Այս ամառ որտե՞ղ էիր: – Արգնի ...:
- Այս գիրքը որտեղի՞ց ես վերցրել: – Մեր դպրոցի ...:
- Եղբայրդ որտե՞ղ է սովորում: – Քեմբրիջի ...:
- Ու՞ր դրեցիր կարագը: –...:
- Ամուսինդ որտե՞ղ է աշխատում: – Էլեկտրական լամպերի ...:
- Մայրիկ, ես չեմ գտնում շագանակագույն կիսաշրջագգեստս: – Լավ նայիր ...:
- Գնացքը ժամը յոթին է մեկնում, արի հանդիպենք վեցն անց կեսին ...:
- Ընկերս ծանր հիվանդացավ, տարան ...:
- Բարեկամս ինձ հրավիրում է Հայաստան և ասում է, որ գնամ իրենց տուն, չգնամ ...:
- Ես ինքս եմ մազերս կտրում, չեմ գնում ...:
- Բանտարկություն չեղավ, բայց Անտառամեջի նախագահն ստիպված եղավ տուգանք վճարել ...:
- Բանակում ծառայելիս ես ... ծանոթացա մի հայ տղայի հետ:

22. Ա) 

Суффикс **-ելի, -ալի** образует прилагательное:




սիրելի	սպասելի
հարգելի	անսպասելի
օրինակելի	վստահելի "доверенный"
զարմանալի	անվստահելի
պատկառելի	բացատրելի
հիանալի	անբացատրելի
հրաշալի	նախանձելի "завидный"
սքանչելի	շարունակելի

**Կ** Ա) Կետերի փոխարեն գրեք աջ սյունակի ածականներից մեկը (հիշե՛ք, որ ածականը նաև մակբայաբար է օգտագործվում).

Вместо точек поставьте одно из прилагательных правого столбца (помните, что прилагательное употребляется также как наречие):

1. Մեր կուրսում մի ... տղա կա, նա ... ջուրակ է նվազում:
2. Դուք ... գիտեք, որ Պորտլանդում ոչ մի քեռի էլ չունեք:
3. Ես մի ... նամակ ստացա:
4. Ինչու՞ ես կարծում, թե նա ... է, ես նրան շատ եմ վստահում:
5. Ցածր դասարաններում սովորաբար աղջիկները տղաներից ավելի ... են:
6. Ես արդեն կարող եմ հայերեն նամակ գրել. ընկերներիս գրում եմ այսպես՝ ... Վարդան, իսկ գործնական նամակները սկսում եմ այսպես՝ ... պարոն:
7. Այդ գործի համար ... մարդ է հարկավոր, իսկ այս մարդուն դժվար է վստահել:
8. Պապս ... բեղ ու մորուք ունի:

սիրելի  
հարգելի  
օրինակելի  
զարմանալի  
պատկառելի  
հիանալի  
հրաշալի  
սքանչելի  
անսպասելի  
վստահելի  
անվստահելի  
անբացատրելի  
նախանձելի

23. Ա) 

Суффикс **-ավոր** образует прилагательные со значением "имеющий, носящий на себе":



տաղանդավոր	արժեքավոր "ценный"
սգավոր	գոլավոր
կանոնավոր	վանդակավոր
մեղավոր	նշանավոր
գունավոր	բախտավոր "удачливый"
լուսավոր "светлый"	բևավոր "крылатый"



и такие **существительные**, как



զինվոր "солдат"	ծիավոր "всадник"
բանվոր "рабочий"	աշխատավոր "трудящийся"

Գ) Կետերի փոխարեն գրեք -ավոր ածանցով համապատասխան ածական.


Вместо точек поставьте соответствующее прилагательное с суффиксом -ավոր:


Օրբելի եղբայրները ... գիտնականներ են, նրանք շատ ... գործեր են թողել: Երեխան ի՞նչ ... է, որ տարօրինակ ազգանուն ունի: Մեր հեռուստացույցը ... է: ... կիսաշրջագզեստին ... վերնաշապիկ չի սազում: Հենց այդ պահին զինվորները ... շարքերով անցան մեր պատուհանի տակով: Մեր հյուրասենյակը ննջարանից ... է: Եղբորս բախտը միշտ բերում է, նա ինձնից ... է: "Ծիծեռնակ" երգում որդին դիմում է իր ... բարեկամին և խնդրում է, որ նա լուր տանի իր ... հորը:


Դ) Կետերի փոխարեն գրեք -(ա)վոր ածանցով համապատասխան գոյական.



Вместо точек поставьте соответствующее существительное с суффиксом -ավոր:

Զինանոցից շարքերով դուրս եկան ...: Իմ զարմիկը գործարանում է աշխատում, նա ... է: Մայիսի մեկը ... տոնն է: ... երեք ժամում Ա. գյուղից հասավ Բ. գյուղը:

24.Ա) 

Суффикс <b>-յան</b> образует прилагательное, показывающее отношение к какому-л. месту, времени или лицу (например, последователи какого-л. учения):	
 աջակողմյան	մայիսյան
ծախսակողմյան (շարժում)	սեպտեմբերյան
երևանյան	փետրվարյան
մոսկովյան	երեկոյան
փարիզյան	առավոտյան
արևելյան	լենինյան
արևմտյան	տորիչելյան
(նօ: հյուսիսային, հարավային)	(դատարկություն)


Բ) 

 և 

Լեհաստանը գտնվում է (արևելք) Եվրոպայում, իսկ Ֆրանսիան՝ (արևմուտք) Եվրոպայում:

→ Լեհաստանը գտնվում է արևելյան Եվրոպայում, իսկ Ֆրանսիան՝ արևմտյան Եվրոպայում:

Լեհաստանը գտնվում է (արևելք) Եվրոպայում, իսկ Ֆրանսիան՝ (արևմուտք) Եվրոպայում: – Գիտե՞ք, որ Մոսկվայում (Երևան) փողոց կա: – Հետո ինչ, Երևանում էլ (Մոսկվա) փողոց կա: Ընկերուհիս ապրում է Երևանում (Կիև) փողոցում: (Փետրվար) դեպքերից հետո Երևանում ամեն ինչ փոխվեց: Մեզ մոտ ընդունված է մեքենաների (աջ կողմ) շարժում, իսկ Անգլիայում՝ (ծախ կողմ) շարժում: Եղիտնի հայտնագործությունը նրանում է, որ նա էլեկտրական լամպում (Տորիչելի) դատարկություն ստեղծեց:


25. Ա) 



բախտ – счастье, удача  
 բարեբախտություն – благополучие  
 բարեբախտաբար – к счастью  
 բախտավոր – удачливый, благополучный, счастливый  
 դժբախտություն – несчастье  
 դժբախտ (≠ երջանիկ) – несчастный  
 դժբախտաբար – к несчастью  
 անբախտ (≠ բախտավոր) – злосчастный  
 բախտը բերել – повезти  
 բախտը ժպտալ մեկին – улыбнуться (о счастье)  
 բախտը բացել, նայել – гадать (на кофейной гуще, на картах)  
 բախտի անիվ – колесо фортуны  
 մեկի բախտին քար գցել – препятствовать удаче



Շնորհավորում եմ Ձեր Նոր Տարին, ցանկանում եմ Ձեզ **բարի բախտ (բարեբախտություն)**, երջանկություն և երկար կյանք: – Տատիկ, քննությունից առաջ **բախտս չբացեցիր**, գնացի՝ **բախտս չբերեց**: – Ոչի՞նչ, թոռնիկ ջան, **բախտի անիվը շուռ կգա**, ամեն ինչ լավ կլինի: **Բարեբախտաբար**, այսօր անծրև չի գալիս, կարող եմք պատուհանները ներկել: – Դրանում ոչ ոք մեղավոր չի, դու ինքդ ես քո **բախտին քար գցում**: – Դե լավ, մի քիչ ուշացա, դա ի՞նչ **դժբախտություն** է, որ...: **Դժբախտաբար**, ծյուն եկավ և ճանապարհները փակվեցին: Հայի ճակատագիրն է՝ **բախտ չունենք**: Խմենք երիտասարդների կենացը, ցանկանանք, որ **բախտը միշտ ժպտա** նրանց, թող **բախտավոր** լինեն: – Հիմա ես քո **բախտը կնայեմ**. չի կարելի ասել, թե դու **դժբախտ** ես, ընդհակառակը՝ դու առողջ ես, լավ ծնողներ, լավ ընտանիք ունես, բայց կարծես թե մի հարցում **անբախտ** ես, մի հարցում **բախտդ չի բերում**. Երևի չի ստացվում քո Ամերիկա գնալը:

 Բ) Կետերի փոխարեն գրեք համապատասխան բառ կամ արտահայտություն.

Вместо точек поставьте подходящее слово или выражение:


Դեռ մի լվա սուրճի բաժակները, ես ուզում եմ, որ տիկին Արփին իմ ...: Եկեք ցանկանանք իրար ..., որ միշտ ...: Այսպիսի ... ես նույնիսկ իմ թշնամիներին չեմ ցանկանում:



Գ) "Կենաց" ասեք օգտագործելով հետևյալ բառերն ու արտահայտությունները՝ բարի բախտ, բախտավոր, բախտը բերել, բախտը ժպտալ, բախտին քար գցել (ոչ որ քո բախտին քար գցի, թող ինքը ...):



Составьте "тост", употребите соответствующие слова и выражения.


26. 

Գեղեցիկ, աշխարհ:



Նա ամենագեղեցիկն է ամբողջ աշխարհում:


Գեղեցիկ, աշխարհ: Ուրախ, դպրոց: Կարգապահ, դասարան: Ուժեղ, քաղաք: Խորամանկ, բակ: Անկիրթ, շենք: Մաքրասեր, զորանոց: Աշխատասեր, դարբնոց:

27. Ա) 


Իմ (քո, նրա, հորս, եղբորս, Կարենի) կարծիքով, ասելով

Իմ կարծիքով նա ամենաօրինակելին է ամբողջ աշխարհում:

Մորս ասելով՝ բախտս բերել է:

Բ) 

Նա քեզանից երեք տարով մեծ է (ես այդպես եմ կարծում):



Իմ կարծիքով նա քեզանից երեք տարով մեծ է:

Նա քեզանից երեք տարով մեծ է (ես այդպես եմ կարծում):  
Վահրամ Փափազյանը մեր մեծագույն դերասանն է (մենք այդպես ենք կարծում):

Սա մեր նոր գրադարանի շենքն է (մեր տնօրենն այդպես է ասում):

Այսօրվա տոլման աղի է (եղբորս կինն այդպես է ասում):

Ձեր տան ետևում երկու վարսավիրանոց կա (դու այդպես ես ասում):


Հայերենը դժվար լեզու չէ (մեր ուսուցիչն այդպես է ասում):

Ես նրան նախանձում եմ (նա այդպես է կարծում):

Վաղը անձրև չի գա (իայրս այդպես է ասում):


Այս թիկնոցը քեզ ավելի է սազում, քան քրոջդ (ես այդպես եմ կարծում):

Դարբնոցում աշխատելու համար հարկավոր է շատ ուժեղ և ուշադիր լինել (ես այդպես եմ կարծում):


28. Ա) 

գիրքը ձեռքին եմ տեսնում

խելքը գլխին

Բ) 

(գիրք, ձեռք) Նա ... դուրս եկավ պատշգամբ:



Նա գիրքը ձեռքին դուրս եկավ պատշգամբ:

(գիրք, ձեռք) Նա ... դուրս եկավ պատշգամբ: (ծեռնափայտ, ձեռք) Պառավը ... դուրս էր եկել զբոսնելու: (գլխարկ, գլուխ) Երիտասարդը ... ներս մտավ ու ամբարտավան նայեց տնօրենին: (բաժակ, ձեռք) Թամադան ... տեղից բարձրացավ: (գլխաշոր, վիզ) Հիվանդը ... քնեց: (երկարաձիտ կոշիկներ, ոտքեր) Փոքրիկ աղջիկը .. նման էր Կոշկավոր կատվին: (խելք, գլուխ) Սա ... մարդու զո՞րծ է:



29. Ո՞ր բառն է "ավելորդ" բերված շարքում:  
 Укажите "лишнее" слово в ряду.



Կույր, խուլ, զրնգուն, խեղճ:

Ժողովուրդ, ազգ, թերություն, պետություն, քաղաքակրթություն:

Բացահայտել, հայտնաբերել, հայտնագործել, ստեղծել:

ճառագայթ, դեղագործ, սան, քրիստոնյա, ուսմասվար:

Անտառ, անապատ, պարիսպ, գետ:

ճուտ, զավակ, սան, որդի:

Պատիժ, պատիվ, հանցանք, դատարան:

Անուն, ազգանուն, անձնագիր, հեռագիր:



30. Ա) Տեքստի ո՞ր բառակապակցություններում են օգտագործված **"նախանձել, բաժանել, հայտնագործել, քրքջալ, թրխկացնել"** բայերը: Ուրիշ ինչպե՞ս կարելի է օգտագործել այս բայերը: Բերե՛ք օրինակներ:



В каких сочетаниях употреблены глаголы **наխանձել, բաժանել, հայտնագործել, քրքջալ, թրխկացնել**? Приведите также свои примеры.

**Ես նախանձում եմ նրանց, ովքեր նկարել գիտեն:**

Բ) Տեքստի ո՞ր բառակապակցություններում են օգտագործված **"օրինակելի, միևնույն, սիրելի, կարևոր, տորիչելլյան"** ածականները: Այս ածականներով ուրիշ ի՞նչ գոյականներ կարելի է բնութագրել: Բերե՛ք օրինակներ:

В каких сочетаниях употреблены прилагательные **օրինակելի, միևնույն, սիրելի, կարևոր, տորիչելլյան**? Приведите также свои примеры.

**Ես մի քանի օրինակելի ուսանողուհի ունեմ:**



31. Պատմե՛ք տեքստը հիմնվելով բանալի բառերի վրա.  
 Перескажите текст по ключевым словам:



Նախանձել, կանոնավոր, ուշադիր, քաղաքավարի, օրինակելի, ամենաօրինակելին, միևնույն դպրոց, դասարան, շենք, հարկ, պատշգամբ, գիրքը ձեռքին, դժվար բան, միևնույն շարք, նստարան, բախտը բերել, հորանջել, Տորիչելլի, հայտնագործել, դատարկություն, քրքջալ, թրխկացնել, ճակատ:

# Урок 19. Տառնիչներորդ դաս

## Грамматика

Будущее время и "будущее в прошлом" изъявительного наклонения: образование и употребление.

Изъявительное наклонение.

Суффиксы -իլ, -ուլ.

Повтор как словообразовательный прием (продолжение).

## Тексты

Հիսարափուրջուն (Ավետիս Այվազյան)

Աշխարհի ամենաօրինակելի տղան (Հարունակուրջուն)

## Изъявительное наклонение

### Սահմանական եղանակ



Изъявительным наклонением мы пользуемся, когда речь идет о реальных событиях, имеющих место в действительности, если, конечно, по остроумному выражению известного лингвиста М. Абеяна, говорящий не заблуждается и не лжет.

## Будущее время и «будущее в прошлом» изъявительного наклонения

### Սահմանականի ապառնի և անցյալի ապառնի



Будущее время изъявительного наклонения обозначает действие, которое должно совершиться в будущем, а время "будущее в прошлом" обозначает действие, которое должно было происходить в прошлом, но почему-то этого не произошло.

Будущее и "будущее в прошлом" изъявительного наклонения образуются при помощи причастия будущего (иначе его называют причастием последующего действия – **ապակադար դերբայ**) и вспомогательного глагола; причем для будущего времени употребляются формы настоящего времени вспомогательного глагола (**եմ, ես...**), а для "будущего в прошлом" – формы прошедшего времени (**էի, էիր...**).

Причастие последующего действия образуется прибавлением окончания **-ու** к неопределенной форме глагола: **գնալու, գալու, մեկնելու, ասելու** и т. д. (обратите внимание на внешнее сходство причастия последующего действия и родительного падежа неопределенной формы глагола и не путайте их).

**Спряжение глаголов в будущем времени  
изъявительного наклонения**

գնալ		մեկնել	
утвердительная форма հաստատական ձև	отрицательная форма ժխտական ձև	утвердительная форма հաստատական ձև	отрицательная форма ժխտական ձև
ես գնալու եմ	չեմ գնալու	մեկնելու եմ	չեմ մեկնելու
դու գնալու ես	չես գնալու	մեկնելու ես	չես մեկնելու
նա գնալու է	չի գնալու	մեկնելու է	չի մեկնելու
մենք գնալու ենք	չենք գնալու	մեկնելու ենք	չենք մեկնելու
դուք գնալու եք	չեք գնալու	մեկնելու եք	չեք մեկնելու
նրանք գնալու են	չեն գնալու	մեկնելու են	չեն մեկնելու

**Спряжение глаголов в "будущем в прошлом"  
изъявительного наклонения**

գնալ		մեկնել	
утвердительная форма հաստատական ձև	отрицательная форма ժխտական ձև	утвердительная форма հաստատական ձև	отрицательная форма ժխտական ձև
գնալու էի	չէի գնալու	մեկնելու էի	չէի մեկնելու
գնալու էիր	չէիր գնալու	մեկնելու էիր	չէիր մեկնելու
գնալու էր	չէր գնալու	մեկնելու էր	չէր մեկնելու
գնալու էինք	չէինք գնալու	մեկնելու էինք	չէինք մեկնելու
գնալու էիք	չէիք գնալու	մեկնելու էիք	չէիք մեկնելու
գնալու էին	չէին գնալու	մեկնելու էին	չէին մեկնելու

**Употребление будущего и "будущего в прошлом"  
изъявительного наклонения.**

**Будущее время изъявительного наклонения** показывает действие, которое, по твердому убеждению говорящего, **совершится в будущем**. Ср.: будущее время условного наклонения обозначает действие, **совершение которого предполагается в будущем**.

На первый взгляд может показаться, что будущее время изъявительного наклонения и будущее время условного наклонения употребляются синонимично, заменяя друг друга. Однако заметьте, что будущее время изъявительного наклонения выражает **твердое знание о действии в будущем** (насколько это возможно применительно к будущему, а т.к. это редко возможно, оно и употребляется реже, чем предположительное будущее). Носитель армянского языка употребляет будущее время изъявительного наклонения, когда говорит о твердых намерениях на момент речи, о таких событиях в будущем, которые, с его точки зрения, не подлежат сомнению. Например:

Այս տարի երեխան դարձց է գնալու:



Здесь вопрос не о том, пойдет или нет ребенок в школу; говорящий **твердо знает**, что в каком-то возрасте все должны пойти в школу, вопрос в том, достиг ли ребенок этого возраста.

Возможные ответы:

– Այո, գնալու է:

– Ոչ, չի գնալու:

– Չգիտեմ, գնալու է, թե չէ:

Из последнего ответа можно заключить, что говорящий не уверен, в этом или не в этом году ребенок дорастет до нужного возраста, скажем, если ребенок мало знакомый; или можно заключить, что решение о том, чтобы именно в этом году пойти в школу, еще не принято или об этом решении говорящему не известно и т.д., но сам факт, что ребенок пойдет-таки в школу, не подлежит сомнению.

Если будущее время *сослагательного* наклонения употребляется для обозначения ожидаемого, предполагаемого действия, то употребление будущего времени *изъявительного* наклонения выглядит сообщением о заблаговременной договоренности о предстоящем.

Այս կիրակի **գնալու ենք** Կահանենց տուն, Դու **սովորելու ես** Սորբոնի համալսարանում: – выражено твердое намерение

Զեր ինքնաթիռը ժամը հինգին **է մեկնելու**: Գազիկը վաղն **է գալու** Սոսկվայից: – выражено твердое знание

Не вдаваясь в тонкости, многие употребляют одно время вместо другого. Однако будущее время изъявительного наклонения не зависит от условий, как будущее время сослагательного наклонения, поэтому невозможно его употребление с придаточным условия, вводимым с եթե. Ср. եթե փող ունենանք, այս ամառ կգնանք Դրիմ: и Այս ամառ գնալու ենք Դրիմ:

Ср. также:

Յոք սարի հետևից **մի արքայազն է գալու** ու ինձ **տանելու է** լուսավոր ու երջանիկ մի աշխարհ: (выражено убеждение в том, что это произойдет, как гадание)

Յոք սարի հետևից մի արքայազն **կգա** ու ինձ **կտանի** լուսավոր ու երջանիկ մի աշխարհ: (выражена надежда, мечта)

**"Будущее в прошлом"** изъявительного наклонения обозначает действие, которое, по мнению говорящего, должно было произойти после какого-то момента в прошлом. В момент речи говорящему либо неизвестно, произошло ли это действие, либо оно не произошло, и тогда то обстоятельство, которое помешало событию (непредвиденное, неучтенное и т.п. обстоятельство) передается прошедшим простым временем. Ср.

– Երեկ նա **մեկնելու էր** Երևան: Չգիտե՞ս, **մեկնե՞ց**, թե՞ չէ:

– Երեկ նա **մեկնելու էր** Երևան, բայց **հիվանդացավ, չկարողացավ** մեկնել:

Таким образом, в изъявительном наклонении мы выделили следующие времена\*:

<i>Вспом. глагол</i> <i>Причастие</i>	форма наст. вр. вспом. гл. <i>եմ</i>	форма прош. вр. вспом. гл. <i>էի</i>
причастие настоящего времени <b>ներկա դերբայ գնում</b>	настоящее время <b>ներկա գնում եմ</b>	прошедшее несовершенное <b>անցյալի անկարար գնում էի</b>
совершенное причастие <b>վաղակարար դերբայ գնացել</b>	совершенное <b>վաղակարար գնացել եմ</b>	давнопрошедшее <b>անցյալի վաղակարար գնացել էի</b>
причастие последующего действия <b>ապակարար դերբայ գնալու</b>	будущее <b>ապառնի գնալու եմ</b>	будущее в прошлом <b>անցյալի ապառնի գնալու էի</b>
прошедшее простое <b>անցյալ կարարյալ գնացի</b>		

\*Позднее рассмотрим еще одну пару видо-временных форм, так называемые результативные времена: նստած եմ, նստած էի.

Единственное синтетическое время изъявительного наклонения – прошедшее простое: գնացի.

Причастия **գնում**, **գնացել**, **գնալու** не имеют самостоятельного употребления, они как составные части входят в состав аналитических времен.

Из таблицы видно, что причастие настоящего времени **գնում** обозначает продолженное состояние действия. В сочетании с настоящим временем вспомогательного глагола оно указывает на то, что действие разворачивается в момент речи, в сочетании с прошедшим временем вспомогательного глагола – что действие разворачивалось в какой-то момент в прошлом (или повторялось в прошлом).

Совершенное причастие **գնացել** указывает на завершенность действия. В сочетании с настоящим временем вспомогательного глагола оно показывает, что действие завершилось к моменту речи, в сочетании с прошедшим временем вспомогательного глагола – что действие завершилось к какому-то моменту в прошлом.

Причастие последующего действия **գնալու** указывает на еще не совершенное, даже не начатое действие, на намерение. В сочетании с настоящим временем вспомогательного глагола оно показывает, что действие совершится после момента речи, в сочетании с прошедшим временем вспомогательного глагола – что действие должно было совершиться после какого-то момента в прошлом.

Простое прошедшее время обозначает совершенное законченное действие, лишённое длительности.

Если прочитать таблицу не слева направо, как мы это сделали, а сверху вниз, то видно, что средствами изъявительного наклонения армянского языка можно выразить происходящее, происходившее и то, что произойдет по отношению к моменту речи и по отношению к какому-то моменту в прошлом.

**NB:** Говоря о каком-л. моменте в будущем, можно употребить другие временные формы, как и в русском языке. Ср. Վաղը մեկնում եմ Կիպրոս: "Завтра уезжаю на Кипр" (наст. время вместо будущего). Ղե, ես գնացի: "Ну, я пошел" (прошедшее простое время вместо будущего) Հենց որ վերջացրիր, արի ինձ մոտ. "Как закончишь, приди ко мне" (в армянском языке – прошедшее время вместо будущего).

### Վարժություններ




1. Հետևյալ նախադասություններում վեր հանեք -ու-ով բայաձևերը և ասեք, թե ինչ են նրանք ներկայացնում՝ անորոշ դերբա՞յ, թե՞ ապառնի ժամանակ:



В следующих предложениях выделите глагольные формы на -ու и скажите, являются ли они родительным падежом неопределенной формы глагола или будущим временем изъявительного наклонения:

Մեզ զգուշացնելու համար նա պատուհանին ծաղկաման էր դրել: Ես քեզ կայցելեմ երեք օրից հետո. վաղն ու վաղը չէ մյուս օրը հաջորդ քննությանն եմ պատրաստվելու, ազատ ժամանակ չեմ ունենալու: Եթե առանց հորանջելու դատը լսես, ամեն ինչ կհասկանաս: Գյուղացիները քննիչին չպահեցին հյուրասիրելու: Ուսուցչուհին ասաց, որ այսօր չի ստուգելու մեր տետրերը, վաղն է ստուգելու: Ազգականներս ուզում են տեղափոխվել Ստավրոպոլ, բայց ապրելու տեղ չունեն: Վաղը այս կինոնկարի շարունակությունն են ցույց տալու: Մի բաժակ խմելու ջուր կտա՞ք: Հայրիկն իմացել է, որ օգոստոսի հինգին Սոկացյանն է քննություն ընդունելու: Այսօր երեկոյան Կարենին մի սպասեք, այսօր նա զբաղված է, գնալու է ընկերոջը հանդիպելու: Մաթեմատիկան ամսի մեկին ենք գրելու, իսկ ռուսերենը՝ ամսի չորսին:

2.




Երեկոյան ժամը յոթին նա մեզ սպասում է Թատերական հրապարակում:

→ Երեկոյան ժամը յոթին նա մեզ սպասելու է Թատերական հրապարակում:

Երեկոյան ժամը յոթին նա մեզ սպասում է Թատերական հրապարակում: Երեքշաբթի եղբայրս մեկնում է Սանկտ-Պետերբուրգ: Այս ամառ վերջապես գնում ենք Հայաստան: Քսան րոպեից խանութը բացվում է: Այս ծնեռ երեք քննություն ենք հանձնում: Մի շաբաթից քո դիմանկարն եմ նկարում:

3. Հետևյալ նախադասությունները դարձրեք ապառնի. օգտագործեք սահմանականի ապառնին կամ ենթադրականի ապառնին կամ երկուսն էլ, եթե հնարավոր է, և բացատրեք, թե ի՞նչ է արտահայտում Ձեր ընտրած յուրաքանչյուր ժամանակը.

В следующих предложениях употребите будущее время; выберите будущее время изъявительного или сослагательного наклонения (или оба, если возможно) и объясните, что выражает в каждом конкретном случае Ваш выбор:




Մինչև ես սանրվեմ, քույրս սուրճ (եփել):

→ Մինչև ես սանրվեմ, քույրս սուրճ *է եփելու*: (ևս ինձ խոստացել է, մենք պայամանավորվել ենք):  
Մինչև ես սանրվեմ, քույրս սուրճ *կեփի*: (- խնդրում եմ, քույրիկ ջան, սուրճ եփիր ինձ համար):

Մինչև ես սանրվեմ, քույրս սուրճ (եփել): Ինստիտուտից հետո զարմիկս (աշխատել իբրև բժիշկ): Հենց որ եղբայրս գա, ես ձեզ (զանգել): Դպրոցն ավարտելուց հետո նա (աշխատել ինստիտուտ ընդունվել): Վարդանը վաղը չի կարող մեզ հետ գալ, (զնայլ հիվանդանոց) մորը տեսնելու: Վաղը, ժամը ութին Բաբկենը (զալ Մոսկվայից): Մյուս շաբաթ զարմիկս (ամուսնանալ) մի ֆրանսուհու հետ ու (զնայլ ճանապարհորդության): Երբ որ բոլոր քննությունները հանձնես, բոլորս միասին (զնայլ ծովափ):

4. Գտեք հետևյալ նախադասություններից յուրաքանչյուրի համար հարմար շարունակություն և համոզվեք որ դրանց կապը հնարավոր է միայն սահմանականի ապառնին անցյալի ապառնի դարձնելով.

Найдите подходящее продолжение для каждого предложения и убедитесь, что их связь возможна лишь при замене будущего времени изъявительного наклонения «будущим в прошлом»:



Նա քեզ նամակ է գրելու:


→ Նա քեզ նամակ էր գրելու: Ի՞նչ եղավ, գրե՞ց, ստացա՞ր նրա նամակը:

Նա քեզ նամակ է գրելու:  
Մենք մեր բնակարանը չենք վաճառելու,  
փոխանկելու ենք:  
Տիգրանը ամսի հինգին քննություն է հանձնելու:  
Ես բժիշկ չեմ դառնալու:  
Ճաշը դու չե՞ս եփելու:  
Մենք նրանց այլևս չենք հանդիպելու:  
Նա ինձ այստեղ է սպասելու:

Ի՞նչ եղավ, գրե՞ց, ստացա՞ր նրա նամակը:  
Բայց հարմար տարբերակ չգտանք,  
ստիպված այն բնակարանը վաճառեցինք և սա գնեցինք:  
Բայց, իմանալով, որ իր ծնողները դասախոսի հետ պայամանավորվել են իր մասին, չզնաց քննության:  
Բայց երբ մեր շնիկը ոտքը կտրեց, և ես տեսա, որ կարող եմ նրան օգտակար լինել, որոշեցի բժշկական ինստիտուտ ընդունվել:  
Ես կարծում էի, թե մենք առավոտյան պայամանավորվեցինք, և ես կարող եմ չմտածել օրվա ճաշի մասին:  
Մենք հույս չունեինք, թե երբևէ կկարողանանք այսպիսի հեռավոր ճանապարհորդություն կատարել:  
Դուք նրան չե՞ք տեսել:

5. Տեղափոխեք գործողության պահը ներկայից անցյալ և շարունակեք նախադասությունը սահմանականի անցյալի ապառնու գործածությունն արդարացնելու համար:

Перенесите момент действия в прошлое и придумайте продолжение фразы так, чтобы оправдать употребление времени "будущее в прошлом" изъявительного наклонения.



Լա գնալու է Մոսկվա: (երեկ)



Երեկ նա **գնալու էր** Մոսկվա, բայց տոնն չկար, չգնաց: Կամ՝ Երեկ նա **գնալու էր** Մոսկվա, բայց չգիտեմ, զնաց, թե չէ: և այլն

1. Լա գնալու է Մոսկվա: (երեկ) 2. Կարծեմ Մոկացյանն է քննություն ընդունելու: (երեկ) 3. Նրանք մեկնելու են Ամերիկա: (անցյալ տարի) 4. Դու գնալու ես թատրոն: (երեկ երեկոյան) 5. Ես ձեր փողը բերելու եմ: (այս առավոտ) 6. Նրանք ամուսնանալու են: (անցյալ շաբաթ) 7. Կարենը իմ գիրքը քեզ է տալու: (երեք օր առաջ)



### Յիասթափություն

Ամեն ինչ կթողնեմ, կգնամ գյուղ: Հողամաս կվերցնեմ, ծառեր կտնկեմ, բանջարեղեն կցանեմ: Ծառերին անուններ կդնեմ ու մեկ-մեկ կխնամեմ (ինչպես երեխաներին են խնամում), մինչև այգի դառնամ: Մի փոքրիկ տուն կկառուցեմ, ինչի՞ս է պետք մեծը:

Կով կառնեմ, ինքս կկթեմ: Մեղուներ կպահեն, կուտեմ իմ քաշած մեղրը, կաթը, մածունը, թփասերը, իմ միրգն ու բանջարեղենը, իմ թխած հացն ու դավուրման...

Երեկոյան կնստեմ տանս կտուրին, արևամուտի դիմաց, արևին ճանապարհ կգցեմ: Առավոտյան արևածագի հետ կարթնանամ ու ... չեմ մտածի, թե գնալու եմ, էլի սկսի...

Ձի կառնեմ, ինչի՞ս է պետք մեքենան: Անտառից փայտ կբերեմ, մաքուր ու գեղեցիկ կշարեմ խորդանցում, որ ձմռանը չոր փայտը վառարանում ճրթճրթա, որ ծխնելույզից կապույտ ծուխ դուրս գա...

Առավոտյան, երբ արթնանամ, արագ-արագ կհագնվեմ, խորդանցից փայտ կբերեմ, փայտը վառարանում կճրթճրթա, կնստեմ վառարանի մոտ, կհիշեմ քաղաքի իմ ընկերներին... Ու հանգիստ կլինեմ, որ չեմ գնալու, որ էլի սկսի...


### Ըստ Ավետիս Ավագյանի "Յիասթափություն" պատմվածքի

#### Բառեր

**հիասթափություն** – разочарование  
**հողամաս** – участок земли  
**փնկել** – сажать (дерево, куст)  
**ցանել** – сеять  
**խնամել մեկին** – ухаживать за  
**կառուցել** – строить  
**կթել** – доить  
**մեղու** – пчела  
**պահել** – держать  
**քաշել (մեղր)** – зд. получить (мед)  
**դավուրմա** – каурма (сваренное, зажаренное и залитое жиром мясо для зимнего хранения)

**կտուր** – крыша  
**արևամուտ** – закат  
**ճանապարհ գցել** – проводить  
**արևածագ** – восход (գրք)  
**փայտ** – дерево (материал), дрова  
**շարել** – складывать (в ряд)  
**վառարան** – печка  
**ճրթճրթալ** – трещать  
**ծխնելույզ** – дымоход  
**արագ-արագ** – быстро

## Սեկնարանություններ, առաջադրանքներ, վարժություններ

6. Ա) 

Суффикс **-իկ** имеет уменьшительно-ласкательное значение. Ср.

прилагательные:	փոքր – փոքրիկ քաղցր – քաղցրիկ անուշ – անուշիկ ցածր – ցածրիկ
наречие:	մոտ – մոտիկ "близко"
существительные: NB: чередование звуков!	աստղ – աստղիկ պապ – պապիկ տատ – տատիկ թոռ – թոռնիկ հայր – հայրիկ մայր – մայրիկ շուն – շնիկ սիրտ – սրտիկ քիթ – քրիկ բերան – բերանիկ պանիր "сыр" – պանրիկ "сырок" Տիգրանիկ, Ստեփանիկ, Հակոբիկ, и т.д.



Встречаются и другие суффиксы с аналогичным значением:  
գեր "полный" – գիրուկ "полненький", տուն – տնակ "домик"

բ) 

Суффикс **-ակ** — очень распространенный словообразовательный суффикс:




նավ "корабль" – նավակ "лодка, шлюпка"  
գետ – գետակ "речка"  
թռչուն – թռչնակ "птичка"  
դուռ – դռնակ "дверца"  
լեզու – լեզվակ "язычок на обуви"  
խումբ "группа" – խմբակ "кружок"  
վեպ "роман" – վիպակ "повесть"  
պատանի "юноша" – պատանյակ "юноша" (уменьш.-ласк.)  
որդի – որդյակ "сыночек"  
գունդ "шар" – գնդակ "мяч"



Գ) Ասացեք նույնը մեղմ, փաղաքշական.

Скажите то же самое ласково:

1. – Ստեփան, որդի՛ս, քիթդ մաքրիր, բերանդ լվա, հայրդ քեզ է սպասում: 2. – Մայր, ես ուզում եմ մեր շան համար տուն կառուցել, մի տախտակ տուր, որ դուռը պատրաստեն: 3. Տատն իր փոքր թռանը շատ է սիրում, միշտ ասում է. "Մոտ արի, իմ անուշ Հակոբ, արի քեզ հեքիաք պատմեն:"

7.Ա) 

В армянском языке часто используется прием повтора:



**для образования наречий:**

մեծ-մեծ  
տաք-տաք  
հիվանդ-հիվանդ  
ուշ-ուշ  
շուտ-շուտ  
արագ-արագ и т.д.



**для усиления значения:**

հին-հին պատմություններ – очень старые истории  
մեծ-մեծ ճամպուրուկներ – очень большие чемоданы  
սև-սև աչքեր – очень черные глаза  
երկար-երկար բարբիչներ – очень длинные ресницы



**для придания числительным значения: по одному, по два и т.д.**

երկու երկու, երեք երեք

**NB:** մի մի կամ մեկ մեկ – по одному, но: մեկ-մեկ – иногда



**для придания глаголам итеративного значения:**

գոռալ – գոռոգոռալ  
ծամել – ծամծամել "пожевывать"  
վազել – վազվզել "побегать"  
Некоторые звукоподражательные глаголы существуют только с повторенным корнем:  
ծրծրալ  
չխչխկալ, չխչխկացնել – звенеть, греметь (о погремушке)  
բնբնկալ – ныть  
տզտզալ – хныкать  
փնփնալ – ворчать




Բ) Կետերի փոխարեն օգտագործեք . աջ սյունակում բերված դառերի կրկնությամբ կազմված մակբայ.

Вместо точек поставьте наречие, образованное приемом повтора из приведенных в правом столбце слов:

- |  |       |
|--|-------|
| 1. Հացը շատ ... են կտրատում, մի քիչ ... կտրատիր:                 | մեծ   |
| 2. Խորովածի միսը այսպես ... չեն կտրատում, ավելի ... են կտրատում: | փոքր  |
| 3. Սեղանի վրա ափսեները ... մի՛ դիր, աթոռները ... են դրված:       | հաստ  |
| 4. Դպրոցից ուշանում էր, դղման ... կերավ ու գնաց:                 | բարակ |
| 5. Դժվար օրերին հացը ... հավաքում էինք և ուտում:                 | հեռու |
| 6. Դեղագործը խորհուրդ տվեց այս դեղը ... խմել:                    | մոտ   |
|  | կաթիլ |
|  | փշուր |
|  | սառը  |

9) 




Մեր հարևանուհին **շապ կարճ մազերով, շապ սիրուն** կին է:

Մեր հարևանուհին **կարճ կարճ մազերով, սիրուն սիրուն** կին է:

Մեր հարևանուհին **շապ կարճ մազերով, շապ սիրուն** կին է: Մայրիկի **շապ մեծ** կոշիկները ոտքերին նա ծիծաղելի տեսք ունի: Ինչու՞ են հավատում նրա **շապ հիմար** պատմություններին: Առավոտյան երկինքը **շապ կապույտ** էր, ես չէի կարծում, թե անձրև կգա: Նա **շապ երկար** նայեց ինձ, բայց ոչինչ չասաց: Փոքրիկն ուզում էր **շապ կեղտոտ** ձեռքերով միրգ ուտել, ես թույլ չտվեցի, հիմա լաց է լինում:

7) 



Երեխաներ, **մեկական** խնձոր վերցրեք, ճաշը դեռ պատրաստ չէ:

Երեխաներ, **մի մի** խնձոր վերցրեք, ճաշը դեռ պատրաստ չէ:

Երեխաներ, **մեկական** խնձոր վերցրեք, ճաշը դեռ պատրաստ չէ: Երեխաներ, այս դասասենյակը փոքր է, այստեղ նստարանները քիչ են, ստիպված կլինեք ոչ թե **երկուական**, այլ **երեքական** նստել: Այս խաղը խաղալու համար խաղաթղթերը (игральные карты) բաժանում ենք ոչ թե **վեցական**, այլ **չորսական**:




Ե) Կետերի փոխարեն գրեք աչ սյունակի բայերից մեկը.

Вместо точек поставьте один из глаголов правого столбца:

1. Չոր փայտը ... է վառարանում:
2. Այս ափից մարդիկ տեսան, թե ինչպես էին սահմանապահները քաշքշում զուռնաչու թևից ու ... նրա վրա:
3. Ամառ է, շոգ է, երեխաները ամբողջ օրը ... են գետի ափին:
4. Մեր հաշվապահը ծեր ու դժգոհ մարդ է, ամբողջ ժամանակ ... է:
5. Հարևանուհիս հիվանդ կին է, անընդհատ ... է, թե մեջքս ցավում է, մեջքս ցավում է:
6. Երեխան ... է, չեմ հասկանում, թե ինչ է ուզում, խաղալիքը ... են, բայց չի հանգստանում:

- գոռգոռալ
- թնկթնկալ
- ճրթճրթալ
- չխկչխկացնել
- վազվզել
- տզտզալ
- փնթփնթալ

8. Ա) 



արևածագ, ծագել – восходить, происходить\*  
 արևամուտ (редко), մտնել – заходить  
 մայրամուտ (часто) – закат; մայր մտնել – заходить (о солнце)  
 լուսարագ – рассвет, լույսը բացվել – светать  
 մթնշաղ – сумерки, մութ – темно, մթնել – темнеть




Արևածագին արևը ծագում է, լուսարացին լույսը բացվում է, մայրամուտին արևը մայր է մտնում, մթնշաղին մթնում է, գիշերը մութ է, ցերեկը լույս է:


\*Напр., Գիտնականները կարծում են, որ Արարատ անունը ծագում է Ուրարտուից:






❖ 6) Պատասխանե՛ք հարցերին և նմանատիպ հարցեր տվե՛ք Ձեր ընկերներին:

Ամռանը ե՞րբ է լույսը բացվում, ժամը չորսի՞ն, թե՞ ժամը հինգին: Իսկ ե՞րբ է ծագում արևը: Իսկ ժամը քանիսի՞ն է ամռանը արևը մայր մտնում: Իսկ ձմռանը՞: Հունիսին Սանկտ-Պետերբուրգում գիշերվա ժամը տասներկուսին մու՞թ է, թե՞ լույս է: Իսկ Հայաստանում սպիտակ գիշերներ լինու՞մ են: Դուք սիրու՞մ եք արևածաղ դիմավորել: Դուք անտառում մթնշաղին վախենու՞մ եք: Իսկ մութ փողոցների՞ց: Հիշու՞մ եք Սենթ-Էկզյուլպերիի փոքրիկ արքայազնին, նա ամենից շատ ի՞նչն էր սիրում դիտել՝ լուսաբա՞ցը, արևածա՞ղը, մայրամու՞տը, թե՞ մթնշաղը:

9.Ա)  ճանապարհ ընկնել – пуститься в дорогу  
 ճանապարհ գցել = ճանապարհ դնել = ճանապարհել  
 ≠ դիմավորել



 Եղբայրս մեկնում է Սանկտ-Պետերբուրգ աշխատելու, ես նրան **ճանապարհ եմ գցում (դնում, ճանապարհում եմ)** Սանկտ-Պետերբուրգ: Ես արդեն վերադառնում եմ, ես գնում եմ օդանավակայան նրան Սանկտ-Պետերբուրգից **դիմավորելու:**


⚡ Բ) Շեղագիր բառերի ու արտահայտությունների փոխարեն օգտագործե՛ք հակառակ իմաստով բառեր ու արտահայտություններ.  
 Вместо слов и выражений, выделенных курсивом, употребите антонимы:

   →



Վաղը գնում ենք օդանավակայան՝ հայրիկին Մոսկվա <i>ճանապարհելու:</i>	Վաղը գնում ենք օդանավակայան՝ հայրիկին Մոսկվայից <i>դիմավորելու:</i>
---	---

Վաղը գնում ենք օդանավակայան՝ հայրիկին Մոսկվա *ճանապարհելու:* Ընկերս *գալիս է* երկար ճանապարհորդությունից, գնում եմ կայարան նրան *դիմավորելու:* Ամեն օր մայրիկս մեզ *ճանապարհ է դնում* դպրոց: Երբ ես *վերադառնում եմ* ամառանոցից, հարևանուհիս միշտ ինձ *դիմավորում է* բակում:

 10. Գտե՛ք հնարավոր կապակցությունները: 

*Ծառերը տնկում են, ջրում են, խնամում են:* 

Ծառերը, ժողիկները, միրգը, բանջարեղենը, մեղուները, մեղրը, հացը, մածուկը, տունը, այծերը, ձին, ոչխարները, հավը	Տնկել, ցանել, խնամել, կթել, մերել, թխել, քաշել, կառուցել, արոտ տանել, մորթել, ջրել
---	--

 ❖ Պատասխանե՛ք հարցերին. 

Հեղինակը գյուղ գնալու՞ է: Ձեր կարծիքով հեղինակը ու՞ր չի ուզում գնալ և ինչու՞: Ո՞վ և ի՞նչ է սկսելու:



## Աշխարհի ամենաօրինակելի տղան

(շարունակություն)

Բայց ահա այս բոլորից հետո մեր դասարանում մի ուրիշ փոփոխություն էլ կատարվեց: Ներս մտավ մեր դպրոցի ուսմասվարը, և նրա հետ՝ ակնոցավոր մի աղջիկ: Դա այն աղջիկն էր, որի հետ ամռանը ծանոթացել էի ճամբարում: Ինձ համար նա աշխարհի ամենագեղեցիկ և ամենահրաշալի աղջիկն էր:

Ես ուզում եմ, որ նա որևէ բան հարցնի; իսկ ես պատասխանեմ նրան՝ աշխարհի ամենահետաքրքիր և հրաշալի խոսքերով. "Պատրաստ եմ քեզ համար խաշվել եռացրած ջրի մեջ..." Կամ ավելի սքանչելի մի բան. "Եթե ուզես, կուտեմ ամենափշոտ ձուկը առանց որևէ բան համելու:" Բայց այդ բոլորից ոչ մեկն էլ չեմ կարողանում ասել: Իսկ Ամենաօրինակելի տղան ... Նրանք միշտ միասին են: Միասին դպրոց են գալիս, միասին էլ տուն են գնում: Պատահում է, դասերից հետո մեկ-մեկ ես էլ եմ նրանց հետ տուն գնում:

...Եվ ահա մի անգամ փողոցի անկյունում կանգնած մի տղա բղավեց.

– Է՛յ, դուք, աքլորներ:

Միանգամից մեխվեցի տեղում, բայց տեսնելով, որ Ամենաօրինակելի տղան և Ամենահրաշալի աղջիկը ուշադրություն չեն դարձնում, ես էլ արհամարհանքով շրջեցի դեմքս և նրանց հետ շարունակեցի ճանապարհը:

Բայց փողոցի տղան դարձավ Ամենահրաշալի աղջկան.

– Է՛յ, չորսաչքանի ...

Այստեղ արդեն գետինը դողաց ոտքերիս տակ: Այսինքն, ավելի ճիշտ, ոտքերս դողացին գետնի վրա ... Քիչ անց Փողոցի տղան և ես գլորվում էինք չոր ասֆալտի վրա:

Երբ վեր կացա, Փողոցի տղան փախավ, իսկ Ամենաօրինակելի տղան հանդիմանեց ինձ.

– Այնուամենայնիվ դու կռիվ սարքեցիր փողոցում: Դու մոռացար, որ մեզ հետ աղջիկ կա:



Խաչմերուկում, որտեղից մենք միշտ բաժանվում էինք, Ամենահրաշալի աղջիկը շրջվեց դեպի ինձ ու մի հրաշալի ժպիտով ասաց.

– Այսօր հեռուստացույցով "Գանձերի կղզին" են ցուցադրելու: Կգա՞ս մեր տուն, միասին մայեմք:

**Ըստ Ազատ Շահինյանի "Աշխարհի ամենաօրինակելի տղան"**

**Բառեր**

**փոփոխություն** – изменение  
**կարարվել** – происходить  
**ուամասվար** – завуч  
 (ուսումնական մասի վարիչ)  
**ակնոցավոր** – носящий очки  
**հրաշալի** – чудесный  
**խաշվել** – свариться  
**եռացրած** – кипяченый  
**սքանչելի** – восхитительный  
**փշոտ** – костистый  
**միասին** – вместе  
**մեկ-մեկ** – иногда  
**անկյուն** – угол  
**բղավել** – кричать  
**աքլոր** – петух  
**մեխվել** – остановиться и  
 стоять, как пригвожденный  
**ուշադրություն դարձնել** –  
 обратить внимание (ծ=g)

**արհամարհանք** – пренебрежение  
 (второе h не читается)  
**շրջել** – повернуть  
**դեմք** – лицо  
**չորսաչքանի** – очкарик (досл.  
 четырехглазый)  
**գեպին** – земля  
**դողալ** – дрожать  
**գլորվել** – кататься  
**հանդիմանել** – журить  
**այնուամենայնիվ** – все-таки, тем  
 не менее  
**կռիվ սարքել** – устроить драку  
**շրջվել** – повернуться  
**գանձ** – сокровище  
**գանձերի կղզին** – остров  
 сокровищ  
**ցուցադրել** – продемонстрировать

**Մեկնաբանություններ, առաջադրանքներ, վարժություններ**

11.Ա) ☞

Суффикс **-ոյ** образует прилагательное со значением имеющий что-то на себе, в себе временно или постоянно:



միս "мясо" – մսոտ "мясистый"  
 ոսկոր "кость" – ոսկորոտ "костистый, о мясе  
 млекопитающих"  
 փոշ "заноза, колючка, косточка рыба" – փշոտ  
 "колючий, костистый, о рыбе"  
 փոշի "пыль" – փոշոտ "пыльный"  
 կեղտ "грязь" – կեղտոտ "грязный" (ղ=խ)  
 հող "земля, почва" – հողոտ "выпачканный в земле"  
 ցեխ "мокрая, уличная грязь" – ցեխոտ "грязный"  
 մոխիր "зола" – մոխրոտ, Մոխրոտիկ "Золушка"  
 ժանգ "ржавчина" – ժանգոտ "ржавый"  
 յուղ "жир" – յուղոտ "жирный"  
 также: հիվանդոտ – "болезненный, человек,  
 подверженный болезням"  
 ցավոտ – "болезненный, причиняющий боль (вопрос,  
 лекарство и т.д.)"

Բ) Կետերի փոխարեն օգտագործեք -ուտ ածանցով համապատասխան ածական.

Вместо точек употребите соответствующее прилагательное с суффиксом -ուտ:

Այս մսի մեջ բոլորովին ոսկոր չկա, ... չի, իսկական դոլմայի միս է: Շատերը հաճախ ձկնից հրաժարվում են, որովհետև ձուկը սովորաբար ... է լինում: Կոշիկներից վրայի ցեխը մաքրիր, հետո առաջ արի, այդ ... կոշիկներով ներս մի գա: Ճաշից առաջ անպայման լվացվիր, ... ձեռքերով չի կարելի հաց ուտել: Սեղանի փոշին չես մաքրել, տես ի՞նչ ... է: Այս բոլոր մեխերի վրա ժանգ կա, ի՞նչու՞ ես պահում այս ... մեխերը: Սունկի ոտքը ... կլինի, հարկավոր է հողից լավ լվանալ, հետո եփել: Ես ի՞նքս յուղ չեմ սիրում և աշխատում եմ ... ճաշեր չեփել: Այս տղան հաճախ է հիվանդանում, մի քիչ ... է: Այս դեղը ... չէ:




Суффиксы **-ական, -երեն, -յան, -ուտ** настолько продуктивны, что в разговорной речи возможно образование от них вопросительных местоимений **ինչական** "чье производство", **ինչերեն** "на каком языке", **ինչյան** "как фамилия", **ինչո՞ւտ** "чем испачкано".




- Այս երշիկը **ինչական է**, հոլանդական՞, թե՞ ֆրանսիական:
- **Ինչերեն** են խոսում այն երիտասարդները:
- Դուք **ինչյան** եք, իսկ ձեր մայրը **ինչյան է**:
- Դեմքը **ինչո՞ւտ է**, ճաշո՞ւտ է, թե՞ ներկոտ:

12.Ա) Գ


Послелогии **հետ, համար** (как и **մութ, վրա, պես, նման**) употребляются с **родительным падежом существительных и местоимений третьего лица**, но с **дательным падежом местоимений первого и второго лица**.





Բ) Գ



- Ու՞մ համար է այս խաղալիքը:	տղաս → ընկերուհիդ, քույրիկս, դու, դուք, նա
- Տղայիս համար է:	
- Ու՞մ համար սուրճ եփեմ:	ես → մենք, դու, նրանք, տիկին Սիրուհի, մերոնք, ձերոնք
- Ի՞նձ համար:	նկարել → եղբորս ուղարկել
- Ի՞նչի՞ համար են այս ներկերը:	
- Նկարելու համար են:	
- Ու՞մ հետ ես գնալու այս տարի Բուլղարիա:	ընկերներս → կինս, ամուսինս, դու, դուք, նա, նրանք
- Ընկերներիս հետ:	
- Երեկ երեկոյան Վարդանը ու՞մ հետ էր:	ես → մենք, մերոնք, Վազգենը, նա, նրանք
- Ի՞նձ հետ էր:	

13.Ա) 

	փոխ առնել "занимать" ≠ փոխ տալ "дать взаймы" փոխանակություն – обмен, փոխանակել – обменять փոխնախագահ – зам. председателя փոխել – менять, поменять, изменить, заменить
	փոխառություն – заем, заимствование
	փոխատվություն – ссуда փոխ առ փոխ, փոխելփոխ – попеременно, посменно փոխարինարար – взаймы փոխարինել – заменить փոխարինելի ≠անփոխարինելի (заменяемый≠незаменяемый) փոխարինում – замена, смена փոխանակվել – обменяться փոխարքա – наместник, вице-король փոխգնդապետ – подполковник փոխակերպել – видоизменить, трансформировать (грам.) փոխվել – меняться, измениться, переодеться փոփոխել – изменить փոփոխական – переменный, изменчивый փոխադրել – перевезти, перевести փոխադրվել – перевестись փոխադրական – перевозочный, транспортный փոխադրամիջոց – перевозочное средство փոխանցել – передать, перечислять փոխանցվել – передаваться, перечисляться փոխանցում – перенос, перевод, перечисление փոխնորդ – смена белья



Հայոց լեզվում շատ **փոխառություններ** կան պարսկերենից, արաբերենից, հունարենից: Կինս երեք մուշտակ ունի, **փոխելփոխ** հագնում է: – Կարո՞ղ ես ինձ **փոխարինարար** երեք հարյուր դրամ տալ, մինչև երկուշաբթի: Շնորհակալ եմ, դու **անփոխարինելի** ընկեր ես: Մեր ուսուցչուհին հիվանդ է և մի ուրիշն է նրան **փոխարինում**, դաս **կարդալու փոխարեն** թատերական ներկայացումներ ու խաղեր է կազմակերպում: Երեխաները սիրում են խաղալիքներ, գրքեր, մուլմիսկ հագուստ **փոխանակել**, բայց նման **փոխանակությունը** հաճախ դուր չի գալիս մեծերին: Քո մեծ եղբայրն արդեն գնդապետ է, թե՞ դեռ **փոխգնդապետ** է: Բարեկամս ինձ կոշիկներ մվիրեց, բայց ոտքիս փոքր էին, տարա խանութ **փոխեցի**: Ամառվա ընթացքում երեխաները մեծացել են ու **փոխվել**: Արագ **փոխվիր**, մի սիրուն շոր հագիր, թատրոն ենք գնում: Գիտե՞ս ինչ, եթե տատիկիդ շորը մի քիչ **փոփոխես** ու հագնես, ոչ ոք չի հասկանա, որ դա իննսուն տարվա շոր է: Հիվանդի դրությունը շատ **փոփոխական** է, բժիշկը դեռ ոչ մի վերջնական բան չի կարող ասել: Տարին վերջացավ, աշակերտները լավ գնահատականներով **փոխադրվեցին** հաջորդ դասարան: Մեքենան հարմար **փոխադրամիջոց** է, իսկ ինքնաթիռը՝ արագ: Այս տոմսակը **փոխանցեք**, խնդրեմ, այն կնջրը: Նրանք արդեն փողը **փոխանցել են**, բայց մենք դեռ չենք ստացել: Ամեն անգամ ճանապարհորդելիս մայրս ինձ երեք կամ չորս **փոխնորդ** է տալիս ու շատ շատ տաք շորեր:

Գ) Կետերի փոխարեն գրեք աջ սյունակի բառերից մեկը.

Вместо точек поставьте одно из слов правого столбца:

1. – Դուք ձեր բնակարանը արդեն ...°: – Չէ, մեր բնակարանը չի ..., ոչ ոք չի ուզում վերջին հարկը գալ:	փոխել
2. Ռուսերենում շատ ... կան գերմաներենից, ֆրանսերենից, հունարենից:	փոխվել
3. Միստր Ուայլին թաղման ընկերության ... էր, նա գտնում էր, որ Ջոն կարող է աշխատել միսիս Չիլիլի ...:	փոխանակել փոխանակվել
4. Մարտ ամսին եղանակը ... է:	փոխարեն փոխնախագահ
5. Երկար տարիների բացակայությունից հետո այցելեցի իմ քաղաքը ու տեսա, որ այն ... է, բայց միևնույն ժամանակ ամեն ինչ նույնն է մնացել:	փոխարինվել
6. – Ի՞նչ ... ես նկատում մեր հյուրասենյակում: – Ոչ, ջահը չենք ..., ջահը նույնն է մնացել, պարզապես նոր վարագույր ենք կախել:	փոփոխություն
7. Մայրս աշխատանքից տուն է գալիս և անմիջապես ... է:	փոփոխական
8. Ես որոշել եմ այս երեկո մոխրագույն կոշիկները հագնել, բայց հարմար պայուսակ չունեմ, դու քո պայուսակը ... չե՞ս տա ինձ, մի օրով:	փոխանցել
9. Ոչ ոք չի կարող մորը ...:	փոխանցվել
10. Տղանը այս գիրքը տվեց ինձ, որ քեզ ...:	փոխադրվել
11. Մի շաբաթով ճանապարհորդելիս երկու ... բավական է:	փոխնորդ
12. Շատ հիվանդություններ օդով են ...:	փոխառություն
13. Տղաս, դու ո՞ր դասարան ես ...:	

Գ) 14. Հետևյալ նախադասություններին ավելացրեք աջ սյունակի մակբայներից մեկը.

К следующим предложениям добавьте одно из наречий правого столбца:

1. Գնում ենք, նստում Ախուրյանի ափին ու դիմացի ավերակներին ենք նայում:	միանգամից
2. Ես քեզ խնդրել էի, որ չուշանաս, բայց դու դարձյալ ժամանակին չեկար:	մեկ-մեկ
3. Գետի մյուս ափից լսվեց պարկապզուկի ձայնը:	այնուամենայնիվ
4. Ամբողջ դասարանը քրքջաց:	հանկարծ
5. Քույրս կգա համալսարանից և ես քեզ նրա հետ կծանոթացնեմ:	քիչ առաջ
6. Ես այստեղ էր, բայց, կարծեմ, արդեն զնաց:	քիչ անց
7. Նրանք արդեն իրար ժպտում էին հին ծանոթների պես:	քիչ հետո



15. Հետևյալ գոյականներից բայ կազմեք.



Կռիվ, ծիծաղ, ճանապարհ, ժպիտ, մեխ, սարք, հաշիվ, դավաճան, ճաշ, ընթրիք, ծառա, հագուստ:



16. Գտեք բառը նրա սահմանումով.



Найдите слово через его определение:

Գտնել, ստեղծել մի բոլորովին նոր բան	հայտնաբերել
Գտնել քեզ համար մի անհայտ բան	հայտնագործել
Գտնել մի բան, որ ուզում էին քեզնից թաքցնել	բացահայտել



17. Տեքստի ո՞ր բառակապակցություններում են օգտագործված **"կարարվել, ծանոթանալ, խաշվել, մեխվել, շրջել, շարունակել, դողալ, գլորվել, փախչել, հանդիմանել, ցուցադրել"**:



Ուրիշ ինչպե՞ս կարելի է օգտագործել այս բայերը: Բերե՛ք օրինակներ:



**Փոփոխություն կարարվել, երազանքը կարարվել.**



18. Պատմեք տեքստը հիմնվելով բանալի բառերի վրա.



Ուսմասվար, փոփոխություն, ակնոցավոր աղջիկ, ծանոթանալ, ճամբար, ամենագեղեցիկ ու ամենահրաշալի, հարց, պատասխան, հետաքրքրիչ ու հրաշալի խոսքեր, չկարողանալ ասել, Ամենաօրինակելի տղան, միշտ միասին, տուն գնալ, փողոցի տղա, բղավել, ուշադրություն չդարձնել, արհամարհել, շարունակել ճանապարհը, չորսաչքանի, գլորվել ասֆալտի վրա, հանդիմանել, կռիվ սարքել, հրաշալի ժպիտ, "Գանձերի կղզին":

## Մրոկ 20. Քիշներրրղ դիշ

### Գրմմտիկա

"Բուդուշեե վ թրոշոմ" յեղտելոյնոյ և սոսլադտելոյնոյ նակլոնեյ: օրազոնեմ և սոթրեբլեմե.

Տոփփիկս, օրազոնեմ յեղտելոյնոյ -արար, -ալլեւ, -րրեւն. Օթոսիտելոյնոյ մեթոնեմ յր և ցո սկլոնեմ. Սոսլեղոկ մալիւն.

### Եկտեյ

Լեռներոմ է իմ սիրոտը (Վիլլամ Սարոյան)

Սարոյանը խոսոմ է Սարոյանի հեւ

### Տիխի

Լիներ հեռու մի անկյուն (Հովի. Թոմանյան)

Գալիր անցնեիր վրանիս մոտով (Վ. Տերոյան)

Պատահաբար եմ պատահում կյանքում (Պ. Սևակ)

### "Բուդուշեե վ թրոշոմ" յեղտելոյնոյ և սոսլադտելոյնոյ նակլոնեյ

#### Ըղձականի և ենթադրականի անցյալի ապառնի

#### Օրազոնեմ յեղտելոյնոյ «բուդուշեե վ թրոշոմ» յեղտելոյնոյ նակլոնեյ

գրեյ		կարդալ	
ստրոնգիտելոյնոյ ֆորմա	օթրիտելոյնոյ ֆորմա	ստրոնգիտելոյնոյ ֆորմա	օթրիտելոյնոյ ֆորմա
հաստատական ձև	ժխտական ձև	հաստատական ձև	ժխտական ձև
գրեի*	չգրեի**	կարդայի*	չկարդայի
գրեիր	չգրեիր	կարդայիր	չկարդայիր
գրեր	չգրեր	կարդար	չկարդար
գրեիւք	չգրեիւք	կարդայիւք	չկարդայիւք
գրեիք	չգրեիք	կարդայիք	չկարդայիք
գրեին	չգրեին	կարդային	չկարդային

#### Օրազոնեմ "բուդուշեե վ թրոշոմ" սոսլադտելոյնոյ նակլոնեյ

գրեյ		կարդալ	
ստրոնգիտելոյնոյ ֆորմա	օթրիտելոյնոյ ֆորմա	ստրոնգիտելոյնոյ ֆորմա	օթրիտելոյնոյ ֆորմա
հաստատական ձև	ժխտական ձև	հաստատական ձև	ժխտական ձև
կգրեի**	չէի գրի	կկարդայի	չէի կարդա
կգրեիր	չէիր գրի	կկարդայիր	չէիր կարդա
կգրեր	չէր գրի	կկարդար	չէր կարդա
կգրեիւք	չէիւք գրի	կկարդայիւք	չէիւք կարդա
կգրեիք	չէիք գրի	կկարդայիք	չէիք կարդա
կգրեին	չէին գրի	կկարդային	չէին կարդա

! \*Սոսլուդկոնոյ յ մեթոս գլոսնոյ սոսլոնոյն, ու չի յիտեմ; օն յիտեմ տոկոս յոսլոսնոյ յ և յ ո.

! \*\*Սրոնոսիտեմ սօ սկրիտոյնոյ սլոկոս (յոսլե յտիտիկ կ- և չ-): կրգրեի չրգրեի.



## Употребление времени «будущего в прошлом» желательного наклонения



Если действие в желательном будущем выражает зависимость от желания говорящего, от реального условия и т.д., то временем "будущее в прошлом" можно выразить:

① сожаление о совершенном или несовершенном в прошлом действии (в зависимости от того, в утвердительной или отрицательной форме стоит глагол в желательном наклонении):

Դու էլ գնալիր նրանց հետ: "Ты бы тоже пошел с ними". (Они ушли, а ты нет. Жаль!)

Չասեիր, թե որտեղ է գտնվում փողը, ինքդ տալիր: "Ты бы не сказал, где лежат деньги, сам бы дал."



② относясь к настоящему или будущему, время "будущее в прошлом" выражает действие, зависящее от нереального условия, например мечту, которую сам говорящий оценивает, как нереализуемую:



Լինե՛ր հեռու մի անկյուն,  
Լինե՛ր մանկան արդար քուն,  
Երազի մեջ երջանիկ,  
Հաշտ ու խաղաղ մարդկություն:

Был бы отдаленный угол,  
Был бы детский невинный сон,  
В счастливом сне  
(Было бы) дружное, мирное  
человечество.

(Հովհաննես Թումանյան)



Լինե՛ի չորան սարերում հեռու,  
Գալիր, անցնե՛իր վրանիս մոտով,  
Իրար նայե՛ինք անուշ կարոտով,  
Զնքուշ ժպտալի՛նք հանկարծ  
իրարու:

Был бы я пастухом далеко в  
горах,  
Ты пришла бы и прошла мимо  
моего шатра,  
Посмотрели бы мы друг на  
друга со сладостной тоской,  
Нежно улыбнулись бы вдруг  
друг другу.

(Վահան Տերյան)

③ относясь к настоящему моменту, форма второго лица этого времени может выразить также очень вежливую, очень неназойливую просьбу, т.к. этим временем говорящий подчеркивает, что он не настаивает на совершении данного действия.

Ծաղիկները ջրե՛իր: Մորդ մի նամակ գրե՛իր:

## Употребление "будущего в прошлом" сослагательного наклонения



Если будущим временем желательного наклонения и будущим временем сослагательного наклонения мы выражаем условие и следствие, которые представлены как возможные, ожидаемые, реальные, то временем "будущее в прошлом" желательного и сослагательного наклонений, наоборот, выражаются такие условие и следствие, которые представлены как невозможные, неожиданные, нереальные.

❶ Если действие относится к прошлому, ясно, что уже невозможно вернуть то время, а следовательно, и то условие:


Եթե երեկ անծրև չգար, կգնայինք ման գալու:




❷ Если действие относится к настоящему или будущему, временем "будущее в прошлом" говорящий выражает, что он не верит в реальность условия. Иными словами, если будущее время сослагательного наклонения обозначает предполагаемое действие в будущем, которое **МОЖЕТ** совершиться при определенном условии, то прошедшим временем сослагательного наклонения обозначается действие, которое **МОГЛО БЫ** совершиться при определенном условии (выраженном прошедшим же временем желательного наклонения), но не совершается. Ср.

Եթե հիմա անծրև չգար, կգնայինք ման գալու:  
(Բայց, ցավոք, անծրև է գալիս):


Եթե վաղը ազատ լինեի (ժամանակ ունենայի, կարողանայի), միասին կայցելեինք բժշկուհուն:  
(Բայց, ցավոք, վաղը ազատ չեմ լինի, ժամանակ չեմ ունենա, չեմ կարողանա):



### Առաջադրանքներ և վարժություններ




(Մենք) Փարիզում լինել:



Երանի՜ (Գոնե ..., Ու՞ր է, թե ..., Ի՞նչ կլիներ ...) Փարիզում լինեիրք:


(Մենք) Փարիզում լինել: (Որդիս) համալսարան ընդունվել: Դուք, մեզ հետ ծովափ գալ: (Այն աղջիկը) շրջվել, ինձ ժպտալ: (Ուսուցչուհին) ամբողջ դասարանի առաջ ինձ չհանդիմանել: (Նարինեն) արհամարհանքով իմ կողքից չանցնել, ինձ մի քիչ ուշադրություն դարձնել: Այս երեկո հեռուստացույցով "Գանձերի կղզին" ցուցադրել:

2. 

Երեք շաբաթ մնացինք  
Հայաստանում, Սևան չզնացինք:  
Տղաները ոչխար են մորթել:

→ – *Գնայիք*, ինչու՞ չզնացիք:  
– *Չմորթեին*, ինչու՞ են մորթել:

Երեք շաբաթ մնացինք Հայաստանում, Սևան չզնացինք: Տղաները ոչխար են մորթել: Գյուղացիները քննիչին չպահեցին հացի: Անտառամեջի նախագահը ցուցմունքը փոխելու համար տուգանք վճարեց: Այրին ամեն օր կաթին մի շերտի ջուր էր խառնում: Զգույշ չէր, արագ վագեցի ու ընկա, աստիճաններից գլորվեցի: Շրջագետսու չփոխեցի, այս շորով կովը կթեցի, շորս կեղտոտեցի: Լամակ չգրեցիր, հարսանիքիդ չիրավիրեցիր:

3. Ա) 

Արդեն ուշ է, մութ է, Ձեզնից մեկը  
օրիորդին (ճանապարհել):

→ Արդեն ուշ է, մութ է, Ձեզնից  
մեկը օրիորդին *ճանապարհեք*:


Արդեն ուշ է, մութ է, Ձեզնից մեկը օրիորդին (ճանապարհել): Իմ ազգականը այսօր Բուլղարիայից է գալիս, (զնալ, մենք) կայարան, (դիմավորել): Թեյը քաղցր չէ, (դու) մի քիչ շաքար (ավելացնել): Մայրդ հիվանդ է, նրան (խմանել): (Դու) հարևանին (կանչել), (դուք) միասին այս ծորակը (քրահ) (սարքել):

Բ) 

– Որտե՞ղ է Օպերայի թատրոնը:

→ – *Չե՞ք ասի*, թե որտեղ է  
Օպերայի թատրոնը:

- Որտե՞ղ է Օպերայի թատրոնը:
- Որտե՞ղ է հինգերորդ "Ա" դասարանը:
- Որտե՞ղ է փոստատունը:
- Որտե՞ղ է Սայաթ-Նովայի անվան երաժշտական դպրոցը:
- Որտե՞ղ է Մատենադարանը:

Գ) 


– Այս նամակը գցիր  
փոստարկղը, խնդրեմ:

→ – Այս նամակը *գցեիր*  
փոստարկղը:  
– Այս նամակը *չե՞ր գցի*  
փոստարկղը:

- Այս նամակը գցիր փոստարկղը, խնդրեմ:
- Սենյակում շոգ է, դուռը բացեք, խնդրեմ:
- Պատմեք ինձ, խնդրեմ, Անի քաղաքի մասին:
- Վերարկուների համար կախիչ են գնել, մեխիր, խնդրեմ, դրան

## Գ 6. Ա)

Եթե ամռանը մի փոքր քամի (փչել), այսքան շոգ չէր լինի:



Եթե ամռանը մի փոքր քամի *փչեր*, այսքան շոգ չէր լինի:

Եթե ամռանը մի փոքր քամի (փչել), այսքան շոգ չէր լինի:

Եթե ձմռանը քամի (չփչել), այսքան ցուրտ չէր լինի:

Եթե այրին այծի կաթին ջուր (չխառնել), Աստված նրան չէր պատժի:

Եթե Ամենասօրինակելի տղան վախկոտ (չլինել), նա ինքը կպաշտպաներ իր ընկերուհուն:

Եթե Ամենահրաշալի Աղջիկը (ցանկանալ), տղան կուտեր ամենափշոտ ձուկը առանց որևէ բան հանելու:

## Գ Բ)

Եթե Պըլը Պուղին իր հարևանին չվստահեր, նա (թույլ չտալ) նրան իր բարձի տակից փող վերցնել:



Եթե Պըլը Պուղին իր հարևանին չվստահեր, նա *թույլ չէր տա* նրան իր բարձի տակից փող վերցնել:

Եթե Պըլը Պուղին իր հարևանին չվստահեր, նա (թույլ չտալ) նրան իր բարձի տակից փող վերցնել:

Եթե ուսանողուհին այդպես գեղեցիկ ու տխուր չծամեր, տղաները (չսիրահարվել) նրան:

Եթե մյուս երիտասարդներն էլ կրթված ու քաղաքավարի լինեին, նրանք (բարձրացնել) գետնին ընկած գիրքը:

Եթե քննության ժամանակ ուշադիր լինեի, (չսխալվել):

Եթե Մեսրոպ Մաշտոցը հայոց գրերը չգտներ, հայ մանուկները հայ (չմեծանալ):

Եթե նա չուշանար, մենք (հանդիպել):

## Գ 7.

Եթե հարցնես, կասեն:



Եթե *հարցնեիր*, կասեին:

Եթե հարցնես, կասեն:

Եթե դարակունդ կարգ ու կանոն լինի, տեսրերդ չեն կորչի:

Եթե ինձ զգուշացնեն, ոչինչ չեն հարցնի:

Եթե այս խուլ անապատում դուք ինձ քաղաքակրթության մի ճառագայթ ցույց տաք, ես ձեզ երախտապարտ կլինեմ:

Եթե նրան չհամոզեմ, նա չի գա օդանավակայան քեզ դիմավորելու:

Եթե այն տղայի խոսքերին ուշադրություն չդարձնես, գետինը ոտքերիդ տակ չի դողա ու դուք էլ ասֆալտին չեք զլորվի:

Բայց եթե ես այն տղայի հետ կռիվ չսարքեմ, աշխարհի Ամենահրաշալի աղջիկն ինձ չի հրավիրի իրենց տուն՝ միասին հեռուտացույց նայելու:



## Լեռներում է իմ սիրտը

1914 թվականին մի ծերունի երևաց մեզ մոտ՝ Սան Բենիտո փողոցում: Նա գնում էր փող փչելով: Ու հանկարծ կանգ առավ մեր տան առաջ.

– Երիտասարդ, մի բաժակ ջուր բերեիք ծերուկիս, որի սիրտն այստեղ չէ, այլ լեռներում:

– Ո՞ր լեռներում, – հարցրի ես:

– Շոտլանդական, – ասաց ծերունին: – Դե, մի բաժակ ջուր բերեք:

– Իսկ ի՞նչ է անում ձեր սիրտը շոտլանդական լեռներում:

– Թախծում է, – ասաց ծերունին: – Խնդրում եմ մի բաժակ սառը ջուր տվեք:

– Իսկ որտե՞ղ է ձեր մայրը, – ասացի ես:

– Իմ մայրը Տալսում է, Օկլահոմայի նահանգում, բայց նրա սիրտը այնտեղ չէ:

– Հապա որտե՞ղ է, – հարցրի:

– Շոտլանդական լեռներում, – ասաց ծերունին: – Երիտասարդ, ես խիստ ծարավ եմ: Ծարավից մեռնում եմ:

– Ջոննի, – հանկարծ ասաց հայրս, – վազիր նպարավաճառի մոտ, վերցրու մի հատ ֆրանսիական բատոն և մի ֆունտ պանիր:

– Փող տուր, – ասացի ես:

– Պարոն Կոզակին ասա՛ ապառիկ բաց թողնի:

– Լավ, կփորձեմ, – ասացի ես:

Ես մտա կրպակ: Պարոն Կոզակն արթնացավ ու աչքերը բարձրացրեց ինձ վրա:

– Պարոն Կոզակ, – ասացի ես, – ի՞նչ կանեիք, եթե հանկարծ ընկնեիք Չինաստան և ոչ մի գրոշ փող չունենայիք գրպաններումդ: Մի՞թե հույս չիք դնի, որ այնտեղի քրիստոնյաներից մեկը մի ֆունտ բրինձ կտա ձեզ:

– Ի՞նչ ես ուզում, – հարցրեց պարոն Կոզակը:

– Ես հենց այնպես, խոսելու համար, – ասացի: – Դուք հավանորեն կիռսայիք, որ որևէ մեկը անպայման կօգնի՞ ձեզ, ծիշտ է, չէ՞, պարոն Կոզակ:

– Գոնե մի քիչ փող բերե՞լ ես, – հարցրեց նա:

– Խոսքը փողի մասին չի, պարոն Կոզակ, – ասացի ես, – խոսքը Չինաստանում գտնվող՝ մարդու մասին է:

– Ոչինչ չեմ իմանում, չեմ լսել – ասաց պարոն Կոզակը:

– Ի՞նչ կանեիք նման դրության մեջ Չինաստանում, – հարցրի ես:

– Ի՞նչ գործ ունեմ այնտեղ, Չինաստանում, – ասաց նա:

– Ենթադրենք, – ասացի, ընկել եք Չինաստան ու խիստ սոված եք: Կարո՞ղ եք պատկերացնել, որ որևէ մի քրիստոնյա ձեզ բաց թողնի առանց գոնե մի ֆունտ բրնձի, իր՞, պարոն Կոզակ:

– Երևի ոչ, – ասաց պարոն Կոզակը: – Բայց Ջոննի, դու Չինաստանում չես, քո հայրը նույնպես: Ես այլևս ապառիկ բաց չեմ թողնի ձեզ:

– Պարոն Կոզակ, – ասացի, – դուք ինձ ճիշտ չհասկացաք: Մթերքի մասին խոսք անգամ չի եղել: Ես ասում եմ, պատկերացնենք, թե դուք Չինաստանում եք, ձեր չորս կողմը կռապաշտներ են, և դուք նրանց մեջ՝ մեռնում եք սովից...

– Մենք Չինաստանում չենք, – ասաց պարոն Կոզակը: – Այստեղ, այս երկրում ապրելու համար հարկավոր է աշխատել: Ամերիկայում բոլորն էլ աշխատում են:

– Պարոն Կոզակ, – ասացի ես, իսկ ի՞նչ կանեիք, եթե միայն ձեր կյանքը պահպանելու համար կարիք ունենայիք ինչ-որ ֆրանսիական բատոնի ու մի ֆունտ պանիր: Մի՞թե կքաշվեիք այդ բանը խնդրել քրիստոնեական միսիոներից:

– Կքաշվեի, – ասաց պարոն Կոզակը, – կամաչեի խնդրել:

– Դե, դե, դա արդեն լավ չի, պարոն Կոզակ: Մի՞թե դուք կմեռնեիք հեռու ընտանիքից, օտարության մեջ, Չինաստանում: Օ՛հ, պարոն Կոզակ:

– Քեզ ի՞նչ է հարկավոր, Ջոննի, – հարցրեց պարոն Կոզակը, – ինչքա՞ն փող ես բերել:

– Պարոն Կոզակ, – ասացի ես, – ախր ես չեմ եկել գնումներ կատարելու: Գիտե՞ք, մեկ-մեկ սիրում եմ պարզապես փիլիսոփայել: Տվեք ինձ մեկ ֆրանսիական բատոն և մի ֆունտ պանիր:

– Վճարումը կանխիկ, – ասաց պարոն Կոզակը:

– Իսկ ընդհանրապես ինչպե՞ս եք, պարոն Կոզակ, ինչպե՞ս է ձեր ընտանիքը, – ասացի ես:

– Հոյակապ, Ջոննի, բոլորն էլ լավ են:

– Որքա՞ն ուրախ եմ ձեզ համար, պարոն Կոզակ, – ասացի ես, – և մի շիշ գարեջուր մեր հյուրի համար:

– Չէ՛, գարեջուր տալ չեմ կարող:

– Ի՞նչ եք ասում, ո՞նց թե չեք կարող:

– Չեմ կարող, – ասաց պարոն Կոզակը, – ես քեզ քաց կթողնեմ երեկվա բատոնն ու մի ֆունտ պանիր, ուրիշ ոչինչ: Իսկ ինչո՞վ է զբաղվում քո հայրը, երբ աշխատանք չունի:

– Իմ հայրը բանաստեղծություններ է գրում, պարոն Կոզակ, նա աշխարհի մեծագույն բանաստեղծներից մեկն է:

– Իսկ ե՞րբ է փող ստանալու, – հարցրեց պարոն Կոզակը:

– Երբե՞ք, – ասացի ես, – չի կարելի լինել մեծ և դրա համար փող վերցնել:

***Ըստ Վիլյամ Սարոյանի "Լեռներում է իմ սիրտը"***

<sup>1</sup>Չինաստանում գտնվող – находящийся в Китае

## **Բառեր**

**փող** – зд. труба

**թախծել** – грустить

**նահանգ** – штат

**խիստ** – зд. очень

**նպարավաճառ** – бакалейщик

**ապառիկ** – в кредит

**քաց թողնել** – отпустить

**կրպակ** – киоск

**հույս դնել** – возлагать надежду

**քրիստոնյա** – христианин

**բրինձ** – рис

**հավանորեն** – вероятно


**հուսալ** – надеяться

**անպայման** – обязательно

մասին – о (последлог)  
 դրություն – положение  
 նման դրություն – подобное  
 положение  
 ենթադրել – предположить  
 մթերք – продовольствие  
 կռապաշտ – идолопоклонник  
 երկիր – страна  
 պահպանել – сохранить  
 կարիք ունենալ – нуждаться  
 քաշվել – стесняться, робеть  
 քրիստոնեական –  
 христианский  
 միսիոներ – миссионер


օտարության մեջ – на чужбине  
 ախր – ведь  
 գնում – покупка  
 գնումներ կատարել – делать  
 покупки  
 փիլիսոփայել – философствовать  
 վճարումը կանխիկ – оплата  
 наличными  
 ընդհանրապես – вообще (դ=թ)  
 գարեջուր – пиво  
 ո՞նց թե – как так?  
 զբաղվել – заниматься  
 բանաստեղծություն –  
 стихотворение

**Մեկնաբանություններ, առաջադրանքներ, վարժություններ**

8.Ա) 



Суффиксы <b>-աբար, -ապես, -որեն</b> образуют наречия образа действия.		
սովորաբար	վերջապես	ազնվորեն
բարեկամաբար	վերջնականապես	լրջորեն
ընկերաբար	ընդհանրապես	հավանորեն կամ
որդիաբար	պարզապես	հավանաբար
եղբայրաբար	առանձնապես	անկեղծորեն
պատահաբար	"особенно"	"искренне"
"случайно"	տնտեսապես	փաստորեն
անհրաժեշտաբար	"экономически"	"фактически"
"по	մոտավորապես	(от փաստ
необходимости"	"приблизительно"	"факт")

 Գ) Կետերի փոխարեն գրեք աջ սյունակի բառերից մեկը.

1. Հայրը որոշեց որդու հետ ... խոսել կյանքի դժվարությունների մասին:	մոտավորապես
2. 1920թ. արևելյան Հայաստանում ... յոթ հարյուր հազար հայ էր մնացել:	տնտեսապես
3. Քույրս ... սուրճ չի խմում:	լրջորեն
4. Հայ եկեղեցին աշխատում է օտարության մեջ հայերին ... օգնել:	պարզապես
5. Ես ուզում եմ ... ասել, որ նա մեղավոր չէ:	ընդհանրապես
6. Նա այսօր լավ տեսք չունի, ... հիվանդ է:	բարեկամաբար
7. Մենք ... խոսեցինք ու ամեն ինչ պարզեցինք:	հավանորեն



## Պատահաբար են պատահում կյանքում

Մի՛շտ էլ սիրածին պատահաբար են պատահում կյանքում  
Ու հրաժեշտ են տալիս սիրածին անհրաժեշտաբար...

Թե կուզես՝ լռի՛ր,

Թե կուզես՝ ոռնա՛,

Թե կուզես՝ ծամիր սեփական լեզուդ,

Թե կուզես՝ խցիր բերանդ բարձով,

Թե կուզես՝ ոտքով հարվածիր բարձին.

Հավատացյալ ես՝ հայհոյիր աստծուն,

Հավատացյալ չես՝ աստծուն հավատա.

Թե կուզես՝ ուզիր է՛լ չուզել – իզու՛ր,

Թե կուզես՝ ուզիր է՛լ չապրել – իզու՛ր...

Ու, եթե կուզես, ապրելն այս է հենց,

Եվ սերն իսկական հենց այս է, որ կա.

– Պատահաբար ես պատահում կյանքում,

Անհրաժեշտաբար հրաժեշտ տալիս...

*Պարույր Սևակ*

### Բառեր

**սիրած** – любимый

**պատահել** – зд. встречаться

**հրաժեշտ տալ** – прощаться

**ոռնալ** – выть

**սեփական** – собственный

**խցել** – затыкать

**հարվածել** – ударять

**հավատացյալ** – верующий

**հայհոյել** – ругаться

**աստված** (աստծո, աստծուն) – бог

**իզուր** – напрасно

**իսկական** – настоящий

### В жизни встречаемся мы случайно

В жизни встречаемся мы случайно,

А расстаемся – волей-неволей.

Хочешь – молчи,

Хочешь – кричи,

Если поможет крик.

Хочешь – рви зубами подушку,

Хочешь – уткнись в подушку

И прикуси язык.

Если ты верующий – кляни бога,

Если неверующий – поверь.

Хочешь не хочешь – одна дорога,

Жить не жить – все равно теперь!

Поздно что-нибудь изменить,

Дело это пропащее.

Но, знаешь, это и есть – жить.

Это и есть любовь. Настоящая.

В жизни встречаемся мы случайно,

А расстаемся – волей-неволей.

Перевод О. Чухонцева



9.Ա) ▣

Սա չորրորդ **փաթիլն է, որ** նստում եմ: = Սա չորրորդ **փաթիլն է. փաթիլ** եմ նստում:

NB: ▣

Относительное местоимение **որ** связывает относительное придаточное предложение с главным, в котором можно указать слово, представленное в относительном придаточном предложении относительным местоимением (антецедент).

Местоимение **որ** склоняется в единственном и множественном числе.

Բ) ↷

Неперсонифицированное склонение	Персонифицированное склонение	ед. ч.	мн. ч.
Ուղղ. - <b>հայց</b> . հ. им.-вин. п.	Ուղղ. հ. им. п.	որ(ը)	որոնք (որ)
Սեռ.-տր. հ. род.-дат. п.	Սեռ.-տր. - <b>հայց</b> . հ. род.-дат.-вин. п.	որի(ն)	որոնց
Բաց. հ. исх. п.		որից	որոնցից
Գործ. հ. тв. п.		որով	որոնցով
Ներգ. հ*. местн. п.		որում	որոնցում

!\*Часто прибегают к обороту որի մեջ, որոնց մեջ

Գ) ↷

Մի բաժակ ջուր բերեիք ծերուկիս: Իմ սիրտն այստեղ չէ:

→ Մի բաժակ ջուր բերեիք ծերուկիս, **որի** սիրտն այստեղ չէ:

1. Մի բաժակ ջուր բերեիք ծերուկիս: Իմ սիրտն այստեղ չէ:
2. Մենք դիմում ենք այն տղաներին: Այն տղաները ամբողջ օրը պեղումներ են կատարում:
3. Ես գնում եմ դասի: Դասից առաջ ուզում եմ դասախոսի հետ իմ կուրսային աշխատանքի մասին խոսել:
4. Սա այն գրիչը չէ: Այն գրչով դու քո տնային աշխատանքն ես գրել:
5. Դու կվերցնես այն զամբյուղը: Այն զամբյուղի մեջ շշերն են:
6. Սա այն աղջիկն է: Այն աղջկան ես ամեն առավոտ հանդիպում եմ աշխատանքի գնալիս:
7. Մեր դասարանի ֆուտբոլիստը դարձավ երգիչ: Մեր ֆուտբոլիստով ամբողջ դպրոցն էր հպարտանում:
8. Վերջապես գտանք այն գրքերը: Այն գրքերից մեկը քեզ էի խոստացել:
9. Կան մարդիկ: Այդ մարդկանց համար ոչ մի սուրբ բան չկա:
10. Սա այն աղջիկն է: Այն աղջկա հետ ծանոթացել եմ ճամբարում:
11. Սա այն աղջիկն է: Առանց այն աղջկա տղան թախծում է:

10.Ա) 

գործ – дело  
 գործարան – завод  
 գործիք – инструмент



գործնական – деловой (о неодушевл. предметах)  
 գործարար – деловой, практичный (о людях)



գործունյա – деловой, деятельный, энергичный (о людях)

գործունեություն – деятельность  
 գործադիր (օրգան, հանձնաժողով) – исполнительный (орган, комитет)

գործել – 1. действовать, 2. вязать

գործակալ – агент

գործակալություն – агентство

գործիչ – деятель

գործող – действующий

գործած – связанный

գործվածք – трикотаж

գործվածքեղեն – трикотажные изделия



Դ) Կետերի փոխարեն գրեք աջ սյունակի բառերից մեկը.

1. Սա շատ ... առաջարկություն է, չի կարելի այն մերժել:
2. Նրա ամուսինը ... մարդ է, կարճ ժամանակում իր նպատակին հասավ:
3. Ընկերս թողեց իր դասախոսական աշխատանքը համալսարանում և ... խանութ բաց արեց:
4. Բայց նա ... մարդ չէ, ոչինչ չստացվեց:
5. Մեր դպրոցից ոչ հեռու ... եկեղեցի կա:
6. Բազազ Արտեմն իր խանութում ... էր վաճառում, իսկ Գիքորը խանութի դռանը հաճախորդ էր կանչում:
7. Ամռանը սարում ... բրդյա շորերով էլ ցուրտ է:
8. Դրոն դաշնակցական հայտնի ... էր:
9. Յուրաքանչյուր պետություն ունի իր գաղտնի ...:
10. Ֆրանս-պրես ... հայտնում է, որ թշնամու բանակում ... են գաղտնի ...:
11. Այս հոդվածի հեղինակը վեր է լուծում (анализирует) ... հանձնաժողովի ...:

գործնական  
 գործարար  
 գործունյա  
 գործունեություն  
 գործել  
 գործակալներ  
 գործակալությունը  
 գործադիր  
 գործիչ  
 գործող  
 գործած  
 գործվածք  
 գործվածքեղեն



Գ) 

**Մտապահե՛ք նաև. Запомните также**

ի՞նչ գործ ունեն (ունես, ...) – какое мне (тебе...) дело до ...?  
 ես (դու...) գործ չունեն (չունես...) – мне (тебе...) нет дела до...

իմ (քո...) ի՞նչ գործն է – какое мое (твое...) дело?

իմ (քո...) գործը չէ – не мое (твое...) дело


ի՞նչ գործի ես – чем ты занят?

գնա գործիդ – иди своей дорогой

տան գործ – домашние (хозяйственные) дела

գործի (աշխատանքի) լինել – быть на работе

Դ) Լրացրե՛ք երկխոսությունները համապատասխան արտահայտություններով.



• – Լսի՛ր, այսօր մեր հարևանի տատիկի եղբոր աղջկա ամուսնու քրոջ տղայի հարսանիքն է: Չգնա՞նք հարսանիք:

– ... ձեր հարևանի տատիկի եղբոր աղջկա ամուսնու քրոջ տղայի հարսանիքին:

- – Ալլո, Սահակը տա՞նք է:
- Ոչ, տանը չէ:
- Իսկ որտե՞ղ է:
- ...:



- – Այսօր ..., ի՞նչ ես անում:
- ..., ինչպես միշտ:



- – Եյ, արլորներ:
- Այ տղա, կռիվ մի սարքիր, ...:

- – Ի՞նչ է գրում կինդ նամակում:
- ...:



• – Մայրիկ, ես ուզում էի քո երեկոյան շրջագգեստը ավելի գեղեցկացնել, ու դրա համար քո շրթներկով (губная помада) նրա վրա վարդեր նկարեցի:

– Ախր, ..., ինչու՞ ես իմ զգեստը վերցնում:

11.Ա)


Род.п. + մասին		
հայրենիքի ընտանիքի իմ, մեր քո, ձեր նրա, նրանց		մասին, ու: այդ մասին



Խոսել այդ մասին, մի բանի մասին կամ մի բանից: Ես եկավ մեր տուն և երկար խոսեցինք մեր հին-հին ծանոթներից: Այս գիրքը բժիշկների մասին է: Այսօրվա թերթում Հայաստանի տնտեսության մասին մի մեծ հոդված (статья) կա: – Եթե իմ մասին խոսք լինի, ոչինչ չասես, լա՞վ: – Մի՛ անհանգստացիր, քո մասին ոչ ոք չի հարցնի: Այդ մասին խոսք անգամ չի կարող լինել: Ջոննին առանց մթերքի մասին խոսք բաց անելու կարողացավ հաց ու պանիր վերցնել պարոն կոզակից:

Բ)

առանց	սխտորի, մածնի (род.-дат. п.)		համար հետ վրա մոտ
	ընտանիքի, ընկերոջ (род.-дат.-вин. п.)		
	ինձ, մեզ (дат.-вин. п.)		
	քեզ, ձեզ (дат.-вин. п.)		
	նրա, նրանց (род. п.)		



Այս հոդվածը մեր մասին է:

մենք → դուք, նրանք, ուսուցիչներ, մեր բաղաբը

Նա ձեզ համար մի գեղեցիկ նվեր է գնել:

դուք → ես, դու, նա, մենք, Անահիտը, Վազգենենք, իր քույրը

Ես չեմ կարողանում նրա հետ երկու ընկերացիս ավելի որևէ բանի մասին խոսել:

նա → նրանք, Պողոսը, դու

Եկեք երեկոյան հավաքվենք մեր տանը, մեզ մոտ տաք է:

մենք → ես, դու, դուք, պապոնք, Հակոբենք, նա, նրանք

12.Ա)

հայ լուսավորչական եկեղեցի – армяно-григорианская церковь

ո՛վ	ի՛նչ փաճար, պերություն, և այլն	ի՛նչ կրոն
քրիստոնյա	քրիստոնեական	քրիստոնեություն
ուղղափառ "православный"	ուղղափառ "православный"	ուղղափառություն "православие"
կաթոլիկ "католик"	կաթոլիկ "католический"	կաթոլիկություն "католичество"
բողոքական "протестант"	բողոքական "протестантский"	բողոքականություն "протестантство"
մահմեդական կամ մուսուլման	մահմեդական	մահմեդականություն
կռապաշտ	կռապաշտական	կռապաշտություն
հեթանոս "язычник"	հեթանոսական "языческий"	հեթանոսություն "язычество"

բ) Պատասխանե՛ք հարցերին.

Ո՞վ էր Տրդատը, հեթանո՞ս, թե՞ քրիստոնյա: Ո՞վ էր Գրիգոր Լուսավորիչը: Իսկ Գրիգոր Նարեկացի՞ն: Ո՞վ էր Տիգրան Մեծը, հեթանո՞ս, թե՞ քրիստոնյա: Ո՞վ էր Մուհամեդը: Ինչպիսի՞ պետություն էր Ուրարտուն:



13. Շեղագիր բառերի փոխարեն օգտագործե՛ք իմաստով նույն կամ մոտ բառեր.



Պարոն Կոզակը նպարեղենի *խանութ* ուներ:

Ծերունին *շատ* հոգնած էր ու ծարավ:

Տղաները նայում էին ուսանողուհու գեղեցիկ ոտքերին ու *տխրում*:

Նվազախմբի առջևից *չեփոր* փչելով մի փոքրիկ տղա էր գնում:

– *Առ* այս բատոնն ու գնա, իսկ գարեջուր *չեմ տա*, – *հավանաբար* ասաց պարոն Կոզակը, – և մյուս անգամ *հույս չունենա*, թե քեզ էլի ապառիկ որևէ բան *կվաճառեմ*:




14. Շեղագիր բառերի փոխարեն օգտագործե՛ք հակառակ իմաստով բառեր.



Կիրակի օրը մարդիկ *գալիս են* շուկա՝ մի բան *վաճառելու* կամ պարզապես իրար հանդիպելու, խոսելու ու փիլիսոփայելու:

Այս կրպակում ոչինչ *ապառիկ* բաց չեն թողնում:

Նա ապրում է *իր հայրենիքում*:

15.Ա) 



պահել – беречь, хранить, держать  
 հաշիվը պահել(հաշվապահ)  
 մեղու (կով, ոչխար, երեխա) պահել – иметь, воспитывать  
 պահարան

պահակ – сторож  
 պահեստ – склад, запас  
 պահեստախցիկ – багажник  
 պահասենյակ – камера хранения  
 պահածո – консервы  
 պահապան – хранитель, стража  
 պահպանողական – консервативный



**Պահեստի պահակն** ասաց, որ **պահեստում** շատ **պահածոներ** կան: Գրքերդ **գրապահարանում** **պահիր**, ինչու՞ ես դրել **զգեստապահարանը**: Կարո՞ղ ես այս վերջին ճամպուրկը ծնկներիդ վրա **պահել**, **պահեստախցիկում** այլևս տեղ չկա, հետո բոլոր ճամպուրկներն ու մեծ պայուսակները կհանձնենք **պահասենյակ**: Հայրս **պահպանողական** հայացքներ ունի: Մենք աշխատում ենք մեր դասասենյակում **մաքրություն պահպանել**:

**Դ) Կետերի փոխարեն գրեք աջ սյունակի բառերից մեկը.**

1. Ուսուցչուհին մի քանի թուղթով դուրս եկավ դասարանից և խնդրեց լռություն ...:	պահակ
2. Մայրիկս ամեն ամառ շատ ... է պատրաստում:	պահել
3. Ջոն ասաց միսիս Հիլփիլին, որ գնում է իր քեռու մոտ՝ նրա նպարեղենի խանութի հաշիվները ...:	պահածո
4. Ծիշտ է, պապս մի քիչ ... է, բայց նա կյանքը լավ է հասկանում ու խելոք խորհուրդներ է տալիս:	պահեստ
5. Չե՞ք ասի, թե որտեղ է ..., ես ուզում եմ ճամպուրկներս հանձնել:	պահեստախցիկ
6. Ուսանող ժամանակ նա ցերեկը սովորում էր, իսկ գիշերն աշխատում էր իբրև ...:	պահասենյակ
7. ...ի դուռը միշտ փակ է:	պահպանել
8. Ես չեմ ուզում այս տուփը ... դնել, այստեղ կտորվող բան կա, կարելի՞ է մեքենայի նստարանին դնել:	պահպանողական



16. Եթե հետևյալ նախադասություններում սխալ բան կա, ապա ուղղեք:



1. Ծերունին մի բաժակ սառը ջուր խնդրեց Ջոննիից, որովհետև խիստ քաղցած էր:
2. Ծերունու մոր սիրտը Օկլահոմայի նահանգի լեռներում է:
3. Ջոննիի հայրն ասաց, որ նա վազի նպարավաճառի մոտ, մի ֆրանսիական բատոն, մի ֆունտ պանիր ու մի շիշ գարեջուր վերցնի:
4. Պարոն Կոզակը քնած էր իր ննջարանում, երբ Ջոննին ներս մտավ:

5. Ջոննին մթերքի կարիք չուներ, նա պարզապես եկել էր պարոն Կոզակի հետ մի քիչ փիլիսոփայելու:


6. Ջոննին սովորաբար կանխիկ մթերք էր գնում պարոն Կոզակից:

7. Պարոն Կոզակը տվեց Ջոննին մի ֆունտ բրինձ, որպեսզի նա իր կյանքը պահպանի:

8. Ջոննիի հայրը հայտնի բանաստեղծ էր:



## **Վիլյամ Սարոյան՝ գրող, մարդ կամ Սարոյանը խոսում է Սարոյանի հետ**



**Չարք.** – Վիլյամ Սարոյան, ո՞վ եք դուք, ի՞նչ կարծիք ունեք ձեր մասին, ի՞նչ կուզենայիք լինել:

**Սարոյան.** – Չգիտեմ, ով եմ ես, չգիտեմ ինչ կածրիք ունեմ իմ մասին, գիտեմ միայն, որ կուզենայի լինել այն, ինչ կամ:

**Չ.** – Ինչի՞ մասին եք գրում:

**Ս.** – Ես մեծ թեմաներ չեմ շոշափում, մեծ կերպարներ չեմ ստեղծում: Ես պարզ հասարակ լեզվով նամակներ եմ գրում հասարակ մարդկանց և ասում, որ

մրանք եղբայրներ են: Ոմանք կարող են ծիծաղել ինձ վրա, բայց դա բոլորովին չի անհանգստացնում ինձ:

**Չ.** – Ի՞նչ եք կարծում, ձեզ կտա՞ն "Նորբեյան մրցանակ":

**Ս.** – Չեմ ուզում:

**Չ.** – Իսկ եթե տա՞ն:

**Ս.** – Չեմ ընդունի: Բայց մի անհանգստացեք, չեմ տա:

**Չ.** – Իսկ ինչու՞ չէ. դուք արժանի եք դրան. ոչ ոք չի գրել ու չի գրի այնպես, ինչպես դուք եք գրում:

**Ս.** – Դուք իրավացի եք. ես մեծ գրող եմ:

**Չ.** – Ինչու՞ եք հաճախ ձեր մասին հումորով խոսում:

**Ս.** – Ինձ ես ավելի լավ գիտեմ, քան մեկ ուրիշը: Իսկ այն, ինչ գիտեմ իմ մասին, ինձ թույլ է տալիս այդպես խոսել:

**Չ.** – Երբեմն դուք գրում եք այնպես, կարծես ձեզանից առաջ ընդհանրապես գրականություն չի եղել, և ահա դուք առաջին անգամ հայտնաբերում եք մարդկային մտքերի ու զգացմունքների մարմնավորման հրաշալի արվեստը բառերի մեջ:

**Ս.** – Իմ և Շեքսպիրի միջև եղած հիմնական տարբերությունն<sup>1</sup> այն է, որ Շեքսպիրը հայ չէ:

**Չ.** – Ի՞նչ ազգի գրող եք համարում ձեզ:

**Ս.** – Թեպետ անգլերեն եմ գրում և ծնունդով ամերիկացի եմ, բայց ինձ համարում եմ հայ գրող: Օգտագործած բառերս անգլերեն են, միջավայրը, որի մասին գրում եմ՝ ամերիկյան է, սակայն այն ոգին, որն ինձ գրելու է մղում՝ հայկական է: Հետևաբար ես հայ գրող եմ:

Հայ ժողովրդի ազնվությունը, քաջությունը, ուշիմությունը, հեզմանքն ու սրամտությունը ժառանգությունն են բոլոր ճշմարիտ հայերի: Դրանք սնուցել են իմ կյանքը, և ես երախտապարտ եմ դրա համար:

**Հ.** – Ի՞նչ է ձեր կարծիքը "լավի" մասին:

**Ս.** – "Լավը" մի բաժակ սառը ջուրն է, երբ ծարավ ես:

**Հ.** – Ի՞նչ բան է լավ գիրքը:

**Ս.** – Լավ գիրքը այն գիրքն է, որ գրել է լավ մարդը:

**Հ.** – Ուզում եք ասել, որ դուք լա՞վ մարդ եք:

**Ս.** – Այո՛... Ենթադրում եմ: Եթե իմ գրածները<sup>2</sup> լավն են, ուրեմն ես լավ մարդ եմ:

**Հ.** – Ձեզ մոտ գրեթե չկան մտավորական մարդիկ, ձեր հերոսները գրեթե երբեք ոչինչ չեն կարդացել, վերացական փիլիսոփայական ու սոցիալ-քաղաքական պրոբլեմները նրանց չեն հետաքրքրում:

**Ս.** – Ես ուզում եմ օգնել դժբախտ մարդկանց, սրտապնդել, համոզել, որ կարիք չկա հուսահատվելու, որ այս աշխարհում ևս արժե ապրել և դեռ կարելի է սիրել այս աշխարհը, և կան բաներ, որոնց վրա կարելի է ծիծաղել կամ գոնե ժպտալ:

**Հ.** – Ո՞վ է աշխարհի ամենամեծ մարդը, որին երբևէ հանդիպել եք:

**Ս.** – Ես եմ, թեպետ ինքս ինձ երբեք չեմ հանդիպել:

**Հ.** – Իսկ ո՞վ է աշխարհի ամենամեծ մարդը ձեզանից հետո:

**Ս.** – Տատիկս:

**Հ.** – Իսկ ո՞վ է աշխարհի ամենամեծ մարդը ձեր ընտանիքից դուրս:

**Ս.** – Միստր Յուժը...

**Հ.** – Ո՞վ է միստր Յուժը և ինչո՞վ է նա մեծ:

**Ս.** – Երբ ես տասը տարեկան էի, միստր Յուժը յոթանասուևե մոտ մի ժերուկ էր և մեր փողոցի անկյունում շագանակ էր վաճառում: Ա՛յ, նա մեծ մարդ էր: Միստր Յուժը նկատեց ինձ: Իսկ երբ մի մեծ մարդ նկատում է մեկ ուրիշին, ապա վերջինն էլ է մեծ:

Եվ ընդհանրապես ես չեմ հանդիպել մեկին, որ մեծ չլինի:

**Հ.** – Ինչի՞ մասին է այն գիրքը, որը դուք հիմա գրում եք:

**Ս.** – Մեռնելու մասին:

**Հ.** – Գիրքը ձե՞ր մասին է:

**Ս.** – Իհարկե. ինչ էլ գրի գրողը՝ իր մասին է:

**Հ.** – Ինչի՞ համար եք ամենից շատ ցավում:

**Ս.** – Երբ մտածում եմ այն մեծ մարդկանց մասին, որոնց չկարողացա հանդիպել և հիմա մեռած<sup>3</sup> են: Մյուսների մասին, որոնք դեռ կենդանի են, բայց մեռնում են, ու երբեք չեմ հանդիպելու: Նրանց մասին, ովքեր գալիս են այն ժամանակ, երբ ես գնում եմ... Ցավում եմ, որ չփնտրեցի նրանց, թեկուզ միայն ու միայն հարցնելու համար. "Ո՞նց եք":

**Հ.** – Ի՞նչ կուզե՞նայիք հարցնել մեռնող<sup>4</sup> մարդուն:

**Ս.** – Մեռնող մարդուն ես չէի ասի՝ ո՞նց ես, ես նրան լավություն կանեի ու կհարցնեի, թե ինչու՞ է նա այդպիսի հիմարություն անում:

**Հ.** – Դա ի՞նչ լավություն է:

**Ս.** – Գուցե դա հենց ամենամեծ լավությունն է. այդ մարդը գուցե կծիծաղեր ... մեռնելուց առաջ:

**Հ.** – Վերջին տարիներս դուք անհանգիստ եք, երկրից երկիր եք անցնում. ի՞նչ եք փնտրում, արդյո՞ք ճշմարտությունը:

**Ս.** – Եճմարտություն... Եճմարտությունը գտել եմ, գիտեմ ... Ես ավելի լավ բան եմ փնտրում: Ամեն ինչ գիտեմ այս աշխարհի մասին՝ չարիք և թշվառություն, ատելություն և վախ, անմաքրություն և փտություն ... թող այդպես լինի, ես սիրում եմ այս աշխարհը այնպես, ինչպես այն կա:

**Ըստ Սուրեն Բուրսայանի գրական մոնտաժի ("Փարուն" ամսագրից)**

- <sup>1</sup> իմ ու Շեքսպիրի միջև եղած հիմնական տարբերությունը – основное различие между мной и Шекспиром
- <sup>2</sup> իմ գրածները – написанное мной
- <sup>3</sup> մեռած են – (они) мертвы
- <sup>4</sup> մեռնող – умирающий

**Բառեր**

- թեմա – тема
- շոշափել – затронуть
- կերպար – образ
- պարզ – простой, несложный
- հասարակ – простой, обыкновенный
- ոմանք – некоторые
- Նոբելյան մրցանակ – Нобелевская премия
- իրավացի – правый (быть)
- գրող – писатель
- հումոր – юмор
- զգացմունք – чувство
- մարմնավորում – воплощение
- արվեստ – искусство
- համարել – считать
- ծնունդ – рождение
- օգտագործել – использовать (первое գ=բ)
- միջավայր – среда (ջ=չ)
- ոգի – дух (գ=բ)
- մղել – толкать на
- հետևաբար – следовательно
- ազնվություն – честность
- քաջություն – храбрость

- ուշիմություն – сметливость
- հեգնանք – ирония
- Ժառանգություն – наследство
- ճշմարիտ – истинный
- սնուցել – питать
- մտավորական – интеллектуал
- հերոս – герой
- վերացական – абстрактный
- սոցիալ-քաղաքական – социально-политический
- սրտապնդել – ободрить
- շագանակ – каштан
- նկատել – заметить
- ընդհանրապես – вообще (դ=թ)
- ցավել – сожалеть
- կենդանի – живой (դ=թ)
- փնտրել – искать
- երկիր – страна
- ճշմարտություն – истина
- չարիք – зло
- թշվառություն – нищета, бедственное положение
- ապրելություն – ненависть
- փտություն – гниль, гнилость



**17. Ա) Գտեք հնարավոր կապակցությունները.**



- |                  |             |
|------------------|-------------|
| պարզ             | մարդ        |
| հասարակ          | միտք        |
| արժանի           | պատմություն |
| իրավացի          | հարց        |
| վերացական        | պատասխան    |
| սոցիալ-քաղաքական | զգեստ       |



Գ) Կետերի փոխարեն գրեք աջ սյունակի ածականներից մեկը.

1. Դու ինչպես միշտ ... ես:
2. Ու՞մ եք դուք Նոբելյան մրցանակի ... համարում:
3. Ես ոչինչ չհասկացա քո ... բաժակաճառից:
4. Ոմանց կարծիքով, միայն ռեալիստական արվեստն է ... արվեստ:
5. Աշխատիր մտքերդ ... արտահայտել:
6. ... հարցերը նրան չեն հետաքրքրում:
7. Շորերդ փոխիր, մի՞թե այս ... հագուստով ես համերգ գնալու:

արժանի  
իրավացի  
հասարակ  
պարզ  
սոցիալ-  
քաղաքական  
վերացական  
իսկական



## 18. Լրացրեք բացերը.



Սարոյանը գտնում է, որ ինքը մեծ թեմաներ ..., մեծ կերպարներ ..., պարզ, ... .. նամակներ ... .. մարդկանց:

Սարոյանը ծ... ամերիկացի է, օգտ... .. անգլերեն են, բայց ոգին, որն իրեն գ... մ... հայկական է:

Հայ ժողովրդի ազն..., քաջ..., ուշ..., հեզ... ու սր... սնուցել են Սարոյանի կյանքը և դրա համար նա երախ...:

Սարոյանի հերոսներին չեն հետաքրքրում վեր..., ս...-ք... պրոբլեմները:

Իր գրվածքներով Սարոյանը օգնում է դժ... մարդկանց չիուս..., սրտապն...:

Միստր Հուլիոս մի ծ..., որ փողոցի անկյունում շ... վաճառում:

Նա նկ... փոքրիկ Սարոյանին:

Սարոյանը ցավում է, երբ մտած..., որ չկարողացավ հանդ... շատ մեծ մարդկանց, որ չփնտր... նրանց թեկուզ միայն հարցնելու համար, թե ո՞նց են:

Սարոյանը ասում է, որ ինքը ճշմ... չի փնտ..., նա ավելի լավ բան է փն...:

Թեև ավելի լավ բան չի գտնում, բայց սիրում է այս աշ... այնպես, ինչպես կա:

## 19. Դ՞ուրս է Պատասխանեք հարցերին.

Սարոյանը չգիտի, թե ինչ կարծիք ունի իր մասին, իսկ Դուք ի՞նչ կարծիք ունեք Ձեր մասին:

Ի՞նչ կուզենայիք լինել, կուզենայի՞ք գրող լինել: Դուք համաձայն եք Սարոյանի հետ, որ գրողը ինչ էլ գրի, իր մասին է գրում: Եթե Դուք գրող լինեիք, ինչի՞ մասին կգրեիք:

Եթե Դուք նկարիչ լինեիք, ի՞նչ կնկարեիք:

Դուք Ձեզ հաճախ եք թույլ տալիս հումորով խոսել Ձեր մասին: Իսկ ուրիշների մասին:

Ի՞նչ ազգի նկարիչ եք համարում Դուք Այվագովսկուն: Ի՞նչ ազգի երգիչ եք համարում Ազնավուրին: Դուք կարդացե՞լ եք Անրի Թրուայայի գործերից, ի՞նչ ազգի գրող եք համարում նրան:

Դուք համաձայն եք Սարոյանի հետ, որ ազնվությունն ու քաջությունը ճշմարիտ հայերի ժառանգությունն են:

Ձեր կարծիքով հայ գող կամ մարդասպան լինու՞մ է:

Ամեն տեղ հայ կա. ավելի շատ ազնիվ ու քա՞ջ հայի եք հանդիպել, թե՞ անազնիվ ու վախկոտ:

Ի՞նչ եք կարծում, հայերը ավելի խաղաղասե՞ր են, թե՞ կռվարար. աշխատասե՞ր են, թե՞ ծուլլ. ընկերասեր ու բարեկամասե՞ր են, թե՞ եսասեր (эгоист) ու անհատապաշտ (индивидуалист). մաքրասե՞ր են, թե՞ փնթի (неряшливый), հետաքրքրասե՞ր են, թե՞ անտարբեր:

Գիտե՞ք, որ եթե հային հիշեցնեք, որ նա հայ է ու եղբայր կամ քույր անվանեք, նա Ձեզ անպայման եղբայրաբար կամ քույրաբար կվերաբերվի:

Սարոյանը գտնում է, որ "լավը" մի բաժակ սառը ջուրն է, երբ ծարավ ես, իսկ ի՞նչ է Ձեր կարծիքը լավի մասին:

Ի՞նչ եք կարծում, այս աշխարհում արժե՞ ապրել և կարելի՞ է սիրել այս աշխարհը: Դուք երբևէ հիասթափվե՞լ եք այս կյանքից ու աշխարհից: Ընդհանրապես Դուք հոռետես՞ս (пессимист) եք, թե՞ լավատես (оптимист):

Դուք կուզենայի՞ք Սարոյանի հետ անձամբ (лично) ծանոթ լինել միայն ու միայն նրան հարցնելու համար՝ ո՞նց եք:

Իսկ Դուք կարո՞ղ եք ասել, թե ո՞վ է աշխարհի ամենամեծ մարդը Ձեզանից բացի: Ինչո՞վ է նա մեծ:

# Մարտի



Ընտրեք ճիշտ տարբերակը.



1. Թագ, թագուհի, թագադրել բառերում "գ" գրում ենք, "զ" կարդում ենք, իսկ թագավոր բառում "գ"-ն ... է "ք":	Ա. կարդում Բ. կարդացնում Գ. կարդացվում
2. Մեր տնօրենը շատ զբաղված մարդ է, բայց միշտ ինքն է գործնական նամակները ...:	Ա. գրում Բ. գրվում Գ. գրել տալիս
3. Երիտասարդը կռացավ և ... գետնին ընկած գիրքը:	Ա. բարձրացավ Բ. բարձրացրեց Գ. բարձրացնել տվեց
4. Լենկ Թենուրը լսեց խորհուրդը և որոշեց ... վանքի գրքերը:	Ա. վառել Բ. վառվել Գ. վառել տալ
5. Խոհանոցում ... է քան խորդանոցում:	Ա. ավելի տաք Բ. ամենատաք Գ. ամենատաքն
6. Խոհանոցում ... տաք է:	Ա. խորդանոցում Բ. խորդանոցից Գ. խորդանոցը
7. Այս տղաները շատ արագ են վազում, բայց նրանց փոքր եղբայրը ... է վազում:	Ա. արագագույն Բ. ամենաարագ Գ. ամենաարագն
8. Մինաս Ավետիսյանը հայ ... նկարիչներից է:	Ա. ավելի մեծ Բ. ամենամեծ Գ. մեծագույն
9. Նա ախորժակով նայեց մրգին ու ընտրեց ... խնձորը:	Ա. ավելի մեծ Բ. ամենամեծ Գ. մեծագույն
10. Ես քաղաքական գրքեր չեմ սիրում, մի ... բան չունե՞ս:	Ա. ավելի հետաքրքիր Բ. ամենահետաքրքիր Գ. ամենահետաքրքիրը
11. – Այս երեկո հյուր ունենք: – Ո՞վ ...	Ա. կգա: Բ. է գալու: Գ. էր գալու:
12. – Տիկին Արուսյակը, որ վերջերս ... Լիբանանից:	Ա. է եկել: Բ. էր եկել: Գ. եկավ:
13. – Նա Լիբանան՞ն ...	Ա. է գնացել: Բ. էր գնացել: Գ. գնաց:

14. – Այո, երեք տարի Լիբանանում ... ու վերադարձավ:	Ա. է մնացել Բ. էր մնացել Գ. մնաց
15. – Շաբաթ երեկոյան ազա՞տ ես: –Չէ, շաբաթ օրը մորաքրոջս աղջկա ծնունդն է, ... նրանց տուն:	Ա. կգնամ Բ. գնալու եմ Գ. գնալու էի
16. – Ափսոս, որ զբաղված ես, եթե ազատ լինեիր, ... համերգ՝ Կոնստանտին Օրբելյանն է ելել Ամերիկայից:	Ա. կգնայինք Բ. գնայինք Գ. գնալու էինք
17. Երեկ ... Աստղիկին, չգիտեմ ինչու չեկավ:	Ա. հանդիպելու եմ Բ. հանդիպելու էի Գ. կհանդիպեի
18. Ի՞նչ հարց ... Սարոյանին, եթե կարողանայիք նրան հանդիպել:	Ա. տայիք Բ. կտայիք Գ. էիք տալու
19. Եթե ..., կհասնեիր ավտոբուսին:	Ա. վազեիր Բ. կվազեիր Գ. վազելու էիր
20. Եթե ժամանակին ... նրանց մեքենան, կանգ չէինք առնի ու միմյանց չէինք հանդիպի:	Ա. նկատեինք Բ. չնկատեինք Գ. չէինք նկատի
21.– Եթե Սարոյանին Նոբելյան մրցանակ ...Դուք նրան արժանի կհամարեի՞ք:	Ա. տան Բ. տային Գ. կտային
22– Տիգրանը համերգի տոմս է գնել. շաբաթ օրը ... Լորիս ճգնավորյանի համերգին:	Ա. գնանք Բ. գնալու ենք Գ. կգնանք
23 – Ո՛չ մի համերգ: Այս շաբաթ մեր Սերոբի հարսանիքն է: – Ճիշտ է, ... երբ են հավաքվում	Ա. չէի՞ր ասի Բ. չասեի՞ր Գ. կասեի՞ր
24 – Տիգրանը համերգի տոմս էր գնել շաբաթ օրվա համար, ... համերգ, բայց նույն օրը Սերոբի հարսանիքն էր. դրա համար բաց թողեցինք համերգը:	Ա. գնայինք Բ. կգնայինք Գ. գնալու էինք
25 – Ոչինչ, ուրիշ անգամ ..., էլի համերգ ...	Ա. գնաք, լինի Բ. կգնաք, կլինի Գ. եք գնալու, էլ լինելու

# Урок 21. Քսանմեկերորդ դաս

## Грамматика

Долженствовательное наклонение: образование и употребление.  
Архаические формы склонения существительных. Сводная таблица всех типов склонения.

Предлог ի.

## Песня

Լերլերիջիների քայլերով

## Стихи

Հայրենիքիս (Պարույր Սևակ)

Հին աշխարհը ամեն օր (Հ. Թումանյան)

Տաղ Հարություն (Գրիգոր Նարեկացի)

Երկու հայրեն (Նահապետ Քուչակ)

## Текст

Նորավանք (Հարություն Մկրտչյան)

Архитектура Армении.

## Долженствовательное наклонение

### Հարկադրական եղանակ



Долженствовательное наклонение имеет два времени: будущее и "будущее в прошлом".

Формы долженствовательного наклонения образуются при помощи частицы **պիտի (պեպք է** – разг.) "должен", которая присоединяется к соответствующим формам желательного наклонения, но пишется раздельно.

При образовании отрицательных форм долженствовательного наклонения отрицательная частица **չ**- присоединяется либо к показателю долженствовательного наклонения **պիտի (պեպք է)**, либо к глаголу и пишется слитно с ними. Ср. русск. "я не должен идти" и "я должен не идти".

Спряжение глаголов в будущем времени долженствовательного наклонения:

գնալ		
утвердительная форма հաստատական ձև	отрицательная форма ժխտական ձև	
պիտի գնամ	չպիտի գնամ	պիտի չգնամ
պիտի գնաս	չպիտի գնաս	պիտի չգնաս
պիտի գնա	չպիտի գնա	պիտի չգնա
պիտի գնանք	չպիտի գնանք	պիտի չգնանք
պիտի գնաք	չպիտի գնաք	պիտի չգնաք
պիտի գնան	չպիտի գնան	պիտի չգնան

Спряжение глаголов во времени "будущее в прошлом" долженствительного наклонения:

<b>գնալ</b>		
утвердительная форма հաստատական ձև	отрицательная форма ժխտական ձև	
պիտի գնայի	չպիտի գնայի	պիտի չգնայի
պիտի գնայիր	չպիտի գնայիր	պիտի չգնայիր
պիտի գնար	չպիտի գնար	պիտի չգնար
պիտի գնայինք	չպիտի գնայինք	պիտի չգնայինք
պիտի գնայիք	չպիտի գնայիք	պիտի չգնայիք
պիտի գնային	չպիտի գնային	պիտի չգնային

### Употребление долженствительного наклонения

Будущее время долженствительного наклонения обозначает действие, которое должно обязательно совершиться. Это время синонимично будущему времени изъявительного наклонения, и часто оно показывает простую убежденность говорящего в том, что действие в будущем реально, неотвратимо, неизбежно. Ср. –Որ ասեմ "այր", – վերջապես խոսում է Պըլը Պուղին, – հետո էլ **պիտի ասի՝** ասա՛ "բեմ": Որ ասեմ "բեմ" հետո էլ **պիտի ասի** "գիմ":

Формы второго лица будущего времени долженствительного наклонения могут выражать повеление, побуждение к действию:

Առաջ **պիտի** շարարն ու ձուկ լավ **խառնես**, հետո կարձգ **ավելացնես**:

Обратите внимание на то, что показатель долженствительного наклонения **պիտի** может быть отделен от глагольной формы другими членами предложения; а также на то, что если в предложении больше одного глагола в долженствительном наклонении, то **պիտի** обычно ставится при первом из них.

Прошедшее время долженствительного наклонения обозначает действие, которое должно было совершиться в прошлом, но не совершилось или о его совершении неизвестно говорящему. Как будущее время долженствительного наклонения синонимично будущему времени изъявительного наклонения, так и прошедшее время долженствительного наклонения синонимично "будущему в прошлом" изъявительного наклонения. Ср. Վարդուհիին էլ **պիտի** նրանց հետ սար **գնար**, բայց հիվանդացավ, չգնաց:

Не путайте модальные выражения "**պետք է անել**" ("надо делать") и "**պիտի անեմ, անես, անի ...**" ("я, ты, он ... должен делать")



# Լեբեքիջիների քայլերգը

Խոսք՝ Թ. Նայանի


Երաժշտությունը՝ Տ. Չուխաջյանի

Հոր-հոր


Չափավոր արագ




Մենք քաջ տոհմի զաւակներ ենք, չենք վախի,



Սա նոր - մու նոր փորձանքներից չենք փախչի,



Մենք դեռ փոքրուց միշտ սիրել ենք քաջություն,




Ինչ էլ որ լինի, չենք հանդուրժի պարտություն:

Խումբը



Մենք դեռ փոքրուց միշտ սիրել ենք քաջություն,




Ինչ էլ որ լինի, չենք հանդուրժի պարտություն:


Հոր-հոր




Ուրեմն՝ առաջ, զարկենք թըմբուկ հաղթական



Տանք թըչնամուն մենք ծեծ ու ջարդ պատվական




Թող իմանան՝ մենք չենք դառնա խաղալիք,




Այնպես պիտ ծեծենք, որ հիշեն հոր հարսանիք

Խումբը



Թող իմանան՝ մենք չենք դառնա խաղալիք,



Այնպես պիտ ծեծենք, որ հիշեն հոր հարսանիք

## Առաջին քառյակ՝

Հոր-հոր. – Մենք քաջ տոհմի զավակներ ենք, չենք վախի,  
Մանր-մուկն փորձանքներից չենք փախչի,  
Մենք դեռ փոքրուց միշտ սիրել ենք քաջություն,  
Ինչ էլ որ լինի՝ չենք հանդուրժի պարտություն:  
Խուճբ. – Մենք դեռ փոքրուց միշտ սիրել ենք քաջություն,  
Ինչ էլ որ լինի՝ չենք հանդուրժի պարտություն:

## Կրկներգ՝

Հոր-հոր. – Ուրեմն՝ առա՛ջ, զարկենք թմբուկ հաղթական,  
Տանք թշնամուն մեծ ծեծ ու ջարդ պատվական,  
Թող իմանան՝ մենք չենք դառնա խաղալիք,  
Այնպես պիտ ծեծենք, որ հիշեն հոր հարսանիք:  
Խուճբ. – Թող իմանան՝ մենք չենք դառնա խաղալիք,  
Այնպես պիտ ծեծենք, որ հիշեն հոր հարսանիք:

## Երկրորդ քառյակ՝

Հոր-հոր. – Տոհմը մեր եղել է քաջերից քաջը,  
Անարգել է կայծակների շառաչը,  
Մենք էլ նրա զավակներն ենք հարազատ,  
Էլ ուրիշ ժառանգ չկա, չկա մեզնից գատ:  
Խուճբ. – Մենք էլ նրա զավակներն ենք հարազատ,  
Էլ ուրիշ ժառանգ չկա, չկա մեզնից գատ:

## Կրկներգ

### Բառեր

**տոհմ** – род, племя

**չենք վախի** – չենք վախենա (как бы от глагола վախել)

**մանր-մուկն** – мелкий (NB: чередов. гласных при повторе)

**փորձանք** – испытание (ծ=գ)

**փոքրուց** – сизмальства

**հանդուրժել** – вытерпеть, вынести, сносить

**պարտություն** – поражение

**թմբուկ զարկել** – бить, ударить в барабан

**հաղթական** – победный, победоносный (ղ=խ)

**թշնամի** – враг

**ծեծել, ծեծ փալ, ջարդ փալ** – побить, надавать тумаков (ղ=թ)

**պատվական** – зд. славный

**հարսանիք** – свадьба

**անարգել** – зд. презреть

**կայծակ** – молния

**կայծակների շառաչը** – шум, грохот молнии, гром


**հարազատ** – родной

**ժառանգ** – наследник

**մեզնից գատ** – кроме нас




## Առաջադրանքներ և վարժություններ



1.

(տղան) Արևածագին այծերն ու գառները պետք է արոտ տանել, իսկ մայրամուտին՝ տուն բերել:  
(դու) Դասի ժամանակ պետք չէ հորանջել, պետք է դասը լսել:



Արևածագին տղան այծերն ու գառները *պիտի* արոտ *տանի*, իսկ մայրամուտին՝ տուն *բերի*: Դասի ժամանակ *չպիտի* *հորանջես* (*պիտի չհորանջես*), *պիտի* դասը *լսես*:

(տղան) Արևածագին այծերն ու գառները պետք է արոտ տանել, իսկ մայրամուտին՝ տուն բերել:

(դու, դուք, բոլոր աշակերտները) Ամառվա ընթացքում պետք է կարդալ մի քանի ստեղծագործություն, մի քանի վեպ:

(ես, դու, մենք, դուք) Այս բանաստեղծությունը պետք է լավ սովորել:

(դու, նա, դուք, նրանք) Օրեկան երկու անգամ պետք է կովը կթել:

(ես, մենք) Տարեկան մի քանի անգամ պետք է ծխնելույզը մաքրել:

(դու) Պետք է կարագն ու ձուն լավ խառնել, հետո կաթ ավելացնել:

(դուք) Պետք է պատուհանների ապակիները վիճակի վրա սենյակը լուսավոր երևա:

(դու) Դասի ժամանակ պետք չէ հորանջել, պետք է դասը լսել:

(դուք, նրանք) Պետք չէ կայծակից վախենալ:

(նա / նրանք) Պետք չէ ուշանալ դասից, ուսուցիչը դժգոհում է:

(դուք) Պետք չէ դրսում երկար մնալ, պետք չէ հոգնել, մի քիչ զբոսնեք ու վերադարձեք:

(նա / նրանք) Պետք չէ տնօրենին կոպիտ պատասխանել:

(դու) Պետք չէ եղբորդ գրասեղանի վրայից որևէ բան վերցնել:

(դու) Պետք չէ քրոջդ գրադարակից նրա նամակները վերցնել:

2. Ա) Ասացե՛ք, թե ինչ հաստատ պլան ունե՞ք այս երեկոյի, վաղվա, այս ամառվա, այս տարվա համար:

Расскажите о своих (определенных) планах на вечер, на завтра, на это лето, на этот год.




Այս երեկո (վաղը, այս ամառ, այս տարի) ես պիտի ...

Բ) Պտասխանե՛ք հարցերին և նման հարցեր սովե՛ք ձեր ընկերներին, բարեկամներին:

Ответьте на вопросы, задайте аналогичные вопросы Вашим коллегам, друзьям:

Այսօր ու՞ր պիտի գնաս: Այս ամառ որտե՞ղ պիտի հանգստանաք: Այս ձմեռ քանի՞ քննություն պիտի հանձնեք, ի՞նչ քննություններ պիտի հանձնեք: Այդ քննությունները հանձնելու համար ի՞նչ գրքեր պիտի կարդաք, ո՞ր գրքերը պիտի վերցնեք գրադարանից: Իսկ եթե գրադարանում այդ գրքերը չլինեն, չպիտի՞ հանձնեք այդ քննությունները: Քո հարազատի հարսանիքին պիտի գնա՞ս, ի՞նչ նվեր պիտի տանես: Երբ պիտի ներկես դռները: Ե՞րբ պիտի լուսամուտները վիճակի:

### Մ3.



Այս տարի մեր հողամասում թփի ու ընկույզի ծառ *ենք տնկելու*, սամիթ ու ռեհան *ենք ցանելու*:  
Վաղվանից *չեն ծխելու*:

→ Այս տարի մեր հողամասում թփի ու ընկույզի ծառ *պիտի տնկենք*, սամիթ ու ռեհան *պիտի ցանենք*:  
Վաղվանից *չպիտի ծխեն (պիտի չծխեն)*:

Այս տարի մեր հողամասում թփի ու ընկույզի ծառ ենք տնկելու, սամիթ ու ռեհան ենք ցանելու:

Երկուշաբթվանից գնալու են գերմաներենի դասերին:

Այս տարի անպայման ամառանոցային տնակի կտուրը նորոգելու են (чинить):

Նախ կահույքի (мебель) փոշիներն են սրբելու, ապա հատակն են փայլեցնելու:

Այս երեկո այցելելու ենք մեր ուսուցչուհուն, դու մեզ հետ ես:

Վաղը հյուր ունենք. դղմա են փաթաթելու, փախլավա են թխելու, մի քանի տեսակ աղցան են պատրաստելու, ամուսինս էլ խորոված է անելու:


Վաղվանից *չեն ծխելու*:

Այլևս նրա խոսքերին ուշադրություն *չենք դարձնելու*:

Այլևս նրան *չեն հավատալու*:

Շաբաթ օրը հեռուստացույցով "Մոխրոտիկն" են ցուցադրելու, բայց դժբախտաբար *չեն կարողանալու դիտել*. շաբաթ օրը մտերիմ ընկերս վերադառնալու է Վենետիկից, գնալու են նրան դիմավորելու:

### Մ4.



Քննությունից առաջ *պիտի* այս գիրքը *կարդաք*:  
Դասի ժամանակ *չպիտի հորանջես, պիտի դասը լսես*:

→ Քննությունից առաջ *պիտի* այս գիրքը *կարդայիք*.  
Դու դասի ժամանակ *չպիտի հորանջեիր, պիտի դասը լսեիր*.

Քննությունից առաջ պիտի այս գիրքը կարդաք:

Պիտի պահպանենք մեր ծառերը:

Այդ պահին պիտի ինձ նայես:

Առավոտյան պիտի սուրճ խմեմ, որ ինձ լավ զգամ:

Նախաճաշի համար պիտի կաթնաշոռ գնես, երեխաները սիրում են:

Երիտասարդները, եթե ուզում են աշխատանք ունենալ, պիտի կարճ ու զրազետ պատասխանեն իարցերին:


Դասի ժամանակ *չպիտի հորանջես, պիտի դասը լսես*:


Ձոննի, ես քեզ ապառիկ մթերք *չպիտի բաց թողնեմ* ու *չպիտի հուսամ*, որ մի օր վերջապես կվճարես:

Չպիտի ամաչես, *չպիտի քաշվես*, պիտի բոլոր հարցերը պարզես:

Փոքրերի հետ պիտի զբաղվեք, որպեսզի ժամանակին գրել-կարդալ սովորեն:

Ծուլություն ու անտարբերություն *չպիտի հանդուրժի*:

5. 



(ես) Պետք էր գնալ դեղատուն,  
դեղ առնել:  
(ես) Պետք էր հավատալ նրա  
խոսքին:

→ *Պիտի գնալի* դեղատուն, դեղ  
*առնելի*:  
Նրա խոսքին *չպիտի հավատայի*  
(*պիտի չհավատայի*):

(ես) Պետք էր գնալ դեղատուն, դեղ առնել:

(դուք) Պետք էր նրան ամեն ինչ պատմել, բացատրել:

(դու) Պետք էր նրանց ցույց տալ ճանապարհը:

(մենք) Պետք էր նրանց ասել, որ չքաշվեն, անպայման գան մեզ  
հետ:

(երիտասարդները) Պետք էր ներս մտնելուց առաջ ոտքերը  
մաքրել, հատակին ընկած գիրքը բարձրացնել:

(մարդիկ) Պետք էր բաղնիսի դռան առաջից քարը վերցնել և  
մուտքն ազատել:

(ես) Պետք էր հավատալ նրա խոսքին:

(ուսուցիչները) Պետք էր այս աշակերտին հանդիմանել:

(հարևանը) Պետք էր հավատալ, որ կաթսան կծնի, պետք էր  
ուրիշի կաթսան վերցնել, պետք էր վերադարձնել կաթսան իր  
տիրոջը:

(այրին) Պետք էր հարևանների կաթին ջուր խառնել:


(տղաները) Պետք էր Ռևազի ոչխարը մորթել:

(գյուղացիները) Այնուամենայնիվ պետք էր քննիչին հացի  
պահել, չէ՞ որ սոված էր:

(նախագահը) Պետք էր գեներալի պես մարդուն դիմել  
օգնության:

(Սելիթ Շահնազարը) Պետք էր անծանոթ մարդուն շատ փող  
վստահել:

6. 



Այս ամառ *գնալու էինք*  
Ջերմուկ, բայց չստացվեց:  
Մենք այսօր *չէինք*  
*հանդիպելու*, մի շաբաթ  
առաջ *էինք հանդիպելու*:

→ Այս ամառ *պիտի գնալինք*  
Ջերմուկ, բայց չստացվեց:  
Մենք այսօր *չպիտի*  
*հանդիպելինք*, մի շաբաթ առաջ  
*պիտի հանդիպելինք*:

Այս ամառ գնալու էինք Ջերմուկ, բայց չստացվեց:

Ես նրան ցույց էի տալու Հայաստանի մեր նկարները, բայց նա  
շուտ գնաց, ժամանակ չուներ:

Մենք նրան հարցնելու էինք Կարինեի հասցեն, բայց նա ասաց,  
որ ինքն էլ չունի:

Նա դաշնամուրի փոշիները սրբելու էր և նվագելու էր,  
երաժշտության դասին էր պատրաստվելու, բայց ընկերուհին  
զանգեց ու կանչեց խաղալու:

Մենք այսօր չէինք հանդիպելու, մի շաբաթ առաջ էինք  
հանդիպելու:



## Հայրենիքիս



Բառեր չկան կարծես քեզ երգելու համար,  
եվ ես որդու նման անվանում եմ քեզ "մայր":

"Հարազատ" եմ ասում և այնուհետ լռում.  
Սիրող սիրտն է այդպես խոսքը շուտ սպառում:

Իսկ թե ոնց եմ սիրում՝ դու գիտե՞նաս պիտի,  
Բայց քեզանից առաջ՝ քո թշնամին գիտի...

*Պարույր Սևակ*

### Բառեր


անվանել – называть  
այնուհետ, այնուհետև – затем

սիրող – любящий  
սպառել – исчерпать





Հին աշխարհը ամեն օր  
Հազար մարդ է մտնում նոր,  
Հազար տարվա գործն ու փորձ  
Սկսվում է ամեն օր:

*Հովհաննես Թումանյան*




Ի՞նչ գործերի մասին է խոսքը: Ու՞մ  
գործն է դժվար, տղամարդու՞, թե՞ կնոջ:  
Ո՞վ պիտի անի այս գործերը. լվացք  
անել, փռել կամ կախել (вешать), որ  
չորանա, արդուկ անել, ամանները  
լվանալ, ամանները սրբել, չորացնել,  
տունը (խոհանոցը) հավաքել, կահույքի  
փոշին սրբել, հատակը ավել, լվանալ,  
փայլեցնել, սեղան զգել (դնել), հավաքել,  
պատուհանների ապակիները լվանալ,  
խանութ (շուկա) գնալ, ճաշ եփել, այգին  
ջրել, ծաղիկները ջրել, այգում  
նստարանները նորոգել\*, արդուկը նորոգել\*:



\*նորոգել (զ=ք)

Տղամարդը պիտի ...

Կինը պիտի ...



*Բաժանեք "տղամարդկանց" և "կանանց" գործիքները.  
Разделите "мужские" и "женские" инструменты:*

ասեղ,		ավել, հավանգ			մուրճ,	

Մուրճ, ասեղ, դույլ, արդուկ, մեխ, կացին, ավել, մկրատ, հավանգ, պտուտակներ, պտուտակահան, սղոց, աքցան, քլունգ, բահ, պտուտակաբանալի (մանեկաբանալի), մանեկ, հեղույս, պտուտակամեխ, դանակ, շերեփ, գրտնակ, կաթսա, թավա, շամփուր:

**Склонение существительных (продолжение)**



Следующие существительные сохранили архаические формы падежных окончаний:

**Родительный падеж на -п:**

- Սեր – սիրո, սիրուն, սիրուց, սիրով
- Սուգ – սգո, սուգից, սուգով "траур" (զֆր).
- սգո նշան – знак траура, но սգի или սուգի մեջ – в трауре
- Հուր – հրո, հրից, հրով "огонь"
- Աստված – Աստծո, Աստծուն, Աստծուց, Աստծով

**Родительный падеж на -վան:**

- Մահ – մահվան, մահին или մահվանը, մահից или մահվանից, մահով или մահվանով "смерть"
- Անուն – անվան, անունից, անունով

**Родительный падеж на -եր:**

Դուստր – դուտեր "дочь" (остальные падежные формы не употребительны)

**Родительный падеж на -յալ:** (нек.-ые слова на -ուստ, -ունդ)

- Գալուստ – գալուստյան "приход, прибывание, пришествие"
- Ծնունդ – ծննդյան "рождение"

Таким образом, сводная таблица всех типов склонений выглядит так:

Окончание р.-д. п.	Примеры	Примечания
<b>-ի</b>	большинство сущ. ед. и мн. ч <b>գիր - գրի, բուն - բնի, ձվեր - ձվերի</b>	возм. черед. корнев.гласного
вариант <b>-վի</b>	сущ-ые на <b>-ու՝ ձու - ձվի, լեզու - լեզվի, կարու - կարվի, Բաքու - Բաքվի</b>	
<b>-ան</b>	<b>1.</b> ряд сущ-ых, потерявших <b>-ն</b> : եզ - եզան, գառ, լեռ, մուկ, մուխ и т.д. <b>2.</b> времена года: գարուն - գարնան, ամառ, աշուն, ձմեռ, тж. մանուկ и т.д. <b>3.</b> отглагольн. сущ-ые на <b>-ում</b> : գարգացում - գարգացման и т.д. <b>4.</b> сущ-ые <b>տուն-տան, շուն-շան</b>	другие формы от осн. им.п.
	<b>5.</b> сущ-ые на <b>-յուն (-ություն)</b> получают <b>-յան (-ության)՝ արյուն - արյան, քաջություն - քաջության</b>	другие формы от осн. р.-д.п.
<b>-ոջ</b>	ряд одушесвл. сущ-ых: <b>քույր - քրոջ, տեր, աներ, ընկեր</b> и т.д.	другие формы от осн. р.-д.п.
<b>-որ</b>	ряд одушесвл. сущ-ых: հայր - հոր, մայր - մոր, եղբայր - եղբոր	другие формы от осн. р.-д.п.
<b>-ու</b>	<b>1.</b> մարդ - մարդու, ամուսին - ամուսնու, տղամարդ - տղամարդու, անկողին - անկողնու <b>2.</b> сущ-ые на <b>-ի՝ այգի - այգու</b> <b>3.</b> неопр.форма глагола ուրելու, խմելու	отл. п. на <b>-ուց</b>  и сущ. ձի-ձիու.
<b>-վա</b>	сущ-ые, обозначающие время: <b>օր - օրվա, ժամ, գիշեր, փարի</b> и т.д., тж. ամառ, ձմեռ	другие формы от осн. им.п. или р.-д.п.; искл.-ия: դար, թույլ, վայրկյան и т.д
<b>-ա</b>	<b>աղջիկ - աղջկա</b>	другие формы от осн. р.-д.п.
<b>-ո</b>	сущ-ые <b>սեր - սիրո, սուգ, հուր, Աստված</b>	др.формы обычно от осн. им.п.
<b>-վան</b>	сущ-ые <b>մահ - մահվան, անուն - անվան</b>	другие формы от осн. им.п. или р.-д.п.
<b>-եր</b>	сущ-ое <b>դուստր - դստեր</b>	
<b>-յան</b>	нек. сущ-ые на <b>-ուստ, -ունդ՝ գալուստ - գալստյան, ծնունդ - ծննդյան</b>	другие формы от осн.им.п., тв. п. возм. на <b>-բ</b>
<b>-նց</b>	сущ-ые мн.ч. <b>մարդիկ - մարդկանց, կանայք - կանանց, տիկնայք - տիկնանց</b>	другие формы от осн. р.-д.п.
<b>-ենց</b> <b>-ոնց</b> <b>-անց</b>	сущ-ые мн.ч.на <b>-ենք, -ոնք, -անք՝ Տիգրանենք - Տիգրանոնց, պապոնք - պապոնց, Վարանանք - Վարդանանց</b>	другие формы от осн. р.-д.п.
<b>-ոց</b>	сущ-ые мн.ч.на <b>-իք՝ գյուղացիք - գյուղացոց</b>	другие падежи от правильной формы на <b>-ներ</b>



Թափառական վարպետ Մոմիկը տեսավ ու սիրեց Սյունյաց մեծավոր իշխանի միակ աղջկան՝ Լուսիկին: Լուսիկն էլ սիրեց Մոմիկին: Իշխանը, որ իմացել էր փոխադարձ սիրո մասին, կանչեց Մոմիկին և էսպես պայման դրեց:

Մոմիկը երեք տարում պիտի շիներ երեք տաճար, որոնցից երրորդում պիտի կատարվեր նրա պսակադրությունը Լուսիկի հետ: Մոմիկը վանքը պիտի կառուցեր այնպիսի վարպետությամբ, որ այն անկրկնելի մնար Չայոց աշխարհում:

Երիտասարդ վարպետը ընդունեց այդ պայմանը: Վերցրեց իր մուրճը և իջավ ձորը: Ապառաժից քարեր կտրեց, տաշեց և քարերը ծածկեց քանդակներով: Նա աշխատում էր օր ու գիշեր...

Երկրորդ տաճարի քարերի վրա Մոմիկը քանդակեց երկչոտ ու նրբիրան եղնիկներ՝ նշածև, գեղեցիկ աչքերով, նոներ՝ հյութով առլեցուն հատիկներով, նոր բացված վարդեր՝ նուրբ բուրմունքով, սպիտակ շուշաններ՝ ձյան պես անարատ, սիրամարգներ՝ երկար ու ոսկեգույն փետուրներով, կաքավներ՝ փոքրիկ, գեղեցիկ գլխիկներով, սիրագորով աղավճիներ՝ ի նշան անբիծ սիրո: Այդ յոթ քանդակները ներկայացնում էին Լուսիկի յոթ հրապույրները: Մոմիկը այդ բարձրաքանդակներով ավարտեց քարերի մշակումը, մտքում ստեղծեց տաճարները: Պատրաստեց նաև երրորդ տաճարի վերջին քարը՝ վրան նետահար մի սիրտ, որին վերևից նայում էր լուսինը: Ապա գարնանն սկսեց կառուցել առաջին տաճարը: Եկավ աշունը, ապա՝ ձմեռը, գարունը... Նորից անցավ մի ամառ, աշուն, ձմեռ, գարուն, և վարպետն ավարտեց նաև երկրորդ տաճարը...


Վերջին տաճարը Մոմիկը կառուցում էր ավելի մեծ եռանդով: Շարուն էր ցերեկը, շարուն էր գիշերը: Նայում էր լուսնին, հիշում էր Լուսիկին, որ կանթեղի պես լույս էր տալիս նրա մտքին: Ահա վերջապես վարպետը հասել էր գմբեթին ու պիտի դներ վերջին քարը:

..Այն պահին, երբ վարպետը վերցրեց գմբեթի վերջին քարը, աղոթք արեց և ուզեց տեղը դնել, իշխանի սեպուհը սրի նենգ հարվածով խոցեց նրան: Վարպետը վերջին քարի հետ արնաթաթախ ընկավ եկեղեցու սեղանի առջև, ուր պիտի կատարվեր պսակադրությունը: Այնտեղ թաղեցին նրան, և տաճարը կիսատ մնաց, որովհետև նրա վերջին քարը շիրմաքար դարձավ վարպետի համար: Վանքը մնաց անավարտ, ուստի՝ միշտ էլ նոր: Դրա համար անունը մնաց Նորավանք:

***Ըստ Հարություն Մկրտչյանի***

## Բառեր


**թափառական** – бродяга  
**մեծավոր** – великий  
**միակ** – единственный  
**փոխադարձ** – взаимный  
(ծ=g)  
**պայման** – условие  
**շինել** – сделать, строить  
**պսակադրություն** –  
венчание  
**կառուցել** – строить  
**վարպետություն** –  
мастерство  
**անկրկնելի** – неповторимый  
**մուրճ** – молот  
**ձոր** – ущелье  
**ապառաժ** – утес, скала  
**տաշել** – точить  
**քանդակ** – скульптура  
**քանդակել** – лепить, ваять  
**երկչուր** – робкий  
**նրբիրան** – грациозный (ր=փ)  
**եղնիկ** – олень  
**նշաձև** – миндалевидный  
**հյուլթ** – сок  
**հափիկ** – зерно  
**նուրբ** – нежный (ր=փ)  
**բուրմունք** – аромат  
**շուշան** – лилия  
**անարատ** – непорочный  
**սիրամարգ** – павлин  
**փեփուր** – перо  
**կաքավ** – куропатка  
**գլխիկ** – головка  
**աղավնի** – голубь  
**ի նշան** – в знак  
**անբիծ** – незапятнанный  
**հրապույր** – прелесть,  
обаяние  
**բարձրաքանդակ** – барельеф  
(ծ=g)  
**ավարտել** – закончить  
**մշակում** – обработка



**նեփահար** – пронзенный  
стрелой  
**եռանդ** – рвение, усердие  
**շարել** – класть (камни)  
**կանթեղ** – лампада  
**լույս տալ** – светить  
**գմբեթ** – купол  
**աղոթք անել** – молиться  
**սեպուհ** – военачальник  
**սուր** – меч  
**նենգ** – коварный  
**հարված** – удар  
**խոցել** – пронзить  
**արնաթաթախ** –  
окровавленный  
**թաղել** – хоронить  
**կիսատ** – наполовину  
**շիրմաքար** – надгробный  
камень  
**անավարտ** – незавершенный  
**ուստի** – следовательно,  
поэтому




# Մեկնաբանություններ, առաջադրանքներ, վարժություններ

7.Ա) 

շոր կարել տալ, վերարկուն մաքրել տալ


Բ) 



Դու ի՞նքո՞ք ես տան  
շուրջո՞ր ծառեր տնկելու:

→ – Այո, ինքս եմ տնկելու:  
– Ոչ, ինքս չեմ տնկելու, տնկել եմ տալու:

Դու ի՞նքո՞ք ես տան շուրջո՞ր ծառեր տնկելու:  
Ամուսի՞նդ պիտի կովը կթի:  
Հա՞յրդ պիտի ցայտադրյուրի քարին եղնիկ քանդակի:  
Իսկ նուռն ու խաղողը ինքնե՞րդ եք քանդակելու:  
Պատուհանների ապակիները դու՞ պիտի լվանաս:  
Այգու նստարանները պապի՞կդ պիտի ներկի:  
Բահն ու քլունգը ինչու՞ ես բերել, այգին պիտի փորե՞ս:  
Ահա քեզ հեղույսներ ու մանեկներ, աքցան ու  
պտուտակաբանալի. հիմա ծորակը կնորոգե՞ս:

8. Ա) 



ծև – форма



նշածն (նաչ + ա + ձև) – миндалевидный

ծվածն – овальный

լուսնածն – лунообразный

խաչածն – крестообразный, крест-накрест


աստղածն – звездообразный

տանձածն – грушевидный

օղակածն – кольцевидный

սրտածն – в виде сердца

կլոր – круглый

 Բ) Կետերի փոխարեն օգտագործեք Ա) կետի ածականներից ըստ իմաստի.

1.– Սա ի՞նչ բան է, ո՞վ է տեսել ծնկի վրա սիրտ: – Տատի՛կ, հիմա ընդունված է շավվարների ծնկներին ... կարկատան դնել:

2. – Մայրի՛կ, ի՞նչ գեղեցիկ թխվածքաբլիթներ ես պատրաստել, այս մեկը աստղի է նման, այս մեկը լուսնի, այս մեկը տանձի, իսկ սա օղակ է, ինչպե՞ս ես կարողացել: – Պարզապես այս մեկի համար խմորը ... եմ կտրել, այս մեկի խմորը ... եմ կտրել, այս մեկի խմորը ... եմ դրել, իսկ սրա խմորը ... եմ դրել ու թխել:

3. Ա. Հռիփսիմեի տաճարի հիմքը ... է:

4. Մեր ճաշասեղանը փակ ժամանակ կլոր է, բայց այն կարելի է բացել, երկարացնել, և այն ժամանակ նա ... է:

5. Եղնիկը գեղեցիկ ... աչքեր ունի:

9) 

ձևանալ – притворяться	ձևակերպել – сформулировать
ձևացնել – делать вид	ձևափոխել – видеоизменять
ձևել – кроить	հնածև – старомодный
ձևավոր – фигурный	նորածև – модный
ձևավորել – оформлять	նորածևություն – мода
ձևավորիչ – оформитель	



**Ձևում ենք** մենք կարեք ինքներդ: Դու ինձ լավ չես հասկանում, երևի վատ եմ **ձևակերպում** մտքերս: Ո՞վ է **ձևավորել** այս ներկայացումը: Վերնաշապիկդ արդեն **հնածև** է, եթե մի քիչ **ձևափոխենք**, էլի կարելի է հագնել իբրև **նորածև**: **Նորածևությունների** հանդեսը (журнал) սովորեցնում է **ձևել** ու կարել: Երբ ես դեռ փոքր էի, Նոր Տարուն ծնողներս ինձ **ձևավոր** շոկոլադ էին նվիրում: Փոքրիկը չէր ուզում վեր կենալ. երբ նա լսեց մոր քայլերի ձայնը, քնած **ձևացավ**, որպեսզի մայրը իրեն չարթնացնի: Նասրեդինի հարևանը **ձևացրեց**, թե հավատում է, որ իր կաթսան մի ուրիշ կաթսա է ծնել և վերցրեց երկուսն էլ:



Գ) Կետերի փոխարեն գրեք նաջ սյունակի բառերից մեկը.

1. Շալվար կարելը դժվար չէ, ... է դժվար:
2. Քույրս ոչ միայն համեղ տորթեր է թխում, այլև գեղեցիկ ... է:
3. Նա իր մտքերը լավ է ...:
4. Զրոջս ընկերուհին ... տանն է աշխատում:
5. Սիսիս Զիլփլին ... գլխարկ էր դնում:
6. Սայրիկիս հին մուշտակը փոքրացրի ու ..., դարձավ շատ ... կիսամուշտակ:
7. Ի՞նչ ես անմեղ ..., կարծես թե դու չես կերել իմ բաժին ... շոկոլադը:
8. Պըլը Պուղու հարևանը ..., թե փողը դնում է բարձի տակ ու բարձի մոտից վերադարձավ փողը գրպանում:

- ձևանալ
- ձևացնել
- ձևել
- ձևավոր
- ձևավորել
- ձևակերպել
- ձևափոխել
- հնածև
- նորածև
- նորածևություններ

9. Ա) 

ի միջի այլոց – между прочим
ի միջի այլոց, հայրիկն ու մայրիկը տանը չեն:
ի նշան (+абстр. сущ.) – в знак чего
ի պատիվ (+одуш. сущ.) – в честь кого
ի դեպ – кстати




Նվիրում եմ Արշակին **ի նշան** բարեկամության (дарственная надпись): Վերջապես հասավ վերջին ներկայացման օրը, որը, **ի դեպ**, **ի պատիվ ինձ** էր նշանակված. պիտի ներկայացնեինք Շիլլերի "Ավագակները (разбойники)": (*Վահրամ Փափագյան*)




Բ) Կետերի փոխարեն օգտագործեք "ի դեպ, ի միջի այլոց" միջանկյալ բառերը կամ "ի նշան, ի պատիվ" կապերը:


Երբ մեծերը ներս են մտնում սենյակ՝ երիտասարդները վեր են կենում ... հարգանքի: Նպարավաճառին համոզելու համար Ջոննին ձևացրեց, որ ինքը միայն փիլիսոփայելու է եկել, իսկ իր խնդրանքը ... հայտնեց: ..., Ջոննին իսկապես վատ փիլիսոփա չէ, ի՞նչ եք կարծում: Նա ուզում էր ... հյուրի նաև մի շիշ գարեջուր վերցնել, բայց պարոն Կոզակը չտվեց:

10.Ա) 

Նոր բացված վարդեր – только что распустившиеся розы  
Նոր ներկած – только что покрашенный  
Նոր թխած հաց – свежесвепеченный (только что выпеченный) хлеб

 Բ) Կետերի փոխարեն օգտագործեք Ա) կետում բերված համապատասխան արտահայտություն.

Եթե գյուղում որևէ տանը հաց են թխում, կարելի է համարձակ այդ տունը հյուր գնալ. ասում են, թե գյուղում ...ի հոտը հրավիրատոմս է: Ինչո՞ւտ է շավվարդ, որտե՞ղ ես նստել, դու չգիտեի՞ր, որ պապիկն այգում նստարաններն է ներկում, նստել ես ուղղակի ... նստարանին: Բանաստեղծները սիրում են աղջիկների դեմքը համեմատել ... հետ:

11.Ա) 




Նշանդրեք – обручение  
Նշանած – нареченный  
Նշանված – обрученный  
պսակադրություն – бракосочетание  
Նորապսակներ – новобрачные  
հարսանիք – свадьба  
հարսնացու – невеста  
փեսացու – жених  
հարս – невестка, сноха  
փեսա – зять  
ամուսնացած – женатый, замужем  
ամուրի – неженатый, незамужем, холостой



Բ) Պատասխանեք հարցերին և նման հարցեր տվեք Ձեր ընկեր-ընկերուհիներին.

Դուք ամուսնացած եք, ամուրի՞ եք, բաժանվա՞ծ եք: Եթե Դուք դեռ ամուսնացած չեք, կարո՞ղ եք, ասել, թե ինչպես եք ուզում որ անցնի Ձեր պսակադրությունը: Վերջին անգամ ու՞մ նշանդրեքին կամ հարսանիքին եք ներկա եղել. Ձեզ դու՞ր եկավ պսակադրությունը: Հարսնացուն գեղեցի՞կ էր, ի՞նչ գույնի զգեստ էր հագել: Իսկ փեսացու՞ն: Դուք նկատե՞լ եք, որ հարսանիքի օրը միշտ ամենագեղեցիկը հարսնացուն է լինում: Իսկ նորապսակները միշտ նման են սիրագորով աղավնիների, համածա՞յն եք:

 12. Շեղագիր բառերի փոխարեն օգտագործեք նույն կամ մոտ իմաստով բառեր:

Վարդերի *հոտից* գլուխս պտտվում է (кружится): Երևանի "Ձվարթնոց" օդանավակայանը *շինել են* Ձվարթնոցի տաճարից ոչ հեռու: Պուլշկինի "Դուրրովսկին" *կիսատ է*: Հայ Վերածնունդի (Возрождение) նշանավոր բանաստեղծ Նահապետ Քուչակի ստեղծագործությունները նվիրված են *անրիծ* սիրուն:



13. Գտեք ավելորդ բառը յուրաքանչյուր շարքում.



Սար, ծոր, անապատ, գետ, գետափ, ապառաժ, բարձրաքանդակ, լեռ, անտառ:

Վարդակ, մեխակ, շուշան, մանուշակ, արևածաղիկ, ձնածաղիկ, մարգարտածաղիկ:

Աղավնի, ոզնի, կաքավ, կռունկ, ծիծեռնակ, արծիվ, սիրամարգ, սոխակ:

Քլունգ, բահ, կացին, պտուտակահան, պտուտակամեխ, պտուտակաբանալի, մանեկ, խրոց, սղոց, հեղույս, աքցան:



14. Ա) Տեքստի ո՞ր բառակապակցություններում են օգտագործված **"պայման, փաճար, պսակադրություն, վարպետություն, աշխարհ, մուրճ, ձոր, ապառաժ, քանդակներ, միտք, եռանդ, կանթեղ, գմբեթ, աղոթք, հարված, շիրմաքար"** գոյականները: Ուրիշ ինչպե՞ս կարելի է օգտագործել նույն գոյականները: Բերե՛ք օրինակներ:



**դժվար պայման, անսպասելի պայման**



Բ) Տեքստի ո՞ր գոյականներին են վերաբերում հետևյալ ածականները. **թափառական, մեծավոր, միակ, փոխադարձ, անկրկնելի, նենգ**: Այս ածականներով ուրիշ ի՞նչ գոյականներ կարելի է բնութագրել: Բերե՛ք օրինակներ:



**թափառական վարպետ, թափառական երաժիշտ**



15. Լրացրեք բացերը.

1. Տղաս, գնա ... մոտ, մի շիշ մածուն առ: Անցյալ տարի ... մոտ Ներսեսին հանդիպեցի, մի կտոր լյարդ (печень) առա նրա համար:	նպարավաճառ կաթնավաճառ մսավաճառ
2. Ծիծեռնակաբերդը մի գեղեցիկ ... բլուր է: 1915թ. մեկ ու կես միլիոն հայ իր գերեզմանը գտավ Տեր-Չոր ... ում:	շրջապատ անապատ անտառապատ
3. Այս երեկո թատրոնում ... են Պ. Ջեյթունցյանի "Դատը" Սողոմոն Թեյլերյանի մասին: Րաֆֆին իր վեպերում մեծ սիրով է ... բնությունը:	պատկերացնել ներկայացնել նկարագրել
4. Սայաթ-Նովան մի քանի տարի մնաց ... իշխանի արքունիքում (дворец), իբրև նրա բանաստեղծն ու երգիչը: Եթե Ջոննիի հայրը ոչ միայն տաղանդավոր, այլև ... բանաստեղծ լիներ, նպարավաճառը, առանց մի խոսք ասելու, ապառիկ մթերք բաց կթողներ նրա որդուն:	գորավոր մեծավոր նշանավոր
5. Հայրիկ, օգնիր ինձ այս խնդիրը ..., մի անգամ էլ բացատրիր, խնդրում եմ: Ես չեմ կարող հիմա կանխիկ ..., խնդրում եմ, ինձ ապառիկ բաց թողնեք:	վճարել վաճառել վճռել

6. Դրա համար չարժե երեխային ...: Դեղագործ Գրիգորը չկարողացավ ... իր սան՝ ուսուցիչ Շատախյանի խոսքերը:	հանդուրժել հանդիմանել հանդիպել
7. Վարպետ Սոմիկը շատ վանքեր ու տաճարներ է ... Եղեգնածորի շրջանում: Հետաքրքիր է, Նորավանքն իրո՞ք նրա վերջին աշխատանքն է: Առաջին հայկական պետությունը դաշնակներն են ...:	կառավարել կառուցել կռվել
8. Ընդունիր այս փոքրիկ նվերը ի ... մեր բարեկամության: Այս գործվածքների ...ից կարող ես մի բան ընտրել քո երեկոյան շրջագգեստի համար:	նմուշ նշան նշույլ
9. Մեր որդին ուղղակի ... է, այսօր դարձյալ ինձ դպրոց էին կանչել. պատկերացնու՞մ ես՝ ուսուցչի աթոռին ներկեր էր դրել: Ես ուզում եմ մի կենաց առաջարկել ի ... մեր թամադայի:	պատիվ պատիժ ապառաժ
10. Տղաներն ուզում են Քոչարի պարել սովորել, կարծես արդեն ... է: Նա ... հերոսաբար:	ստացվել ստեղծվել սպանվել
11. Սա սովորական կեղտ չի, ... է, պետք է քիմիական մաքրման տանել: Արքան ծերացել էր, բայց դեռ ... չուներ:	նահանգ ժառանգ ժանգ
12. Քանի որ նա ժառանգ չուներ, միշտ ... էր: Երբ որ մայրս ուշադիր նայում է աչքերիս մեջ, ես ոչինչ չեմ կարողանում նրանից ...:	թախծել թաքցնել թափել
13. Մեր դպրոցի տնօրենը ... սպիտակ մորուք ուներ: Երգչի ... ձայնը բոլորին լռեցրեց:	պատկառելի հաղթական փառահեղ
14. Եթե բարձրանաք Արագածի ... ու այնտեղից նայեք Մասիսին, կթվա, թե Մասիսը շատ մոտ է: Ռուս ողղափառ եկեղեցիների ... կարծես սոխի ձև ունի:	գմբեթ գագաթ գաթա
15. Մարդ պիտի իր պատիվը ... ու ... պահի: Երբեք մի՛ ծուլանա, սկսած գործը ... մի թող:	անավարտ անարատ անբիծ
16. Տղաները նայեցին ... և զգացին, որ պիտի կռվեն, եթե ուզում են իրենց պատիվը բարձր պահել աղջկա աչքում: Մենք երեք եղբայր ենք, իսկ Նարինեն մեր ... քույրն է:	միևնույն միմյանց միակ
17. Եղբայրս ինձ համար գլխարկ գնեց, ես ... և տեսա, որ մեծ է, տարա խանութ՝ ...:	փոխել փորձել

18. – Ինչպե՞ս է ... այս հրապարակը: – Սա Ազատության հրապարակն է, բայց շատերը այն դեռևս ... են Օպերայի հրապարակ:	կանչել անվանել կոչվել
19. – Ես չեմ կարող այդ ... ընդունել: – Ցանկանանք նորապսակներին, որ իրենց ... հասնեն: – Ինչու՞ ես առանց ... ծիծաղում: – Պարոնյան եմ կարդում:	պայման պատճառ նպատակ
20. Մինչև անտառում ... հավաքեցինք, որ կրակ անենք, մութն ընկավ: Մինչև գրիչ հայտնագործելը մարդիկ ... են գրել:	փայտ փայլ փետուր
21. – Այս պատը ինչի՞ց է: – Կարծես, .... է:	աղյուսից հեղույսից
22. – Թողնիկ ջան, հեղույսներն ու պտուտակամեխերը բերեցիր, բայց ... էլ են հարկավոր, առանց նրանց չեմ կարող աշխատել:	նամակներն մանեկներն մանուկներն
23. – Ոչ, շնորհակալություն, ... չեմ ուզում, միայն ոսպապուր կամ հարիսա:	աղցան աքցան
24. – Հարկավոր է նստարանը ..., մութն ու մեխերը բեր, կամ մի քանի հեղույս ու մանեկ:	ներկել նորոգել
25. – Այս ի՞նչ ես բերել, ինչու՞ ես ներկերը բերել: Ես գործիքներ ուզեցի ու ասացի, որ պետք է նստարանը ..., ոչ թե ...:	ներկել նորոգել
26. – Դեղատունը հեռու՞ է: – Ոչ, մի քանի ... է այստեղից:	փայլ թայլ

16. Եթե ճիշտ լրացնեք բացերը հետևյալ բառերով, ապա կստանաք բարձրաքանդակների նկարագրությունը տեքստում բերված կարգով. *աղավճիներ, եղնիկներ, կաքավներ, նռներ, շուշաններ, սիրամարգներ, վարդեր.*

երկչոտ ու նրբիրան	...՝	նշածն, գեղեցիկ աչքերով
	...՝	հյութով առլեցուն հատիկներով
նոր բացված	...՝	նուրբ բուրմունքով
սպիտակ	...՝	ծյան պես անարատ
	...՝	երկար ու ոսկեգույն փետուրներով
	...՝	փոքրիկ, գեղեցիկ զլխիկներով
սիրագորով	...՝	ի նշան անբիծ սիրո



17. Պատմեք "Նորավանք" տեքստն ըստ բանալի բայերի.



Տեսնել, սիրել, իմանալ, կանչել, պայման դնել, շինել, կատարվել, կառուցել, մնալ, ընդունել, վերցնել, իջնել, կտրել-տաշել, ծածկել, աշխատել, քանդակել, ներկայացնել, ավարտել, ստեղծել, պատրաստել, սկսել, կառուցել, շարել, նայել, հիշել, լույս տալ, հասնել, դնել, խոցել, ընկնել, կիսատ մնալ, դառնալ:

## Գիպե՛ք, որ ...

Հին հայկական եկեղեցին միանեֆ կամ եռանեֆ բազիլիկա է: Գմբեթը հիշեցնում է կենցաղային շինության երդիկը ("գլխատուն"):



Միջին դարերում ավելի հաճախ հանդիպում է կենտրոնագմբեթ հորինվածքը: Լավագույն ցնուշներից է ս. Յոհիսիմեի տաճարը:

Ս. Յոհիսիմեն (618 թ.) պարզ, խիստ ոճով կենտրոնագմբեթ սրահ է:

Կենտրոնագմբեթ հորինվածքի տարբերակն է հայկական ճարտարապետության մեջ լայնորեն հայտնի խաչաձև հիմքով գմբեթավոր սրահը, օրինակ՝ ս. Գրիգոր եկեղեցին


Հաղբատում, Ամենափրկիչը՝ Սանահնում (10-րդ դ.):

Ուշ միջնադարում վանքերի ճարտարապետական համալիրները լրացնում են գավիթը, սեղանատունը, գրատունը, զանգակատունը, դամբարանը (Սանահին, Հաղբատ, Հաղարծին, Առիճ, Սաղմոսավանք, Հովհաննավանք և այլն):

## Բառեր

**նեֆ** – неф, пространство между рядами колонн  
**միանեֆ** – однонефный  
**եռանեֆ** – трехнефный  
**բազիլիկա** – базилика, прямоугольный храм, обычно разделенный на нефы  
**կենցաղային** – бытовой  
**շինություն** – строение  
**գլխատուն** – традиционное армянское жилище  
**երդիկ** – отверстие в потолке над тоныром  
**միջին** – средний ( $\varrho=\xi$ )  
**կենտրոնագմբեթ** – центрально-купольный, ~  
**հորինվածք** – центрально-купольная композиция

**հորինվածք** – композиция  
**նմուշ** – образец  
**խիստ** – строгий  
**ոճ** – стиль  
**սրահ** – зал  
**տարբերակ** – вариант  
**ճարտարապետություն** – архитектура  
**լայնորեն** – широко  
**գմբեթավոր** – купольный  
**միջնադար** – средневековье  
**ճարտարապետական** – архитектурный  
**համալիր** – комплекс  
**գավիթ** – притвор  
**սեղանատուն** – трапезная  
**գրատուն** – книгохранилище  
**զանգակատուն** – колокольня  
**դամբարան** – усыпальница



Ըստ մի ավանդության Գրիգոր Լուսավորիչը երազում տեսնում է Քրիստոսին՝ Աստծո միածին որդուն, որը հրեղեն մուրճը ձեռքին իջնում է երկնքից և ցույց է տալիս տաճարի կառուցման տեղը: Այստեղից էլ առաջացել է տաճարի անունը՝ Էջմիածին, այսինքն Միածնի իջնելու տեղը ("место сошествия едиnorodного"):



Սանահին, որտեղ Սայաթ-Նովան անց է կացրել իր մանկության ու դպրության տարիները: Սանահնի վանքի հետ է կապված նաև միջնադարի նշանավոր գիտնական Գրիգոր Մագիստրոսի գիտական գործունեության մի մասը:

### Բառեր

**ավանդություն** – предание  
**երազ(ում)** – сон, во сне  
**միածին** – едиnorodный  
**հրեղեն** – огненный  
**կառուցում** – строительство





Իր կյանքի վերջին տարիները բանաստեղծ և երգիչ Սայաթ-Նովան անց է կացրել Չաղբատի վանքում:

**առաջանալ** – происходить  
**անց կացնել, անցկացնել** – провести  
**դպրություն** – ученичество  
**կապված** – связано





Մ.թ. 1-ին դարում  
 հելլենիստական ոճով  
 կառուցված  
 հեթանոսական տաճար  
 Գառնիում: 301թ.  
 քրիստոնեությունը իբրև  
 պետական կրոն  
 ընդունելուց հետո  
 շարունակում է ծառայել  
 իբրև արքայական  
 ամառանոց  
 ("գովարան"):



Գեղարդ. 4-րդ դարից հայտնի է Այրիվանք անունով (пещерный монастырь): 18-րդ դարում ստացել է Գեղարդ անունը: Ըստ ավանդության այս վանքում է պահվել առասպելական գեղարդը ("копье"): 12-13-րդ դարերում կառուցվել է Կաթողիկե վերգետնյա եկեղեցին իր գավիթով: 1283-88 թթ. հին քարանձավի տեղում ճարտարապետ Գալձազը ստեղծել է վիմափոր շինությունները: Ավագան վիմափոր եկեղեցուն այսօր էլ դեռ բխում է հեթանոսական ժամանակներից հայտնի սուրբ աղբյուրը: Եկեղեցու ժայռափոր գմբեթի կենտրոնում բացված է երդիկը:

### Բառեր

**մ.թ.**՝ մեր թվագրության –  
 нашей эры (**մ.թ.ա.**՝ մեր  
 թվագրությունից առաջ – до  
 нашей эры)  
**հելլենիստական** –  
 эллинистический  
**կառուցված** – построенный  
**արքայական** – царский  
**ամառանոց** – загородный дом  
**գովարան** – устар. дача,  
 загородная резиденция  
 армянских царей  
**առասպելական** – легендарный  
**գեղարդ** – копье (դ=թ)

**կառուցվել** – быть построенным  
**վերգետնյա** – надземный  
**քարանձավ** – пещера  
**ճարտարապետ** – архитектор  
**վիմափոր** – высеченный в стене  
**շինություն** – строение  
**ավազան** – бассейн, зд. чаша  
 источника  
**բխել** – течь  
**սուրբ** – святой (թ=փ)  
**աղբյուր** – источник (դթ=խս)  
**ժայռափոր** – высеченный в  
 скале  
**կենտրոն** – центр

Գրիգոր Նարեկացի (10-11-րդ դ.դ.)



Տաղ Հարություն  
(հատված)



Փա՛ռք Քրիստոսի ամենազոր հարության:  
Սայլն այն իջնում էր Մասիս լեռն ի վայր,  
Եվ նրա վրա աթոռներ կային կարգով շարեշար,  
Եվ նրա վրա գահույք ոսկեղեն,  
Եվ նրա վրա բեհեզ ծիրանի,  
Եվ նրա վրա որդին արքայի.  
Աջից՝ վեցթևյան սերովբեներն են,  
Չախից՝ բազմաչյա քերովբեներն են,  
Առջևում նրա՝ մանկունք գեղեցիկ,  
Գրկերում նրանց՝ խաչ տերունական,  
Չեռքերում՝ քնար ու սաղմոսարան,  
Որ երգելով ասում էին.

Փա՛ռք Քրիստոսի ամենազոր հարության:

(Գրաբարից քարգմանեց՝ **Վազգեն Վևորայանը**)

**Բառեր**

**հարություն** – воскресение

**փառք** – слава

**ամենազոր** – всемогущий

**սայլ** – арба, телега

**կարգով շարեշար** – строим,  
по порядку (զ=ք)

**գահույք** – престол

**բեհեզ** – ткань

**ծիրանի** – пурпур, мантия

**վեցթևյան սերովբեներ** –

шестикрылые серафимы

**բազմաչյա քերովբեներ** –

многоокие херувимы

**մանկունք** – младенцы

**գրկում** – в объятиях,

прижимая к груди

**տերունական** – господний

**քնար** – лира

**սաղմոսարան** – псалтырь

**Песнь на Воскресение Христово**

Телега идет с Масиса-горы.

На телеге той – высока՛ скамья,

А на той скамье – золотой престол,

А на том столе – пурпурова ткань

А на том тканье – сидит царский сын,

А по праву с ним – шестикрылые,

А по леву с ним – многоокие,

А пред самым ним – отроки-краса,

А в объятиях их – то Господень крест,

А в руках у них – лира да псалтырь,

Воспевают те, славословят те:

Слава всемогущему Христову Воскресению!

(перевод **В. Брюсова\***)

\*Валерий Яковлевич Брюсов (1873 – 1924) – русский поэт, много переводивший армянскую поэзию и способствовавший популяризации армянской культуры в России.

## Նահապետ Բուչակ (16-րդ դ.)

### Երկու հայրեն



Ես աչք ու դու լույս, հոգի,  
առանց լույս՝ աչքն խավարի.  
Ես ձուկ ու դու ջուր, հոգի,  
առանց ջուր՝ ձուկըն մեռանի.  
Երբ զձուկն ի ջրըն հանեն  
և այլ ջուր ձրգեն, նա ապրի,  
Երբ զիս ի քենե զատեն,  
քան զմեռնելն այլ ճար չի լինի:

#### Подстрочный перевод:

Я – глаза, а ты – свет, душа моя.  
Без света глаза меркнут.  
Я – рыба, а ты – вода, душа моя.  
Без воды рыба умирает.  
Если вытащить рыбу из воды  
и бросить в другую, она будет жить.  
Если меня разлучат с тобой – умру,  
и только смерть мне будет  
избавлением.

#### Литературный перевод

##### В. Звягинцевой:

Я – глаз, ты – свет.  
Без света глазу лишь темнота  
видна,  
Я – рыба, ты – вода.  
а рыба жить лишь в воде должна.  
Но рыбу брось в другую воду,  
и оживет она,  
Я ж без тебя – мертвец,  
а помощь умершим не нужна.



Եկո քեզի նուռ մի տամ,  
կըտրե, տես քանի՞ հատ ունի.  
Ամեն հատի պագ մի տուր,  
ավելին հարամ, թե պիտի.  
– Գընա, ծո տըղա՛ տըխմար,  
ես ըզքեզ խելոք գիտեի.  
Ամեն հատի պա՞գ մի տամ,  
ու՞ր եղեր կամ ու՞ր տի լինի:

#### Подстрочный перевод:

–Я дам тебе гранат, разрежь его,  
подсчитай, сколько внутри зернышек.  
За каждое зерно – по поцелую,  
большого я не прошу.  
–Уйди, глупый парень.  
Я считала тебя умным,  
За каждое зернышко – один поцелуй,  
было ли когда такое и может ли быть?

#### Литературный перевод

##### В. Звягинцевой:

Вот гранат, разрежь,  
ты видишь, сколько зернышек внутри, –  
За зерно по поцелую,  
лишнего мне не дари.  
–Я тебя считала умным,  
уходи и не дури.  
Это слыханное ль дело –  
целоваться до зари?!

# Урок 22. Քաաներկուերորդ դաս

## Грамматика

Результативное причастие.

## Тексты

Հալերժական ծաղիկները (Ս. Հարությունյան)

Մեծ նկարիչը (Վազներ)

Изобразительное искусство Армении.

## Результативное причастие

### Հարակափար դերբայ



Результативное причастие образуется от основы настоящего или прошедшего времени с прибавлением окончания **-ած**. Ср. գրած, գրված, կարդացած, մնացած, փեսած, գլխած, կերած, եկած и т.д.


Результативным причастием обозначают действие, совершенное в прошлом и оставившее результат в настоящем. Употребляется в качестве самостоятельного члена предложения, а именно определения (**խաղած մարդ**), или в сочетании с вспомогательным глаголом: **նա խաղած է**.

Результативное причастие служит для выражения устойчивого состояния.


1 Результативное причастие глаголов в страдательной форме выражает то состояние, в которое "попал" субъект – бывший объект; в этих случаях, как правило, не указывается "бывший субъект", т.е.



кем или чем было вызвано указанное состояние. Но в случае необходимости можно ввести соответствующее дополнение послелогом կողմից, например, **նա սիրված է իր ընկերների կողմից = նրա ընկերները նրան սիրում են**.



2 В результативном причастии многих глаголов ощущается "результат" действия, совершенного субъектом, например, **հոգնած մարդ**;



3 или действия, совершенного над объектом, например, **նրա բռնած ծուկը, ներեցե՛ք՝ սպեաղիկը, նրա նկարած գլուխգործոցը** (шедевр).



Приведем еще несколько примеров. Итак, в результативном причастии выражено состояние:

1	2	3A	3B
<p>Устойчивое состояние, выраженное страдательным глаголом</p>  <p><b>սիրահարված մարդ</b></p>	<p>Устойчивое состояние, как результат совершенного действия</p>  <p><b>գարմացած մարդ</b></p>	<p>Результат совершенного над объектом действия, выраженного переходным глаголом (с указанием субъекта действия)</p>	<p>Результат совершенного над объектом действия, выраженного переходным глаголом (без указания субъекта действия)</p>
<p>Может употребляться и как определение, и с вспомогательным глаголом (т. наз. результивное время)</p>		<p>Может употребляться только как определение.</p>	

**1** Ես **ստիպված** եմ (էի) մի բան անել = Ինձ ստիպում են (ստիպում էին, ստիպեցին) (հանգամանքները, մարդիկ) մի բան անել

Դու **հուզված** ես (էիր) = մի բան, մեկը քեզ հուզում է (հուզում էր, հուզեց). **հուզված** մարդ

Իմ ընկերը **սիրված** ու **հարգված** է (էր) = իմ ընկերոջը սիրում ու հարգում են (էին)

Նա **գբաղված** մարդ է:



**2**

**հոգնած, նստած** մարդ



Ես հոգնել եմ և նստել եմ (հոգնեցի և նստեցի) = Ես **հոգնած** եմ և **նստած** եմ  
Ես հոգնել էի և նստել էի = Ես **հոգնած** էի և **նստած** էի

**գարմացած** մարդ



Դու գարմանում ես = դու **գարմացած** ես

**կարդացած** մարդ



Նա շատ է կարդացել = նա **կարդացած** է  
Նա շատ էր կարդացել = նա **կարդացած** էր

**զայրացած** մարդ



Դուք զայրացել եք (զայրացաք) = դուք **զայրացած** եք  
Դուք զայրացել էիք = դուք **զայրացած** էիք

**խմած, հարբած** մարդիկ



Նրանք խմել, հարբել են (խմեցին, հարբեցին) = նրանք **խմած, հարբած** են  
Նրանք խմել, հարբել էին = նրանք **խմած, հարբած** էին

### 3A

Ես գիրք եմ կարդում → իմ **կարդացած** գիրքը, **կարդացածս** գիրքը

Դու ծաղիկ բերեցիր → քո **բերած** ծաղիկը, **բերածդ** ծաղիկը

Ուսուցիչը խմեց → նրա **խմած** ջուրը

Արմինեն նամակ է գրել → Արմինեի **գրած** նամակը

Մենք սովորեցինք այս դասը → մեր **սովորած** դասը

Դու ճամպրուկ բերեցիր → քո **բերած** ճամպրուկը

Նա միտք հայտնեց → նրա **հայտնած** միտքը

Դուք վագեցիք վեց կիլոմետր → ձեր **վագած** վեց կիլոմետրը

Նրանք եկան այս ճանապարհով → նրանց **եկած** ճանապարհը

Относясь к объекту, результативное причастие употребляется только в функции определения. При этом "бывший субъект" передается родительным падежом (или притяжательным прилагательным, или притяжательным артиклем).

Заметим, что одна и та же форма результативного причастия может относиться как к субъекту, так и к объекту действия, т.е. может выразить состояние как того, кто выполнил действие, вызвавшее это состояние, так и того, с кем или с чем произошло это действие. Ср. в приведенных примерах **խմած մարդ** и **նրա խմած ջուրը**, **կարդացած մարդ** и **իմ կարդացած գիրքը** (выпивший человек и выпитая вода, начитанный человек и прочитанная книга). Обычно семантика глаголов настолько прозрачна, что она сама подсказывает, относится ли результативное причастие к субъекту, совершившему действие (բարկացած, հոգնած, նստած, կանգնած, քնած, մեռած, ցառկած, հարբած, զարմացած) или к объекту. Результативное причастие большинства прямо-переходных глаголов, по жизненному опыту говорящих, может относиться только к объекту; в таких случаях подразумевается неопределенно-личное подлежащее (кто-то). Тогда ничто не препятствует употреблению одинаковых по форме результативных причастий в разных случаях – "сделавший" и "сделанный".

### 3B

**Ներկած** նստարան.

(նստարանը **ներկած** է (էր) → նստարանը ներկել են (էին), ինչ-որ մեկը ներկել է (էր) նստարանը)

**Կծած** խնձոր. (խնձորը **կծած** է (էր) → ինչ-որ մեկը կծել է (էր) խնձորը)

**Կտրած** գաթա → ինչ-որ մեկը կտրել է (էր) գաթան

Բաց **թողած** տառեր. տառերը բաց են (էին) **թողած** → տառերը բաց են (էին) թողել

**Կտրած** բաժակ. (բաժակը **կտրած** է (էր) → բաժակը կտրել են (էին), ինչ-որ մեկը կտրել է բաժակը)

**Մերած** մածուկ. (մածուկը **մերած** է (էր) → մածուկը մերել են (էին), ինչ-որ մեկը մերել է (էր) մածուկը)



Разницу между 3А и 3В мы видим в том, что семантика глаголов в 3А требует указать **субъект действия**, т.к. иначе (без указания **субъекта действия**) может возникнуть:

- двусмысленность, как в случаях с **կարդացած** и **խմած**,
- ошибочность выбора результативного причастия («принесенный цветок, написанное письмо» – **բերված** ծաղիկ, **գրված** նամակ (1), а не **բերած**, **գրած**, т.к. необходимо указать кем принесенный, кем написанное),
- возможность образования, но семантическая невозможность употребления результативного причастия типа **սովորած**, **վազած**, **եկած**.




К примерам 3В можно указать субъект действия, и это будет лишь **дополнительная, уточняющая информация**: **սլացիս ներկած** նստարանը, **սլացիկի ներած** նամուկը и т.д.

Легко увидеть, что результативное причастие подобных глаголов никак не может относиться к субъектам этих действий. Поэтому даже при легкости образования результативного причастия от любого глагола предпочитают не выделять результативное время в системе изъявительного наклонения.

Если мы все-таки хотим результативным причастием выразить (давнопрошедшее, имевшее место) действие, а не состояние, то вместо вспомогательного глагола են употребляем глаголы ունենի или կամ. Например: **Լսած չունեն**: **Տեսած չկամ**: (Не слыживал. Не видывал.) **ԼաՎաշ բխած կա՞ս**: **Մածառ խմած կա՞ս**: (Ты когда-либо пек лаваш? Ты когда-либо пил молодое вино?)

### Առաջադրանքներ և վարժություններ

1. Դուրս գրեք հարակատար դերբայները չորս սյունակով ըստ հետևյալ տիպերի.


Ենթակային վերաբերող Относящаяся к субъекту		Խնդրին վերաբերող Относящаяся к объекту	
կրավորական բայ Страдательный глагол	չեզոք բայ Нейтральный глагол	գործող անձի հիշատակումով С упоминанием действующего лица	առանց գործող անձի հիշատակման Без упоминания действующего лица
1	2	3А	3В
		նրա ասած խոսքին 	հալած յուղի տեղ


– Ի՞նչ ես նրա ասած խոսքին հավատում, ամեն ինչ հալած յուղի տեղ ես դնում:

– Ես շատ եմ սիրում տատիկիս գործած զգեստը:  
– Դու խաշած կարտոֆիլ ես սիրում, թե՞ տապակած: – Միևնույնն է, եփած, խաշած, կամ տապակած, միայն վառած կարտոֆիլ չեմ սիրում:

– Եթե այս շաբաթ զբաղված չես, գուցե գնանք ցուցահանդես:

- Ջբաղված չեմ, բայց գիտե՞ս, շատ հոգնած եմ:
  - Բարձր մի խոսիր, երեխան արդեն պառկած է: - Դեռ քնած չի՞:
- Ոչ, դեռ քնած չի, բայց շուտով կքնի, հոգնած էր:
  - Սա մայրիկիդ կարած շո՞րն է:
  - Ի՞նչ է գրված այստեղ:
  - Մայրիկ, ինչու՞ է այն մարդը ճանապարհին կանգնած: - Երկի ուշացած ուղևոր է, ուզում է, որ որևէ մեքենա իրեն վերցնի:
  - Կռացած մի կարդա, կհոգնես:
  - Գիտե՞ս, քո առած կաթը լավը չէր, ստիպված թափեցի:

 2. Կազմեք և հետևյալ նախադասություններում օգտագործեք փակագծերում բերված բայերի հարակատար դերբայը.



Նա գնալու է գյուղ, որպեսզի ապրի իր (կառուցել) տանը, ուտի իր (աճեցնել) բանջարեղենը, իր (քաշել) մեղրը, իր (մերել) մածուկը:

→ Նա գնալու է գյուղ, որպեսզի ապրի իր կառուցած տանը, ուտի իր աճեցրած բանջարեղենը, իր քաշած մեղրը, իր մերած մածուկը:

Նա գնալու է գյուղ, որպեսզի ապրի իր (կառուցել) տանը, ուտի իր (աճեցնել) բանջարեղենը, իր (քաշել) մեղրը, իր (մերել) մածուկը:

Ես դեռ չեմ կարդացել քո (տալ) գիրքը:  
 Ընկերուհիս շատ խելացի է ու (կարդալ):  
 (Ջայրանալ) մարդու հետ դժվար է խոսել:

Քո (գալ) ճանապարհը հիմա չես գտնի, արդեն ձյունով (ծածկվել) է:

Դու քեզ (պարտվել) ճանաչու՞մ ես:

Ինչու՞ ես այդպես (գարմանալ) նայում, առաջին անգամ՝ ես ինձ տեսնում:

Քո (գնել) կոշիկները փոքր էին:

Նա հյուր էր սպասում. ամանները (լվանալ) էին, տունը (հավաքել) էր, հատակը (փայլեցնել) էր:

Պըլը Պուղու հագուստը (կարկատել) էր:

Նրանց (գտնել) փողոցը իսկապես կոչվում էր Գարնանային փողոց:

Միսիս Դիլփիի (ստանալ) ռոճիկն ավելի մեծ էր, քան Ջոյինը:

Երիտասարդի մազերը (սանրել) էին, հագուստները՝ (արդուկվել) էին, և նա միակն էր, որ հատակից բարձրացրեց գիտնականի (զցել) գիրքը:

Աբիսողոմ աղան դուրս եկավ նավակից՝ մի լայն թիկնոցի մեջ (փաթաթվել):

Գետնին (ընկնել) պարկապզուկը նման էր (սպանվել) երեխայի:

Տղաների (մորթել) ոչխարը Ռևազինն էր:

Սրանք Պավլեի (դնել) պատերն են:

Պավլեն քննիչին ցույց տվեց նաև դռան ճակատին (փորել) իր անունը:

Պըլը Պուղին մելիք Շահնազարին միշտ (հիմարանալ) էր թողնում:

Երբ Ջոնին եկավ խանութ, պարոն Կոզակը վաճառասեղանի մոտ (նստել քնել) էր:

Մոմիկի (քանդակել) խաչքարերը անկրկնելի են:





Ծաղիկներն ինչքա՞ն կարող են ապրել. ինչքա՞ն կապրեն նրանք մանավանդ ծաղկամանում, ջրի մեջ դրված, մե՞կ օր, թե՞ դարեր...

Ցածրիկ մի սեղանի վրա ծաղկամաններով ծաղիկներ էին դրված: Ոսկեդեղինն ու ալ կարմիրը, կապույտն ու մանուշակագույնը, նարինջն ու ճերմակը վառվում էին կանաչի վրա: Դրանց մի մասը բերված էր ծաղկանոցներից, մյուս մասը դաշտային էր:

Ալեհեր նկարիչը, հսկայական մի ճերմակ կտավի առաջ նստած, վրձինն ու ներկապնակը ձեռքին, երկար նայում էր ծաղիկներին:

Հետո նա սկսեց նկարել: Վրձինը բարձրանում ու իջնում էր այնպես, որ կարծես նկարչի ձեռքին ոչ թե վրձին էր, այլ մուրճ, և նա ոչ թե նկարում, այլ կոփում էր ծաղիկները, որոնք իրար ետևից բացվում էին ճերմակ կտավի վրա: Այսպես սպիտակ կտավը ծաղկեց, կենդանացավ, իսկ երրորդ օրը նկարիչը կտավի վրա հոգնած ձեռքով դրեց իր ստորագրությունը՝ "Մարտիրոս Սարյան":

Ամեն ոք, երբ նայում էր նկարչի ստեղծած կտավին, ասում էր. "Այս ծաղիկները դարեր կապրեն:"

\*\*\*

Վարպետը ծերություն չապրեց: Նա ֆիզիկապես թույլ էր, բայց միտքն ու հոգին միշտ պայծառ էին, մինչև կյանքի վերջին օրը: Աշխատում էր անընդհատ: Երբ հարցնում էին, թե ի՞նչ է նկարելու, պատասխանում էր. "Զգիտեմ, ինքն իրեն է ստացվում, ինչ որ նկարում եմ, Հայաստան է դուրս գալիս":

\*\*\*

Նրանք եկել էին հեռվից: Մեկը հյուսիսից էր, մյուսը՝ Հեռավոր Արևելքից, երրորդը՝ Լիտվայից: Կային Բելոռուսիայից, Ուրալից ու Միջին Ասիայից: Զբոսաշրջիկներ էին, եկել էին Հայաստանը տեսնելու: Երբ օդանավը իջավ Երևանի օդանավակայանում, նրանք հնարավորություն չունեցան նույնիսկ Արարատը տեսնելու: Ամպամած օր էր, և զբոսաշրջիկները միանգամից չզգացին Հայաստանը այնպես, ինչպես որ պետք էր: Հաջորդ օրը նրանք գնացին թանգարան, որից հետո այցելեցին Մարտիրոս Սարյանի ցուցահանդեսը: Հենց այստեղ էլ զբոսաշրջիկների խումբը բաժանվեց երկու մասի: Սկսեցին վիճել, համոզել իրար: Մի երիտասարդ նկարիչ, որ Մարտիրոս Սարյանին վաղուց գիտեր, աշխատում էր մի տարիքոտ կնոջ հասկացնել, որ Սարյանը մեծ, շատ մեծ նկարիչ է:

– Ես ի՞նչ եմ ասում, – արդարանում էր կինը, – ես համաձայն եմ, բայց տեսե՛ք, մի՞թե ստվերը երկնագույն է լինում, կամ մի՞թե աշխարհում այսպիսի ծառեր կան:

– Լինում են, մայրիկ, լինում են:

Այսպես նրանք վիճում էին մերթ այս, մերթ այն նկարի առաջ կանգնելով, և նրանցից ամեն մեկն իր կողմնակիցներն ուներ: Բայց նրանց վեճը շուտ ավարտվեց: Տասնմեկ օր հետո, երբ Հայաստանում շրջագայելով նրանք օդանավով վերադառնում էին Երևանից, մի տեղացի ուղևոր հարցրեց.

– Հավանեցի՞ք Հայաստանը:

Տարիքոտ կինը, որ մինչ այդ պատուհանից դուրս էր նայում, շուռ եկավ ու ասաց.

– Իսկ մենք Հայաստանը տեսել էինք արդեն Սարյանի կտավներում:


**Ըստ Ս. Հարությունյանի "Հավերժական ծաղիկները" պատմվածքի (փոխադրության նյութերի ժողովածուից)**

### Բառեր

**հավերժական** – вечный  
**ծաղիկ** – цветок  
**մանավանդ** – в особенности  
**ծաղկաման** – цветочная ваза  
(դ=խ)  
**ոսկեդեղին** – золотисто-желтый  
**ալ կարմիր** – алый  
**նարինջ** – зд. оранжевый  
**ճերմակ** – белый  
**վառվել** – зд. пылать  
**ծաղկանոց** – цветник (դ=խ)  
**դաշտային** – полевой  
**ալեհեր** – седой  
**հսկայական** – огромный  
**կտավ** – полотно  
**վրձին** – кисть, кисточка (ձ=g)  
**ներկապնակ** – палитра  
**կոփել** – ковать  
**բացվել** – распуститься (օ цветах)  
**ծաղկել** – цвести (դ=խ)  
**կենդանանալ** – оживиться (դ=թ)  
**ստորագրություն** – подпись  
**ծերություն** – старость  
**հոգի** – душа (զ=թ)  
**ստացվել** – получаться  
**Հեռավոր Արևելք** – Дальний Восток  
**Միջին Ասիա** – Средняя Азия (ջ=չ)



**զբոսաշրջիկ** – турист  
**օդանավ** – самолет (դ=թ)  
**օդանավակայան** – аэропорт (դ=թ)  
**հնարավորություն** – возможность  
**ամպամած** – облачный  
**զգալ** – чувствовать  
**հաջորդ** – следующий (դ=թ)  
**թանգարան** – музей  
**ցուցահանդես** – выставка  
**խումբ** – группа  
**բաժանվել** – разделиться



**Մարտիրոս Սարյան.  
քանդակագործ՝ Լ.Թոքմաջյան**

**վիճել** – спорить  
**վաղուց** – давно  
**տարիքոտ** – в возрасте  
**արդարանալ** – оправдываться  
(դ=թ)  
**ստվեր** – тень  
**մերթ ..., մերթ ...** – то ..., то ...  
**կողմնակից** – сторонник  
**վեճ** – спор  
**ավարտվել** – завершиться  
**շրջագայել** – совершить поездку  
**տեղացի** – местный  
**հավանել** – любить, симпатизировать  
**շուռ գալ** – обернуться



### 3. Ընտրեք հարակատար դերբայի ճիշտ ձևը.

Սենյակում հեռուստացույց կա՞ր, որտե՞ղ էր ...:	դրած / դրված
Նրա եղբայրը ինստիտուտն ... ինժեներ է:	ավարտած / ավարտված
Այս խաղողը ... է իմ պապի այգուց:	բերած / բերված
Քո ... հոտը զգա՞ցի հոտ էր:	զգացած / զգացված
Ու՞ր է Ամերիկայից ... հրավերը:	ստացած / ստացված
Ջրոսաշրջիկների խումբը վիճում էր՝ երկու մասի ...:	բաժանած / բաժանված
Մի՞ վախենաք, մեր ... սունկը լավն է, թունավոր չէ:	հավաքած / հավաքված
– Փոքրիկս, սեղանի մոտ այդպես չեն նստի՝ սեղանից ...:	շուռ եկած / շուռ տված
Սենյակ մտա ու տեսա, որ աղջիկս աթոռները ... դրել է սեղանին ու հատակն է լվանում:	շուռ եկած / շուռ տված



### 4. Եթե հետևյալ նախադասություններում սխալ բան կա, ապա ուղղե՛ք:

1. Սարյանը նկարում էր հավերժական ծաղիկներ, որոնք բերված էին ծաղկանոցից ու դաշտից:
2. Սարյանը աշխատում էր մուրճով, նա կոփում էր ծաղիկները:
3. Սեղանին դրված էին կարմիր, կապույտ, սպիտակ ծաղիկներ և ոսկեգույն նարինջներ:
4. Երբ զբոսաշրջիկները Հայաստան եկան, նրանք Մասիսը չտեսան և Հայաստանը չզգացին այնպես, ինչպես որ պետք էր, որովհետև անձրևոտ օր էր:
5. Ջրոսաշրջիկների մի մասը եկել էր Մերձավոր Արևելքից, մյուս մասը՝ Փոքր Ասիայից:
6. Օդանավում մի զբոսաշրջիկ հարցրեց մի տեղացի ուղևորի, արդյոք նրան դու՞ր է գալիս Հայաստանը:
7. Երիտասարդ նկարիչն ասաց, որ իրենք Հայաստանը տեսել էին Սարյանի կտավներում:



5. Ա) Տեքստի ո՞ր բառակապակցություններում են օգտագործված **"ծաղիկներ, նկարիչ, կտավ, միտք, հոգի, ուղևոր"** գոյականները: Ուրիշ ինչպե՞ս կարելի է օգտագործել նույն գոյականները: Բերե՛ք օրինակներ:




**դաշտային ծաղիկներ, գույնզգույն ծաղիկներ**




Բ) Տեքստի ո՞ր բառակապակցություններում են օգտագործված **"վառվել, սրացվել, կոփել, բացվել, կենդանանալ, զգալ, հավանել"** բայերը: Ուրիշ ինչպե՞ս կարելի է օգտագործել այս բայերը: Բերե՛ք օրինակներ:



**Արևը վառվում էր Սևանի վրա, կարտոֆիլը վառվեց.**

6.  Պատասխանեք հարցերին.



**Հակոբ Հակոբյան.  
Լեռնային ճանապարհ, 1970**

Դուք Հայաստանում եղե՞լ եք:  
Սարյանի կտավները տեսե՞լ  
եք: Ձեզ դու՞ր են գալիս նրա  
գործերը: Սարյանի  
կտավները Ձեզ օգնու՞մ են  
ավելի լավ ճանաչել  
Հայաստանը: Ուրիշ ի՞նչ հայ  
նկարիչների եք ճանաչում:  
Հայ վարպետների  
ստեղծագործություններից  
ո՞րը գլուխ-գործոց  
կանվանեիք: Հակոբ  
Հակոբյանի կտավները Ձեզ  
հիշեցնու՞մ են Հայաստանը:  
Իսկ Գրիգոր Խանջյանի  
գորելենները:



**Հակոբ Հակոբյան.  
Զարքարոպ բլուր, 1975**

Գիտե՞ք, որ  
«Վարդանանք»  
գորելենի վերևում  
գործված է 5-րդ դարի  
հայ պատմիչ եղիշեի  
խոսքը՝ «Մահ ոչ  
իմացեալ մահ է. մահ  
իմացեալ՝  
անմահություն է»\*:  
Ուշադիր դիտելով  
գորելենը կարելի է  
տեսնել, որ  
Վարդանանց կռվին են  
ելել հայ մշակույթի  
բոլոր անմահները:

\*«Смерть неосознанная  
есть смерть, смерть  
осознанная – бессмертие».



**Գրիգոր Խանջյան.  
Դրվագ «Վարդանանք» գորելենից, 1983թ.**



Լրագրերը հաղորդեցին, որ Թուրքիայի բարբարոսները հայերի նոր, արյունոտ ջարդեր են կազմակերպել:

Այդ օրերին համընդհանուր սուգ էր հայերի համար, սգի մեջ էր նաև արվեստագետի տունը:

Թեոդոսիայի հայերը վաղ առավոտից հավաքվում էին Այվազովսկու տան մոտ՝ իմանալու Թուրքիայում կատարվող՝ վերջին իրադարձությունները:

Մի անգամ, առավոտյան, երբ բազմությունը սովորականի նման հավաքվել

էր արվեստագետի տան մոտ և անհամբերությամբ սպասում էր Այվազովսկու երևալուն, դուրս եկավ նրա սպասավորը:

– Օ՛, բարի մարդիկ, – ասաց նա, – գիտե՞ք ի՞նչ է կատարվում:

– Ի՞նչ, – զարմացած հարցրին հավաքվածները:

– Հովհաննես Այվազովսկին հանեց սուլթան Աբդուլ Ազիզի կողմից իրեն շնորհված բոլոր շքանշանները և կախեց Ռեքս շան վզից:

Սպասավորը դեռ չէր ավարտել իր խոսքը, երբ բացվեց շքանուղթի դուռը, և Այվազովսկին երևաց իր շան հետ միասին: Շունը բարձրածայն հաչում էր: Նրա լայն վզնոցից կախված էին ադամանդներով զարդարված թուրքական "Օսմանիե" շքանշանները: Քառասուն տարի առաջ այդ շքանշաններով սուլթան Աբդուլ Ազիզը պարգևատրել էր Այվազովսկուն այն նկարների համար, որոնք նա գնել էր իր պալատը զարդարելու նպատակով:

Այվազովսկին իրեն ուղեկցող<sup>2</sup> բազմության հետ միասին ուղղվեց դեպի ծովափ և նստեց ծերունի Անդրեասի նավակը: Երբ լողացին դեպի ծովի հեռուները, Այվազովսկին Ռեքսի վրայից հանեց վզնոցը, կապեց մի քարից և նետեց ծովը: Դրանից հետո նա կռացավ ծովի վրա, խնամքով լվաց ձեռքերը, Ռեքսին հրամայեց նույնպես լվացվել՝ ծովի ջրում լողանալով: Նա իրեն և շանը մաքրեց շքանշանների կեղտից:

Ափ վերադառնալով՝ Այվազովսկին այսպես դիմեց բազմությանը.

– Սիրելի հայրենակիցներ, այս գիշեր ես արթնացա և հանկարծ հիշեցի սուլթանական գարշելի պարգևների մասին, հասկացա, որ դրանք են թունավորում իմ տան օդը և իմ հոգին: Այժմ ես նրանցից ազատվեցի և կարող եմ հանգիստ խղճով աշխատել:

Հաջորդ առավոտյան ծեր նկարիչը իր սովորական ժամին մտավ արվեստանոց: Նա հավաքեց իր ուժերը և սկսեց նկարել "Հայերի կոտորածը Տրապիզոնում" և "Թուրքերը հայերին լցնում են նավերը" կտավները:

**Նայր Վազների "Այվազովսկի" գրքի (փոխադրության նյութերի ժողովածուից)**

<sup>1</sup>կատարվող – происходящий

<sup>2</sup>ուղեկցող – сопровождающий



Հովհ. Այվազովսկի. Բայրոնի մուտքը Սուրբ Ղազար կղզի



### Բառեր

լրագիր – газета  
 հաղորդել – сообщить (ղ=բ)  
 բարբարոս – варвар  
 արյունոտ – кровавый  
 ջարդ – погром, резня (ղ=բ)  
 համընդհանուր – всеобщий (ղ=բ, հ не произн.)  
 սուգ – траур (զ=ք)  
 արվեստագետ – артист, художник, искусствовед  
 վաղ – рано  
 կատարվել – совершаться  
 հավաքվել – собираться  
 իրադարձություն – событие (ծ=g)  
 բազմություն – толпа  
 անհամբերություն – нетерпение (բ=փ)  
 սպասավոր – прислуга  
 շնորհել – даровать (հ не произн.)  
 շքանշան – орден  
 կախել – вешать  
 վիզ – шея  
 ավարտել – завершить  
 շքամուտք – парадный вход  
 հաչել – лаять



վզնոց – ошейник  
 զարդարել – украшать (ղ=բ)  
 պարգևատրել – наградить (զ=ք)  
 նետել – бросить  
 խնամքով – старательно  
 լողանալ – купаться, мыться  
 ուղեկցել – сопровождать  
 ուղղվել – направиться  
 ծովափ – берег моря  
 ծերունի – старик  
 լողալ – плавать  
 կապել – привязать  
 մաքրել – очистить  
 կեղտ – грязь (ղ=խ)  
 դիմել – обратиться  
 հայրենակից – соотечественник  
 գարշելի – гадкий  
 պարգև – награда (զ=ք)  
 թունավորել – отравлять  
 խիղճ – совесть (ղ=խ)  
 արվեստանոց – мастерская художника  
 հավաքել – собирать  
 ուժ – сила  
 կոտորած – резня  
 ցնել – грузить

### 7. ◊ Ա) Պատասխանեք հարցերին.


Ո՞վ հաղորդեց, որ թուրքերը հայերի նոր ջարդ են կազմակերպել: Ո՞վ էր հավաքվում արվեստագետի տան առաջ: Ո՞վ կախեց թուրքական շքանշանները Ռեքս շան վզից: Ո՞վ ասաց հավաքվածներին, որ նկարիչն իր շան վզից շքանշաններ է կախել: Ո՞վ էր վարում ձկնորսական նավակը: Ո՞վ նետեց շքանշանները ծովը: Ո՞վ լվաց իր ձեռքերը: Ո՞վ լողացավ ծովում:

 Բ)  "Ի՞նչ" դերանվամբ հարցեր կազմեք՝ հետևյալ նախադասություններն իբրև պատասխան ունենալով.


Որ թուրք բարբարոսները նորից ջարդ են կազմակերպել: Շքանշաններ: Որ Այվազովսկին իր շքանշանները հանեց ու կախեց շան վզից: Շքանշանները ծովը նետեց ու ձեռքերը լվաց: Որ այդ շքանշանները թունավորում էին իր տան օդն ու իր հոգին, և հիմա նա կարող է հանգիստ խղճով աշխատել:


 Գ)  "Ու՞մ" դերանվամբ հարցեր կազմեք՝ հետևյալ նախադասություններն իբրև պատասխան ունենալով.

Այվազովսկուն: Հավաքվածներին: Բազմությանը, որ սպասում էր նրան ծովափին:

8. Ա) 


կախել – вешать	անկախություն –
կախված – 1. виссячий,	независимость
2. зависимый	կախարան – вешалка, не
անկախ – независимый	путайте с
կախում – зависимость	կախադան – виселица

 Միջանցքում, աջ կողմում դրված էր **կախարանը**, որից հյուրերն իրենց վերարկուներն ու գլխարկներն էին **կախում**, իսկ տանտերերն իրենց հագուստը պահարանում էին **կախում**: Հայաստանը **անկախություն ձեռք բերեց** 1993թ, իսկ Արցախը դեռ չի ճանաչվել՝ իբրև **անկախ պետություն**: Ընկերոջս սենյակում պատից **կախված է** մի հին օրացույց՝ Գրիգոր Խանջյանի "Այբուբեն"-ով:


 Բ) Կետերի փոխարեն գրեք աջ սյունակի բառերից մեկը.

Դուք ուզում եք ... այս նկարը ձախ պատին, բայց այստեղ ազատ տեղ չկա:  
 Եղանակից է ... կզմանք այսօր զբոսանքի, թե ոչ:  
 Հայաստանը ... պետություն է, իսկ Արցախը դեռ պայքարում է իր ... համար:  
 Ստանիսլավսկին ասում է, որ թատրոնն սկսվում է ..., բայց ավելի ճիշտ կլիներ ասել՝ հանդերձարանից:

անկախ
անկախություն
կախարան
կախել
կախված

9. Ա) 

շքանշան = շուք + նշան	
շքանուտք = շուք + մուտք	
շուք – блеск, лоск	շքեղություն – роскошь
շքեղ – роскошный	անշուք – невзрачный

 Թեև նրա զգեստը **շքեղ** չէր, բայց ադամանդե ականջօղերն ու մատանին մի առանձին **շուք էին փալիս** նրա արդուզարդին (туалет): Ես չեմ կարող ընդունել այս նվերը, սա **շքեղ** նվեր է: Սենյակը կահավորված էր (меблировано) ճաշակով, բայց **առանց շքեղության**:




Բ) Կետերի փոխարեն գրեք աջ սյունակի բառերից մեկը.

Սպիտակ գույնը, օրինակ սպիտակ օձիքը ... է տալիս հագուստին:

Այսօր քույրդ ... տեսք ունի, նրան շատ է սազում նոր մուշտակը:

Նա շատ համեստ է ապրում, իրեն ոչ մի ... թյուլ չի տալիս, բայց չի կարելի ասել, թե նա ... է հագնվում:

շուք  
անշուք  
շքեղ  
շքեղություն

10. Ա) 



արվեստ – искусство  
արվեստանոց,  
արվեստագետ  
կերպարվեստ –  
изобразительное  
искусство  
գեղարվեստական –  
художественный

արհեստ – ремесло  
արհեստանոց –  
мастерская  
ремесленника  
արհեստավոր –  
ремесленник  
արհեստական –  
искусственный



Բ) Կետերի փոխարեն գրեք աջ սյունակի բառերից համապատասխանը.

Երևանում, Սայաթ-Նովայի պողոտայի վրա է գտնվում նկարիչ Արա Բեքարյանի ... :

Նրա ... միշտ կարգ ու կանոն է. մեխերը, մուրճը, սղոցը և մյուս գործիքները միշտ իրենց տեղում են:

Վահրամ Փափագյանի պապն ուզում էր, որ իր թոռը մի ... սովորի ու համեստ ... դառնա:

Փափագյանի ... հիացան ոչ միայն Հայաստանում, այլև Ռուսաստանում ու Եվրոպայի շատ քաղաքներում:

Ամեն երեկո հեռուստացույցով ... կինոնկար են ցուցադրում:

Բնական գործվածքը առողջության համար ավելի լավ է, քան ...:

արհեստանոցը  
արվեստանոցը

արհեստանոցում  
արվեստանոցում

արհեստ  
արվեստ  
արհեստավոր  
արվեստագետ

արհեստով  
արվեստով

արհեստական  
գեղարվեստական

արհեստականը  
գեղարվեստականը



11. Ա) Տեքստի ո՞ր բառակապակցություններում են օգտագործված **"բարբարոսներ, ջարդ, սուգ, պարգև, խիղճ"** գոյականները: Ուրիշ ինչպե՞ս կարելի է օգտագործել նույն գոյականները: Բերե՛ք օրինակներ:



**Թուրք բարբարոսներ, բարբարոսներն այրեցին գրքերը**



Բ) Տեքստի ո՞ր բառակապակցություններում են օգտագործված **"կազմակերպել, իմանալ, սպասել, շնորհել, կախել, թունավորել, աշխատել, հավաքել"** բայերը: Ուրիշ ինչպե՞ս կարելի է օգտագործել այս բայերը: Բերե՛ք օրինակներ:



**Ջարդ կազմակերպել, գործը կազմակերպել**



## Գիտե՛ք որ...

Հայերեն գրերի գյուտից հետո Հայաստանում զարգանում է ձեռագրերի նկարազարդման արվեստը:



**Ավետարան. 13-րդ դար. Ավետումն**

Հին հայկական ձեռագրերը հարուստ են մանրանկարներով: Մանրանկարիչները (կամ ծաղկողները), բացի զարդանկարներից, զանազան դիմանկարներից ու իրենց ինքնանկարներից, պատկերում էին Ավետումը, Ծնունդը, Սկրտությունը, Խաչելությունը, Երկրորդ Գալուստը:

Չնայած դարեր են անցել, հայկական մանրանկարչությունը այսօր էլ հիացնում է իր արտահայտչականությամբ ու գույների պայծառությամբ: Մանրանկարիչները իրենք էին պատրաստում ներկերը:

Հայաստանը հնուց ի վեր հայտնի է եղել իր ներկերով, որոնցից ամենահռչակավորը որդան կարմիրն է: Այս ներկը ունի պայծառ, գեղեցիկ երանգ և չի խամրում: Հայտնի է, որ որդան կարմիրը միջատ է: Սակայն Արարատյան դաշտի այս հազվագյուտ զարդը վաղուց ի վեր անհետացել է, և այսօր գիտնականները փնտրում և գտնում են նրա անհետացած օջախները: Որդան կարմիրը պահպանելու և ուսումնասիրելու համար ստեղծված են մի քանի արգելանոցներ:

Մեզ են հասել Թորոս Ռոսլինի (13-րդ դար, Կիլիկիա), Գրիգոր Տաթևացու (15-րդ դար, Տաթև), Մինասի (15-րդ դար, Վասպուրական) մանրանկարները:

## Բառեր

**գյուտ** – открытие  
**զարգանալ** – развиваться  
**նկարազարդում** – роспись  
(դ=թ)  
**մանրանկար** – миниатюра  
**մանրանկարիչ** – миниатюрист  
**զարդանկար** – орнамент (դ=թ)  
**զանազան** – различный  
**դիմանկար** – портрет  
**ինքնանկար** – автопортрет  
**պատկերել** – изобразить  
**Ավետում** – Благовещение  
**Ծնունդ** – Рождество  
**Սկրտություն** – Крещение  
**Խաչելություն** – Распятие  
**Գալուստ** – Пришествие  
**չնայած** – несмотря на  
**հիացնել** – восхищать,  
вызывать восхищение  
**արտահայտչականություն** –  
выразительность

**պայծառություն** – яркость  
**ներկ** – краска  
**հնուց ի վեր** – исстари  
**հայտնի** – известный  
**հռչակավոր** – знаменитый  
**որդան կարմիր** – кошениль  
(դ=թ)  
**պայծառ** – яркий  
**երանգ** – оттенок  
**խամրել** – тускнеть  
**միջատ** – насекомое (ջ=չ)  
**դաշտ** – поле  
**հազվագյուտ** – редкостный  
**զարդ** – украшение (դ=թ)  
**վաղուց ի վեր** – издавна  
**անհետանալ** – исчезнуть  
**օջախ** – очаг  
**ուսումնասիրել** – изучать  
**արգելանոց** – заповедник (զ=թ)  
**հասնել** – дойти до




**Հակոբ Հովնաթանյան  
(1806-1881)  
Կաթողիկոս  
Ներսես  
Աշտարակեցու  
դիմանկարը**

17-18-րդ դարերում էջմիածինն է դառնում կերպարվեստի կենտրոն: Ամբողջ 18-րդ դարի ընթացքում էջմիածնի տաճարը նկարագարողել են նկարիչ Հովնաթանյանների երեք սերունդ՝ պապը՝ Նաղաշ Հովնաթանը, նրա երկու զավակները՝ Հակոբ և Հարություն Հովնաթանյանները և նրա թոռը, Հակոբի որդին՝ Հովնաթան Հովնաթանյանը:

Ավելի ուշ շրջանի նկարիչներին կարելի է ժանոթանալ Հայաստանի պետական պատկերասրահում, Երևանի ժամանակակից արվեստի թանգարանում, Մարտիրոս Սարյանի, Հակոբ Կոչոյանի, Արա Սարգսյանի, Երվանդ Քոչարի տուն-թանգարաններում, Ջոտտոյի Գևորգ Գրիգորյանի արվեստանոց-թանգարանում, ժողովրդական ստեղծագործության

թանգարանում և ..... մանկական ստեղծագործության թանգարանում:

Պատկերասրահում ցուցադրված են Հակոբ Հովնաթանյանի դիմանկարները, Գևորգ Բաշինջաղյանի բնանկարները (օրինակ՝ "Սևանը՝ գիշերով"), Վարդգես Սուրենյանցի պատմական կտավները (օրինակ՝ "Ուտնահարված սրբությունը"), Հովհաննես Այվազովսկու ծովանկարները, Եղիշե Թադևոսյանի, Փանոս Թերլեմեզյանի և այլոց կտավները:




Այստեղ ցուցադրվում են ոչ միայն հայ, այլև եվրոպացի և ռուս նկարիչների՝ Վան Դեյկի, Ֆրագոնարի, Գրյոզի, Կուրբեի, Ի. Ռեպինի, Վ. Սուրիկովի, Վ. Սերովի, Կ. Կորովինի, Ս. Վրուբելի, Պ. Կոնչալովսկու, Ս. Շագալի գործերից:

Առանձին ուշադրության են արժանի արտասահմանի հայ նկարիչների գործերը՝ Էդգար Շահինի օֆորտները, ֆրանսահայ Գառնիկ Ջուլունյանի (Գառզու), ամերիկահայ Հարություն Տիրիդյանի (Տիրիդ), իտալահայ Ժիրայր Օրաքյանի, եգիպտահայ Աշոտ Ջորյանի, բրիտանահայ Օնիկ Ադամյանի և այլոց ստեղծագործությունները:

**Բառեր**

- կենտրոն** – центр
- ընթացքում** – в течение
- նկարագարողել** – расписывать (դ=թ)
- սերունդ** – поколение
- շրջան** – период
- պատկերասրահ** – галерея
- ստեղծագործություն** – 1. произведение, 2. творчество

- ցուցադրվել** – выставляться
- բնանկար** – пейзаж
- ոպրնահարված** – попоранный
- սրբություն** – святыня (թ=փ)
- այլոց** – других (застывшая форма род. падежа от այլք)
- գործ** – произведение, труд
- առանձին** – особый
- արտասահման** – заграница



**Գառզու (Գառնիկ Զուլումյան). Երաժիշտը  
(դրվագ Մանուքի եկեղեցու  
նկարազարդումից՝  
«Հայտնություն»), 1991**



**Մինաս Ավետիսյան.  
Զաջուռ, 1960**

անսպառ տաղանդը: Իսկ իտալացի նկարիչ Ռենատո Գուտուզոն, բարձր գնահատելով հայ վարպետների ստեղծագործությունը, ասաց, որ թանգարանի սրահներում հերոսական զգացում ու ճշմարիտ հայրենասիրություն է արթնանում մարդու մեջ:

**Բառեր**

**Հայտնություն** – Откровение  
**վիշտ** – горе  
**վկայություն** – свидетельство  
**ոգի** – дух (զ=р)  
**զորություն** – мощь, сила




**Փիրայր Օրաքյան.  
Երեխաներ, 1960**

ժամանակակից արվեստի թանգարանը ներկայացնում է Գառզուի, Ալեքսանդր Բաժբեուկ-Մելիքյանի, Երվանդ Քոչարի, Մինաս Ավետիսյանի, Հակոբ Հակոբյանի, Լավինիա Բաժբեուկ - Մելիքյանի և այլ նկարիչների գործերից: Վիլյամ Սարոյանի վկայությամբ նրանցում երևում է հայ ժողովրդի ոգին, զորությունը,



**Հակոբ Հակոբյան.  
Վիշտ, 1961**

**անսպառ** – неисчерпаемый  
**վարպետ** – мастер  
**հերոսական** – героический  
**զգացում** – чувство  
**արթնանալ** – пробуждаться




12. Ա)

արտահայտել – выразить	
արտահայտություն – выражение	
արտահայտիչ – выразительный	
արտահայտչականություն – выразительность	
դեմքի արտահայտություն	արտահայտիչ աչքեր
ծանոթ արտահայտություն	արտահայտիչ ծայն
օտար արտահայտություն	արտահայտիչ շարժում
ճիշտ արտահայտություն	արտահայտիչ հայացք
սխալ արտահայտություն	(взгляд)

**Գ) Լրացրեք բացերը.**

Դու ... գործածեցիր, այդ պատճառով էլ ես քեզ չհասկացա: Այդ արտահայտությունը հայերեն չէ, դա ... է: Նրա ... հիշեցնում է իր մորը: Ես չեմ հիշում, թե ինչ է նշանակում այդ արտահայտությունը, բայց գիտեմ, որ ինչ-որ տեղ լսել եմ, շատ ... է:

Նա ... ունի, իր եղբոր մման: Ընկերները նրան միշտ խնդրում են թամադա լինել և իր ... բաժակաճառեր ասել: Նա մի ... արեց և մենք հասկացանք, որ նա հիմա ժամանակ չունի: Տիգրանը սենյակ մտավ ու տեսավ, որ Կարենը ... է նստում դիմացի շենքի հարևանուհուն:




13. Ա)

ստեղծել – создать
ստեղծագործել – творить
ստեղծագործ – творческий (человек)
ստեղծագործական – творческий (относящийся к творчеству)

**Գ) Լրացրեք բացերը.**


Ըստ Աստվածաշնչի (Библия) Աստված ... աշխարհը յոթ օրում: Մանկական ստեղծագործության թանգարանում ցուցադրված են շնորհալի երեխաների ստեղծագործությունները, իսկ ժողովրդական ... թանգարանում ինքնուս (самоучка) նկարիչների ...: Դպրոցներում գործում են ստեղծագործական խմբակներ, որտեղ ստեղծագործ երեխաները կարող են զարգացնել իրենց ... հնարավորությունները:



14. Ա)

զարդ – украшение (դ=թ)
զարդարել – украшать
զարդարված – украшенный
արդուզարդ – туалет (օձա դ=թ)
ադամանդազարդ – украшенный, расшитый бриллиантами
ժանյակազարդ – украшенный, расшитый кружевами
մարգարտազարդ – украшенный, расшитый жемчугами (զ=ք, դ=թ)
նկարազարդ – расписанный
պատկերազարդ – иллюстрированный

**Բ) Լրացրեք.**  
ժանյակազարդ նշանակում է ժանյակներով զարդարված:  
Մարգարտազարդ ... .. :  
Ադամանդազարդ ... .. :  
Նկարազարդ ... .. :



պատկեր – образ  
 սրբապատկեր – икона (բ=փ)  
 պատկերել – изобразить  
 պատկերասրահ – галерея  
 պատկերազարդ – иллюстрированный (դ=թ)  
 պատկերացնել – представить (себе), вообразить, не путайте с  
 ներկայացնել – 1. знакомить, представить, 2. давать театральное представление  
 պատկերացում – представление, понятие, не путайте с  
 ներկայացում – представление (театральное)

**Դ) Լրացրեք բացերը.**

Հայ մանրանկարիչները հաճախ են ... երկրորդ Գալուստը:


- Մինչև Հայաստանի պատկերասրահը այցելելը ես պատկերացում չունեի հայ նկարիչների մասին:
- Իսկ հիմա ... կազմեցի՞ր:
- Այո, բայց չեմ պատկերացնում, թե ինչ երանգ ու պայծառություն ունի որդան կարմիրը:
- Եթե այցելես Սատենադարան, ...:

**Կ) Օգտագործեք "ներկայացում" կամ "պատկերացում", "ներկայացնել" կամ "պատկերացնել" բառերը:**

- Ծանոթացեք, խնդրեմ, ես ուզում եմ Ձեզ ... մեր հայրենակցին, որը չի ... իր կյանքը առանց Հայաստանի:
- Ի՞նչ ... կա այսօր թատրոնում:
- Չգիտեմ, ... չունեմ:

**Դ) Լրացրեք բացերը.**

Լուսանկարիչը կատարում է լուսանկարներ:  
 Մանրանկարիչը ... ..., իսկ ... ... զարդանկարներ:  
 Բնանկարիչը ... ..., իսկ ... ... ծովանկարներ:  
 Դիմանկարիչը ... ..:  
 Երբ նկարիչը ինքն իրեն է նկարում, դա կոչվում է ....:  
 Թորոս Ռուսինը ... է: Հակոբ Հովնաթանյանը ... է:  
 Հովհաննես Այվազովսկին ...: Գևորգ Բաշինջաղյանը ... է:



Ծանսեմ



Հովհաննես Այվազովսկի




Էդգար Շահին



դիմանկար  
 ծովանկար  
 մանրանկար  
 նապոլեոնի իր  
 օֆոր իր



Ե. Զոչար

16. Ա) 











դաշտ (էլեկտրական, մագնիսական) – поле (электрическое, магнитное)  
 դաշտավայր – долина  
 մարզադաշտ – стадион  
 փորձադաշտ – экспериментальное поле (δ=g)




Բ) Լրացրե՛ք բացերը.

Երևանը, Դվինը, Էջմիածինը գտնվում են Արարատյան ...: Մարզադաշտը լի էր մարդկանցով, ... ասեղ գցելու տեղ չկար: Ի՞նչ ես մեզ վրա նոր ճաշատեսակներ փորձում, մենք քեզ համար ... ենք: Դաշտային ծաղիկները աճում են ...:

17. Ա) 

միանալ → միացում 	բացել → 
հաղորդել → 	զարգանալ → 
նկարագարողել → 	պատկերացնել → 
կախել → 	թունավորել → 



Մեր վերջին (հաղորդել) հետո մենք շատ նամակներ ենք ստացել.




Մեր վերջին *հաղորդումից* հետո մենք շատ նամակներ ենք ստացել.

Մեր վերջին (հաղորդել) հետո մենք շատ նամակներ ենք ստացել, որոնցում Դուք խնդրում եք կրկնել Շառլ Ազնավուրի Հայաստանին նվիրված նոր երգը. (հաղորդել) վերջում մենք կկատարենք ձեր ցանկությունը: Ցուցահանդեսի (բացել) տեղի է ունենալու վաղը: Նա չի սիրում (կախել) մեջ լինել որևէ մեկից, նույնիսկ հարազատ հորից: Բժիշկն ասաց, որ բարեբախտաբար հիվանդության (զարգանալ) կանգ է առել, նրա կարծիքով, դա սուր (թունավորել) էր: Էջմիածնի տաճարի (նկարագարողել) կատարվել է 18-րդ դարում: Մինչև Հայաստան գնալը ես (պատկերացնել) չունեի հայկական ճարտարապետության մասին:

Բ) 

առաջարկել → առաջարկություն	եղբայր → եղբայրություն
արտահայտել → 	բարբարոս → 
ստեղծագործել → 	վարպետ → 
համբերել → 	վկա → 
բազմանալ → 	մեծ → մեծություն
շրջագայել → 	ծեր → 
փոփոխել → 	պայծառ → 



Նրա դեմքի (արտայատել) հասկացա, որ ...

→ Նրա դեմքի արտայատությունից հասկացա, որ ...

Նրա դեմքի (արտայատել) հասկացա, որ լավ լուր է ստացել:  
 Հայաստանը տեսնելուց հետո ավելի հարազատ է թվում Ս. Սարյանի (ստեղծագործել):  
 Երեխաները (համբերել) չունեն:  
 Մարզադաշտում հավաքված (բազմանալ) անհամբերությամբ սպասում էր խաղի սկզբին:  
 Այս ամառ մենք հրաշալի (շրջագայել) կատարեցինք Հունաստանում:  
 Այդ շաբաթ մեր դասարանում մի (փոփոխել) էլ կատարվեց:  
 Գրքերը այրելը (բարբարոս) է:  
 Շատ երկրներում է ճանաչված հայ արվեստագետների (վարպետ):  
 Հարևանների ու ընկերների (վկա) մեծ նշանակություն ունեցավ դատարանի որոշման համար:  
 Նա երջանիկ (ծեր) ապրեց: Սենյակի լույսի (պայծառ) խանգարում է հեռուստացույց նայել:

† 18. Շեղագիր բառերի փոխարեն օգտագործեք նույն կամ մոտ իմաստով բառեր.

*Սպիտակ* կտավի վրա ծաղկած հավերժական ծաղիկները հիացնում են զբոսաշրջիկներին:  
*Սպիտակած մազերով* մի մարդ դուռը բացեց ու ներս մտավ:  
 Աղջիկն ուզում էր մի *շատ մեծ* տորթ թխել, բայց բան *դուրս չեկավ*:

Շրջագայությունը *վերջացավ*, և զբոսաշրջիկները, տուն վերադառնալով, հրաժեշտ տվին միմյանց:  
 Տարիքոտ կինը *ես շրջվեց* և ասաց, որ *նրան* շատ է *դուր գալիս* Հայաստանը:

Ամռանը *շուտ* է լուսանում:  
 Նա արդեն տարիքն առել էր, երբ Աստված նրան մի գավակ *պարզեց*:

Մութն ընկել է, վախենում եմ, որ Դուք ճանապարհը չգտնեք, լավ կլինի, որ մեկը Ձեզ *ճանապարհի*:

1915թ. հայերի *կոտորածը* չի մոռացվում:  
 Մեկիք Շահնազարը *կարգադրեց* ՊՂԸՂ Պուղուն հիմարների ու գժերի ցուցակը կազմել:

Տերն ուղարկեց իր *ծառային* բաղնիս, որ իմանա, արդյոք ջուր կա՞ այնտեղ:


Ծեր *կախարդի* (колдунья) *ուժը* նրա մազերի մեջ էր:  
 Նկարիչը սուլթանի տված պարգևները *չպրտեց* ծովը և մաքուր ու հանգիստ խղճով վերադարձավ տուն:

† 19. Շեղագիր բառերի փոխարեն օգտագործեք հակառակ իմաստով բառեր.

– Ներեցեք, Դուք *արտասահմանցի՞* եք (иностранец): Նրա *երիտասարդությունը* վաղ սկսվեց: Չէ՞ք ասի, թե երբ է *սկսվելու* համերգը:

20. Կետերի փոխարեն օգտագործեք համապատասխան բառ աջ սյունակից.

Բաղնիս են գնում ... համար, իսկ ով ուզում է ..., մեկնում է ծովափ:	լողալ լողանալ
Եթե մարդ ... վախենա, զողություն կանի°, մարդ կսպանի°: Ձեր միջանցքը ի՞նչ փոքր է, ... տեղ էլ չկա:	կախադան կախարան
Այս ... նա ստացել է իր աշխատանքի համար: Ձգույշ, մեր ... դուռը ներկած է:	շքամուտք շքանշան
Գաղթականը միշտ էլ աշխատում է ... երկիր ընկնել, որովհետև այնտեղ կյանքի պայմանները բավարար են:	զարգացած զարմացած
Հայերը ... լավաչ են թխել, և դա է եղել նրանց հացը: Գողթան երգիչները ... հայտնի են եղել Հայաստանում և հարևան երկրներում:	հնուց ի վեր վաղուց ի վեր
Եղբայրս մեծ տղա է, բայց դեռ չի կարողանում փողկապը գեղեցիկ ...:	կախել կապել
Օդանավակայանում մի անժամոթ ... ինձ օգնեց ճամպրուկներս տանել:	սպասավոր ուղևոր
Տատիկս պատշգամբում ... է ստեղծել ու ծաղիկ է աճեցնում: Կատուն ... օգեց, կոտրեց:	ծաղկաման ծաղկանոց
Երեխաներ, ... խաղացեք, մի կովեք իրար հետ: Այս կիրակի չգնա՞նք ..., խորոված անենք:	դաշտ հաշտ
Այս ... դու քանի° տարեկան ես: Այս ... գեղեցիկ գույն ունի, բայց շուտ է խամրում:	ներկ նկար
Այն ..., որը Սարոյանին գրելու է մղում, հայկական է: Այվազովսկու սիրտն ու ... խաղաղվեցին և նա վերադարձավ աշխատելու:	հոգին ոգին

21.  Ձեր ընկերներին, բարեկամներին Հայաստանի մասին հարցեր տվեք և պատասխանեք նման հարցերի.

Հարցրեք Ձեր ընկերներին, թե ինչպես են նրանք պատկերացնում Հայաստանը՝ պայծառ, թե խամրած գույներով: Հետաքրքրվեցեք, թե կա՞րողյոք մի նկարիչ, որը Ձեր ընկերոջ աչքերով է տեսնում Հայաստանը, թե՞ ոչ մի նկարիչ դեռ չի նկարել նրա տեսած Հայաստանը: Դուք նկարու՞մ եք: Իսկ Ձեր ընկերներից որևէ մեկը նկարու՞մ է: Պատմեք նրա մասին, ինչպե՞ս է նա նկարում, յուղաներկո՞վ, ջրաներկո՞վ: Խնդրեք Ձեր ընկերոջը սար նկարել: Ինչպիսի՞ սար նկարեց նա: Իսկ Դու՞ք: Գիտե՞ք, որ երբ հայ երեխաներին առաջարկում են սար նկարել, նրանք միշտ նկարում են մի փոքր սար ծախից ու մի ավելի մեծ սար աջից, այսինքն՝ ով ինչպես կարողանում է, նկարում է Արարատը՝ Սիսն ու Մասիսը:



# Урок 23. Քաաներեքերորդ դաս

## Грамматика

Субъектное причастие.

Суффиксы -կից, -յալ.

## Стихи

Սոր ձեռքերը (Պ. Սևակ)

Սոր սիրտը (Ավ. Իսահակյան)

## Тексты

Տիրամոր պատկերի առջև (հատված) (Սկրտիչ Սարգսյան)

Բանտի օրագիրը (Լեռ Կամսար)

Ծաղրածուն (Միքայել Մանվելյան)

## Субъектное причастие

### Ենթակայական դերբայ



Субъектное причастие образуется прибавлением суффикса **-ոյ**

<i>к основе настоящего времени глаголов спряжения -ել:</i>	<i>к основе прошедшего времени глаголов спряжения -ալ:</i>
ասել - <b>ասոյ</b> խոսել - <b>խոսոյ</b> ուտել - <b>ուտոյ</b> խմել - <b>խմոյ</b> գրել - <b>գրոյ</b> տեսնել - <b>տեսնոյ</b> թողնել - <b>թողնոյ</b> փախչել - <b>փախչոյ</b>	կարդալ - կարդաց - <b>կարդացոյ</b> հանգստանալ - հանգստաց - <b>հանգստացոյ</b> խաղալ - խաղաց - <b>խաղացոյ</b> մոտենալ - մոտեց - <b>մոտեցոյ</b> գալ - եկ - <b>եկոյ</b> տալ - տվ - <b>տվոյ</b> դառնալ - դարձ - <b>դարձոյ</b> (վեր) կենալ - (վեր) կաց - <b>(վեր) կացոյ</b>

Оно имеет значение действительного причастия настоящего времени: говорящий, пьющий, читающий, отдыхающий и т. д.

Как и в русском языке, это причастие выражает также понятие способности к действию или к тому, чтобы стать объектом этого действия. Ср. Ապակին կոտրվող է: "Стекло бьющееся."

Результативное и субъектное причастия, как и прилагательные, в армянском языке не согласуются в числе и падеже с существительным: աշխատող, հոգնած մարդ. աշխատող, հոգնած մարդու հետ. աշխատող, հոգնած մարդիկ. աշխատող, հոգնած մարդկանց մասին. Но, как прилагательные, они легко субстантивируются, т.е. получают определенный артикль и, употребляясь как существительные, склоняются по типу -ի. Զրի բերածը ջուրն էլ կրանի: Ուզողին մի ամոթ, չտվողին՝ երկու:

## Неличные формы глагола

### Գերբայ



Итак, в армянском языке глагол имеет следующие неличные формы:

- причастие настоящего времени (**ներկա դերբայ**),
- совершенное причастие (**վաղակապար դերբայ**),
- причастие предстоящего действия (**ապակապար դերբայ**),
- причастие отрицания (**ծխուման դերբայ**),
- неопределенная форма, инфинитив (**անորոշ դերբայ**),
- результативное причастие (**հարակապար դերբայ**),
- субъектное причастие (**ենթակայական դերբայ**),
- причастие сопутствующего действия (**հարակցական դերբայ**)

• Причастие настоящего времени (**գրում, կարդում**), совершенное причастие (**գրել, կարդացել**), причастие предстоящего действия (**գրելու, կարդալու**), причастие отрицания (**գրի, կարդա**) участвуют в образовании времен: настоящего и прошедшего несовершенного (**գրում եմ, կարդում եմ, գրում էի, կարդում էի**), совершенного и давнопрошедшего (**գրել եմ, կարդացել եմ, գրել էի, կարդացել էի**), будущего и будущего в прошлом изъявительного наклонения (**գրելու եմ, կարդալու եմ, գրելու էի, կարդալու էի**), отрицательную форму будущего и прошедшего времен сослагательного наклонения (**չեմ գրի, չեմ կարդա, չէի գրի, չէի կարդա**).

• Неопределенная форма, результативное причастие, субъектное причастие и причастие сопутствующего действия являются самостоятельными формами.

Неопределенная форма глагола склоняется (по типу -ու) и не образует личных форм глагола. Оно в предложении бывает определением (**գրելու թուղթ**), употребляясь с различными предлогами, может быть дополнением (**ծխելու մասին**) или обстоятельством (**ուտելու համար, առանց հանգստանալու, գրումելուց հետո, գնալուց առաջ**), в творительном падеже имеет функцию деепричастия (**գնալով, մտնելով**).

Причастие сопутствующего действия употребляется для обозначения действия, совершаемого параллельно с основным: **Ժպտալիս նա նմանվում է իր հորը: Վազելիս նա ընկավ ու ոտքը ցավեցրեց:** Причастие сопутствующего действия не изменяется.

Результативное и субъектное причастия характеризуют существительное, могут быть определением или именной частью сказуемого. При помощи результативного причастия, при желании, можно образовать т. наз. результативное время: **ներկա հարակապար, անցյալի հարակապար.**

# Առաջադրանքներ և վարժություններ



1.



Վեր համեք դերբայները.



Սուրեն Սաֆարյան,  
Սայաթ-Նովա, 1963

– Սայաթ, – ասաց Աննան, – մեր սերը մեղավոր է, ես վախենում եմ:


– Մեղավոր սեր չկա, – պատասխանեց երգիչը, – սերն աստծո ստեղծածն է, Աննա: Սիրելը մեղք չէ: Հանցանք չէ գեղեցկություն պաշտելը: Ոճիր չէ սիրածին գրկելը: Համբուրելն անառակություն չէ: Սերն աստվածային է, աստծո ստեղծածը: Բայց աստվածայինը բարձր է աստծուց: Մեռած է չսիրող սիրտը: Չհամբուրող շուրթերը չեն երգի կնգովեն: Չգրկող ձեռքերը չեն ստեղծի կկործանեն: Չսիրող մարդուն մարդ մի համարիր, Աննա...

*ըստ Սկրտիչ Սարգսյանի "Տիրամոր պատկերի առջև"*

**պաշտել** – обожать  
**ոճիր** – преступление  
**գրկել** – обнимать  
**անառակություն** – разврат  
**նգովել** – проклинать

**կործանել** – разрушить,  
крушить  
**համարել** – считать (кем-то)  
**Տիրամայր** – Богоматерь

2. Ա)



Սեր, որ աստված է ստեղծել

→ Աստծո ստեղծած սերը:


Սեր, որ աստված է ստեղծել.  
Երգ, որ Սայաթ-Նովան է գրել. երգ, որ Սայաթ-Նովան երգեց. կին, որին Սայաթ-Նովան է սիրում.  
Մեղր, որ ես եմ քաշել. կաթ, որ ես եմ կթել. ծառ, որ ես եմ տնկել. տուն, որ ես եմ կառուցել:  
Անուն, որ Պավլեն է գրել. ոչխար, որ տղաներն են մորթել. եղնիկ, որ իմ բարեկամն է քանդակել. շոր, որ դու ես ձևել, ես եմ կարել:  
Նամակ, որ դու չես գրել. ճաշ, որ երեխան չկերավ. կոշիկ, որ ոչ ոք չի հագել:



Բ) Օգտագործեք ստացված բառակապակցությունները հետևյալ նախադասություններում.





Употребите полученные словосочетания в предложениях:

*Ուզու՞մ ես իմ քաշած մեղրից:* 

Ուզու՞մ ես ... մեղրից: Դու խմե՞լ ես ... կաթից: Արի ... ծառի տակ նստե՞մք, հանգստանա՞մք: Նա մեզ սպասում է ... տանը: ... ոչխարը Ռևազինն էր: Ի՞նչ գեղեցիկ է ... եղնիկը: Խեղճ աղջիկը սպասում է ... նամակին:



3. Ա) 



Աստված, որ սեր է ստեղծել

→ Սեր ստեղծող աստված


Աստված, որ սեր է ստեղծել. ձեռքեր, որ (որոնք) գրկում են. շուրթեր, որ համբուրում են. աղջիկ, որ դիմացի շենքում է ապրում. սիրտ, որ չի սիրում. երիտասարդ, որ բոլոր հարցերին կարճ ու գրագետ էր պատասխանում. ծերունիներ, որ զբոսնում էին փողոցում. մարդիկ, որ մեզ էին ուղեկցում. միսիս Դիլփլին, որ լաց էր լինում. մարդիկ, որ շատ են ծխում:



Բ) Օգտագործեք ստացված բառակապակցությունները հետևյալ նախադասություններում.



Употребите полученные словосочетания в предложениях:

*Ասում են, թե շատ ծխող մարդիկ շուտ-շուտ են հիվանդանում:* 

Ասում են, թե շատ ... մարդիկ շուտ-շուտ են հիվանդանում: Գիտնականը իբրև օգնական վերցրեց ... երիտասարդին: Տաքսու վարորդը դիմեց ... ծերունիներին, որոնք նույնպես չգիտեին Գարնանային փողոցի տեղը: Մեզ ... մարդիկ հեռվից ցույց տվեցին Մատենադարանը: Ջոն տեսավ ... միսիս Դիլփլինի և հուզվեց: Երգիչն ասում է, որ ... սիրտը մեռած է, որ միայն ... ձեռքերը կարող են ստեղծել և ... շուրթերը՝ երգել: Կարենը կատակներ էր անում ... աղջկա հետ:



4. Կարդացե՛ք, վեր հանե՛ք անորոշ դերբայները և ասացե՛ք, թե որ հոլովով են դրված.



Прочитайте, укажите неопределенную форму глагола и скажите, в каком падеже она употреблена:

Ա) Չորս բան կա, որ օգտակար է մարդու թե՛ հոգուն, թե՛ մարմնին. քիչ ուտելը, քիչ խմելը, քիչ խոսելը և քիչ քնելը:

*մեր նախնիների խրատներից*


օգտակար – полезный (օ=բ)  
մարմին – тело

նախնի – предок  
խրատ – наставление


Բ) Մի զինվոր պատերազմ էր գնում և նա երկու ոտքով կաղ էր: Եվ զինվորներից մեկը նրան ասաց. "Ու՞ր ես գնում, քեզ իսկույն կսպանեն, որովհետև փախչել չես կարող": Եվ նա ասաց. "Ես չեմ գնում պատերազմ փախչելու, այլ՝ կանգնելու, կռվելու և հաղթելու":

*Ըստ Վարդան Այգեկցու*

**զինվոր** – солдат  
**պատերազմ** – война  
**կաղ** – хромоյ  
**իսկույն** – сразу же  
**փախչել** – убежать, удирать  
**կռվել** – драться, воевать  
**հաղթել** – побеждать (ղ=խ)



Կ 5.Ա)




Նրան դուր չի գալիս այն, որ դու ծխում ես:

→ Նրան դուր չի գալիս *քո* ծխելը:

Նրան դուր չի գալիս այն, որ դու ծխում ես:  
 Այն, որ դու խմում ես գայրացնում է հորդ:  
 Ինձ անհանգստացնում է այն, որ նա դասը չի լսում:  
 Այն, որ ոչխար են մորթել, հանցանք չէ:  
 Այն, որ դու առավոտյան մարզանք ես անում, շատ օգտակար է:


Կ Բ)




(համար) Որպեսզի լավ վազես, հատուկ կոշիկներ են պետք:  
 (պատճառով) Ոտքերս ցավում են, որովհետև շատ քայլեցի:  
 (առանց) Եթե դաս չսովորես, լավ գնահատական չես ստանա:

→ Լավ վազելու համար հատուկ կոշիկներ են պետք:  
 Շատ քայլելու պատճառով ոտքերս ցավում են:  
 Առանց դաս սովորելու լավ գնահատական չես ստանա:

(համար) Որպեսզի լավ վազես, հատուկ կոշիկներ են պետք:  
 (պատճառով) Ոտքերս ցավում են, որովհետև շատ քայլեցի:  
 (համար) Այս կաղամբը գնել եմ, որպեսզի դոլմա եփեմ, ոչ թե աղցան պատրաստեմ:  
 (առանց) Եթե դաս չսովորես, լավ գնահատական չես ստանա:  
 (պատճառով) Նա մեզ հետ չեկավ, որովհետև մեքենայում տեղ չկար:  
 (նպատակով) Նա ամբողջ ամառ մաթեմատիկա պարապեց, որպեսզի համալսարան ընդունվի:  
 (շնորհիվ) Նա ամեն ինչից տեղեկություն ունի, որովհետև շատ է կարդում:  
 (առանց) Կարտոֆիլը չեն մաքրում, խորովում են:  
 (փոխարեն) Քնից առաջ ոչ թե հեռուստացույց նայիր, այլ մի քիչ զբոսնիր:  
 (մասին) Դու բոլորովին չես մտածում որ պիտի քննությանը պատրաստվես:




Ես չեմ լսել, թե ինչպես է Ծովինարը նվագում: Լասրեդիհնի հարևանը չի տեսել, թե ինչպես է իր կաթսան ծնում, բայց հավատում է, որ կաթսան ծնի:




Ես Ծովինարի նվագելը չեմ լսել: Լասրեդիհնի հարևանը չի տեսել իր կաթսայի ծնելը, բայց հավատում է իր կաթսայի ծնելուն:

Ես չեմ լսել, թե ինչպես է Ծովինարը նվագում: Լասրեդիհնի հարևանը չի տեսել, թե ինչպես է իր կաթսան ծնում, բայց հավատում է, որ կաթսան ծնի: Ես չեմ հիշում, թե նա ինչպես է անգլերեն խոսում: Դու տեսե՞լ ես, թե նա ինչպես է պարում: Պղը Պուղին չի նայում, թե ինչպես է իր հարևանը փողը դնում բարձի տակ: Հարևանն էլ գիտի, որ Պղը Պուղին չի տեսել, թե ինչպես է ինքը փողը դնում: Մենք չենք հավատում, որ նա մեզ նամակ գրի:




Շորը նախ կլվանան, հետո կարդուկեն:




Շորը լվանալուց հետո կարդուկեն: Կամ՝ Շորը արդուկելուց առաջ կլվանան:

Շորը նախ կլվանան, հետո կարդուկեն: Նախ կոշիկները (ոտքերը) կսրբեն, հետո մերս կմտնեն: Նախ տեղից վեր կկենան, հետո մեծերին կբարևեն: Նախ մարզանք կանեն, հետո սառը ցնցուղ (պա) կընդունեն:



Քույրս սիրում է տունը հավաքել ու երգել:



Քույրս սիրում է տունը հավաքելով երգել: Կամ՝ Քույրս սիրում է երգելով տունը հավաքել:

Քույրս սիրում է տունը հավաքել ու երգել: Նա տեղից վեր կացավ ու հարգանքով բարևեց աղջկա մորը: Կարենը խորամանկ ժպտաց ու ասաց, որ հայրիկն ու մայրիկը տանը չեն: Այրին ուզում էր, որ ծնեռվա բաժին կաթը մի քիչ ավելանա ու կաթին ջուր էր խառնում: Վարպետ Մոմիկը նայում էր լուսնին ու հիշում էր Լուսիկին: Այդ օրը Ամենահրաշալի աղջիկը ինձ առաջին անգամ ժպտաց ու հրավիրեց իրենց տուն:



6.Ա) Գտեք յուրաքանչյուր նախադասության երկու կեսերը:  
Найдите две половинки каждого предложения:



Ձուր խմելիս հավերը գլուխները բարձրացնում են դեպի երկինք:

✓ Ձուր խմելիս	Մոխրոտիկը կորցրեց իր կոշիկը:
Վագելիս	կորցրի երեք կոճակ:
Տրամվայ մատելիս	մատր կտրեց:
Աստիճաններով իջնելիս	✓ հավերը գլուխները բարձրացնում են դեպի երկինք:
Սոխ մաքրելիս	նա ընկավ:



Բ) Կարդացեք, ուշադրություն դարձրեք հարակցական դերբային.

Прочитайте, обратите внимание на причастие сопутствующего действия:



Չորս տեղ են փորձում մարդուն. սեղան նստելիս, առևտուր անելիս, գինի խմելիս և ճանապարհ գնալիս:

*մեր նախնիների խրատներից*



և ուշադրություն դարձրեք դերբայներին:

Обратите внимание на причастия.

### Մոր ձեռքերը

Այս ձեռքերը՝ մո՛ր ձեռքերը,  
 Հինավուրց ու մո՛ր ձեռքերը...  
 Ինչե՛ր ասես, որ չեն արել այս ձեռքերը...  
 Պսակվելիս ո՛նց են պարել այս ձեռքերը՝  
 Ի՛նչ նազանքով,  
 Երազանքով:  
 Ինչե՛ր ասես, որ չեն արել այս ձեռքերը...  
 Լույսը մինչև լույս չեն մարել այս ձեռքերը,  
 Առաջնեկն է երբ որ ծնվել  
 Նրա արդար կաթով սնվել:  
 Ինչե՛ր ասես, որ չեն արել այս ձեռքերը...  
 Ձրկանք կրել, հոգս են տարել այս ձեռքերը  
 Ծով լռությա՛մբ,  
 Համբերությա՛մբ:  
 Ինչե՛ր ասես, որ չեն արել այս ձեռքերը...  
 Երկինք պարզված սյուն են դառել այս ձեռքերը,  
 Որ չփլվի իր տան սյունը՝  
 Որդին կովից դառնա տունը:  
 Ինչե՛ր ասես, որ չեն արել այս ձեռքերը՝  
 Մինչև տատի ձեռք են դառել այս ձեռքերը,  
 Այս ձեռքերը՝ ուժը հատած,  
 Բայց թռռան հետ մոր ուժ գտած...  
 Քար են շրջել, սար են շարժել այս ձեռքերը...  
 Ինչե՛ր, ինչե՛ր, ինչե՛ր չարժեն այս ձեռքերը՝  
 Նու՛րբ ձեռքերը,  
 Սու՛րբ ձեռքերը:  
 ...Եկեք այսօր մենք համբուրենք որդիաբար  
 Մեզ աշխարհում ծնած-սնած,  
 Մեզ աշխարհում շահած-պահած,  
 Մեզնից երբեք չկշտացած,  
 Փոշի սրբող-լվացք անող,  
 Անվերջ դատող-անվերջ բանող  
 Ա՛յս ձեռքերը,  
 Թող որ ճաքած ու կոշտացած,  
 Բայց մեզ համար մետաքսի պես  
 Խա՛ս ձեռքերը...

**Պարույր Սևակ**

## Բառեր

հինավուրց – древний

մարել – гасить

առաջնեկ – первенец (զ=չ)

սնվել – питаться

զրկանք – лишение

հոգս – забота (զ=ք)

(ծով) լռություն –

(бесконечное, как море)

молчание

սյուն – столб

փլվել – рухнуть

կռիվ – зд. война

հարել – иссякнуть

քար շրջել – ворочать камни

սար շարժել – сделать

невозможное, досл. двигать  
горы

շահել-պահել – (разг.) холить

կշտանալ – насытиться

անվերջ – без конца (զ=չ)

դարել, բանել – трудиться

ճարել – расстрекаться

կոշտանալ – огрубеть

խաւ – шелковый

## Руки матери

Руки, материнские руки,

Эти древние и юные руки!..

Чего они только не делали,  
руки!

На свадьбе твоей взлетали, как лебеди,  
руки!

Со страстью, с тоской  
Изгибались дугой.

Все выносили они,  
эти руки!

Света всю ночь не гасили материнские руки,  
Чтоб утешать крикуна-малыша.

Все одолеть были в силе  
руки!

К небу столбами взносились  
скорбные руки.

Чтоб сын не пропал  
И столб дома не пал...

Сколько горя и мук  
приняли руки,

Пока не взобрался внук  
на бабкины руки,

И, внукам под стать,  
Молодели опять...

Ворочали камни, копали арыки в округе...  
Всех в мире наград достойны

родимые руки!..  
Давайте поцелуем по-сыновьи

Руки, обнимающие нас, –  
Что холят нас,

И любят нас, и снова  
Стряхивают пыль, сметают грязь..

Все в морщинах,  
В варежках дешевых,

Трудятся и стряпают чуть свет...  
Этих рук, шершавых и тяжелых,

Мягче и нежней на свете нет!

(Перевод А. Коренева)





### Մոր սիրտը

(հայկական ավանդավեպ)

Կա հինավուրց մի գրույց,  
Թե մի տղա,  
Միամորիկ,  
Սիրում էր մի աղջկա:

Աղջիկն ասավ<sup>1</sup> – "Ինձ բնավ  
Դու չես սիրում,  
Թե չէ գնա',  
Գնա՛ մորդդ սիրտը բեր":

Տղան մուրը, գլխիկոր  
Քայլ առավ<sup>2</sup>,  
Լացեց<sup>3</sup>, լացեց,  
Աղջկա մոտ ետ դառավ:

Երբ նա տեսավ, զայրացավ,  
– Է՛լ չերևես<sup>4</sup>  
Շենքիս, ասավ,  
Մինչև սիրտը չբերես:

Տղան գնաց և որսաց  
Սարի այծյամ,  
Սիրտը հանեց,  
Բերեց տվեց աղջկան:

Երբ նա տեսավ, զայրացավ.  
– Կորի՛ր աչքես<sup>5</sup>,  
Թե հարազատ  
Մորդ սիրտը չբերես:

Տղան գնաց՝ մորն սպանեց,  
Երբ վազ կըտար<sup>6</sup>  
Սիրտը՝ ձեռքին,  
Ուտըր սահեց, ընկավ վար:

Եվ սիրտը մոր ասավ տխուր.  
Լացակումած, –  
"Վա՛յ, խեղճ տղաս,  
Ոչ մի տեղդ չըցավա՞ց..."<sup>7</sup>

### Ավերդիք Իսահակյան

<sup>1</sup> ասավ – ասաց  
<sup>2</sup> քայլ առավ – քայլեց  
<sup>3</sup> լացեց – լաց եղավ  
<sup>4</sup> էլ չերևես – էլ չերևաս

<sup>5</sup> աչքես – աչքիցս  
<sup>6</sup> երբ վազ կտար – երբ վազում էր  
<sup>7</sup> չցավա՞ց – չցավե՞ց

### Բառեր

**ավանդավեպ** – сказание  
**գրույց** – беседа  
**միամորիկ** – единственный у матери  
**բնավ** – вовсе  
**մուրը** – растерянный  
**գլխիկոր** – с поникшей головой  
**շենք** – порог

**որսավ** – изловить, охотиться  
**այծյամ** – серна, козуля  
**հանել** – вынуть  
**կորել, կորչել** – пропасть, исчезнуть  
**սահել** – скользить  
**լացակումած** – готовый заплакать  
**խեղճ** – бедный (ղ=խ)



1935թ. նոյեմբերի 26. – Այսօր ժամը ութին ձերբակալվեցի:

Ու ահա փողոց դուրս գալով քայլում եմ երկու չեկիստների միջև: Հո չե՞մ կարող ասել "գնում եմ": Ոչ, եղբայր, "գնալ" չկա այլևս ինձ համար. դա ազատ մարդու հասկացություն է: Իսկ ե՞ս, "տարվում եմ", միայն "տարվում"...

Քիչ անց բանտի գրասենյակում եմք: Բերողներս ինձ հանձնում են որպես բանտի ինվենտարը, իբրև անշունչ առարկա: Ավելի քան անշունչ առարկա. քանի որ առարկան իրավունք ունի կորչելու, իսկ ես, որ բանական մարդ եմ, պիտի չկորչելու համար ինքս ինձ հսկեմ...

27 նոյ. – Այսօր արդեն բանտ եմ նստած: Բայց ո՛չ, ի՞նչ եմ ասում, – բանտ եմ կանգնած: Բանտարկյալը երբ չգիտի, թե ի՞նչ է իր մեղքը՝ նստել չի կարող: Նա կանգնել իսկ անկարող է: Նա քայլում է, նա վազում է բանտի մի անկյունից մյուսը:

Երբ քայլում ու ծայնում եմ "ի՞նչ է հանցանքս", նայում եմ շուրջս՝ ընկերներիս, բարի ու սիրող ընկերներիս՝ "հանգստացիր, ասում են, առանց հանցանքի չես մնա":

Ու Մակարը, բանտակիցներիցս ամենասիրվածը վերջապես ասում է.

– Հանգստացիր, սիրելիս, եթե հանցանք չունեցար, կարող ես իմ մեղադրանքից օգտվել: Ես երկու հոդվածով եմ մեղադրվում, մեկը՝ քեզ, մյուսը՝ ինձ:

28. նոյ. – Այսօր ես համեմատաբար հանգիստ եմ: Հանգիստ եմ ոչ այն պատճառով, որ հանցանք ունեմ, այլ այն պատճառով, որ հուզվելու հերթը Գուրգենինն է:

Մեր խուցը այնքան մեղ է, որ տեխնիկապես մեկ մարդու հուզվելու հարմարություն կարող է տալ: Ամեն օր մեկն է հուզվում, մնացյալ ութ հոգին նստած մխիթարում են այդ մարդուն:

Գուրգենինն քննիչը "քառասուն հարց է տվել" ու վերջինս միշտ "ոչ" է պատասխանել:

– Մի՞թե քննիչն անկարող էր մի հարց էլ տալ, որին "այո" պատասխանեի: Հա՞: Մի՞թե չէր կարելի: Ռ՞վ կհավատա, որ իրոք չգիտեմ: Ամաչում եմ այսքան տգիտության համար:

– Ինչու՞ ես ամաչում. հույն փիլիսոփա Սոկրատեսը քեզանից ավելի "տգետ" էր և բոլորովին չամաչեց. ընդհակառակը, պարծեցավ իր տգիտությամբ, – մխիթարեց Գևորգը:

– Այո, բայց այն ժամանակ տգիտությունը քաջալերվում էր, չէր պատժվում 67-րդ հոդվածով:

1 դեկտ. – Ազատ մարդը ողջ ընկույզ է, բանտարկյալը՝ ընկույզի միջուկ: Ազատը դուրսը նախագահ է, դատավոր, գրող, փաստաբան, հռետոր, ըմբիշ: Բայց նույն ազատը բանտում միայն մարդ է:

Ի՞նչ քաղցր է ասրել ըստ էության մարդկանց մեջ: Նրանք անկեղծ են, ինչպես լինում է մարդը իր ծննդյան և մահվան ժամանակ միայն, նրանք հեռագիր վեպեր են, առանց ձանձրալի առաջաբանի ու վերջաբանի:

2 դեկտ. – Կյանքումս ինչ պաշտոնի որ եղել եմ՝ տերերիս գոհ չլինելու պատճառով միշտ "ազատված" եմ եղել: Իսկ այստեղ զինված պահակ են դրել վրաս չփախչելու համար:

Այսքան "անփոխարինելի" կալանավոր լինելու չգիտեի դեռ: Բանի պետք լինելու գիտակցությունը շոյում է ինքնասիրությունս: Սակայն չպիտի ինքս ինձ կորցնեմ գլխապտույտ հաջողությունից. հանկարծ անզգույշ մի քայլ կամ փոքրիկ մի հանցանք կարող է պատճառ դառնալ, որ ես բանտից ազատվեմ ...


Մի քիչ ուշ եմ պառկում: Առավոտյան շատ եմ քնել և վախենում եմ տանջանքիս պլանը թերակատարել:  
(շարունակելի)

## Բառեր

**բանար** – тюрьма  
**բանար նստել** – садиться в тюрьму  
**ձերբակալվել** – быть задержанным, арестованным  
**քայլել** – шагать  
**հո՛** – ведь, же  
**չեկիստ** – чекист (от ЧК – чрезвычайная комиссия)  
**այլևս** – впредь, больше не  
**հասկացություն** – понятие  
**փարվել** – вестись  
**ինվենտար** – инвентарь, тж.  
**գույք**  
**անշունչ** – неодушевленный  
**առարկա** – предмет  
**իրավունք** – право  
**կորչել** – потеряться  
**բանական** – разумный  
**հսկել** – надзирать  
**բանարարկյալ** – арестованный  
**մեղք** – вина (ղ=խ)  
**հանցանք** – преступление  
**իսկ** – зд. даже  
**անկարող** – неспособен  
**բանտակից** – сокамерник  
**ձայնել** – голосить, вопить  
**մեղադրանք** – обвинение  
**օգտվել** – пользоваться (գ=բ)  
**հոդված** – статья  
**համեմատաբար** – сравнительно  
**հերթ** – очередь  
**խուց** – камера  
**տեխնիկապես** – технически  
**հարմարություն** – удобство  
**մնացյալ** – остальной  
**ուր հոգի, երկու հոգի** – восемь человек, двое (գ=բ)  
**մխիթարել** – утешать  
**իրոք** – действительно

**տգիտություն** – невежество  
**փիլիսոփա** – философ  
**տգետ** – невежественный  
**ընդհակառակը** – наоборот (ղ=թ)  
**պարծենալ** – хвалиться, гордиться  
**քաջալերվել** – поощряться, одобряться, быть одобренным  
**պատժվել** – наказываться, быть наказанным  
**ողջ** – целый (զ=չ)  
**միջուկ** – ядро (զ=չ)  
**հռետոր** – оратор  
**ըմբիշ** – борец (спортсмен)  
**ըստ էության** – по существу  
**ձանձրալի** – скучный  
**առաջաբան** – предисловие (զ=չ)  
**վերջաբան** – послесловие (զ=չ)  
**պաշտոն** – должность  
**ազատվել** – освободиться, увольняться  
**զինված** – вооруженный  
**փախչել** – убежать  
**կալանավոր** – арестант  
**գիտակցություն** – сознание  
**շոյել** – ласкать, зд. тешить  
**ինքնասիրություն** – самолюбие  
**կորցնել** – потерять  
**ինքն իրեն կորցնել** – потерять себя  
**գլխապտույտ հաջողություն** – головокружительный успех  
**թերակատարել** – недовыполнить  
**քայլ** – шаг

# Մեկնաբանություններ, առաջադրանքներ, վարժություններ

7. Ա) 

Բանտակիցը այն բանտարկյալն է, որը մի ուրիշի հետ նույն խցում (կամ բանտում) է բանտարկված:



Բ) Գտե՛ք հայերեն բառի թարգմանությունը.

Найдите перевод армянских слов:



✓ աշխատակից	✓ коллега
բախտակից	разделяющий общую судьбу
գիտակից	сверстник
կողակից	сознательный
հայրենակից	соотечественник
հասակակից	спутник
մասնակից	супруг
մեղսակից	соучастник
ուղեկից	участник


8. Ա) 

էլ=նույնպես                      էլ=և                      էլ=այլևս

է՛չ չերևաս աչքիս. "գնալ" *այլևս* չկա ինձ համար



Բ) 



Դու նրան հավատու՞մ ես:

→ Ոչ, ես այլևս (էլ) նրան չեմ հավատում:

Դու նրան հավատու՞մ ես: Նա եկա՞վ քեզ մոտ: Դու նրանից նամակ ստանու՞մ ես: Վաղը քննություն պիտի հանձնենք. լսիր, մի քիչ էլ կարդամ դասագիրքը. դու այս դասը հասկանու՞մ ես: Դուք նույն փողոցու՞մ եք ապրում: Ձեր փողոցը դեռ կոչվու՞մ է Լենինի պողոտա:

9. Ա) 

հերթով – по очереди  
առանց հերթի – без очереди  
հերթից դուրս – вне очереди  
ու՞մ հերթն է – чья очередь?  
հերթ պահել (բռնել) – занимать очередь



– Մի անհանգստացեք, բոլորդ էլ **հերթով** տոմս կգնեք հիմա: **Ու՞մ հերթն է:**

– Հիմա **իմ հերթն է:** Խնդրում եմ, մի փորձեք **առանց հերթի** անցնել, օրիորդ, ես **հերթ էի պահել**, ում ուզում եք հարցրեք: Թեև ես կարող էի **հերթից դուրս** տոմս վերցնել, բայց իսկապես հիմա **իմ հերթն է:**



հերթապահ – дежурный  
հերթապահություն – дежурство  
հերթապահել – дежурить  
հերթափոխ – смена



– Ո՞վ է այսօր **հերթապահը**: Աշխե՞մն է **հերթապահելու** այսօր: Նրա **հերթապահության** ժամանակ դասարանը միշտ մաքուր է լինում, մյուս **հերթափոխի** ուսուցիչներն ու աշակերտներն էլ միշտ նշում են, որ ամեն ինչ կարգին է:

բ) Երկխոսություն կազմեք՝



-Այո, ես այն օրհորդից հետո էի:

-Ո՞նց թե այն օրհորդից հետո էիք:  
Օրհորդը ինձնից առաջ հերթից դուրս տոնա վերցրեց,  
որովհետև նա փոքր երեխայի հետ էր:  
Ու հիմա իմ հերթն է:

-Հիմա իմ հերթն է:

-Ուրեմն ես ունի՞ց հետո եմ:

-Սի՞ր թե դուք հերթ էիք պահել:

-Հօգտեմ, հարցո՞ւք,  
թե ո՞վ է վերջինը:



գ) Լրացրեք բացերը. Заполните пропуски:



- Երեխաներ, երեկ մյուս ... ուսուցչուհին ասաց, որ մենք դասատենյակը կեղտոտ էինք թողել: Ո՞վ էր երեկ ...: Այո, երեկ Աշխենը պիտի ..., բայց նա բացակա էր: Աշխենի ... ժամանակ ամեն ինչ կարգին է լինում սովորաբար: Անփոխարինելի է մեր Աշխենը:

10.Ա)

հոգի – душа  
հոգու հետ խաղալ – подшучивать  
հոգին դուրս գալ – замучиться  
հոգին հանել – замучить  
հոգին ուտել – задержать  
числительное (местоим. քանի՞) + հոգի употр. для обозначения количества людей:  
– Քանի՞ հոգի են ինձ սպասում:  
– Երեք հոգի:



Այսօր այնքան լվացք արեցի, **հոգիս դուրս եկավ**: Դու քո հարցերով **հոգիս հանում ես**, ավար ի՞նչ ես ուզում ինձնից: Դե շուտ տուր նամակս, **հոգուս հետ մի խաղա**: Զարս ու սկեսուր ամբողջ օրը իրար հետ կռիվ են անում, **իրար հոգի են ուտում**, բայց մեկը մյուսի մասին ասում են **հոգիս կերավ**: Օրը ցերեկով, **հիևա թե վեց հոգով**, վեր կացանք մի օր որսի գնացինք: **Քանի՞ հոգի** ես կանչել քո ծննդյան տոնին:



բ) Լրացրեք բացերը. Заполните пропуски:



- Ի՞նչ շատ բան եք պատրաստել: ...՞ ... եք սպասում:  
- Միայն տիկին Արմինեին ու իր աղջկան: Նվարդը նրանց այնպես է սպասում: Երեկ մի քանի տեսակ խմորեղեն է թխել, ...: Եվ իր հարցերով, թե ե՞րբ են գալու, ե՞րբ են գալու ...: Արսենն էլ նրա ..., ասում է թե չեն գալու, մի սպասիր: Նվարդն ու Արսենը ոնց որ ոչ թե քույր ու եղբայր լինեն, այլ շունն ու կատուն, ամբողջ ժամանակ իրար ...:



11. Գտեք ճիշտ սահմանումը.

Найдите правильное определение:



հպարտանալ պարծեմալ	... նշանակում է գլուխ գոլվել, իսկ ...՝ հպարտ լինել:
գնալ բայլել	... նշանակում է ոտքը փոխել՝ մեկ, երկու, մեկ, երկու, իսկ ...՝ դիմել մի որոշակի ուղղությանը:
բանկակից բանտարկյալ	... նշանակում է կալանավոր, իսկ ...՝ կալանավոր, որ նույն բանտում է նստած:
օգտագործել օգտվել	... նշանակում է գործածել, իսկ ...՝ օգուտ ունենալ:
սրտապնդվել քաջալերվել	... նշանակում է չհուսահատվել, իսկ ...՝ գովասանքի արժանանալ:
առաջաբան վերջաբան	... գրվում է գրքի սկզբում, իսկ ...ով գիրքն ավարտվում է:
միջև միջուկ	... նշանակում է մի բանի միջին մասը, ասում են ընկույզի ..., ատոմի ..., իսկ ...՝ կապ է, ասում են դաշնամուրը դրված է երկու պատուհանների ... :
առողջ ողջ	... նշանակում է թե՛ ամբողջ, թե՛ կենդանի, իսկ ...՝ ոչ հիվանդ:
հոռտոր փիլիսոփա	... նշանակում է ճառ ասող, իսկ ...՝ մտածող, հմաստասեր:
գտնել փնտրել	... նշանակում է ուզենալ վերադարձնել այն, ինչ կորել է, իսկ ...՝ վերադարձնել կորածը:
պառկել քնել	... նշանակում է հորիզոնական դիրք ընդունել, իսկ ...՝ Մորփեոսին հյուր գնալ:
հասարակ պարզ	... նշանակում է հասկանալի, ոչ բարդ, իսկ ...՝ սովորական:



12. Աջ սյունակից ընտրեք համապատասխան բառ.

Выберите подходящее слово из правого столбца:



Քննության ժամանակ դասախոսը ... է, որ ուսանողները լուրջ աշխատեն:	հանձնել հսկել
– Ընկերդ միշտ նվնդում է՝ ասում է՝ ... չունեն մեքենա վարելու:	իրոք իրավունք իրավացի
– Ոչ, դու նրան մի մեղադրիր, դու ... չես, ես գիտեմ, նա ... հիվանդ է:	
– Քեզ դու՛ր է գալիս իմ մագերի գույնը: – Վատ չէ, բայց գիտե՛ս, ... չէ:	բանական բնական

13. Կետերի փոխարեն գրեք **ըստ էության** կամ **ըստ երևույթի** միջանկյալ բառերը և տեսեք, թե ինչպես է փոխվում ասվածի հմաստը.

Вместо точек поставьте вводные слова **ըստ էության** (по сути) или **ըստ երևույթի** (по-видимому) и посмотрите, как изменится смысл сказанного:

Մենք իրար, ..., երբեք չենք հասկացել: Նա, ..., միշտ էլ իր մանկության տարիների ընկերուհուն է սիրել: Նա ոչ մի համալսարան էլ չի ավարտել, բայց, ..., կրթված երիտասարդ է: ..., սա նրա լավագույն բանաստեղծությունն է:



14. Ճիշտ է, թե՞ սխալ.

	ճիշտ է	սխալ է
1. Լեռ Կամսարին ձերբալակեցին նոյեմբերի 26-ին:	✓	
2. Նույն օրը նա երկու չեկիստների հետ քայլում էր փողոցով, նա նրանց տանում էր բանտ:		
3. Չեկիստները նրան համձնում են բերողներին, որպես անշունչ առարկա:		
4. Լեռ Կամսարն անհանգստանում է, որովհետև առանց հանցանքի բանտ է նստել:		
5. Լեռ Կամսարի խցում ինը բանտարկյալ կար:		
6. Մակարին երկու մեղադրանք են ներկայացրել, և նա պատրաստ է իր մեղադրանքները կիսել Լեռ Կամսարի հետ:		
7. Հաջորդ օրը Մակարի բարության շնորհիվ Լեռ Կամսարը ավելի հանգիստ է:		
8. Գուրգենը չգիտեր քննիչի տված քառասուն հարցերից ոչ մեկի պատասխանը:		
9. Սոկրատեսի ժամանակ տգիտությունը չէր պատժվում, այլ քաջալերվում էր, իսկ 20-րդ դարում տգիտության համար բանտ են նստում:		
10. Բանտարկյալները մխիթարում են Գուրգենին, որը հուզվում ու իրոք ամաչում էր իր տգիտության ու անկրթության համար:		



**Ծաղրածուն**

Բժշկի ընդունարանում նստած էին ութ հոգի: Բոլորն էլ անհամբեր իրենց հերթին էին սպասում: Բոլորն էլ աշխատում էին մի բանով զբաղվել, որ ժամանակն աննկատելի անցնի: Մեկը ինչ-որ շաբաթաթերթի նկարներն էր նայում, մի ուրիշը՝ պատի նկարները: Երկու հոգի էլ նստած միմյանց մոտ իրենց հիվանդությունից էին խոսում: Ամեն մեկն աշխատում էր մի բանով զբաղվել:

Եթե բոլորն էլ այդպես զբաղված չլինեին իրենցով, երևի բոլորի ուշադրությունը կկենտրոնանար պատի տակ նստած պարոնի վրա, որ ներս մտավ, առանց ոչ ոքի նայելու մոտեցավ անկյունում դրված աթոռին, մոտի սեղանի վրայից մի գիրք վերցրեց, նստեց, բացեց գիրքը և մնաց անշարժ:

Դա մոտ քառասուն տարեկան մարդ էր կամ գուցե ավելի երիտասարդ, բայց ժամանակից ավելի վաղ ծերացած: Նա շարունակ նայում էր ձեռքին բռնած գրքին, բայց չէր կարդում, որովհետև քառորդ ժամից ավելի էր, որ նա նույն էջին, նույն տողին և գուցե նույն տառին էր նայում:

Երբեմն նա նյարդային կերպով շարժում էր իր ձեռքը, կարծես ձանձրացնող ճանձեր քշելու համար: Աչքերի մեջ ձանձրույթ, թե հոգնածություն կար, շրթունքների աջ անկյունը միշտ վեր քաշած, նա երբեմն ինչ-որ անորոշ ձայներ էր հանում:

Երբ հերթը հասավ նրան, նա արագ, նյարդային կերպով բարձրացավ, բայց չշտապեց, մինչև բժիշկը երկրորդ անգամ չկրկնեց "հետևյալը":

\*\*\*

Բժիշկը դիմեց նրան սովորական հարցով, թե ինչո՞վ կարող է օգտակար լինել: Նա մի վայրկյան լուռ էր, կարծես ուզում էր ծայր հանել, մի բան ասել, բայց կարծես մոռացել էր խոսելը. նա մի անորոշ ծայր հանեց, որն ավելի խոզի, քան մարդու ծայրի էր նման:

Բժիշկը հրավիրեց նրան նստել, ինքն էլ նստեց և լուռ սպասում էր:

– Չգիտեմ... չգիտեմ ինչ ասեմ, – նյարդային կերպով մի քանի անգամ կրկնեց նա և էլի լռեց: – Ես հիվանդ չեմ, – շարունակեց նա, – ոչ մի տեղս չի ցավում...

– Երևի լավ չեք քնում, – ընդհատեց բժիշկը:

– Չեզ ո՞վ ասաց, – վախեցած հարցրեց նա:

– Այդ դժվար չէ գուշակել: Պատմեցեք մանրամասն, ես Չեզ լսում եմ:

– Ես առողջ եմ, բոլորովին առողջ, լավ ուտում եմ, խմում, բայց չեմ քնում ... մի անսից ավելի է, որ ես չեմ քնել... հասկանո՞ւմ եք՝ բոլորովին ... մի անսից ավելի է, որ ես պառկում եմ և վեր կենում առանց քնելու: Ինձ թվում է, թե քունս տանում է, պառկում եմ, և որքան շատ եմ աշխատում քնել, այնքան ավելի հեռու է փախչում քունն աչքերիցս, և ամբողջ գիշերները լուսացնում եմ բաց աչքերով: Երբեմն ինձ հաջողվում է, և թվում է, որ ահա կքնեմ, վերջապես կքնեմ ... Սիրտս սկսում է ավելի կանոնավոր բաբախել, ուղեղս դադարում է մի մտքից մյուսը ցատկել, ուրախությունից քիչ է մնում ճշամ: Այդ թույններից իսկապես չգիտեմ, քնա՞ծ եմ, թե՞ արթուն ... Դազիվ մի քանի թույն մնում եմ այդ դրության մեջ և անհամբեր սպասում եմ, որ ահա կընկնեմ ինքնամոռացության մեջ, երբ գալիս է նա ... նա ...

(շարունակելի)

## Բառեր

**Ծաղրածու** – клоун

**ընդունարան** – приемная (դ=թ)

**անհամբեր** – нетерпеливо

(բ=փ)

**աննկատելի** – незаметно

**շաբաթաթերթ** – еженедельная

газета (բ=փ)

**միմյանց մոտ** – друг у друга

**կենտրոնանալ** –

сосредоточиться

**անշարժ** – неподвижно

**վաղ** – рано

**բռնել** – держать

**քառորդ** – четверть (դ=թ)

**էջ** – страница

**տող** – строка

**տառ** – буква

**նյարդային կերպով** – нервно,

нервным образом (դ=թ)

**շարժել** – двигать, шевелить

**ձանձրացնել** – надоесть

**ճանճ** – муха

**քշել** – гнать

**ձանձրույթ** – тоска, скука

**հոգնածություն** – усталость

(գ=ք)

**շրթունքներ** – губы

**վեր քաշած** – вздернутый

**շտապել** – торопиться

**հետևյալ** – следующий

**ցավել** – болеть

**ընդհատել** – перебить,

прервать (դ=թ)

**գուշակել** – угадать, отгадать

**մանրամասն** – подробно

**թվալ** – казаться

**հաջողվել** – удаваться

**կանոնավոր** – регулярно

**բաբախել** – стучать

**ուղեղ** – мозг

**դադարել** – перестать (второе

դ=թ)

**ցատկել** – прыгать, скакать

**ճշալ** – воскликнуть

**արթուն** – бодрствующий

**ինքնամոռացություն** –

самозабвение



15.Ս)



Приставка **ան-** присоединяется к основам прилагательного, существительного или глагола, образуя прилагательные и наречия отрицательного значения.

Найдите в тексте следующие слова: **нетерпеливо, незаметно, неподвижно, незначительно, неопределенно.**



Բ) Գտն՛ք ռուսերեն բառի բարձրանությունը.

Найдите перевод русских слов:



✓ бездетный	անասելի
безнадежный, безнадежно	անավարտ
безответный, безответно	անբախտ
бесконечный, бесконечно	անդադար
беспрестанный, беспрестанно	✓ անզավակ
бесстрашный, бесстрашно	անզգույշ
невнимательный, невнимательно	անընդհատ
необычный, необычно	անկանոն
неосторожный, неосторожно	անկրկնելի
неповторимый	անհաղթ
непрерывный, непрерывно	անհաջող
несказанный	անհասկանալի
неудачный, неудачно	անհույս
беззвучный, беззвучно	անձայն
безнаказанный, безнаказанно	անպայման
безусловный, безусловно	անպատասխան
бесполезный, бесполезно	անպատիժ
бессонный	անսովոր
неталантливый	անսպասելի
незавершенный	անվախ
неожиданный, неожиданно	անվերջ
непобедимый	անվստահ
непонятный, непонятно	անտաղանդ
нерегулярный, нерегулярно	անուշադիր
несчастный	անբուն
неуверенный, неуверенно	անօգուտ

16.Ս)

Суффикс **-յալ** в прилагательных **մնացյալ, հետևյալ, հրաշիրյալ** – непродуктивный суффикс, восходящий к глагольному окончанию **-ելալ**.



Употребительны следующие прилагательные и сочетания с ними:

**անցյալ** – прошлый, прошедший

**մեռյալ** (ժամ) – мертвый (час)

**Սառուցյալ** օվկիանոս – Ледовитый океан



**հանգուցյալ** – покойник

**Միացյալ** Նահանգներ – Соединенные Штаты

**Միացյալ** ազգերի կազմակերպություն – Организация Объединенных Наций.

по отношению к моменту в прошлом			по отношению к настоящему моменту		
←	↓	→	←	↓	→
դրանից առաջ	<b>այդ (այն) ժամանակ</b>	դրանից հետո	քիչ առաջ, հենց նոր	<b>հիմա</b>	քիչ հետո
←	✓	→	←	✓	→
Նախորդ օրը (շաբաթ, ամիս, տարի)	<b>այդ (այն) օրը (շաբաթ, ամիս, տարի)</b>	հաջորդ կամ հետևյալ օրը (շաբաթ, ամիս, տարի)	երեկ, անցյալ շաբաթ (ամիս, տարի)	<b>այսօր, այս շաբաթ (ամիս, տարի)</b>	վաղը, մյուս կամ հաջորդ շաբաթ (ամիս, տարի)
←	↑	→	←	↑	→

անցյալ օրը – в тот день, давеча



**Անցյալ տարի** ես ընդունվեցի համալսարան, **հիմա** առաջին կուրսում եմ:

**Նախորդ տարի** ես ընդունվել էի համալսարան, **այդ ժամանակ** առաջին կուրսում էի:

Անցյալ տարի ես ընդունվեցի համալսարան, հիմա առաջին կուրսում եմ: Անցյալ շաբաթ գնացինք Գեղարդ, այս շաբաթ կայցելենք Էջմիածին, մյուս շաբաթ գնալու ենք Սևան: Այսօր նա զանգեց ու ներողություն խնդրեց, որ երեկ չկարողացավ գալ և խոստացավ, որ վաղը կգա:

17.Ա)

զբաղվել – заниматься чем-л., напр. մի բանով զբաղվել

զբաղմունք – занятие (любое)

զբաղված (լինել) – быть занятым

**внимание!**

պարապել – заниматься с репетитором, репетировать, тренироваться, напр.

անգլերեն պարապել, մաթեմատիկա պարապել պարապմունք – занятие (урок)

պարապ կամ ազատ, պարապ-սարապ (լինել) – быть свободным или праздным, незанятым.

պարապել ≠ պարապ լինել

– Երեկոյան ի՞նչ ես անում, **ազա՛դ ես:**

– Ոչ, **զբաղված եմ**, անգլերենի **պարապմունք** ունեմ:

– Հա, մոռացել էի, որ դու անգլերեն **ես պարապում:**

– Այո, ես քեզ նման **պարապ-սարապ** չեմ:

– Ես էլ **զբաղմունք ունեմ, պարապ չեմ**, ես էլ մաթեմատիկա ու աշխարհագրություն **եմ պարապում**, որ տնտեսագիտության ֆակուլտետը ընդունվեմ:

– Դե լավ, կատակ եմ անում, մի նեղացիր:

Գ) Լրացրեք բացերը ազափ, զբաղված, պարապ, պարապել բառերով.

Заполните пропуски словами **ազափ, զբաղված, պարապ, պարապել**:


– Գոնե քննությունից առաջ հարկավոր է լավ ...: Իսկ դու ամբողջ օրը ... ման ես գալիս, տեսնու՞մ ես՝ ընկերդ քիթ քորելու ժամանակ չունի, և աշխատում է, և սովորում, անընդհատ ... է:

– Ես էլ ... ժամանակ չունեմ, բայց չեմ հասկանում, թե ուր է գնում ժամանակս:

Գ) Լրացրեք բացերը՝ զբաղմունք թե՞ պարապմունք.

Заполните пропуски: **զբաղմունք** или **պարապմունք**?

... հետո կհանդիպենք: Ի՞նչ ես անում, էլ ուրիշ ... չունե՞ս, որ այս հիմար ֆիլմն ես նայում: Ի՞նչ ես պարապ ման գալիս, մի որևէ ... գտիր քեզ համար: Ժամը քանիսի՞ն է սկսվում ձեր ...:

18.Ա) 

Կենտրոնանալ (сосредоточиться) ≠ շեղվել (отвлечься)  
ուշադրությունը կենտրոնանում է մի բանի վրա ≠  
ուշադրությունը շեղվում է մի բանից  
մեկի ուշադրությունը կենտրոնացնել մի բանի վրա ≠  
մեկի ուշադրությունը շեղել մի բանից  
մեկի ուշադրությունը գրավել – привлечь чье-либо  
внимание




Ուսուցչուհին աշխատում է երեխաների ուշադրությունը գրավել, **կենտրոնացնել դասի վրա**, բայց դրսում արդեն գարուն է, թռչունները երգում են պատուհանի գոգին, և երեխաների **ուշադրությունը շեղվում է**: – Երեխաներ, ասում է ուսուցչուհին, – **կենտրոնացեք**, խնդրում եմ, **մի շեղվեք**, շուտով ստուգարք ենք ունենալու, **ուշադրություն դարձրեք** հատկապես այն բառերի վրա, որոնցում *փ, ք, թ, ց, չ* է լսվում, բայց *բ, գ, դ, ձ, ջ* է գրվում:

Գ) Լրացրեք բացերը **գրավել, դարձնել, կենտրոնանալ, կենտրոնացնել, շեղվել** բառերով.

Заполните пропуски словами **գրավել, դարձնել, կենտրոնանալ, կենտրոնացնել, շեղվել**:


– Գիտե՞ք, ձեր տղան շատ ընդունակ է, բայց ցրված է (рассеянный), բոլորովին չի կարողանում իր ուշադրությունը ... մի բանի վրա, հաճախ շեղվում է, լուսամուտից դուրս է նայում, իր ձեռագրին ուշադրություն չի ..., ինձ չի հաջողվում նրա ուշադրությունը ...:

– Այո, ես էլ եմ նկատել, որ վերջերս նա դժվարանում է ..., մի հասարակ բանից ուշադրությունը ... է: Երեխան արդեն հոգնել է, գարուն է:


19. Ա) 



լրագիր, թերթ կամ օրաթերթ – газета  
 ամսագիր – журнал (գիտական, բժշկական,  
 հասարակական-քաղաքական)  
 հանդես – иллюстрированный журнал  
 խմբագիր – редактор  
 թղթակից – корреспондент  
 քարտուղար – секретарь  
 հատուկ թղթակից – специальный корреспондент  
 սեփական թղթակից – собственный корреспондент



Բ)




Օրաթերթը լույս է տեսնում ամեն օր:	օր → շաբաթ, ամիս
-----------------------------------	------------------




Գ) Լրացրե՛ք բացերը.


Խմբագրությունում աշխատում են խ..., թ..., ք...: ... խմբագրում է նյութերը (материалы): ... հոդված է գրում կամ հարցազրույց է վարում: Դ... թ... նյութ է ուղարկում խմբագրությանը:

Դ)  Պատասխանեք հարցերին.

Ի՞նչ հասարակական-քաղաքական կամ գիտական ամսագիր եք ստանում: Դուք սիրու՞մ եք նորածնությունների հանդես նայել: Բժշկական ամսագրերի կամ հանդեսների խորհուրդներին հետևու՞մ եք արդյոք: Ո՞ր թղթակցի հոդվածներն են հատկապես գրավում ձեր ուշադրությունը: Դուք ի՞նչ թերթ եք կարդում: Ո՞ր թերթին եք վստահում: Ձեր կարծիքով ո՞ր թերթն է ամենից ուշագրավը, ի՞նչ խորհուրդ կտայիք կարդալ ձեր ընկերներին: Դուք սիրու՞մ եք հարցազրույցներ կարդալ: Ու՞մ հետ հարցազրույց կցանկանայիք կարդալ կամ դիտել հեռուստացույցով: Ավելի լավ չէ՞ր լինի, եթե Դու՛ք հարցազրույց վարեիք. ի՞նչ հարցեր կտայիք Ձեր հերոսին: Իսկ Դուք ինչպե՞ս կպատասխանեիք Ձեր տված հարցերին:

20. Ա) 

Նախադասություն – предложение  
 բառ  
 տառ  
 էջ  
 պարբերություն – абзац  
 տող

Բ)  Պատասխանեք հարցերին.

Քանի՞ էջից է կազմված այս գիրքը: Ո՞ր էջում է սկսվում "Ծաղրածու" նովելը, ո՞ր էջում է այն ավարտվում: Ո՞ր պարբերության մեջ է հանդիպում *ճանճ* բառը. այդ պարբերության ո՞ր տողում է այն: Քանի՞ նախադասություն կա առաջին պարբերության մեջ: Քանի պարբերություն կա "Ծաղրածու" նովելի առաջին մասում: Քանի՞ տառ կա *ճանճրույթ*, *ճանճրալի*, *ճանճրացնող* բառերում:




21. Կետերի փոխարեն գրեք աջ սյունակի բառերից մեկը.

Ընտանիքում ամենամեծ երեխային ասում են՝ ... :	առաջնեկ միամորիկ
Երբ մարդ շատ է ուզում մի բանի հասնել, ասում են՝ դա նրա ... է:	մազանքն երազանքն
Գայլը որս անելով է ... :	սնվում սնուցում
Էջը ..., քո ուզած բանաստեղծությունը մյուս էջին է:	շարժիր շրջիր
Բժշկի ընդունարանում պետք է ... պահպանել:	լռություն համբերություն
Եթե ..., մի քիչ էլ հաց ու պանիր կեր:	չկշտացար չկոշտացար
Հաց ու պանիր՝ կեր ու ...:	բանիր դատիր
Ինչու՞ չի գալիս այդ Պողոսը, մի՞թե կարելի է այսքան սպասեցնել, համբերությունս ... :	սաիեց հասեց

22.Ա)

քիչ է մնում + желат. накл. – еще чуть-чуть и ...  
քիչ մնաց կամ քիչ էր մնում + желат. накл. – чуть было не

Բ)



– Դու, ի՞նչ է, ծիծաղու՞մ ես ինձ վրա:  
– Դու նրան տվեցի՞ր քո հասցեն:

→ – Ոչ, բայց քիչ է մնում ծիծաղեմ:  
– Ոչ, բայց էիչ մնաց (քիչ էր մնում) տայի:

– Դու, ի՞նչ է, ծիծաղու՞մ ես ինձ վրա: – Դու նրան տվեցի՞ր քո հասցեն: – Դու, ի՞նչ է, լա՞ց ես լինում: – Այս ի՞նչ ձայն էր, դու ընկա՞ր: – Այս ի՞նչ հոտ է, խորովածը վառվու՞մ է: – Բաժակը կոտրվե՞ց: – Այսօր ի՞նչ ցուրտ է, ձյու՞մ է գալիս: – Ջուրը թափվե՞ց:

23.Ա)


հազիվ կամ հազիվ հազ – едва, с трудом  
հազիվ կամ հազիվ թե + желат, накл. – вряд ли  
հազիվ կամ հազվադեպ – редко

**Հազիվ (հազվադեպ)** են պատահում այդպիսի ծաղրածուներ: Նա հիվանդությունից հետո շատ թույլ է. **հազիվ (հազիվ հազ)** է քայլում: Ի՞նչ ես բացատրում նրան, նա այդ բանը **հազիվ (հազիվ թե)** հասկանա:

Բ) Լրացրեք բացերը՝ օգտագործելով **հազիվ** բառով արտահայտություններ և ասեք, թե որտեղ այն կարելի է փոխարինել **հազիվ հազ, հազիվ թե, հազվադեպ** բառերով.

Заполните пропуски и скажите, где **հազիվ** означает "едва", где "вряд ли", где "редко":


Նա այնքան արագ է խոսում, ես նրան չեմ հասկանում, այսինքն, ուզում էի ասել՝ ...: Նա յոթերորդ դասարանում է, բայց դեռ կարդալ չգիտի, այսինքն ուզում էի ասել՝ ..., 10 տարում դպրոցը չի ավարտի, ուզում էի ասել՝ ...: Այդպիսի ծույլ աշակերտ չի պատահում, այսինքն՝ ...: Եթե նամակ գրես մի շաբաթից շուտ չի հասնի, ուզում եմ ասել՝ ..., ավելի լավ է՝ հեռագիր տաս: Նոր էի վերջացրել գործս, ... էի նստել մի քիչ հանգստանալու, հյուր եկավ:

24.Ա) 

քնած ≠ արթուն  
 քնել ≠ արթնանալ  
 քնով անցնել, քնով ընկնել – проспять  
 քնաթաթախ – сонный  
 քնատ, քունը գլխին – недоспавший  
 քնկոտ – сонливый  
 քնաբեր – снотворный  
 քունը բերել "усыплять" ≠ քունը փախցնել "отгонять сон"  
 քունը տանել "хотеть спать" ≠ քունը փախչել  
 "перестать хотеть спать"  
 քնեցնել – укладывавать  
 անքուն լինել (մնալ), անքնություն ունենալ, գիշեր(ներ)  
 լուսացնել  
 Բարի գիշեր, անուշ քուն, քաղցր երազներ:

Բ) Ответьте на вопросы:

Սովորաբար ժամը քանիսի՞ն եք պառկում, անմիջապես քնու՞մ եք: Ե՞րբ եք ավելի հեշտ քնում, երբ շու՞տ եք պառկում, թե՞ երբ ուշ եք պառկում: Իսկ առավոտյան հե՞շտ եք արթնանում: Առավոտյան ժամը ուրի՞ն դուք դեռ քնա՞ծ եք լինում սովորաբար, թե՞ արդեն արթուն եք: Իսկ երեկոյան ժամը տասնմեկին կամ տասներկուսին արդեն քնա՞ծ եք, թե՞ դեռ արթուն եք: Երբ սովորականից ուշ եք քնում առավոտյան քնո՞վ եք անցնում, թե՞ կարողանում եք ժամանակին արթնանալ: Դուք քնկո՞տ եք: Անքնություն չունե՞ք: Եթե ձեր քունը չի տանում, ի՞նչ եք անում, քնաբե՞ր եք խմում, երաժշտություն՞ եք լսում, գի՞րք եք կարդում: Կարդալուց ձեր քունը չի՞ փախչում: Իսկ երաժշտությունը ձեր քունը փախցնու՞մ է, թե՞ ընդհակառակը, քուն է բերում: Դուք երազ տեսնու՞մ եք: Առավոտյան ձեր երազները հիշու՞մ եք, թե՞ մոռանում եք: Ձեր երազները իրականանու՞մ են: Գոնե մեկը իրականացե՞լ է: Դուք Ձեր երազները ուրիշներին պատմու՞մ եք: Իսկ երբ ուրիշներն են Ձեզ իրենց երազները պատմում, Դուք նրանց հաճույքո՞վ եք լսում: Կարո՞ղ եք պատմել Ձեր երազներից մեկը, օրինակ՝ ամենասարսափելին, կամ ամենագեղեցիկը: Պատահե՞լ է, որ դուք անքուն գիշեր անցկացնեք: Սիրու՞մ եք ընկերների հետ գիշեր լուսացնել խարույկի մոտ (у костра):

25.Ա) 

Ձեր ի՞նչն է ցավում (ի՞նչն է ցավում, թո ի՞նչն է ցավում) – что болит?


Ձեր որտե՞ղն է ցավում (որտե՞ղն է ցավում) – где болит?

Գլուխս (աչքս, ձեռքս, ոտքս, փորս "живот", մեջքս "спина", ստամոքսս "желудок", լյարդս "печень", թոքերս "легкие", սիրտս, կոկորդս "горло", ատամս "зуб") է ցավում:



"Վայ, խեղճ տղաս, Ոչ մի տեղդ չըցավա՞ց..."

Բ) 



<p>– Ի՞նչ է, Վիգենն իրեն լավ չի՞ զգում:          – Ատամն է ցավում:</p>	<p>ատամ → մեջք, ստամոքս, լյարդ, սիրտ, գլուխ, թև, ականջ</p>
--	--

Գ) Ответьте на вопросы:

- – Այս գիրքը կարդա, հոյակապ գիրք է:
- Ես չեմ կարող կարդալ:
- Ինչու՞:
- ...:
- – Կանգ առնենք, ես այլև չեմ կարող քայլել:
- Ինչու՞:
- ...:
- – Խորոված անե՞մք:
- Չէ, այսօր չէ:
- Ինչու՞:
- ...:
- – Նա չի կարող գրատախտակին գրել:
- Ինչու՞:
- ...:
- – Ես չեմ կարող կռանալ:
- Ինչու՞:
- ...:
- – Ես ոչինչ չեմ կարող ուտել:
- Ինչու՞:
- ...:
- – Անալգին կամ ասպիրին կա՞:
- Ինչու՞, ի՞նչ է պատահել:
- ...:



Դ) Թ



գլխացավ – головная боль (физическая)  
 գլխացավանք – головная боль (забота)  
 գլուխը պտտվում է – голова кружится  
 գլխապտույտ – головокружение, головокружительный  
 (напр. գլխապտույտ հաջողություն)  
 սրտացավ (մարդ) – сердобольный  
 սիրտը խառնում է – тошнит  
 սրտխառնոց – тошнота  
 փորացավ – 1. боль в животе, 2. беспокойство, просьба


Ե

Հիվանդը իրեն վատ է զգում, **հարբուխ** (насморк) **ունի**, նրա **ջերմությունը** (температура) բարձրանում է, նրա սիրտը խառնում է, **ցավեր է ունենում**, նա դիմում է **բժշկին**, դեղեր, **հաբեր** (лекарства, таблетки) է **ընդունում** (խմում), **բուժվում է** (лечиться), **առողջանում է** (выздоровливать):

Բժիշկը **քննում է** (осматривать) հիվանդին, **լսում է** սիրտը (սիրտը բարբխում է, խփում է), **թոքերը** (հիվանդը խորն է շնչում – глубоко дышать), **շոշափում է փորը** սրամոքսը, **յարդը**, **աղիքները** (кишечник), **հաշվում է զարկերակը** (пульс), **չափում է** հիվանդի **ջերմությունը**, **ծնշումը** (давление), **նայում է կոկորդը**, **ապամները**, **լեզուն**:

Բժիշկը **բուժում է** **նշանակում** (назначать лечение), **դեղադրոմս է գրում**, **խորհուրդներ է տալիս**, **բուժում է** (лечить):

Ե) Կարդացե՛ք և ասե՛ք՝ այս երիտասարդը շա՞տ հիվանդ է արդյոք, նա կրուժվի՞, ինչպե՞ս կրուժվի:



- Հը, ի՞նչ ասաց բժիշկը:
- Նայեց, լսեց, քննեց, ճնշումս չափեց, զարկերակս հաշվեց, դեղ գրեց: Հետո էլ ասաց՝ լավ կլինի՝ Արզնի կամ Ջերմուկ գնաս:
- Դե խնդրիր պետիդ<sup>1</sup>, թող քեզ արձակուրդ<sup>2</sup> տա, նա սրտացավ մարդ է:
- Կտա՞ որ... Լավ, կփորձեմ:

\*\*\*

- Պարոն պետ, գիտե՞ք, վերջերս ես ինձ լավ չեմ զգում. գլխացավեր ու գլխապտույտ եմ ունենում, վատ եմ քնում, սիրտս խառնում է:


- Հետո՞, հետո՞, փորացավդ ասա, ի՞նչ փորացավ ունես:

- Ինձ արձակուրդ է հարկավոր:

- Ես էլ անքնություն ունեմ և գլխացավ ու գլխացավանք: Էլ չեմ ասում, որ շուրջս նայում եմ՝ ամեն ինչից սիրտս խառնում է: Ի՞նչ անենք: Բժշկի դիմիր:

- Դիմել եմ, բուժում է նշանակել: Բայց նաև ասել է, որ մի որևէ առողջարան գնամ:


- Լավ, տեսնենք, մի բան կանենք:



<sup>1</sup>պետ – начальник

<sup>2</sup>արձակուրդ – отпуск (ծ=ց, դ=թ)

Գ) Լրացրեք բացերը. Заполните пропуски:



- Իմ փոքրիկ արջուկ, դու հիվա՞նդ ես: Ի՞նչդ է ..., ցույց տուր ինձ ..., ասա ա՛ա՛ա: Հիմա ես կչափեմ քո ... հետո կչափեմ ..., ահա

... : Հետո կլսեմ և : Հարկավոր է նաև ... հաշվել: Երևի

է ցավում: Ես քեզ հետևյալ եմ նշանակում. մի քիչ ու մորի որ ուտես, ամեն ինչ կանցնի, դու պարզապես քաղցած ես:



## Սրոկ 24. Քսսանչորսերորդ դսս

### Տեկտստ

Աղվես և թղթատար գայլ (Վ. Այգեկցի)  
 Այրի կին և խորթ որդի (Վ. Այգեկցի)  
 Բանտիս օրագիրը (Լեո Կամսար) (չարունակություն)  
 Ծաղրածուն (Միքայել Մանվելյան) (չարունակություն)

### Սեսնյա

Երսզ  
 Две новеллы Л. Енгибаряна ("Зонтик" и "Тореадор") для перевода на армянский язык.



### Աղվես և թղթատար գայլ

Աղվեսը մի գրած թուղթ գտավ և տարավ գայլին և ասաց. "Շատ աշխատեցի և իշխանից քեզ համար մի թուղթ հանեցի, որ ամեն գյուղ, ուր հանդիպես, քեզ պիտի տա մի ոչխար:" Եվ այդպես խաբեց գայլին. և միասին գնացին մի գյուղ, և աղվեսը նստեց բլուրի վրա և թուղթը տվեց գայլին: Երբ գայլը գյուղը մտավ, վրա թափվեցին շները, և մարդիկ նրան գանահարեցին: Եվ գայլը, հագիվ ազատվելով, հասավ աղվեսին: Եվ աղվեսն ասաց. "Ինչու՞ թուղթը ցույց չտվիր:" Եվ գայլն ասաց. "Ցույց տվի, բայց գյուղում հազար շուն կար, որ գիր չգիտեր:"

### Վարդան Այգեկցի ("Աղվեսագրքից")

### Բառեր

աղվես – лиса

գայլ – волк, թղթատար ~ – волк

курьер

իշխան – князь

հանել – зд. достать, добыть

խաբել – обмануть (ը=փ)


բլուր – холм

վրա թափվել – наброситься

գանահարել – избить



### Այրի կին և խորթ որդի



Մի այրի կին ուներ մի կով, և նրա խորթ որդին ուներ մի էշ: Եվ խորթ որդին գողանում էր կովի կերը ու տալիս էշին: Եվ այրի կինն աստծուն աղաչեց, որ աստված էշին մեռցնի: Բայց կովը մեռավ, և այրին լաց եղավ ու



ասաց. "Ով աստված, մի՞թե չկարողացար էջը կովից տարբերել":

### "Աղվեսագրքից"

### Բառեր

խորթ – неродной

կով – корова

էշ – осел


կեր – корм

աղաչել – умолять


մեռցնել – умертвить

տարբերել – отличить


# Մեկնաբանություններ, առաջադրանքներ, վարժություններ





1. Ա) 

խաբել (բ=փ)
խաբվել – обмануться (բ=փ)
խաբերա – обманщик (оба բ=փ)
խաբություն – обман (բ=փ)
խաբերայություն – надувательство (оба բ=փ)
խաբուսիկ – призрачный, обманчивый (բ=փ)
խաբուսիկություն – обманчивость, призрачность (բ=փ)

 Բ) Լրացրեք բացերը համապատասխան բառերով.

Այսօր թեև արև է, բայց բուրբուրվին էլ շոգ չէ, եղանակը ... է: Դու ինձ ինչի՞ տեղ ես դնում, ես ինչպե՞ս կարող էի քեզ ..., քո փողը վերցնել ու քեզ ետ չտալ: Մի՞թե քո կարծիքով ես ... եմ: Ես ինքս եմ ... ու իմ ամբողջ փողը նրանց վատահել: Բայց դու դեռ մի հուզվիր, գուցե դեռ ամեն ինչ պարզվի՞, գուցե ոչ մի ... էլ չկա՞:

 2. Լրացրեք բացերը.

Пасынок – <i>խորթ որդի</i> 	отчим – 
падчерица – 	мачеха – 

3. Պատասխանեք հարցերին: Բերված պատասխաններից որի՞ հետ եք համաձայն:

С каким ответом вы согласились бы?

Ա) Ո՞վ է ավելի խորամանկ, աղվե՞սը, թե՞ գայլը: Ինչու՞:


Աղվեսը, որովհետև խաբեց գայլին ու սխալ թուղթ տվեց նրան:	Գայլը, որովհետև առանց թուղթը կարդալու ուզեց գյուղացիներին խաբել:
--	--

Բ) Ո՞վ է ավելի անգրագետ, գա՞յլը, թե՞ շները: Ինչու՞:

Գայլը, որովհետև նա աղվեսի տված թուղթը նույնիսկ չկարդաց:	Շները, որովհետև նրանք չկարողացան կարդալ գայլի ցույց տված թուղթը:
---	--

Գ) Ո՞վ չկարողացավ մի բանը մյուսից տարբերել, Աստվա՞ծ, թե՞ այրի կի՞նը: Ինչու՞:

Աստված, որովհետև էշը կովից չտարբերեց:	Այրի կինը, որովհետև սոված ու հիվանդ անասունը չտարբերեց կուշտ ու առողջ անասունից ու աստծուց անհնար բան խնդրեց:
---------------------------------------	---



Запомните названия некоторых животных и несколько фразеологических выражений, сравнений и метафор с названиями животных:

**Աղվես** ասում են խորամանկ մարդու մասին:

**Էջ** ասում են հիմար ու համառ (упрямый) մարդու մասին:

**Ռշխար** ասում են հիմար ու միամիտ (наивный) մարդու մասին:

**Գառ** (**Ասփծու գառ**) ասում են անմեղ մարդու մասին (агнец

Божий):

**Խոզ** ասում են փնթի (неряшливый) մարդու մասին:

**Արջ** (սարի արջ) ասում են կոպիտ, անտաշ (грубый, неотесанный) մարդու մասին:

**Մուկ** կամ **Նապախտակ** (заяц) ասում են վախկոտ մարդու մասին:

**Օձ** (змея) ասում են նենգ (коварный) մարդու մասին:

**Փիղ** (слон) ասում են խոշոր (крупный) մարդու մասին:

Բ) Գտե՛ք համապատասխան արտահայտողը ընները.

ոնց որ շունն ու կատուն լինեն

հավի հիշողություն

## Եզան ուժ

что коту забава, то мышонку – смерть

волчий аппетит

глаза лани

бычья сила

считать ворон

со скоростью черепахи

куриная память

повторять, как попугай

петушиться

сделать из мухи слона

(жить) как кошка с собакой

թութակի պես կրկնել

գայլի ախորժակ

ծանճ հաշվել

կրիայի արագությամբ

եղնիկի աչքեր

աքլորանալ

կատվի խաղը մկան մահը

## ԼՈՒՆ ՈՒՂՄ ԴՊԱՐՃՆԵԼ



Գ) Գտե՛ք յուրաքանչյուր նախադասության երկու կետերը.

Найдите две половинки каждого предложения:

Քննություն է, էլի, կանցնի, ի՞նչ ես վախենում, մուկ ես

դառել:

✓ Քննություն է, էլի, կանցնի, ի՞նչ ես վախենում, ...	... – Այո, բայց իրար հետ ոնց որ շունն ու կատուն լինեն:
Ոչինչ չի ուզում հասկանալ, ...	... այստեղ մա՞րդ է ապրում, թե՞ խոզ:
Փողը մտավ կրկեսը (պրո), ...	... բռնեց կրկեսի կեսը:
Զգույշ վերցրու երեխային, որ չարթնացնես, ...	... գոռաց փողոցի տղան:
Տնաշեն, զգույշ եղիր, ...	... երևի ծանճ ես հաշվում:
Այս ի՞նչ փնթիություն է, ...	... երեք հարյուր տարի է ապրում:
– Ի՞նչ սիրուն երեխաներ են քո զարմիկն ու զարմուհին: ...	... էշի մեկն է:
Հետաքրքիր է, դասարանում ի՞նչ ես անում, որ դասը չես լսում, ...	... ի՞նչ ես թութակի պես նույն բանը կրկնում:
Արդեն հասկացա, ...	... լուն ուղտ մի դարձրու:
– Է՛յ, աքլորներ, ու՞ր եք գնում այդ չորսաչքանու հետ, – ...	... հավի հիշողություն ունես:
Նենգ մարդու մասին ասում են ...	✓... մուկ ես դառել:
Ասում են, թե կրիան ...	... Յագո կամ օձ:
– Էլի՞ մոռացար հեռախոսի համարը, ...	... ոնց որ սարի արջ լինես:
– Դե լավ, ի՞նչ է եղել որ, հանձնարարությունդ մոռացել եմ, ...	... տես ի՞նչ աստժո գառ է:




Դ) Կենդանաբանական խաչբառ (зоологический кроссворд):

**Ուղղահայաց (по вертикали).** 1. Բանող անասուն (կովի ամուսինը): 3. Միամիտ կենդանի, որին Պավլեն ու տղաները մորթեցին, երբ քաղցած էին: 4. Դոն-ժուան հավերի շրջանում: 5. Թռչուն: Խոսելիս հայտնում է ուրիշների մտքերը: 8. Ցատկող միջատ (насекомое): Նրան երբեմն ուղտ են դարձնում: 9. Թռչող միջատ: Աղե-ստամոքսային հիվանդություններ է տարածում (распространять) ճաշարաններում: 11. Չորքուտանի (четвероногий): Իր սեփական փորի համար մուկ է բռնում և դա համարվում է օգտակար աշխատանք: 13. Բուլդոգ վախենում են նրանից, իսկ նա վախենում է մկներից: Պարսկական բանակում ծառայել է որպես տանկ: 14. Փոքրիկ կրծող (грызун): Կատվի խաղը նրա մահն է: 17. Երկար ականջներով կենդանի. հաճախ հիմար ու համառ մարդուն են այդպես անվանում:

**Հորիզոնական (по горизонтали).** 2. Կենդանի, որն իրեն պահում է փնթի մարդու պես: 6. Գորշ կենդանի, որին հեքիաթներում բուլդոգ խաբում են խորամանկ աղվեսը, վախկոտ նապաստակը, նույնիսկ յոթ այծիկները: 7. Կենդանի, որի շարժման արագությունը դանդաղ ընթացքի չափանիշ է: 10. Թռչուն, որի երեխաները ուրիշների բներում (гнездо) են ծնվում: 12. Թռչուն, որի փետուրը գրում է գեղեցիկ և անսխալ: 15. Կենդանի, որը երկա՛ր-երկա՛ր ապրում է առանց ջրի: 16. Թռչնակ, որը տաք անկյուն գտնելու հույսով աշնանը չի փախչում օտար երկիր:

*Ըստ էղվարդ Սարգսյանի*



Подсказка: блоха – լու, кукушка – կկու, гусь – սագ



## և **Բանտիս օրագիրը**

(շարունակություն)

3 դեկտ. – քննիչիս մոտ եմ կանչված այսօր առաջին հարցաքննության: Հավասար քանակությամբ "այո" և "ոչ" եմ վերցնում հետս տեսածիս "այո", չտեսածիս "ոչ" ասելու համար: Սակայն երբ երեք ժամ տևող հարցաքննությունից վերադառնում եմ, նկատում եմ, որ բոլորովին "այո" չեմ գործածել և միայն "ոչ"ն է պետք եկել:

Մի անգամ էլ կզնամ. եթե քննիչս այնպիսի հարցեր տա, որոնց պատասխանը բացառապես "ոչ" պիտի լինի: այլևս "այո" չեմ վերցնի հետս:

5 դեկտ. – Այսօր խուզարկություն է: Բարձիս տակից տարան հինգ լրագիր, որոնք պահել էի արտաքննության պետքերի համար: Բողոքեցի ու խնդրեցի կամ թողնել այն, կամ արտաքննոցում թուղթ կախել: Մի պահանջ, որին պատասխանեցին. – այստեղ բանտ է, այստեղ հյուրանոց չէ, որ արտաքննոցում թուղթ կախենք:

Խեղճ մարդ: Եթե միայն արտաքննոցում թուղթ կախելով բանտը կարող է հյուրանոց դառնալ, մի տոննա թղթով աշխարհի բոլոր բանտերը հյուրանոց կդարձնեի ...

7 դեկտ. – Կինս այսօր երշիկ է ուղարկել ինձ և սպիտակ հաց:

Անհրաժեշտ է իմանալ ինձ բռնողների տրամադրությունը: Եթե հարցաքննությունից հետո պիտի ապրեմ, ապա կարելի է ուտել. իսկ եթե պիտի մեռնեմ՝ միանգամայն ավելորդ է:

Կեսօրին մորթվող անասունին առավոտյան չեն կերակրում սովորաբար:

Բանտում որքա՞ն մուկ կա: Հետաքրքիր է, նրանք գիտե՞ն, որ այստեղ բանտ է :

8 դեկտ. – Եթե ծճարիտ է, որ մտադրվելը նշանակում է գործի կեսը կատարել, ապա ուրեմն ես այսօր կիսով չափ մեռած եմ, որովհետև մտադրվեցի մեռնել:

Մի հարմար օր, հետագայում, մի անգամ էլ "կմտադրվեմ" և կազատվեմ բոլորովին այս անցավոր աշխարհից:

Քանի օր ինքս ինձ չեմ տեսել: Այստեղ, բանտում, հայելին արգելված առարկա է:

Ու եթե վաղը հարցաքննությանս ժամանակ քննիչի "քեզ ճանաչու՞մ ես" հարցին "ոչ" պատասխանեմ՝ պիտի ասի "սուտ ես խոսում":

10 դեկտ. – Գիշերը երեխաներիս հետ էի: Երջանիկ: Եթե քննիչս բանաստեղծ Թումանյանի այն կարծիքին լինի, թե "կյանքը երազ է, երազն էլ մի կյանք"՝ կդատապարտվեմ անպատճառ երազիս մեջ երջանիկ լինելու համար ...

...Բայց երկար պառկեցի այսօր: Վեր կենամ, լվացվեմ ու շտապ-շտապ բանտարկվեմ:

***Ըստ Լեռ Կամսարի "Բանտիս օրագիրը" ("Նավասարդ" ամսագրից)***

## Բառեր

**կանչվել** – быть вызванным  
**հարցաքննություն** – допрос  
**հավասար** – равный  
**քանակություն** – количество  
**բացառապես** –  
исключительно  
**խուզարկություն** – обыск  
**արտաքնոց** – сортир  
**պեղք** – нужда  
**բողոքել** – жаловаться  
**պահանջ** – требование  
**անհրաժեշտ** – необходимо  
**բռնել** – держать, ловить  
**տրամադրություն** –  
настроение  
**միանգամայն** – весьма (զ=ք)  
**ավելորդ** – лишний (դ=թ)

**անասուն** – скот, животное  
**կերակրել** – кормить  
**մտադրվել** – вознамериться  
**կատարել** – выполнить,  
исполнить  
**կիսով չափ** – наполовину  
**հարմար** – удобный  
**հետագայում** – в дальнейшем  
**անցավոր** – преходящий  
**տուր խոսել** – лгать  
**երազ** – сон  
**դատապարտվել** –  
осуждаться, быть  
осужденным  
**անպարճառ** – безусловно  
**շտապ-շտապ** – быстро,  
спешно

5. Ի՞նչ եք կարծում, Լեռ Կամսարի "Բանտի օրագրի" ո՞ր մտքերն են լուրջ ասված, ո՞ր մտքերը՝ հեզմանքով և ո՞ր մտքերը՝ հումորով: Բացատրե՛ք.

"Գնալը" ազատ մարդու հասկացություն է, իսկ բանտարկյալը քայլում է կամ "տարվում է": Անշունչ առարկան իրավունք ունի կորչելու, իսկ բանական մարդը պիտի չկորչելու համար ինքն իրեն հսկի: Նոյեմբերի 27-ին Լեռ Կամսարն արդեն բանտ է նստած կամ, ավելի ճիշտ, բանտ է կանգնած: Մակարը, որին մեղադրում են երկու հողվածով, ընկերոջն առաջարկում է իր մեղադրանքից օգտվել: Բանտի խուցը տեխնիկապես մեկ մարդու հուզվելու հարմարություն է տալիս, դրա համար բանտարկյալները հերթով են հուզվում: Գուրգենը ամաչում է, որ քննիչի տված քառասուն հարցերից ոչ մեկի պատասխանը չգիտի, ամաչում է իր տգիտության համար: Ազատ մարդը ողջ ընկույզ է, բանտարկյալը՝ ընկույզի միջուկ, մարդ՝ ըստ էության: Նա անկեղծ է, ինչպես լինում է մարդը իր ծննդյան ու մահվան ժամանակ, նա հեռագիր վեպ է, առանց ձանձրալի առաջաբանի ու վերջաբանի: Լեռ Կամսարն անփոխարինելի կալանավոր է, սակայն նա չպիտի ինքն իրեն կորցնի գլխապտույտ հաջողությունից. հանկարծ անզգույշ մի քայլ կամ փոքրիկ մի հանցանք կարող է պատճառ դառնալ, որ նրան բանտից ազատեն, ինչպես ազատում են պաշտոնից: Նա վախենում է իր տանջանքի պլանը թերակատարել: Մի տոննա թուղթը բավական է աշխարհի բանտերը հյուրանոց դարձնելու համար: Քանի որ կեսօրին մորթվող անասունին առավոտյան չեն կերակրում, ապա կարիք չկա բանտարկյալներին հարցաքննությունից առաջ կերակրել, զուցե նրանք հարցաքննությունից հետո չե՞ն ապրելու այլևս: Մկները մարդկանց պես բանտ են նստել: Մի քանի օր իրեն հայելու մեջ չտեսնելով մարդ իրեն կմոռանա ու չի ճանաչի: "Կյանքը երազ է, երազն էլ մի կյանք:"

# Երազ

Խոսք Ս. Շահազիզի  
Երազուն

Երաժշտությունը Ալ Դուրխանյանի

Ես լը-սե-ցի մի ա-նուշ ծայն. իմ ծե-րա-ցած  
մոր մոտ էր: Փայ-լեց նը-շույլ ու-րա-խու-թյան,  
Բայց ափ-սու, որ ե-րազ էր: Փայ-լեց նը-շույլ  
ու-րա-խու-թյան, Բայց ափ-սու, որ ե-րազ էր:



Արշիլ Գորկի. Նկարիչը մոր հետ. 1926 - 1936 թթ.





## Ծաղրածուն

(շարունակություն)

Դողալով նա կիսով չափ բարձրացավ տեղից:

– Նա, այդ հրեշը, որ հազար անգամ ավելի վատ է, քան անքնությունը ... Ես պատրաստ եմ երբեք, երբեք չքնել, միայն չլսեմ նրա ձայնը ... Նա գալիս է, ժամերով նստում գլխավերևս ու պատնում ... պատնում ... և ստիպում է ինձ լսել իրեն ...

– Ո՞վ, – ընդհատեց բժիշկը:

– Չգիտեմ, ես նրա դեմքը չեմ տեսնում ... Ես միայն նրա ձայնն եմ լսում, նրա նուրբ, մելոդիկ ձայնը, որ շարունակ պատնում է ... ի՞նչ՝ չգիտեմ: Ես նրան չեմ հասկանում ... ժամերով նստում է ու պատնում ... պատնում է և ինձ ստիպում է լսել. փակում եմ ականջներս, բայց նա պատնում է անվերջ, համառ կերպով: Ես վեր եմ ցատկում տեղիցս, հուսահատված սկսում եմ պատից պատ խփվել ... նա էլ դանդաղ վեր է կենում և կամաց-կամաց պատմելով անհետանում ... Նրան չլսելու համար ես վախենում եմ անկողին մտնել ... Չորս օր է՝ չեմ պառկել ... Բժիշկ ... բժիշկ, ես կխելագարվեմ: Փրկեցեք ինձ ... փրկեցեք ... ես այլևս չեմ կարող տանել այս տանջանքները ... ազատեցեք ինձ:

Նա հուսահատ գլուխն առավ ձեռքերի մեջ:

Մի րոպե հիվանդն էլ, բժիշկն էլ լուռ էին:

– Ինչու՞ այսքան ժամանակ բժշկի չեք դիմել:

– Դիմել եմ:

– Կարո՞ղ եք բերել նրա տված դեղատոմսերը:

Նա գրպանից հանեց մի կույտ դեղատոմսեր և թափեց բժշկի առաջ:

– Չեմ օգնում ... բոլորը փորձել եմ: Մի անգամ էլ քիչ մնաց... բայց փրկեցին ... ի չարն էի գործ դրել<sup>1</sup> դեղը:

– Ձեզ հանգիստ է պետք ... Ձեր նյարդերը շատ են թուլացած, ձեզ պետք է հանգիստ կյանք, սնունդ, ճանապարհորդություններ, լավ, ուրախ ընկերների շրջան ... Իսկ բոլորի վրա ավելացրեք, գուցե տարօրինակ թվա, բայց ես իմ հիվանդներից շատերին խորհուրդ եմ տալիս հաճախել կրկես ... Այնտեղ մի ծաղրածու կա, որը ստիպում է մարդկանց սրտանց ծիծաղել ... առողջ ծիծաղով ... Իմ հիվանդներն էլ են վկայում, թե ինչ լավ ազդեցություն է անում նրանց վրա այդ ծիծաղը ... Ես ինքս էլ մեծ հաճույք եմ ստանում նրան լսելով և շաբաթը երեք անգամ գնում եմ հատկապես նրան լսելու: Վերին աստիճանի<sup>2</sup> սրամիտ և խելոք մարդ է: Հազիվ են պատահում այդպիսի ծաղրածուներ, որոնք իսկապես ստիպեն անկեղծ կերպով ծիծաղել: Գուցե պատահմամբ եղել էք և տեսել այդ ծաղրածուին:

Մի դառն ժպիտ խաղաց նրա դեմքի վրա:

– Դուք փորձեցեք:

Նա լուռ վեր կացավ, դրեց փողը սեղանի վրա: Նրա դեմքը ավելի մռայլվեց ... Նա լուռ դիմեց<sup>3</sup> դեպի դուռը:

– Սպասեցեք:

Նա արդեն ուզում էր բացել դուռը, բայց թողեց ձեռքը և լուռ ետ  
ճայեց: Մի վայրկյան ճայեց բժշկին և շշմջաց.

– Այդ ծաղրածուն ես եմ:

**Ըստ Միքայել Մանվելյանի «Ծաղրածուն» նորավեպի**

<sup>1</sup>ի չարը գործ դնել – применить во зло  
<sup>2</sup>վերին աստիճանի – в высшей степени

<sup>3</sup>դիմել դեպի – зд. податься к

**Բառեր**

դողալ – дрожать  
հրեշ – чудовище  
պարտասուր – готовый  
գլխավերև – изгололье  
ընդհատել – прервать,  
перебить (դ=թ)  
նուրբ – нежный (բ=փ)  
անվերջ – без конца (ջ=չ)  
համառ կերպով – упорно  
վեր ցատկով – вскочить  
հուսահատ, հուսահատված –  
отчаявшись  
խփվել – биться  
անհետանալ – исчезнуть  
փրկել – спасти  
դիմել – обратиться  
կույտ – куча

թափել – вылить, пролить,  
выбросить, зд. вывалить  
Նյարդ – нерв (դ=թ)  
սնունդ – питание  
շրջան – круг  
ավելացնել – добавить  
հաճախել – посещать  
կրկես – цирк  
սրտանց – от души (от  
сердца)  
վկայել – свидетельствовать  
ազդեցություն – влияние  
պարահամար – случайно  
դառն – горький  
մռայլվել – мрачнеть  
շշմջալ – шептать



6. Ա) Ո՞ր բառակապակցություններում են օգտագործված "հասկացություն, գիտակցություն, առարկա, միջուկ, առաջաբան, վերջաբան, պահակ, քայլ, անասուն, նյարդ, ուղեղ" գոյականները: Ուրիշ ինչպե՞ս կարելի է օգտագործել նույն գոյականները: Բերե՛ք օրինակներ:



В каких словосочетаниях употреблены существительные **հասկացություն, գիտակցություն, առարկա, միջուկ, առաջաբան, վերջաբան, պահակ, քայլ, անասուն, նյարդ, ուղեղ** Приведите также свои примеры.

**ազատ մարդու հասկացություն, վերացական հասկացություն**




Բ) Ո՞ր գոյականներին են վերաբերում հետևյալ ածականները. **ձանձրացնող, անորոշ, թուլացած, դառն, ձանձրալի, զինված, անփոխարինելի, գլխապարույտ, փոքրիկ, հավասար, արգելված, անկեղծ**: Այս ածականներով ուրիշ ի՞նչ գոյականներ կարելի է բնութագրել: Բերե՛ք օրինակներ:



Какие существительные характеризуют прилагательные **ձանձրացնող, անորոշ, թուլացած, դառն, ձանձրալի, զինված, անփոխարինելի, գլխապարույտ, փոքրիկ, հավասար, արգելված, անկեղծ**? Приведите также свои примеры.

**ձանձրացնող ճանճեր, ձանձրացնող զրույց**

**7. Հիշեք նույնարմատ բայերը.**  
Вспомните однокоренные глаголы:

ընդունարան – ընդունել 	անհամբեր – <input type="checkbox"/>
աննկատելի – <input type="checkbox"/>	հոգնածություն – <input type="checkbox"/>
ծանծրույթ – <input type="checkbox"/>	անորոշ – <input type="checkbox"/>
հրավիրյալ – <input type="checkbox"/>	անընդհատ – <input type="checkbox"/>
անվերջ – <input type="checkbox"/>	անշունչ – <input type="checkbox"/>
անփոխարինելի – <input type="checkbox"/>	բողոք – <input type="checkbox"/>
պահանջ – <input type="checkbox"/>	հաճախ – <input type="checkbox"/>
խելագար – <input type="checkbox"/>	հուսահատ – <input type="checkbox"/>
մռայլ – <input type="checkbox"/>	հաջողություն – <input type="checkbox"/>
սնունդ – <input type="checkbox"/>	մեղադրանք – <input type="checkbox"/>
մտադրություն – <input type="checkbox"/>	պարծանք – <input type="checkbox"/>
հսկիչ – <input type="checkbox"/>	

**8. Կետերի փոխարեն գրեք այնուհանդերձ պատասխանը.**

Выберите подходящее слово из правого столбца:

1. Նա շատ բարեհոգի, ... զգացումով մի մարդ է: Բարեբախտաբար, քո ... չհասկացվեց:	հունոր հեզմանք
2. Ձեր ... անպատասխան չի մնա, բայց աշխատեք ավելի լավ ձևակերպել ձեր ...:	պահանջ բողոք
3. Նրան կանչեցին բանտի գրասենյակը ...: ... ոչ մի բան չպարզեց:	խուզարկություն հարցաքննություն
4. Դրանք վերացական ... են, պարզ բառերով բացատրիր ուզածդ: Արյուն տեսնելով՝ աղջիկը կորցրեց ...:	գիտակցություն հասկացություն
5. Բժիշկ դառնալու համար անհրաժեշտ է աշխատասիրություն և ...: Այսօր մեր ուսուցչուհին լավ ... ունի:	ուշիմություն տրամադրություն
6. Ձեր խոսքն իհարկե շոյում է իմ ..., բայց ես չեմ կարող ընդունել ձեր առաջարկությունը:	եսասիրություն ինքնասիրություն
7. Գարնանը ես հաճախ ... եմ ունենում:	գլխավերև գլխապտույտ
8. Երեխան չի հետաքրքրվում դպրոցական առարկաներով և մայրը վախենում է, որ նա ... մնա:	տգետ տգեղ

9. Եթե ... ես հռետոր դառնալ, ապա Դեմոսթենի պես քար լցրու բերանդ ու փորձիր այդպես խոսել: Ես չեմ կարողանում հեռախոսի համարները ..., ստիպված գրի եմ առնում:	մտադրվել մտաբերել մտապահել
10. Մենք աշխատում էինք նրան ..., բայց նա ոչ մի կերպ չէր հանգստանում:	մխիթարել շոյել
11. Եթե ես ..., թե ինչ ֆիլմ ես ուզում նայել, կգա՞ս ինձ հետ կինո:	գուշակել գիտակցել
12. Հարևանի կատուն էլի մտնում է տուն, պետք է ...: Տնաշեն, այնպես ... վերարկուիցս, որ կոճակը կտրվեց:	քշել քաշել
13. Եթե մենք պլանը ..., ոչ մի մրցանակ էլ չենք ստանա: Դուք լսե՞լ եք, թե ինչպես է երգչուհի Լուսինե Ջաքարյանը ... Մակար Եկմալյանի "Սուրբ, սուրբը":	կատարել թերակատարել գերակատարել
14. Բժշկուհին ... կնոջ զարկերակը ու հուսահատ նայեց հիվանդի հարազատներին. աղջիկը ... էր մոր կոշտագած ձեռքը:	շոյել շոշափել
15. Ասում են կարդալը քնաբեր է, բայց լավ գրքից իմ քունը ... է: Իսկ իմ քունը մեքենաների ազդանշաններն են ...:	փախչել փախցնել
16. Որտե՞ղ եմ ... ժամացույցս, չեմ հիշում թե ուր եմ դրել: Կարմիր Գլխարկը գնաց անտառ ու այնտեղ ...:	կորչել կորցնել
17. Սողոմոն Թեյլերյանը ... Թալաթ Փաշայի սպանության մեջ, բայց դատարանը նրան մեղավոր չճանաչեց ու չ...:	մեղադրվել դատապարտել
18. Բժշիկը շոշափեց իմ զարկերակն ու զարմացավ. սիրտս այնպես արագ էր ..., որ կարծես ուզում էր դուրս ցատկել տեղից:	բաբախել դադարել
19. Դու ինձ ուղղակի ..., չէ՞ որ մինչև ռոճիկը ստանալը դեռ մի շաբաթ կա:	փնտրել փրկել
20. Ինչու՞ այսօր աղբը չես ...: Այստեղ մի քանի մեխ է պետք ... սրբիչները կախելու համար:	թափել խփել
21. Արցախում ... հայեր են ապրում: Նա ... մաթեմատիկայի քննությունից է վախենում:	հատկապես բացառապես
22. Անցյալ տարի մսավաճառի մոտ ... Ներսես եղբորը հանդիպեցի: Ես արդեն ... հասկանում եմ հայերեն ներկայացումները:	պատահամաբ մասամբ
23. Հեզմանքով ասված խոսքը վիրավորական է, իսկ, ..., հումորը բարի ժպիտ է առաջացնում:	ընդհակառակը ընդհանրապես
24. Չեր անհանգստությունը ... հասկանալի է: Բժիշկը նայեց հիվանդին և ... հասկացավ, թե ինչու՞մն է բանը:	միանգամից միանգամայն

† 9. Գտեք նույն կամ մոտ իմաստով բառը և գրեք այն շեղագիր բառի փոխարեն.

Найдите синоним (или близкое по значению слово) и замените им выделенное слово:

կերպար – հարևան, հերոս, ընկեր, ծանոթ	Սարոյանի ստեղծած <i>կերպարները</i> հասարակ մարդիկ են:
գործածել – գործել, կտրել, օգտագործել, օգնել	Ես այս մկրատը չեմ <i>գործածում</i> , բնավ սուր չէ:
ճշմարիտ – բանական, ճիշտ, իսկական, վերացական	<i>Ճշմարիտ</i> արվեստագետի ստեղծածը երբեմն ավելի իրական է քվում, քան կյանքը:
նկատել – դիտել, նայել, տեսնել, հսկել	Փողոցի անկյունում մենք <i>նկատեցինք</i> տարօրինակ հագնված մի աղջկա, որը լրագիր էր վաճառում:
կենդանի – անասուն, հիվանդ, անդամ	Նախկինում մարդիկ և <i>կենդանիները</i> միասին են ապրել մի հարկի տակ:
երկիր – աշխարհ, վայր, հողված	1915թ. թշվառությունը պատեց հայոց <i>երկիրը</i> :
կալանավորել – դատապարտել, ձերբակալել, մեղադրվել, մտադրվել	Քննիչի Անտառամեջից գնալուց հետո տղաներին <i>կալանավորեցին</i> :
հպարտանալ – աքլորանալ, գլուխ գովել, պարծենալ	Պապը <i>հպարտանում է</i> իր թոռով, որովհետև նա դպրոցում լավ է սովորում, լավ գնահատականներ է ստանում:
մեղք – զրկանք, հանցանք, մեղադրանք, տուգանք	Կալանավորներից շատերը, իսկապես ասած, <i>մեղք</i> չունեին:
կշտանալ – կերակրել, սնվել, սնուցել, ուտել	– Մի կտոր էլ խմորեղեն դնե՞մ: – Շնորհակալ եմ, արդեն <i>կշտացա</i> :
շրջապատ – անապատ, միջավայր, աշխարհ	Բժիշկը գտնում է, որ հիվանդին անհրաժեշտ է լավ ընկերների <i>շրջապատ</i> :
ուրեմն – համեմատաբար, հարմար, հետևաբար	Երիտասարդը ոտքերը մաքրեց, գլխարկը հանեց, հետո ներս մտավ, <i>ուրեմն</i> բարեկիրք է ու քաղաքավարի:
անպատճառ – անհրաժեշտ, անպայման, անտարբեր	Ինչպե՞ս հայտնեմ նրան այդ լուրը, նա <i>անպատճառ</i> կհարցնի մանրամասները:
թերթ – շաբաթաթերթ, ամսագիր, լրագիր, հանդես	Որտե՞ղ է այսօրվա <i>թերթը</i> :
հայտնագործել – փնտրել, բացահայտել, գտնել	Մաշտոցի մեծությունն այն է, որ նա <i>հայտնագործեց</i> հայոց գիրը, որը մինչ այսօր ծառայում է մեզ:

10. Ակարագրեք (опишите):

- բժշկի ընդունարանը՝ օգտագործելով հետևյալ բայերը.  
(приемную врача при помощи глаголов):

Նստել, սպասել, զբաղվել, նայել, խոսել:

- տարօրինակ այցելուին՝ օգտագործելով հետևյալ բայերը.  
(странного посетителя при помощи глаголов):

Ներս մտնել, մոտենալ, վերցնել, նստել, մնալ, նայել, չկարդալ, շարժել, քշել, վեր քաշել, ձայն հանել:

- բժշկի ընդունելությունը՝ օգտագործելով հետևյալ բայերը.  
(прием у врача при помощи глаголов):

Դիմել, օգտակար լինել, լուռ լինել, հրավիրել նստել, չցավել, չքնել, գուշակել, պատմել:

- հիվանդի գանգատները՝ օգտագործելով հետևյալ բայերը.  
(жалобы больного при помощи глаголов):

Պառկել, աշխատել քնել, լուսացնել, հաջողվել, բաբախել, դադարել, ցատկել, գալ, նստել, պատմել, ստիպել լսել, վեր ցատկել, խփվել, վեր կենալ, անհետանալ:

- բժշկի խորհուրդները՝ օգտագործելով հետևյալ բայերը.  
(советы врача при помощи глаголов):

Թվալ, հաճախել, ստիպել ծիծաղել, վկայել, ազդեցություն անել, հաճույք ստանալ, գնալ, պատահել, տեսնել:



11. Հակառակ իմաստով բառեր բերեք.

Приведите слова, противоположные по значению:

Ա) (բոլոր բառերը h-ով են սկսվում – все слова начинаются с h):

մայր, բարակ, պատասխան, դժվար, մոտ, առաջ, մոռանալ, առողջ, առաստաղ, փեսա, նոր, նորածն, հարավ, խելացի, խռով.

Բ) (բառերը ձ-ով կամ ծ-ով են սկսվում – слова начинаются с ձ или ծ):

աջ, ոտք, ամառ, հետաքրքիր, թեթև, աշխատասեր, երիտասարդ.

Գ) (բառերը թ-ով, փ-ով կամ ք-ով են սկսվում – слова начинаются с ք, փ, или ք):

պապ, ուժեղ, էժան, բարեկամ, արժանիք, գերակատարել, ուրախանալ, բաց, մեծ, շատ, եղբայր, վախկոտ.

Դ) (բառերը պ-ով են սկսվում – слова начинаются с պ):

ներել, նստել, հաղթել, տիկին, հաշտություն, զբաղված, բարդ, հարց, խամրած, անհրաժեշտաբար, ծերունի.

Ե) (բառերը ս-ով են սկսվում – слова начинаются с ս):

ծիշտ, տաք, տալ, բուժ, ընդհանուր, վերջանալ, վերջացնել.

12. Переведите на армянский язык две из миниатюр, написанных по-русски талантливым армянским клоуном Леонидом Енгибаряном:

☁️ ☁️  
**Зонтик** ☁️ ☁️

...Немного помолчав, она сказала: "Но нам же негде жить, у нас нет дома".




Он рассмеялся и сказал, что у него есть зонтик, совсем новый, который сам раскрывается, если нажать на кнопку. И такой зонтик – это прекрасное жилье. Очень уютное для двоих. И в нем хорошо путешествовать, слушать дождь и еще...

Но она не спросила, "что еще...", и ушла к другому, у которого была однокомнатная квартира со всеми удобствами, но, наверное, все-таки не было такого зонтика.



Теперь, спустя много лет, она наконец поняла, какой это был чудесный зонтик. Это был маленький парашют, держась за который, можно улететь далеко-далеко, особенно в дождливые дни...

И ей тоскливо в своей уже трехкомнатной квартире, потому что, чем больше квартира, тем дальше друг от друга те, кто в ней живут. И когда идет дождь, она готова броситься из окна вниз, чтобы найти свой зонтик. Но разве с пятнадцатого этажа узнаешь, какой зонтик – твой?



### Тореадор

Она его любила.

Она знала, что он самый искусный тореро.

Он лучше всех владел мулетой, а сверкающая шпага казалась продолжением его гибкой руки. Но хотя он был самый ловкий и быстрый и самый бесстрашный, он так и не стал знаменитым матадором.

Для матадора он не умел самого главного.

Он не умел убивать.

И за это – она его любила.



"Она" следует перевести աղջիկը  
 тореадор, тореро – ցլամարտիկ  
 броситься – նետվել  
 искусный – հմուտ  
 владеть – տիրապետել մի բանի

мулета – մուլետ (маленькая шпага)  
 шпага – սուսեր  
 гибкий – ճկուն  
 ловкий – ճարտիկ  
 матадор – ցլամարտիկ

# Ընթերցանության նյութեր

## Материал для чтения

### Մայր այծյամը

Կանաչապատ մի լեռան լանջով սողացի վեր և, հասնելով ժայռի գլուխը, նայեցի ցած: Ներքևում, խոտի մեջ նստած որոճում էին վեց-յոթ այծյամ: Նրանք այնպես հանգիստ ու անմեղ էին, որ ես ափսոսում էի կրակել: Բայց ամբողջ օրը շրջել էի այդ լեռներում, հոգնել և սխալ գործած կլիների, եթե այդքան հաջող որսը բաց թողնեի: Կրակեցի խմբից քիչ հեռու նստած մի մեծ այծյամի վրա:

Որոտից սարսափահար այծյամները վեր թռան ու սուրացին ժայռերի երկայնքով: Այն այծյամը, որի վրա կրակել էի, փոխանակ վազելու իր ընկերների հետևից, եկավ և կանգ առավ ժայռի ստորոտում, ինձնից տասնհինգ քայլ ցած: Ես որսացի նրա հայացքը, որը լի էր սարսափով: Ուղիղ հրացանիս փողի դիմաց կանգնել ու տենդագին հայացքով փնտրում էր մեկին:

Մինչ ես նշան էի բռնել նրա կրծքին, և մատս սեղմում էր հրացանի ձգանը, այդ «մեկը», որին նա փնտրում էր, հանկարծ դուրս թռավ ժայռի խոռոչից, հասավ այծյամին և մտավ նրա վզի տակ:

Ուլիկն էր...

Ես հրացանս ետ քաշեցի՝ այդ սրտաշարժ տեսարանից ազդված:

Երբ մայրը և ուլը իրար գտած միասին սլանում էին փախած հոտի հետևից, ես հրացանս օդում ճոճելով ճանապարհի էի դնում նրանց:

Ուրախ էի, որ չսպանեցի մայր այծյամին և չորբացրի այն սիրունիկ ուլիկին:

### Ըստ 4. Անանյանի

#### Բառեր

**այծյամ** – серна, косуля  
**կանաչապար** – покрытый  
зеленью  
**լանջ** – склон  
**սողալ** – ползти  
**գլուխ** – зд. вершина  
**ցած** – вниз  
**որոճալ** – жевать,  
пережевывать  
**կրակել** – стрелять  
**հաջող** – удачный  
**որս** – охота, дичь  
**բաց թողնել** – упустить  
**որոտ** – грохот  
**սարսափահար** – объятый  
ужасом  
**սուրալ** – мчаться  
**հայացք** – взгляд  
**սարսափ** – ужас  
**վեր թռնել** – вскочить

**երկայնքով** – вдоль  
**սրորոտ** – подножие  
**որսալ** – ловить  
**հրացան** – ружье  
**փող** – дуло  
**տենդագին** – лихорадочный  
**նշան բռնել** – целиться  
**կրծք** – грудь  
**սեղմել** – нажимать, прижимать  
**ձգան** – курок (զ=ը)  
**դուրս թռչել** – выскочить  
**խոռոչ** – расщелина  
**եք քաշել** – отвести  
**սրտաշարժ** – душераздирающий  
**ազդվել** – быть тронутым  
**սլանալ** – мчаться  
**հոտ** – стадо  
**ճոճել** – качать, зд.: махать  
**որբացնել** – сделать сиротой (բ=փ)



## Ամենափրկիչ

Արյունարբու Լենկթեմուրը Սամարղանդից եկել ու հասել էր Գայոց աշխարհը՝ մինչև Մոկս, ուր ծանր հիվանդացել և անկողին էր ընկել: Դեղ ճարելու համար Լենկթեմուրի մարդիկ սար ու ձոր ընկան, շատ տեղեր եղան, վերջապես մի վանքում գտան մատենագիր և բժիշկ Առաքել Մոկացուն: Լենկթեմուրի մարդիկ նրան տարան անկողնում պառկած աշխարհակալի մոտ:

Նկատելով ծերունուն՝ Լենկթեմուրը շարժվեց անկողնու մեջ:

– Բուժիր աստօն ծառային, ծերուկ, – թույլ ձայնով աղաչեց թաթար բռնակալը, – ինչ որ ուզես, կտամ՝ ոսկի, արծաթ, իշխանություն, ինչ որ ցանկանաս:

– Ես քեզ կբուժեմ մի պայմանով միայն. դու պարտավոր ես վերադարձնել հայոց բոլոր գրքերը և այնքան գերիներ արծակել, որքան իմ վանքը կտեղավորի: Այնուհետև խոստացիր թողնել հայոց աշխարհն ու հեռանալ:

Փայլեցին աշխարհակալի նենգ աչքերը: Նա պատրաստ էր ազատել հազար-հազար գերիներ, միայն թե մահը հեռանար իրենից: Եվ զարմացած ծերունու համեստ պահանջից՝ մտածեց. «Շեթթանն իր հետ, մի փոքրիկ վանքն ինչքա՞ն պիտի տեղավորի հայոց անհամար գրքերից ու գերիներից. թող նրա ասածը լինի, միայն թե ազատվեմ մահից»:

Ու բռնակալը հրաման տվեց...

Կատարեցին հրամանը: Գերիները ձորից շարժվեցին դեպի վանք, որը մի մատուռի չափ փոքր էր: Տեղ հասնելով՝ տղամարդիկ մի կողմ էին քաշվում, ներս՝ էին մտնում կանալք ու մանուկները, որովհետև գիտեին պայմանը... Բայց ահա կանանց, աղջիկներից և փոքրերից հետո վանքի դռնից ներս էին մտնում անթիվ, անհամար մարդիկ, սակայն վանքը չէր լցվում:

Այդ մասին հայտնեցին աշխարհակալին, և նա կարգադրեց հազար հոգի էլ ուղարկել: Կատարեցին հրամանը, դարձյալ չլցվեց վանքը:

Լենկթեմուրն ուզեց գնալ իր աչքով տեսնել այդ հրաշքը: Բայց հիվանդությունը թույլ չտվեց: «Եթե այդ կախարդ ծերուկը մի վանքում կարող է հազար-հազար գերի տեղավորել, ինձ էլ անպայման կբուժի», – մտածեց նա և հանգստացավ: Ապա կարգադրեց բոլոր գերիներին ուղարկել վանք և պահել միայն մոկաց նախարարին և յոթ իշխաններին:

Կատարեցին բռնակալի հրամանը:

Այդ նկատեց Առաքել Մոկացին և մարդ ուղարկեց՝ հիվանդ բռնակալին հիշեցնելու, որ մոկաց նախարարներին, իշխաններին, նրանց կանանց ու դուստրերին էլ պետք է ուղարկել, որպեսզի վանքը լցվի և սուլթանական խոստումը կատարվի:

Ծերունու հրաշագործությունից և մահից սարսափած Լենկթեմուրը այդ էլ կատարեց և հրամայեց իշխաններից մեկին.

– Գնա՛ տես, թե ինչպես է այդ ծերուկը փոքրիկ վանքի մեջ հազար-հազար մարդ տեղավորում:

Վերջին գերու հետ իշխանը վանք մտավ և տեսավ, որ երբ ծերունին ձեռքը դնում էր ներս մտնող գերիների վրա, նրանք

փոքրանում էին, դառնում բազմերանգ թիթեռներ և վանքի լուսամուտից դուրս թռչելով գնում էին հարազատ լեռները:

Գերությունից փրկված հայ ժողովուրդն այդ օրվանից Մոկաց վանքը կոչեց «Ամենափրկիչ»:

### *Ըստ Սյր. Կուրփիկյանի*

#### **Բառեր**

**Ամենափրկիչ** – Спаситель,  
храм Христа Спасителя  
**արյունաթրու** – кровожадный  
(բ=փ)  
**հասնել** – добраться  
**ծանր** – тяжелый, тяжело  
**անկողին ընկնել** – слечь  
**ճարել** – достать, добыть  
**սար ու ձոր ընկնել** –  
прочесывать  
**մատենագիր** – летописец  
**աշխարհակալ** – завоеватель  
**բուժել** – лечить, вылечить  
**աղաչել** – взмолиться  
**բռնակալ** – деспот  
**պայման** – условие  
**պարտավոր** – обязанный

**գերի** – пленный  
**արձակել** – отпустить (ծ=g)  
**փեղավորել** – поместить,  
вместить  
**համեստ** – скромный  
**պահանջ** – требование  
**մատուռ** – часовня  
**մի կողմ քաշվել** – посторониться  
**լցվել** – наполниться  
**հայտնել** – сообщить  
**կախարհ** – волшебник, колдун  
**հրաշագործություն** –  
чудотворство  
**սարսափել** – ужасаться  
**բազմերանգ** – разноцветный  
**գերություն** – плен  
**կոչել** – называть

### **Արա Գեղեցիկ և Շամիրամ (առասպել)**

Ասորեստանի Շամիրամ թագուհին, վաղուց լսած լինելով Արայի գեղեցկության մասին, իր ամուսին Նինոսի մահից հետո ցանկացավ նրա հետ ամուսնանալ: Մարդիկ ուղարկեց նրա մոտ մեծամեծ ընծաներով և խոստացավ, որ եթե իր կամքը կատարի՝ Հայաստանի հետ Ասորեստանի վրա էլ կթագավորի նա: Արա Գեղեցիկը, որն ամուսնացած էր Նուարդ իշխանուհու հետ, մերժեց Ասորեստանի թագուհու առաջարկությունը: Շամիրամը զայրացած մեծ զորքով եկավ Հայաստան, որպեսզի ստիպի Արային իր առաջարկությունն ընդունել: Պատերազմից առաջ թագուհին հրամայեց իր զորավարներին, որ աշխատեն հայոց իշխանին չսպանել, այլ ողջ բռնեն և իր մոտ բերեն: Բայց Արան, իր զորքի պարտվելը տեսնելով, ընկավ իր զորքի մեջ և գոհ գնաց:

Պատերազմից հետո Շամիրամը մարդիկ ուղարկեց, որ դիակների միջից Արայի մարմինը գտնեն և մի բարձր տեղ դնել տվեց ցանկանալով կախարհությանը կենդանացնել նրան: Բայց երբ դիակը սկսեց հոտել, հրամայեց ծածուկ մի փոսի մեջ թաղել: Հայերը, իրենց սիրելի իշխանի մահից գրգռված, նորից գեներ առան և կամեցան պատերազմը շարունակել: Իսկ թագուհին իր իշխաններից մեկին Արայի գգեստներն հագրեց և հեռվից հայերին ցույց տալով հավատացրեց նրանց, թե իր աստվածներն Արայի վերքերը լիզելով կենդանություն տվին նրան:

### *Ըստ Մովսես Խորենացու*

## Բառեր

- առասպել – легенда  
մեծամեծ – величайший  
ընծա – дар, подарок  
կամք – воля  
մերժել – отказать  
զորք – войско  
ստիպել – заставить  
ողջ – целый, живой (ղջ=խջ)  
բռնել – поймать, схватить  
պարտվել – потерпеть поражение  
զոհ գնալ – пасть жертвой  
դիակ – труп  
մարմին – тело  
կախարդություն – волшебство  
կենդանացնել – оживить (դ=բ)  
հոգել – вонять  
ծածուկ – тайно  
թաղել – хоронить  
գրգռվել – возбуждаться  
զգեստ – одежда  
վերք – рана  
լիզել – лизать



Վ. Սուրենյանց. Շամիրամը Արա  
Գեղեցիկի մարմնի մոտ

## Հայրենի հողը

Երեսուն տարի Արշակ թագավորը պատերազմեց Շապուհի զորքերի հետ և ամեն անգամ ջարդեց նրանց:

Չկարողանալով պատերազմում հաղթել՝ պարսից Շապուհ թագավորը մեծ աղաչանքներով, ընծաներով և հրովարտակներով Արշակ թագավորին սիրով իր մոտ կանչեց, որ այնուհետև իրար մեջ սեր և խաղաղություն և մեծ բարեկամություն հաստատեն: Շապուհը պարսից թագավորության հավատարիմ երդման օրինակով վարազագիր մատանիով<sup>1</sup> աղ կնքեց<sup>2</sup> և ուղարկեց Արշակին:

Երբ Հայոց աշխարհի մարդիկ այս տեսան, շտապեցրին իրենց Արշակ թագավորին, որ վեր կենա, գնա պարսից Շապուհ թագավորի մոտ: Հայոց Արշակ թագավորը վեր կացավ, վերցրեց իր հետ հայոց զորավար սպարապետ Վասակին և ճանապարհ ընկավ հայոց աշխարհից դեպի պարսից աշխարհը:

Այս պարսից Շապուհ թագավորը կանչեց վիուկներին ու աստղահմաններին և ասաց. «Ես շատ անգամ կամեցա սիրել հայոց Արշակ թագավորին, բայց նա ինձ միշտ անարգեց: Ես նրա հետ

<sup>1</sup> վարազագիր մատանի – մատանի, որի վրա փորագրված էր վարազ՝ պարսից թագավորների գերբը (перстень с головой вепря)

<sup>2</sup> Վարազագիր մատանիով՝ պարսից թագավորների անձնական կնիքով կնքված աղը ամենահաստատ երդման նշան էր: (Соль, запечатанная личной печатью персидских царей, являлась символом самой страшной клятвы).

խաղաղության դաշն կապեցի և բյուր բարիքներ կամեցա նրան անել, իսկ բարիքի դեմ չարիք ինձ արեց: Որովհետև հայոց Արշակ թագավորը ահա երեսուն տարի է, որ Արյաց դեմ պատերազմ է մղում, և ոչ մի տարի մենք չկարողացանք հաղթել, իսկ այժմ ահա ինքն իր ոտով ելել եկել է ինձ մոտ: Բայց եթե իմանայի, որ այսուհետև նա ինձ հետ դաշնը կպահի, ապա շատ մեծարանքներով նրան խաղաղությամբ կարծակեի, որ գնա իր աշխարհը»:

Աստղահմանները նրան պատասխան տվին և ասացին. «Մարդ ուղարկիր Հայոց աշխարհը, բերել տուր այնտեղից Հայաստանի հող և մի ամանով ջուր: Հետո հրամայիր, որ քո խորանի հատակի կեսի վրա շաղ տան Հայաստանից բերած հողը և վրայից ցանեն Հայաստանից բերած ջուրը: Ապա դու ինքդ հայոց Արշակ թագավորի ձեռքից բռնած նախ տար նրան խորանի այն տեղը, որտեղ բնական գետին է, և նրան հարցեր տուր: Հետո նրա ձեռքը բռնած հայկական հող շաղ տված տեղը տար և լսի՛ր, թե ինչ կխոսի, և այն ժամանակ կիմանաս, թե երբ նրան արծակես Հայաստան, քո դաշինքը կպահի<sup>3</sup>, թե ոչ: Որովհետև եթե հայկական հողի վրա խիստ լեզվով խոսի՝ իմացիր, որ Հայոց աշխարհը հասնելով հենց նույն օրը նույն պատերազմը, նույն թշնամությունը կշարունակի»:

Պարսից թագավորն այդպես էլ արեց: Նա մարդիկ ուղարկեց Հայաստան, որ գնան Հայաստանից հող և ջուր բերեն: Ապա հրաման տվեց՝ իր խորանի հատակի կեսի վրա շաղ տալ Հայաստանից բերած հողը և վրայից Հայաստանի ջուր ցանել, իսկ մյուս կեսը թողնել բնական հողով: Եվ Հայոց Արշակ թագավորի ձեռքից բռնած սկսեց ճեմել խորանում: Երբ ճեմում էին պարսկական հողի վրա՝ ասաց նրան. «Արշակ թագավոր Հայոց, դու ինչու՞ ինձ թշնամի եղար. ես կամեցա քեզ հետ դաշն կապել, աղջիկս քեզ կնության տալ, իսկ դու ինձ թշնամի դարձար և ահա ամբողջ երեսուն տարի ինձ հետ պատերազմեցիր»: Արշակ թագավորն ասաց. «Մեղանչեցի և հանցավոր եմ քո առաջ»:

Շապուհ թագավորը նրա ձեռքից բռնած շրջում էր ճեմելով և, իբր պատահաբար, բերեց հայկական հող շաղ տված հատակի վրա: Երբ Արշակը հայկական հողի վրա ոտք դրեց՝ ըմբոստանալով լեզուն փոխեց և ասաց. «Հեռու՛ ինձանից, չարագործ, ես չեմ ների քեզ և քո որդոց իմ նախնիների վրեժը և Արտավան թագավորի մահը<sup>3</sup>: Որովհետև այժմ դուք՝ Սասանյաններդ, մեր գահն եք հափշտակել, բայց ես թույլ չեմ տա այդ, մինչև դարձյալ մենք՝ Արշակունիներս, մեր տեղը չզրավենք»:

---

<sup>3</sup>Արտավանը Պարսկաստանի վերջին թագավորն էր պարթևական դինաստիայից, որին սպանեց պարսիկ իշխաններից մեկը՝ Արտաշիր Սասանյանը, և Պարսկաստանում նոր՝ Սասանյան դինաստիայի իմնադիր եղավ: Հայոց Արշակ Երկրորդ թագավորը, ինչպես և Արտավան թագավորը, սերում էր Պարթև Արշակ Մեծից, իսկ պարսից Շապուհ թագավորը՝ Սասանյան տոհմից: (Артаван был последним персидским царем парфянской династии, который был убит одним из персидских князей Арташиром Сасаняном, ставшим основоположником династии Сасанидов. Армянский царь Аршак Второй, как и царь Артаван, происходил от парфянских царей, персидский царь Шапух – от Сасанидов).

Շապուհը դարձյալ նրա ձեռքից բռնած տանոււմ էր պարսկական հողի վրա. այն ժամանակ Արշակը ապաշխարհոււմ էր, զղջոււմ էր իր ասածների համար: Իսկ երբ ձեռքից բռնած տանոււմ էր հայկական հողի վրա՝ առաջվանից ավելի խիստ էր խոսոււմ:

Այն ժամանակ պարսից Շապուհ թագավորը հրաման տվեց բերել երկաթե շղթաներ, կապել Արշակի ոտքերն ու ձեռքերը, տանել նրան Անհուշ բերդը և կապած պահել այնտեղ մինչև մեռնի:

*Ըստ Փավստոս Բուզանդի «Յայոց պատմության»*

## Բառեր

**պարերազմել** – воевать

**ջարդել** – разбить (դ=թ)

**աղաչանք** – мольба

**հրովարտակ** – грамота, послание

**հաստատել** – установить

**հավատարիմ** – верный, преданный

**երդում** – клятва (դ=թ)

**կնքել** – запечатать

**շտապեցնել** – торопить

**զորավար** – военачальник

**վհուկ** – колдун

**աստղահմա** – звездочет

**կամենալ** – желать,

**անարգել** – оскорбить,

презирать

**դաշն, դաշինք** – союз, договор

**բյուր** – несметный,

бесчисленный

**բարիք** – добро

**չարիք** – зло

**պարերազմ մղել** – вести войну

**մեծարանք** – почести

**աման** – сосуд, посуда

**խորան** – 1. алтарь, 2.

помещение, зд. шатер

**հատակ** – пол

**շաղ տալ** – рассыпать

**ցանել** – сеять, зд. брызгать

**բնական** – натуральный, естественный

**գետին** – пол, земля

**թշնամություն** – вражда

**ճեմել** – гулять, прогуливаться

**թշնամի** – враг

**կնություն տալ** – отдать в жены

**մեղանչել** – провиниться

**հանցավոր** – виноватый

**շրջել** – ходить, обходить

**ըմբոստանալ** – восстать

**չարագործ** – злодей

**նախնի** – предок

**վրեժ** – месть

**գահ** – трон

**հափշտակել** – похитить, зд.

захватить

**գրավել** – занять

**ապաշխարհել** – каяться

**զղջալ** – сожалеть (ղջ=խջ)

**խիստ** – строгий, строго

**շղթա** – цепь

**բերդ** – крепость, тюрьма (դ=թ)

## Նամակը

Երբ գեներալ Յովհաննես Բաղրամյանի անունը տարածվեց Յայրենական մեծ պատերազմի տարիներին, սփյուռքի հայերից նամակներ հոսեցին դեպի նա:

Ահա այդ նամակներից մեկը.

«Ձեզ գրում է բնօրրանից արմատահան եղած մի հայ կին, որը զօր ու գիշեր երազել է գտնել իր եղբորը՝ թուրքական սրից փրկված միակ հարազատին աշխարհիս վրա: Սկսած այն օրից, երբ լսել եմ Ձեր անունը, ապրում եմ այդ հույսով: Երկար ժամանակ չէի կարողանում գրել, վախենում էի՝ հօդս ցնդեին երազներս և հույսերս:

Ծնվել են Վանա ծովի ափամերձ մի փոքրիկ գյուղում: Բոլորը, բոլորը հիշում են՝ և՛ մեր միգամած լեռները, և՛ խոր ծորերը, մեր բերրի պարտեզները, և՛ մեր կապուտակ լիճը, և՛ Աղթամարա վանքը՝ կղզու վրա: Հիշում եք դուք այդ ամենը:



Վանա լիճը

Ես ու եղբայրս՝ դու: Ես՝ ութ տարեկան մի աղջիկ, եղբայրս՝ ինը տարով ինծանից մեծ մի պատանյակ: Փախանք անտառ, հետո՝ մյուս փախստականների հետ՝ Ալաշկերտ, Կարս: Այնտեղ ես եղբորս կորցրի: Նա հրացան առած՝ գնաց թշնամուց վրեժ լուծելու, իսկ ես ընկա Ամերիկա: Հետո իմացա, որ եղբորս տեսել են Սարդարապատի կռիվներում, և, վերջապես, հիմա՝ համաշխարհային այս պատերազմում՝ գեներալ դարձած:

Սիրելի՛ Հովհաննես, հարազատ եղբայր, այլևս անկարող եմ տուրք տալ քաղաքավարությանը և դիմել «Դուք»-ով: Խընդրում եմ շտապ պատասխանիր՝ մի՞թե դու իմ եղբայրը չես. ոչ, չի կարող պատահել, որ իմ քրոջական սիրտը ինձ խաբի:


Թույլ տուր ստորագրել այսպես՝ Քո քույր՝ Անահիտ»:

Գեներալը մի պահ խորհելուց հետո գրեց.

«Թանկագին քույրս: Ձեր նամակը շատ հուզեց ինձ: Ես ծնվել եմ ոչ թե Թուրքահայաստանում, այլ Սյունյաց աշխարհում և մինչև այսօր Անահիտ անունով քույր չունեի, հիմա ունեմ: Մեզ մի մայր չի ծնել, բայց ծնել է մի ժողովուրդ: Ընդունեցեք իմ և ընտանիքիս բոլոր անդամների կողմից ջերմագին ողջույններ:

Քո եղբայր՝ Հովհաննես»:

*Ըստ Հրայրա Քոչարի*



Սարդարապատի համալիրը, 1968թ.

Ճարտարապետ՝ Ռ. Իսրայելյան,  
քանդակագործներ՝ Ա. Հարությունյան,  
Ս. Մանասյան, Ա. Շահինյան

## Բառեր

**փարածվել** – распространяться  
**Հայրենական Մեծ Պատերազմ** –  
Великая Отечественная война  
**սփյուռք** – диаспора  
**քնօրրան** – колыбель, родина  
**արմատահան** – вырванный с  
корнем  
**գօր ու գիշեր** – день и ночь  
**երազել** – мечтать  
**սուր** – меч  
**հույս** – надежда  
**հօդս ցնդել** – улетучиться  
**ափամերձ** – прибрежный (ծ=ց)  
**միգամած** – покрытый туманом  
**բերրի** – плодородный  
**կապուտակ** – лазурный  
**պարտեզ** – сад  
**կղզի** – остров  
**յաթաղան** – ятаган

**օրորվել** – качаться  
**արնաշաղախ** – окровавленный  
**անմեղ** – невинный  
**անարդար** – несправедливый  
(դ=թ)  
**ուղղել** – направить  
**կործանվել** – погибать  
**գերդաստան** – семейство  
**վրեժ** – месть  
**վրեժ լուծել** – отомстить  
**կռիվ** – бой  
**փուրք փալ** – отдать должное  
**քաղաքավարություն** –  
вежливость  
**շփապ** – спешно  
**ստորագրել** – подписать,  
подписаться  
**խորհել** – думать, обдумывать  
**ջերմագին** – теплый, горячий

## Ապրիլի քսանչորսին

Մեծ եղեռն: Այսպես են անվանում 1915թ. Օսմանյան կայսրության կազմակերպած հայերի ցեղասպանությունը: Մեծ: Ուրեմն եղել են նաև, այսպես կոչված, փոքր կոտորածներ: Եվ հազար ութ հարյուր իննսուներորս թվականին, և իննսուներեցին: Եվ հազար ինը հարյուր չորսին, և ինը հարյուր ութին: Եվ տասներկու թվականին, և տասնհինգին: Ըստ էության՝ ամեն տարի, ամեն օր, ամեն ժամ: Մի ամբողջ հավերժություն և ամեն պահ հոսել է իր խաչը կրող հայ ժողովրդի արյունը: 1915թ. ամբողջ տարին Եփրատ գետով հոսել են խոշտանգված երեխաների, կանանց ու ծերերի դիակներ: Տասնհինգ թվականի ամբողջ ամառը Տեր–Չոր անապատի շիկացած ավազներում սարսափից խելագարված իրենց մայրերի աչքի առաջ ծարավից չորացել, դիակ են դարձել անթիվ հայ մանուկներ: Տասնհինգ թվականի հուլիս և օգոստոս ամիսներին մոտ քառասուն օր մուսալեռցիները պայքարել են մինչև ատամները զինված ու արյան հոտից հարբած թուրք ասկյարների դեմ՝ կրծքով պաշտպանելով իրենց քարքարոտ հայրենի հողը: Եվ ահա այդ բոլոր օրերից, որոնցից յուրաքանչյուրը, կարելի է ասել, տևել է դարից ավելին, պատմությունն ընտրել է միայն մեկը՝ հազար ինը հարյուր տասնհինգ թվականի ապրիլի քսանչորսը: Դա ամենաարյունալի օրը չէր. և, համենայն դեպս, պատահական չէ, որ ժողովրդի միասնական հիշողությունը դժոխային հավերժությունից առանձնացրել ու պահել է հենց այս քսանչորս ժամը, այս ութսունվեց հազար չորս հարյուր վայրկյանը:

...Տասը տարի առաջ Նյու–Յորքում ծանոթացա ութսունհինգամյա Դոլորես Չոիրապի՝ հայ նշանավոր գրող ու հրապարակախոս Գրիգոր Չոիրապի դստեր հետ: Նա պատմեց, որ ապրիլի քսանչորսի ողբերգական առավոտը նախաճաշի ժամանակ

իրենց տուն մտան երկու ոստիկան և հայտնեցին, որ Թալաաթն անձամբ իր մոտ է կանչում «իր բարեկամ» Գրիգոր Ջոհրապին: Ապա ավելացրին, որ, ըստ իրենց տվյալների, տանտերը շատ շուտով վերադառնալու է: Թուրք ոստիկաններից մեկը մի հեզմական հայացք նետեց և ասաց վերջում. «Մի՛ անհանգստացեք, Ջոհրապ աղան կվերադառնա ու կուտի իր կեռասը»: «Սեղանին, իսկապես, կեռաս կար, – շարունակեց իր պատմությունը տիկին Դոլորեսը: Դա տարվա առաջին կեռասն էր: Հայրս էլ, ես էլ շատ էինք սիրում արևով լեցուն, ոսկեկարմիր, մարգարտաման այդ պտուղները: Մենք՝ տնեցիներս, կեռասին ձեռք չտվինք: Հիշում եմ, թե ինչպե՛ս էի ուզում, բայց ինձ զսպում էի:

Հայրս չվերադարձավ ոչ կեսօրին, ոչ երեկոյան, ոչ գիշերը: Հետո մենք իմացանք, որ այդ օրը և այդ գիշեր Կոստանդնուպոլսում կոտորել էին մոտ յոթ հարյուր մտավորական՝ արվեստի ու գրականության գործիչներ, հոգևորականներ: Պաշտոնական ցուցակներում նրանցից շատերը, այդ թվում և հայրս, նշված էին իբրև հրապարակախոսներ»:

Խուճախած աչքերով, չորացած, չամիչ դառած տիկին Դոլորեսը արդեն յոթանասուն տարուց ավելի է, ինչ կեռաս չի ուտում:

### *Ըստ Զորի Բալայանի*

#### **Բառեր**

**եղեն** – злодеяние, тяжкое преступление, зд. резня  
**կայսրություն** – империя  
**ցեղասպանություն** – геноцид  
**կտրորած** – резня  
**հավերժություն** – вечность  
**պահ** – мгновение  
**կրել** – нести  
**խռչարանգված** – истерзанный  
**դիակ** – труп  
**շիկացած** – раскаленный  
**ավազ** – песок  
**չորանալ** – высыхать  
**պայքարել** – бороться  
**զինված** – вооруженный  
**հոտ** – запах  
**հարբած** – пьяный, опьяненный (բ=վի)  
**կուրծք** – грудь  
**քարքարոտ** – каменный  
**յուրաքանչյուր** – каждый  
**տևել** – длиться  
**արյունալի** – кровавый  
**համենայն դեպս** – все же  
**միասնական** – совокупный  
**դժոխային** – адский  
**առանձնացնել** – выделить  
**ութսունհինգամյա** – восьмидесятипятилетний

**նշանավոր** – знаменитый  
**հրապարակախոս** – публицист  
**ողբերգական** – трагический (ղբ=խա)  
**ոստիկան** – полицейский  
**անձամբ** – лично  
**ավելացնել** – добавить  
**տվյալ** – сведение  
**հեզմական** – иронический  
**հայացք** – взгляд  
**նետել** – бросить  
**կեռաս** – черешня  
**արևով լեցուն** – наполненный солнцем  
**ոսկեկարմիր** – золотисто-красный  
**մարգարտաման** – похожий на жемчуг (զ=ք)  
**պտուղ** – плод  
**զսպել (իրեն)** – сдерживаться  
**կտրորել** – вырезать  
**մտավորական** – интеллигент  
**գործիչ** – деятель  
**հոգևորական** – священнослужитель  
**պաշտոնական** – официальный  
**նշված լինել** – значиться  
**խունացած** – выцветший  
**չամիչ** – изюм  
**չամիչ դառնալ** – зд. иссохнуть



## Կոմիտասի երգը

Այդ դեմքերը հիմա էլ աչքիս առաջ են: Երեք ճապոնացի և նրանց կողքին՝ եղբայրս, ոչ այն է՝ ծիծաղում են, ոչ այն է՝ լալիս են: Ես էլ չգիտեմ, թե ինչ անեն, ապշած՝ նրանց են մայում: Իսկ նրանք կանգնած են պատից կախված ոչ մեծ մի քանդակադրոշմի առաջ: Դա եղբորս՝ հայտնի խեցեգործ, դրոշմահատ-նկարչի գործն է:

Այնտեղ Կոմիտասն է պատկերված խելագար:

Հազվագյուտ գեղեցկության քանդակադրոշմ է ...

Բայց մի՞թե բանն այդ է: Ախր Կոմիտասն է, իր շուրջը կատարվող գազանություններից խելքը արդեն կորցրած ...

Իսկ ինչպե՞ս է դրոշմված: Այդ ցնցունն ինչպե՞ս է հաղորդված:

Ես, իհարկե, մասնագետ չեմ, բայց երբ տեսնում ես, թե ինչպես է տղամարդու այտի վրայով արցունք հոսում, դա, երևի, տպավորիչ է: Ես այդպես եմ կարծում:

Ուրեմն կանգնած են այդ երեք ճապոնացիները եղբորս կողքին և ոչ այն է՝ ուրախությունից ծիծաղում են, ոչ այն է՝ լալիս են: Բայց ինչի՞ համար:

Մի անգամ ճապոնացիներ էին եկել մեր քաղաքը: Ջրուսաշրջիկներ: Դե՛, նայեցին ամեն ինչ, ինչպես հարկն է լուսանկարչական ապարատները չխկչխկացրին, լուսանկարվեցին ի հիշատակ, պատմության համար էլ «Ֆիլմ» հանեցին, Արարատը մի կուլտ դիտեցին ու թողեցին գնացին: Տուն վերադարձան: Բայց ոչ բոլորը: Երեք հոգի՝ արվեստի գիտակներ, մնացին: Եվ որտեղի՞ց էին իմացել եղբորս մասին ... Մի խոսքով, նրանց թարգմանիչը՝ իմ հին ծանոթը, օրը ցերեկով զանգում է ինձ ուղիղ աշխատանքի տեղը:

– Էսպես ու էսպես, – ասում է: – Տար նրանց եղբորդ մոտ: «Հուլանվեր» է հարկավոր: Առանց այդ ոչ մի կերպ չեն ուզում հեռանալ:

Հանդիպում նշանակեցի, գնացինք եղբորս արվեստանոցը: Աշխարհի կեսը նրա քանդակադրոշմներն է գնում, կամ գուցե կեսից ավելին, ես երբեք չեմ հարցրել: Բայց դա նույնիսկ էական չէ: Կարևորն այն է, որ նրան ճանաչում են ... Ահա այս երեքն էլ հո հենց այնպես չե՞ն եկել, եկել են անպայման գնելու: Հակառակի պես եղբայրս էլ համառում է, չի ուզում վաճառել ու վերջ: Կատաղած ետ ու առաջ է քայլում, ինձնից նեղանում է, որ այդպիսի պատգամավորություն են բերել, իրեն գործից կտրում են: Ինքը մի մեծ պատվեր ունի շտապ ավարտելու, իսկ ես ինչ-որ ճապոնացիների են բերել:

Իսկ ճապոնացիները ... նրանք գործարար մարդիկ են, նրանք մտածում են՝ զինն են բարձրացնում և ցանկանալով ցույց տալ, թե իրենք ինչ արժեն, ուղղակի ասում են.

– Սակարկելու կարիք չկա: Ամբողջը միանգամից գնում ենք: Բոլորը, ինչ որ կախված է սրահում:

Իսկ այնտեղ քիչ բան չկա կախված:

Եղբայրս, այդ տեսնելով, ասում է.

– Լավ, սատանան ձեզ հետ, միայն թե թարգմանեցեք նրանց, որ այս գործը չեն վաճառում...

– Ինչպե՞ս թե՛ չեք վաճառում, ինչպե՞ս թե՛ չեք վաճառում, – ձայն ձայնի տվեցին ճապոնացիները: – Ախր, ինչու՞:

Հարցը տրված էր, և ճապոնացիները, լսողություն դարձած, պատասխանի էին սպասում, որովհետև գործի այդպիսի ընթացքը նրանց հետաքրքրությունը շարժեց: Հիմնավորապես: Նրանք, ըստ երևույթին, հասցրել էին գնահատել այդ հազվագյուտ քանդակադրոշմի գեղեցկությունը և որոշել էին պայքարել դրա համար մինչև վերջ:

Ի՞նչ ասես նրանց: Հարկավոր է նաև դիվանագիտություն բանեցնել, որպեսզի հյուրերը չնեղանան: «Եղբայրս խրվեց» մտածեցի:

Նա նրանց նայեց, նայեց, հետո սկսեց բացատրել թարգմանչի միջոցով.

– Հասկանում եք, հարգելի պարոնայք, մա մեր հայ երգահան Կոմիտասն է: Նա տասնհինգ թվականին իր հայրենակիցների խոշտանգումներին ականատես լինելով խելագարվեց: Ինձ համար այս պատկերը թանկ է, անչափ: Իսկ ձե՞զ համար ինչ է: Դատարկ ձայն... Պատկեր՝ դրոշմված մետաղի վրա: Չէ, պարոնայք, այս մեկը չի վաճառվում: Ցավում եմ, բայց սա չի վաճառվում ...

Ճապոնացիները, մեծ քաղաքավարությամբ թարգմանությունը լսելուց հետո, ավելի մոտեցան քանդակադրոշմին և սկսեցին երգել:

– Տե՛ր Աստված, – զարմացա ես, եղբայրս էլ զարմացավ, թարգմանիչն էլ զարմացավ:

Ճապոնացիների երգածը այլ բան չէր, քան ... Կոմիտասի երգը:

Եվ որտեղի՞ց գիտեին: Անհավատալի էր:

Ես նայում էի նրանց դեմքերին՝ ճապոնացիների և եղբորս: Այտերի վրայով արցունքներ էին հոսում, մինչդեռ այս մեղիկ տնային պատկերասրահում հնչում էր Կոմիտասի երգը, որ հեռավոր կղզիներից եկած մեզ անծանոթ ճապոնացիներ էին կատարում: Պարզապես երգում էին, առանց կեցվածքի ...

Եղբայրս՝ ցնցված, զարմանքից ուշքի գալով, անմիջապես խնդրեց թարգմանել.

– Գիտե՞ք, այս քանդակադրոշմն իսկապես չի վաճառվում: Բայց ես այն ձեզ եմ նվիրում: Պարզապես նվիրում եմ ...

Նա պատից հանեց քանդակադրոշմն ու խնամքով հանձնեց ճապոնացիներին:

Այսբան բան:

## Լևոն Հովսեփյան

### Բառեր

**ճապոնացի** – японец  
**ոչ այն է՝ ..., ոչ այն է՝ ...** – не то ..., не то ...

**ապշած** – изумленный  
**քանդակադրոշմ** – чеканка  
**խեցեգործ** – керамист  
**դրոշմահատ-նկարիչ** – художник-чеканщик  
**պարկերված** – изображено  
**զազանություն** – зверство  
**դրոշմված** – вычеканено  
**ցնցում** – потрясение  
**հաղորդված** – передано (դ=թ)  
**տպավորիչ** – впечатляющий  
**ապարատ** – аппарат, **լուսանկարչական** ~ – фотоаппарат  
**լուսանկարվել** – фотографироваться  
**ի հիշարակ** – на память  
**հանել** – снимать, **ֆիլմ** ~ – снимать фильм  
**կուշտ** – сытый, досыта

**գիրակ** – знаток, ценитель  
**օրը ցերեկով** – среди бела дня  
**հուշանվեր** – сувенир  
**գուցեև** – может быть, даже  
**էական** – существенный, существенно  
**հակառակ** – наоборот, ~ի պես – как назло  
**համառել** – упорствовать, упрямыться  
**նեղանալ** – обижаться  
**պարզամավորություն** – делегация  
**գործից կտրել** – отвлекать от дела  
**պարվեր** – заказ  
**շտապ** – срочный, срочно  
**սակարկել** – торговаться  
**կարիք չկա** – нет нужды, не сто́ит  
**լսողություն** – слух, ~ դարձած – обратившись в слух  
**գործի ընթացքը** – оборот дела

**հիմնավորապես** – основательно  
**հասցնել** – успеть  
**պայքարել** – бороться  
**դիվանագիտություն** – дипломатия  
**բանեցնել** – применить  
**խրվել** – влипнуть  
**միջոցով** – посредством, через (последлог) (ջ=չ)  
**խոշտանգում** – истязание  
**ականաբես** – очевидец

**այլ բան չէ քան ...** – не что иное, как ...  
**անհավարարի** – немыслимый, немыслимо  
**նեղլիկ** – узенький, тесный  
**հնչել** – звучать  
**կեցվածք** – поза, առանց ~ի – без позы  
**ցնցված** – потрясенный  
**ուշքի գալ** – опомниться  
**նվիրել** – дарить, подарить  
**հանձնել** – вручить

### Ազգային երգ

Ցարական կառավարությունը փակել էր հայկական դպրոցները...

Գավառներում տեղ-տեղ սկսեցին գործել գաղտնի դպրոցներ: Ուսուցիչներից ոմանք մնալով գյուղերում, երեխաներին գրել-կարդալ էին սովորեցնում:

Ընկերոջս հետ գնացինք գյուղական գաղտնի դպրոցը: Արաքսի ափին՝ հաստաբուն ընկուզենու տակ տեղավորվել էին մեծ թվով մանուկներ ու պատանիներ: Բոլոր աշակերտները միատեղ էին պարապում: Դպրոցը միայն մի ուսուցիչ ուներ, նա նույն գյուղից մի կրակոտ երիտասարդ էր:

Երբ դասաժամը վերջացավ, ընկերս խնդրեց ուսուցչից, որ աշակերտները մի երգ ասեն:

Ուսուցիչը մի պահ մտածելուց հետո դարձավ աշակերտներին.

– Բոլորդ միասին ինձ հետ երգեցեք «այբ, բեն, գիմ»:

Եվ բոլորը հետևելով ուսուցչին սկսեցին միասին բարձր ձայնով հեգել.

Այբ, բեն, գիմ,            Դա, եչ, գա,            Է, ըթ, թո...

– Ահա ձեզ մի ընդհանուր ազգային երգ, որ ամեն հայ անպատճառ պիտի գիտենա. ահա չորս-հինգ տարի է, որ ես այս երգն եմ սովորեցնում, ուրիշ երգ չեմ ճանաչում, – ասաց ուսուցիչը և սրբեց քրտնած ճակատը:

– Շատ ճիշտ եք ասում և կեցցե՛ք, իսկապես, որ անմման էր, – պատասխանեցինք մենք:

Ապա մեր շնորհակալությունը հայտնելով՝ ամուր սեղմեցինք սրամիտ ուսուցչի ձեռքը և ուրախ ու թեթև շարունակեցինք մեր ուղին: Մի պահ այդ տարօրինակ երգի ազդեցության տակ էինք: Ընկերս խզեց լռությունը.

– Յամաձայն չե՞ս, որ քանի հայը կապրի հայոց «այբ, բենը» չի մեռնի:

– Այո, – ասացի ես, – բայց ես հակառակին ավելի եմ համաձայն, այն, որ քանի հայոց «այբ, բենը» կապրի, հայը չի մեռնի:

*Ըստ Ավ. Խահակյանի*

### Բառեր

**ցարական կառավարություն** – царское правительтво  
**գավառ** – провинция, губерния  
**գաղտնի** – тайный (ղ=խ)  
**ոմանք** – некоторые  
**հաստաբուն** – толстоствольный  
**ընկուզենի** – ореховое дерево

**տեղավորվել** – разместиться  
**մեծ թվով** – в большом количестве  
**կրակոտ** – пылкий  
**դառնալ** – обратиться  
**հեգել** – читать по слогам  
**անպատճառ** – непременно  
**ճանաչել** – признавать

**սրբել** – вытирать (բ=փ)  
**քրորնած** – потный  
**աննման** – бесподобный, бесподобно  
**շնորհակալություն հայրնել** –  
 благодарить  
**ամուր** – крепкий, крепко  
**սեղմել** – жать, пожимать

**ուղի** – путь  
**փարօրինակ** – странный  
**ազդեցություն** – влияние, зд.  
 впечатление  
**խզել** – нарушить  
**հակառակ** – обратный,  
 обратно, обратное

## Մշո ճառընտիրը

Հայ ժողովրդի համար գիրքը եղել է նաև հայրենիք: Երևանի Մատենադարանի ցուցափեղկերից մեկում դրված է աշխարհի ամենից լայնածավալ հայկական ձեռագիրը՝ Մշո Առաքելոց վանքի ճառընտիրը: Սրբություն է եղել այդ մատյանը Մշո գավառի հայության համար: Երբ պայթում է հազար ինը հարյուր տասնհինգ թվականի աղետը, նրանք իրենց ունեցվածքը փրկելու փոխարեն աշխատում են փրկել ձեռագիրը: Եվ որովհետև շատ խոշոր է եղել այն, բաժանում են երկու կեսի: Իրար կորցրած երկու գաղթական եղբայրների պես այդ երկու կեսերն էլ կորչում են գաղթի ճանապարհներից: Հիմա, սակայն, Երևանի Մատենադարանում հանգիստ ու ապահով միացել են այդ երկու կեսերը:

Հայ ժողովուրդն էլ Մշո ճառընտիրի նման աղետի օրերին բաժանվեց, երկու կես եղավ: Մի կեսը հայրենի հողի վրա է հիմա, իսկ մյուս կեսը դեռ դեգերում է աշխարհի ճանապարհներին...


Բայց Մշո ճառընտիրը վկա, կգա, պիտի գա՝ այն օրը, երբ մեր ժողովուրդն էլ իր մատյանի պես կմիանա հայրենի Հայաստանի հանգիստ ու ապահով երկնքի տակ:

## Ըստ Ս. Կապուղիկյանի

### Բառեր

**ցուցափեղկ** – витрина (ղ=խ)  
**լայնածավալ** – объемный  
**Առաքելոց վանք** –  
 Апостольский монастырь  
**ճառընտիր** – избранные речи  
**սրբություն** – святыня (բ=փ)  
**մադրյան** – книга, регистр

**պայթել** – лопнуть, зд. разразиться  
**աղետ** – бедствие, катастрофа  
**ունեցվածք** – имущество  
**գաղթ** – депортация  
**դեգերել** – блуждать  
**անհայտ** – неизвестный  
**ապահով** – безопасный, безопасно



Գառզու (Գառնիկ Զուլումյան, Ֆրանսիա)  
 Հայաստան, Երկրաշարժ, հուլյ. 1989թ.